




ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՅՆԱՆԻՇՆԵՐԻ՝  
XVIII ԴԱՐԻՑ ԱՎԱՆԴՎԱԾ  
ՉԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ





**NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

**NAZIK HOVHANNISYAN**

**RESEARCH OF HANDWRITTEN DICTIONARIES OF  
SYNONYMS ATTESTED FROM THE XVIII CENTURY**

**Yerevan 2022**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՅՆԱՆԻՇՆԵՐԻ՝ XVIII ԴԱՐԻՑ ԱՎԱՆԴՎԱԾ  
ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2022

ՀՏԴ 81:09

ԳՄԴ 81+76.1

Հ 854

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների թեկնածու  
Ա.Մ.Սանթրյան

Գրախոսներ՝ Բանասիրական գիտությունների թեկնածուներ  
Շ.Ռ.Ղուկասյան, Վ.Ա.Ներսիսյան, Ն.Մ.Սիմոնյան

Հովհաննիսյան Ն.Գ.

Հ 854 Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառա-  
րանների քննություն.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչու-  
թյուն, 2022.- 264 էջ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակները վկա-  
յում են հինգ ձեռագրեր, որոնք ամփոփում են նույնանիշների XVIII դա-  
րից ավանդված ձեռագիր բառարաններ. դրանց քննությունն է սույն ու-  
սումնասիրությունը: Ներկայացվում են ձեռագիր բառարանների տեսակ-  
ները, կազմությունը, նույնանիշների բառաշարքերի ձևավորման սկզբ-  
ունքները, բառաշարքերի բառակազմական և ձևաբանական առանձնա-  
հատկությունները, բառային տարբերակները: Հայ մատենագրության  
բնագրային օրինակների համեմատությամբ մանրամասնորեն դիտարկ-  
վում են ձեռագիր բառարաններում առկա բառիմաստային փոփոխու-  
թյունները, նորակազմ բառերը, առանձնացվում և քննվում են բարբառա-  
յին իրողությունները, փոխառյալ բառերը, օտարաբառ կազմությունները:

ՀՏԴ 81:09

ԳՄԴ 81+76.1

ISBN 978-9939-9277-6-3

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2022

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի գոյության՝ X-XIV և հետագա դարերի պատմական հանգամանքները հավաստում են, որ երկրի տնտեսական, հասարակական, մշակութային վերելքին մեծապես նպաստում է միայն տնական խաղաղությունը: Ընդհատումներով միմյանց հաջորդած Բագրատունյաց, Ռուբինյան, Չաքարյանների իշխանությունների ժամանակաշրջանը համարվում է հայկական վերածնության շրջան<sup>1</sup>: Անկախություն ձեռք բերած Հայաստանն իբրև չեզոք երկիր<sup>2</sup> դառնում է տարանցիկ առևտրի մերձավորարևելյան խոշոր կենտրոն: Ձևավորված և զարգացող ժառանգական հողատիրությունը (ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական) խթանում է անասնապահության, գյուղատնտեսության ճյուղերի զարգացումը: Երևան են գալիս արհեստագործության տարբեր մասնագիտացումներ. ըստ Վազգեն Չալոյանի՝ «Միայն ձեռագրերի հրատարակումը .... պահանջում էր մագաղաթի, կաշվի, արծաթի և ոսկու, ներկելու, մանրանկարչության տարբեր մասնագետների մասնակցություն»<sup>3</sup>: Հիմնվող ու աճող քաղաքները ևս նպաստում են արհեստների, առևտրի ծաղկելուն, առևտուրն ու արհեստն էլ փոխադարձաբար՝ քաղաքաշինությանը, քաղաքների «աճին»<sup>4</sup>. պատմագիրները, պատմաբանները հիշատակում են Դվինը, Կարսը, Արծնը, Խլաթը, Անին, Սիսը, Ագուլիսը, Էրզրումը, Այասը և այլ քաղաքներ: Պատմագիտական աղբյուրները, հնագիտական պեղումները վկայում են, որ ոչ միայն արհեստներն ու առևտուրն են

<sup>1</sup> Վ. Չալոյան, Հայկական ռենեսանս, Ե., 1964, էջ 72-73:

<sup>2</sup> Այս չեզոքությանը նպաստել էր նաև արտաքին իրադրությունը, ինչպես՝ Բյուզանդիայի և Արաբական Խալիֆայության ներքին խնդիրները:

<sup>3</sup> Վ. Չալոյան, նշվ. աշխ., էջ 19: Տե՛ս նաև Ռ. Իշխանյան, Հայ գիրքը (1912-1920), Ե., 1981, էջք 11, 13-14:

<sup>4</sup> Հ. Մանանդյան, Երկեր, Գ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ե., 1977, էջ 10: Г. Микаелян, История Киликийского армянского государства, Е., 1952, ст. 177-202: И. Орбели, Избранные труды, т. I, М., 1968, ст. 257-260: Նաև՝ Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Ե., 1969, էջ 700-703:

կենտրոնացվել քաղաքներում, այլև դրանք մեծավ մասամբ եղել են քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոններ<sup>5</sup>:

Ինչպես իրավացիորեն նկատում է Մանուկ Աբեղյանը, քաղաքական վերածնությունն ուղեկցվում է «կուլտուրական» վերածնությամբ<sup>6</sup>: Վերածնությունը հանգեցնում է աշխարհայացքի, աշխարհընկալման, իրականության ճանաչման փոփոխության, նոր մտածողության, ազատախոհության ձգտման, նորի պահանջի: Զարգանում են հայոց մշակույթն ու գիտությունը՝ մանրանկարչությունը, ճարտարապետությունը, փիլիսոփայությունը, բժշկությունը, գրականությունը ... : Մանուկ Աբեղյանի բնութագրմամբ՝ XI-XVII դդ. հայոց գրականության աշխարհականացման շրջան են նույնպես «...արդյունք հայկական ինքնուրույն վերածնության»<sup>7</sup>:

XIV դ. «առաջին տասնամյակից» սկսած՝ «Կարծես մի մեծ մռայլ ու պեկոծ տարածություն են կազմում այդ դարերը, որոնք, չնայելով իրենց փոքր հանգրվաններին՝ աղետալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար ...»<sup>8</sup>: Մանուկ Աբեղյանի հավաստմամբ՝ «...երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում Հայաստանում իշխել են զանազան տոհմեր՝ մոնղոլ ու թուրքմեն, թուրք ու պարսիկ-բոլորը մահմեդական, թշնամի միմյանց և ավելի ևս հայերին», և Հայաստանն էլ շարունակ եղել է «պատերազմների ասպարեզ»<sup>9</sup>:

1604-1605 թթ. Շահ-Աբբաս I-ի ասպատակության, ապա և Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև երկարատև պատերազմի թատերաբեմը Արարատյան դաշտավայրից Արաքսի փերը ձգվող տարածքն է՝ Նախիջևան -Սյունիք - Հին Ջուղա -Գողթըն շրջագծով: Եվ պատահական չէ, որ այդ տարածքից էլ XVII դ.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղերում:

<sup>6</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք II (XI-XIX դարի 30-ական թ.թ.), Ե., 1946, էջ 582:

<sup>7</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 570:

<sup>8</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 349:

<sup>9</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 350-351: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II Մաս, Ե., 1951, էջ 257-258:

կեսերից ծայր են առնում հայոց նոր ժամանակների ազգային-ազատագրական շարժումները՝ գործիչներ և գաղափարախոսներ ունենալով նույն տարածքի գավակներիին (Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս, Իսրայել Օրի, Առաքել Շոռոթեցի, Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան, Շահամիր և Հակոբ Շահամիրյաններ)<sup>10</sup>:

1639 թ. Օսմանյան կայսրության և Իրանի միջև կնքված խաղաղության դաշնագրից հետո արևելահայությանը վերջապես վիճակվում է ութսունամյա<sup>11</sup> խաղաղ կյանք՝ միասնական ներտնտեսական-հասարակական ըստ ամենայնի լայն հարաբերություններով ու շփումներով: Տարածքային ծավալուն շառավղով միասնական այդ հաղորդակցությունները՝ վերաշինվող նոր գյուղաքաղաքներով ու վայրերով, սնում են աշխարհիկ կյանքի հասարակական նոր հոգեբանություն և գիտակցություն<sup>12</sup>:

Համառոտակի անդրադառնալով ժամանակաշրջանին՝ Հրաչիկ Միրզոյանը նշում է. «Ամբողջությամբ վերցրած 17-րդ դարը կարելի է որակել որպես հայ մտավոր ու նյութական մշակույթի զարթոնքի ու վերակենդանացման դար»<sup>13</sup>: Եվ դա, ըստ հետազոտողի, վերաբերում է ոչ միայն մայր հայրենիքին, այլև «հայկական բազմաթիվ գաղթօջախներից գեթ մի քանիս»-ին, որոնք սերտորեն առնչվում էին Հայաստանի «տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին, երբեմն խաղում էին դեկավար ու վճռական դեր: .... առանձնապես աչքի էին ընկնում Նոր-Ջուղան, Կ.Պոլիսը, Լվովը և այլն»<sup>14</sup>: Մանուկ Աբեղյանը հավելում է նաև Էջմիածինը, որտեղ «... արտագրում են բազմաթիվ նոր ձեռագիրներ .... Հորի-

---

<sup>10</sup> Ն. Հովհաննիսյան, Նաղաշ Հավնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն.-«Հայոց լեզվի պատմության հարցեր», III, Ե., 1991, էջ 61:

<sup>11</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 590:

<sup>12</sup> Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 61:

<sup>13</sup> Հ. Միրզոյան, Միմեոն Ջուղայեցի, Ե., 1971, էջ 26:

<sup>14</sup> Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 14:



նում են քերականության, տրամաբանության և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից...»<sup>15</sup>:

Հարկ է արձանագրել ոչ միայն XVII դարում Հայ Եկեղեցում սկիզբ առած և մինչև XIX դարի կեսերը տևած Սյունյաց Անապատ Տաթև, Էջմիածին, Նոր Ջուղա, Կ.Պոլիս, Վենետիկ (Ս. Ղազար) օջախներով հոգևոր այն մեծ շարժումը, որը կոչված էր ստեղծելու նորը՝ վերածնելով հինը՝ գտելով լատինաբան գրաբարը, այլև առհասարակ ծայր առած վերանորոգության ընդհանուր շարժումով և գաղթօջախներում իրագործված հոգևոր նկատելի տեղաշարժերով՝ XVII-XVIII դարերում հայոց մշակութային կյանքի աշխուժացումը. դպրոց և մանկավարժություն (Մխիթարյաններ, Նոր Ջուղա) փիլիսոփայական միտք (Մադրասի խմբակ և այլք), պատմագրության վերելք (Առաքել Դավրիժեցի, Երեմիա Քյոմուրճյան, Միքայել Չամչյանց), պոեզիա (Սայաթ-Նովա), ճարտարապետություն (Էջմիածնի զանգակատուն, Սյունիքի և Արցախի բերդեր), տպագրական գործ (Կ. Պոլիս, Ս. Ղազար, Մադրաս):

Անդրադառնալով լեզվի և ժողովրդի պատմության փոխհարաբերությանը՝ Գևորգ Ջահուկյանը շեշտում է, որ «...լեզվի ֆունկցիաների շրջանակի, լեզվի տարատեսակների առաջացման, նրանց փոխադրեցության, նրանց փոխհարաբերության փոփոխության հարցերը տարբեր շրջաններում կապված են ժողովրդի պատմության ընթացքի հետ .... տվյալ ժողովրդի .... տնտեսական, քաղաքական և մտավոր կյանքի բոլոր կողմերի հետ»<sup>16</sup>:

Ըստ հայոց լեզվի գրային շրջանի պատմության ընդունված շրջանաբաժանման՝ «XVII դարի սկզբներից մինչև XIX դարի կեսերը» վաղ աշխարհաբարի ենթաշրջանն է: Գևորգ Ջահուկյանն այն բնութագրում է «... որոշակի միասնականացնող տենդենցներ»-ով, «որոնք էլ հենց հիմք են տալիս ընդհանուր լեզվի կազմավորման և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկ-

<sup>15</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 439:

<sup>16</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 35:

ցիաները սահմանափակելու համար»<sup>17</sup>: Գործածությամբ սահմանափակվող գրաբարի և բարբառների հիմքով աստիճանաբար ձևավորվում է լեզվական մի տարբերակ, որը ենթաշրջանի լեզվավիճակը ներկայացնողները համարում են «քաղաքական» կամ «քաղաքացիական» հայերեն<sup>18</sup>:

\*        \*  
\*  
\*

Հանրահայտ է, որ մշակութային կյանքի հիմքը դպրոցն է: Հայկական վերածնության շրջանում վանքերին կից բացված դըպրոցներից (վանական), գրատուն-գրադարաններից բացի, տարրական և բարձրագույն դպրոցներ, վարժարաններ, ճեմարաններ, համալսարաններ են ստեղծվում նաև քաղաքներում: Հայաստանյայց շատ դպրոցներ, ինչպես նշում են հետազոտողները, վայելելով արքունիքի և եպիսկոպոսական աթոռների հովանավորությունը, աջակցություն և օժանդակություն ստանալով նաև քաղաքային ու գյուղական համայնքներից, հետագայում դառնում են ուսումնագիտական կենտրոններ, ինչպես՝ Անիի, Արգինայի, Կարսի, Սանահինի, Հաղպատի, Այրիվանքի, Կեչառիսի, Նարեկա, Գլաձորի, Դրազարկի, Նորավանքի, Հաղարծիսի, Նոր Գետիկի, Գանձասարի, Սսի և այլն<sup>19</sup>: Մրանց մեծ մասը, հիմնվելով IX-XI դարերում, բուռն գործունեություն է ծավալում XII-XIV դարերում: Ուսումնագիտական այս կենտրոններում ուսուցչապետած Հովհաննես Իմաստասերի, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու, Վարդան Արևելցու, Մխիթար Գոշի, Եսայի Նչեցու, Դավիթ Քոբայրեցու, Գրիգոր Տաթևացու, Վարդան Այգեկցու, Թովմա Մեծոփեցու և այլոց գործունեությունը, սերտորեն առնչվելով դպրոցին, հետապնդել է ուսուցողական, գործնական նպատակ. գրվել, կազմվել են այբբենարաններ, զրուցարաններ, դասագրքեր, հեղինակվել քերա-

<sup>17</sup> Մանրամասն տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 50-64:

<sup>18</sup> Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 62:

<sup>19</sup> Տե՛ս նաև Ռ. Իշխանյան, Հայ գիրքը (1912- 1920), էջ 10:

կանական, ուղղագրական աշխատություններ<sup>20</sup>: Վերջինների կարիքը զգացվում էր՝ ելնելով «...հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»<sup>21</sup>: Ուրեմն և կրթօջախներից շատերը եղել են գրչության արվեստի կենտրոններ, որոնցում լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր<sup>22</sup>: Այս կենտրոններում է զարգացել ազգային ու թարգմանական գրականությունը, ուսուցանվել են լեզուներ (հունարեն, ասորերեն, պահլավերեն, լատիներեն, պարսկերեն)<sup>23</sup>, իբրև դասընթացներ դասավանդվել են պատմագրություն, ճարտասանություն, աստվածաբանություն, քերականություն, տոմարագիտություն, աստղաբաշխություն, իմաստաբանություն, բնագիտություն, երաժշտություն, այլ առարկաներ<sup>24</sup>: Դասավանդվող առարկաների բազմազանությունը, հատկապես լեզուների ուսուցումը, զարգացող գիտություններին վերաբերող աշխատությունները, ինչ խոսք, նաև շփումը բազմալեզու առևտրականության հետ թելադրում, պահանջում էին նորանոր ձեռնարկներ, գրուցարաններ, բառարաններ: Եվ հայ բառարանագրության՝ լեզվաբանական գրականության մեջ հիշատակվող ծաղկումը և զարգացումն այս շրջանում անխզելի հանգույցներով

<sup>20</sup> Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Ե., 1954, էջք 205-221, 243-259, 259-280, 282-291, 292-298: Հեղինակը նկատել է, որ XII-XIII դարերում հայ քերականությունն «... իր լեզվով դառնում է ավելի ժողովրդական ու հասկանալի»։ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 225:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Ռ. Իշխանյանի կարծիքով՝ «Հայկական գրչության կենտրոններ են եղել նաև Հայաստանից դուրս հայաբնակ վայրերում կառուցված վանքերում, հատկապես Ղրիմում, Արևմտյան Անատոլիայում, Պաղեստինում, Լեհաստանում, Իտալիայում, Պարսկաստանում և այլուր»։ տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 10:

<sup>23</sup> Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958, էջք 342, 383:

<sup>24</sup> Դասավանդվող առարկաների մասին մանրամասն տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 381-397:

պայմանավորվում են նշված հանգամանքներով<sup>25</sup>: Ինչպես նկատել է Հայկ Ամալյանը, հայ բառարանագրությունն ընդհանուր առմամբ ժամանակաշրջանի գիտության և ուսումնական գործի արտապատկերն է<sup>26</sup>:

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններին վերաբերող երկհատոր աշխատության էջերում Հայկ Ամալյանը նշում է, որ այդ շրջանում գրված, թարգմանված ամենատարբեր գիտությունների վերաբերող աշխատություններում, այլևայլ ստեղծագործություններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնություններն ու բացատրությունները սկզբնապես կցվել են բնագրերին<sup>27</sup>: Հետագայում ստեղծվել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպես վկայում է հեղինակը, լինելով փոքրածավալ, չեն արտացոլել լեզվի բառային ամբողջ կազմը: Այդուհանդերձ, ըստ նրա, դրանք անչափ կարևոր են եղել գիտությանը ծառայելու, ուսումնական գործին նպաստելու առումներով: Մասնավորապես այդ է վկայում նրա քննած ձեռագիր բառարանների (այսուհետև՝ ՁԲ) խորագիրը՝ «Հանդէս բանաստեղծաց փառանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս», ասել է՝ «...նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար ճարտասանների գեղարվեստական խոսքի կատարելագործմանն ու բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան»<sup>28</sup>: Իրապես,

---

<sup>25</sup> Հանգամանորեն տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XVդդ.), Ե., 1966, էջ 45: Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Գիրք Ա, Ե., 1960, էջ 128: Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 25: Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ-XIX դ.), հ. 1, Ե., 2006: Գ. Թոսունյան, Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006: Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

<sup>26</sup> Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, էջ 45:

<sup>27</sup> Հ. Ամալյան, նշվ աշխ., էջ 22:

<sup>28</sup> Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 123:

բառարանների գործնական բնույթով են պայմանավորված նաև դրանցում առկա ծանոթություններն ու հղումները՝ «եթե պիտոյ իցե», «եթե պիտոյ իցե դնի ևս», «եթե պիտոյ իցե տես», «եթե յարմար իցե քանին... դիր ևս...», «վասն շինութեան աստուծոյ», «վասն ծուլութեան», «վասն որոնելոյ», «վասն հպարտութեան» և այլն (տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից (այսուհետև՝ ՄՄՁ) հետևյալները՝ № № 566, 3110, 6762):

Անդրադառնալով «Հանդէս բանաստեղծաց»-ի ստեղծման ժամանակաշրջանին՝ Հայկ Ամալյանը նշում է, որ այն հնագույն բառարաններից է, «... վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, գրության ստույգ ժամանակը, տեղը և հեղինակը անհայտ են»<sup>29</sup>: Բայց հետագայում, հետևելով Գասպար Գասպարյանին և ընդունելով նրա դիտարկումը, որ «Բառարանի հնությունը ... հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի»<sup>30</sup>, 2006 թ. հրատարակված «Հայ միջնադարյան բառարանագրությունը» աշխատության մեջ արձանագրում է. «Իսկական, բառարանագրական մասնագիտական առումով, հումանիշների բառարանը հայ մատենագրության մեջ «Հանդէս բանաստեղծաց» անունով հայտնի բառարանն է, որի հնագույն ձեռագիրը *XII դ. ընդօրինակություն է*»<sup>31</sup> (ընդգծ.՝ Ն. Հ.): Հետևաբար

<sup>29</sup> Հ. Ամալյան, նշվ աշխ., էջ 124 (նույնը հաստատում է նաև Հ. Անասյանը՝ «... ձեռագիր հնագույն օրինակները ԺԲ դարից են». տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976, էջ 1186): Հ. Ամալյանի վկայությամբ՝ Ն. Ալիխյանը 1930թ. «Հանդէս ամսօրեայ»-ում՝ «Աճառյանի Արմատական բառարանի վերաբերյալ» գրախոսականում, «վկայակոչելով» մի շարք հին բառարաններ, «նշում է նրանց գրչության ժամանակները» (տե՛ս Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 8): Հարկ է արձանագրել, որ, ինչպես գրախոսականում նշում է Ն. Ալիխյանը, ««Հին Բառագիրքներ»-ը «սովորաբար կը բովանդակեն» .... «3. Հանդէսք Բանաստեղծաց»-ը «իբր ԺԱ-ԺԲ. դարէն, ճիսացած յընթացս նոր յաւելուածներով, եւ ենթարկուած նոր խմբագրութիւններու: Հագուադէպ է գտնել ձեռագիրներ, որոնք ըստ ամենայնի նոյն բնագիրը ներկայացնեն» (Հ. Ն. Ալիխեան, Հ. Աճառեան. Հայերէն Արմատական Բառարան, Հանդէս Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8, էջ 491):

<sup>30</sup> Գ. Գասպարյան, նշվ աշխ., էջ 34:

<sup>31</sup> Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 47:

ենթադրելի է, որ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ները նույնպես կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի», այսինքն՝ մինչև բնագրային օրինակներով համալրված՝ գրաբարի բառարանները կազմելը և հրատարակելը<sup>32</sup> կամ թերևս դրանց գուգահեռ<sup>33</sup>: Նշվածը նկատի առնելով էլ՝ հարկ է ներկայացնել, թե *հոմանիշություն*-ը ինչպես էին մեկնում կրթական օջախներում ուսուցչապետած, ուսուցչության պահանջներին ու դժվարություններին գիտակ քերականները:

Հայ քերականները (փոքր-ինչ տարբեր որակումներով) համակարծիք են՝ *փաղանուն*<sup>34</sup> համարելով միևնույն հասկացությունը ցույց տվող, տարբեր արտասանություն ունեցող բառերը<sup>35</sup>: Ասել է՝ հոմանիշ են դիտվել ու համարվել երևույթը, իրողությունը, առարկան համակողմանի, բազմակողմանի բնութագրող բառերն առանց սահմանափակման կամ տարբերակման, եթե համեմատվեն հետագայում առանձնացվող բացարձակ, լրիվ, մասնակի հոմանիշները: Ինչպես նշում է Աշոտ Սուքիասյանը, «... հեղինակները հոմանիշների բառարանի կազմության և հոմանիշների տեսությ-

---

<sup>32</sup> Նոր հայկազյան բառգրքում բառահոդվածին երբեմն հավելվում է «... Ի Հին բռ. Ի կարգի փաղանունաց դնին...» նշումը (տե՛ս, օրինակ, *Դալասյր, Ձեռնածու, Մաւառնաձայն, Սօսիւն, Վառնիկ, Փեշաւոր* բառահոդվածները. համապատասխանաբար՝ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիելի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հ. I, 1836, էջ 591, հ. II, 1837, էջք 152, 702, 769, 785, 939), որն էլ վկայում է՝ Մխիթարյան միաբանները ծանոթ են եղել այս ՁԲ-ներին:

<sup>33</sup> Թէ՛ն ՄՄՁ 3110-ում առկա բառարանի խորագրում նշվում է՝ «...Մատթեասի վ. Բառգիրք հոմանիշ բառից», իսկ ՄՄՁ 873-ի և 775-ի խորագրերում՝ «... ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետ», սակայն ՄՄՁ 6762-ում և ՄՄՁ 566 (I)-ում առկա առավել ծավալուն և ընդգրկուն բառարանների խորագրերում անուն չի հիշատակվում:

<sup>34</sup> *Փաղանուն*-ը պատճենում է հունարենից և համահավասարաբժեք է հոմանիշին, նույնանիշին. տե՛ս Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971, էջ 225:

<sup>35</sup> Ն. Հովհաննիսյան, Հայ քերականների՝ հոմանիշի ըմբռնումը, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու (Երևան-Վանաձոր), 2005, էջ 86-90:

յան հարցերում գտնվում են իրենց ժամանակաշրջանի մակարդակի վրա»<sup>36</sup>:

Հարկ է թերևս արձանագրել, որ հայ քերականները *նույնանշան* եզրը (որքան հաջողվել է պարզել) չեն հիշատակում: Ուստի կարելի է հավանական համարել, որ XVIII դարից ավանդված ՁԲներում առկա *նույնանշան* եզրը տարբերակվում է հենց այդ դարից, նաև ճշտել, որ «նոյնանշան բառ»-ն առաջինը կիրառել է Մխիթար Սեբաստացին՝ ոչ միայն *փաղանունը* բացատրելիս նշելով՝ «... ըստ քերականաց փաղանուն կոչին փաղանշան անուանք, այսինքն այնքիկ, որք զանազան ձայնի զնոյն նշանակեն, յորմէ և կոչին նոյնանշանք ...»<sup>37</sup>, այլև «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» աշխատության մեջ<sup>38</sup>: Իսկ XVIII դ. ավանդված ՄՄՁ 3110-ի բառարանի՝ «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք *հոմանիշ բառից*» (ընդգծ.՝ Ն. Հ.) խորագիրն էլ հուշում է, որ XVIII դարում արդեն գործածվում է արդի հայերենում լայնորեն կիրառվող *հոմանիշ* եզրը:

XIX դարում հրատարակված բառարանների տվյալներով առկա է *փաղանուն*-ի երկու բացատրություն: Մանվել Ջախջախյանն այն մեկնաբանում է քերականների նման («Փաղանուն ասի ... որպէս սուսեր՝ կոչի խարբ ... նրան, և ... բիր՝ մահակ, որոց բընութին մի է և անուանք այլք»)<sup>39</sup>, Աղեքսանդր Խոտաբաշյանցը և

<sup>36</sup> Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 5:

<sup>37</sup> Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ, Վենետիկ, 1749, էջ 1163 ((1230). փակագծերում նշվում է բառարանի՝ PDF ձևաչափով տարբերակի էջը):

<sup>38</sup> Այն հրատարակվել է Մխիթար Սեբաստացու մահվանից հետո՝ 1769 թ.: Ըստ «Լեզվաբանական բառարան»-ի՝ «նույնանշան բառեր» «տերմինի առաջին անգամ (կամ համեմատաբար վաղ) գործածողը» Գ. Ավետիքյանն է (1750-1827 թթ.). տե՛ս Ն. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազույյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ VI, 239:

<sup>39</sup> Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Ն. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1422:

Գրիգոր Փեշտրմալճյանը *փաղանուն*-ը բացատրում են որպես «նույն նշանակությունն ունեցող» բառեր «**Փաղանուն...** *ЕДИНОЗНАЧАЩИЙ, СИНОНИМЪ*»<sup>40</sup> (ընդգծ.՝ Ն. Հ.), «**Փաղանուն,** // տե՛ս ի վերոյ **Փաղանշան...** այն՝ որ նոյն է նշանակութեամբ. համանշան. նոյնանշան, որպիսին են բառք տիպար, տիպ. սուր, սուսեր, և այլն»<sup>41</sup>: Հարկ է նաև նշել, որ Մանվել Ջախջախյանը նույն բացատրությունն է տալիս *նույնանշան*-ին. «\*Լոյնանշան .... զնոյն նշանակութիւն ունօղ: - բառք. Sinónimo» (ՋԲ, էջ 1082. աստղանիշը հուշում է, որ այն «նոր բառ» է (տե՛ս էջ 25)): *Հոմանիշ*-ը «ուրիշ բառի մը ճշդիկ կամ գրեթէ նոյն նշանակութիւն ունեցող բառ. *հկնշ.* Հականիշ. Տ. Փաղանուն» բացատրությամբ և աստղանիշով հիշատակում է Միմոն Գաբամաճյանը<sup>42</sup>, իբրև ծանոթություն նշելով, որ «Բառերու առջեւ դրուած աստղանիշը կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀԼ, էջ Ը):

Հարկ է նաև արձանագրել, որ նույնանիշների ստորև ներկայացվող ՋԲ-ները (դարձյալ որքան հաջողվել է պարզել) չեն քննվել: Դրանց գոյությունը հիշատակում են միայն Հակոբ Անասյանը՝ հայտնելով «բանասիրական և մատենագիտական տեղեկություններ»՝ նշելով ՋԲ-ների խորագրերը («Հաւաքումն բառից, որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են կամ Բառք նոյնանշանք ժողովեալ ըստ այբուբենից») և կիզբը («սկ. «Ագանիլ կամ օթևանս առնել» կամ «Ագահ՝ ընչասէր, արծաթասէր»)»<sup>43</sup>, Վազգեն Համբարձումյանը՝ իրեն հետաքրքրող «ձեռագիր բառակազմական բառարան»-ի առիթով հղելով Հակոբ Անասյանի աշխատասիրությունը,

<sup>40</sup> Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղեքսանդրի Մակարեան Խուրաբաշեանց (այսուհետև՝ ԽԲՀՆ), հ. II, Մոսկով, 1838, էջ 465:

<sup>41</sup> Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտրմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի (այսուհետև՝ ՓԲ), հ. II, Կ.Պօլիս, 1846, էջ 847-848:

<sup>42</sup> Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջ 833:

<sup>43</sup> Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 1198:



---

նան «Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի» «ՄՄՁ №№ 556\*, 775, 873» և 3110 ձեռագրերը<sup>44</sup>:

---

\* Պետք է լինի № 566:

<sup>44</sup> Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ- XVIII դ.), էջ 52-53:

## ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակները<sup>1</sup> վկայում են նոյնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ներ ամփոփող հինգ ձեռագրեր (տե՛ս ՄՄՁ 566\*, 775, 873\*\*, 3110, 6762\*\*\*), որոնք հետևյալ խորագրերով են՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից» (ՄՄՁ 566 (I), 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթեոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ՄՄՁ 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետէ» (ՄՄՁ 873 և 775, համապատասխանաբար՝ 185ա-220բ և 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև ՄՄՁ 6762-ի անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համադրությամբ և համեմատությամբ պարզվում է, որ վերջինը և ՄՄՁ 566 (I)-ը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են<sup>2</sup>:

<sup>1</sup> Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա-Բ, Ե., 1965-1970:

\* ՄՄՁ 566-ում առկա է 2 բառարան՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից» (էջ 234բ-279 ա) և «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (էջ 278բ-300 ա), ուստի 1-ինը այսուհետև կնշվի ՄՄՁ 566 (I), 2-րդը՝ ՄՄՁ 566 (II): Պահպանվում է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

\*\* Հարկ է նշել, որ թեև հիշատակված ձեռագրացուցակներում՝ այս ձեռագրում, «Մատթեոսի վրդ-ի Բառք նոյնանշանք» խորագիրն է (հտ. Բ, էջ 430), սակայն «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Գ հատորում (Ե., 2007) այն չի արձանագրվում:

\*\*\* Բառարանը հուշել է ակադեմիկոս Գևորգ Չահուկյանը: Ըստ ձեռագրացուցակների՝ ՄՄՁ 6762-ում առկա է «Մատթեոսի վրդ-ի Մխիթարեան Բառգիրք»-ը (հ. Բ, էջ 388), սակայն չի նշվում, որ այն նոյնանիշների բառարան է:

<sup>2</sup> Այսուհետև ձեռագրահամարը և էջերը նշվելու են շարադրանքում՝ փակագծերի մեջ:

Նույնանիշների ՁԲ-ները բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ են. ՄՄՁ 566(I), 3110, 6762-ը սկսվում են *Ազանիլ*, ՄՄՁ 775, 873-ը՝ *Ազահ*, և ավարտվում համապատասխանաբար *Օրիորդ*, *Օրհնել* հենաբառերով<sup>3</sup> նույնանիշների բառաշարքերով<sup>4</sup>:

«Նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր» բառեր ընդգրկող ՁԲ-ներում առկա են, թեև սակավաթիվ, նախորդ դարերից ավանդված՝ հոմանիշների բառաշարքերի կազմությամբ ՆԲԾ-ներ, և բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ բառարանների համեմատությամբ<sup>5</sup> սրանց մեջ կան ոչ միայն նոր ՆԲԾ-ներ (սա հաստատվում է նաև ՆԲԾ-ների քանակով (ՄՄՁ 566 (I)՝ 605, ՄՄՁ 775՝ 623, ՄՄՁ 873՝ 630, ՄՄՁ 3110՝ 606, ՄՄՁ 6762՝ 624)), այլև բառաշարքերը հիմնականում ունեն նոր հենաբառեր. այսպես՝ *Թուրմ*-ի փոխարեն *Խոնաւ*-ն է, *Ջանխուլ*-ի՝ *Ծածուկ*-ը, *Շամբուշ*-ի՝ *Յիմար*-ը, *Յախուռնախօս*-ի՝ *Շատախօս*-ը, *Սպանդ*-ի՝ *Ողջակէզ*-ը, *Լուտալ*-ի՝ *Պարսաւել*-ը, *Խազմ*-ի՝ *Պատերազմ*-ը, *Նուազ/դ*-ի՝ *Սակաւ*-ը, *Արբանեակ*-ի՝ *Ծառայ*-ը, *Հատու*-ի՝ *Կարճ*-ը, *Անհաս*-ի՝ *Հարուստ*-ը, *Խաւար*-ի՝ *Մութ*-ը, *Կապարճ*-ի՝ *Նետ*-ը, *Փանաքի*-ի՝ *Նուաստ*-ը և այլն<sup>6</sup>:

<sup>3</sup> Ընդունված եզրերից պայմանականորեն օգտագործվում է *հենաբառ*-ը, որն այսուհետև նշվելու է մեծատառով, ինչպես ՁԲ-ներում է:

<sup>4</sup> Հ. Ամայանը «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ները քննելիս արձանագրում է, որ «... հին բառարանում, հոմանիշներն իսկական շարք չեն կազմում, ... հիշյալ բառարանի բառախմբերում կան բազմաթիվ բառեր, որոնք հոմանիշ չեն հիմնաբառին», և դա է իր՝ «հոմանիշային խումբ տերմինը» գործածելու պատճառը (տե՛ս Հ. Ամայան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 65): Ընդունելով Հ. Ամայանի դիտարկումը՝ պայմանականորեն կիրառվում է նույնանիշների բառաշարք (այսուհետև՝ ՆԲԾ) ձևակերպումը:

<sup>5</sup> Տե՛ս Ն. Յովհաննիսյան, Հոմանիշների ձեռագիր բառարանների տեսակներն ու կազմությունը, Հանդէս ամսօրեայ, թիւ 1-12, Վիեննա, 2005, էջ 133-146:

<sup>6</sup> Այս պարագայում թերևս կարելի է մասնակիորեն համաձայնել Գ. Գասպարյանի՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ներին առնչվող դիտարկմանը, որ «... բոլոր գլխաբառերը ... գրական լեզվից են..., իսկ գեղջուկ բառերը տրված են միայն հոմանիշների շարքում» (տե՛ս Գ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 34), որքանով այն վերաբերում է քննվող ոչ բոլոր գրչագրերին:

Կան մի քանի ՆԲՇ-ով ներկայացվող բառաշարքեր. *Անջատել* հենաբառովը՝ *Բաժանել, Փորել, Քակտել, Քերել, Քերթել, Նրմանությունը՝ Նման, Տիպ, Օրինակ, Հայցելը՝ Խնդրել* և *Քննել, Ծագը՝ Վախճան, Ծայր, Երգը՝ Երգել, Տաղ, Քնար, Ծիրեալը՝ Նիհար* և *Հիծեալ, Չայնը՝ Չայն* և *Չայնք* զանազան կենդանեաց և անկենդանեաց, *Սուրբը՝ Մաքուր* և *Սուրբ*, իսկ *Տենչալ, Քարքել, Պիտալ* հենաբառերով ՆԲՇ-ների փոխարեն արձանագրվում է միայն *Ցանկալ* հենաբառովը:

ՄՄՁ 6762-ում առկա են մասնակիորեն փոփոխված 20 ՆԲՇ-ներ՝ *Ասել, Բռնադատել, Գութ, Եզերք, Ջղջանալ, Լոյս, Խոնարի, Ծամել, Համոզել, Հաշտ, Հաստատուն, Չայն, Պատել, Պատրուակել, Պարտ, Պարունակել, Սոսկ, Սուրբ, Տարակուսել, Բետոր, և նախորդ դարերից ավանդված մի քանի գրչագրում վկայվող Իհլթ* և *Փոխել* հենաբառերով բառաշարքերը:

ՄՄՁ 3110, 6762-ի *Աղեղ, Ասպարեզ, Այց առնել, Ամաչեցուցանել, Ախքատանոց, Բանական, Բանդարկել, Բնակարանաց տեսակք, Բառնալի, Բասրիլ, Բարձր, Գայթակղել, Ջարմանալի, Խրդճել, Ծածկել, Ծառ, Կուռք, Կրպակ, Կոխել, Համարել, Հետիոտն, Յստակ, Նաւավար, Որայ, Վնասել, Տափարակ, Ցնցել, Օգտել* հենաբառերով ՆԲՇ-ները չկան ՄՄՁ 566(1)-ում:

ՄՄՁ 566(1), 6762-ի *Կցորդ, Կռիւ, Հեր, Հուր, Յարել, Յղանալ, Մերկացուցանել, Շաղկապել, Ուրախանալ, Պատիժ, Ջորի, Սարսել, Սերմն, Սերմանել, Վայրապար, Վարանել, Վարսալիրել, Վիրապ, Վիշտ, Վիճել, Վստահել, Տաղտկանալ, Տանջել, Տան մատունք, Տնանկ, Տունկ, Տուժել, Ցանց, Փքանալ, Օրինակ* հենաբառերով ՆԲՇ-ները չեն արձանագրվում ՄՄՁ 3110-ում:

ՄՄՁ 566(1)-ում, 3110-ում առկա *Իշխանություն, Լսել* հենաբառերով ՆԲՇ-ները չկան ՄՄՁ 6762-ում:

Միայն ՄՄՁ 566(1)-ն ունի *Մտնանել, Օձտել, Օձտող, Օղերձ, Օղի, Օրիովդ, Օրիորդ*, միայն ՄՄՁ 3110-ը՝ *Երկան, Ճոխ, Ճշմարտել, Յու, Յուպ, Քրտնել*, միայն ՄՄՁ 6762-ը՝ *Յելի* հենաբառերով ՆԲՇ-ներ:

---

Այսպիսով՝ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ները բառերի այբբենական դասավորությամբ են, սկսվում են *Ագահ*, *Ագանիլ* հենաբառերով, և կարելի է նշել, որ քննվող ՁԲ-ները նոր խմբագրություններ են:

## ՆՈՒՑՆԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՇԱՐՔԵՐԸ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

XVIII դարից ավանդված՝ «նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր» բառեր ընդգրկող ՁԲ-ներում, ինչպես նշվել է, կան նախորդ դարերից ավանդված՝ հոմանիշների ՁԲ-ների բառաշարքերի կազմությամբ շարքեր, որոնք ներառում են իմաստային առնչություն ունեցող, հասկացությունը համակողմանի (հնարավորինս համապարփակ) բնութագրող բառեր, կամ, ինչպես «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ների մի քանի բառաշարքերի դեպքում հավաստում է Հայկ Ամալյանը, կապված են «ընդհանուր հասկացությամբ», միավորված «ընդհանուր գաղափար»-ով<sup>1</sup>: Ըստ նրա՝ այդպես են ձևավորված *աստված* և *աստանա* հասկացությունները բնորոշող *Լոյս*, *Խաւար* և այլ «հոմանիշային խմբեր»: Ուշագրավ է Հայկ Ամալյանի հետևյալ դիտարկումը: *Վտանգ(ք)* հեռաբառով «հոմանիշային խումբ»-ը բնութագրելիս նա նշում է, որ բառերն առնչվում են «գործողության և դրա հետևանքի գաղափարով», այսինքն՝ «վտանգի դեպքում զանազան ապրումներ և զգացումներ ցույց տվող բառերի իմաստային միասնությամբ»<sup>2</sup>:

Ընդունելով Հայկ Ամալյանի դիտարկումը և հետևելով դրան՝ հարկ է այս տեսանկյունից ներկայացնել քննվող ՁԲ-ների ՆԲՇ-ները: Եվ այսպես՝ *Բաժանել. անջատել. անջրպետել. տրոհել. որոշել. մեկնել. տարրորոշել. տրամատել. զատանել. ջոկել* ՆԲՇ-ում<sup>3</sup>, բացառությամբ *տարրորոշել, տրամատել և ջոկել* բայերի, որոնք, ըստ բառարանային տվյալների, «բաժանել, անջատել զատանել, զանազանել, տարբերել, տրոհել» իմաստներով առկա են հետիմնագերդդարյա մատենագրության մեջ (հմմտ.՝ ՆՀԲ, հ. II, էջք 858, 897,

<sup>1</sup> Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, (V-XV դդ.), էջ 126-127:

<sup>2</sup> Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 127-128:

<sup>3</sup> Բառաշարքերը ներկայացվում են բոլոր գրչագրերի համատեղմամբ:

675), մյուս բայերը նշված իմաստներով հանդիպում են V դարում<sup>4</sup>: *Մեկնել, որոշել* բայերի համար Երեմիա Մեղրեցին նշում է «գատել, բաժանել» իմաստները<sup>5</sup>, որոնք Ստեփան Մալխասյանցը պահպանում է «հին բառ կամ նշ.» նշումով<sup>6</sup>: Նույնը վերաբերում է *տրամատել*-ին. ՄՀԲԲ-ում «տրոհել, բաժանել» իմաստը «հին բառ կամ նշ.» նշումով է (ՄՀԲԲ, հ. IV, 1944, էջ 445)<sup>7</sup>:

Համանման պատկեր է *Քակել կամ քակտել. քայքայել. քանդել. ատերել. փլուզանել. կործանել. աղարտել. հարթայատակ կամ հիմնայատակ առնել (եթե պիտոյ իցէ դիր) դորդել. խախտել. խարխալել* ՆԲՇ-ում: *Քակել. քակտել. քայքայել. քանդել. ատերել. կործանել. աղարտել* բայերը վկայվում են V դ. մատենագրության մեջ «քանդել, ավերել, կործանել, քայքայել» իմաստներով (հմմտ. ՝ ՀԱԲ, հ. Ա, էջք 114-115, 359, հ. Բ, էջք 345, 649, հ. Դ, էջք 538, 550, 551): Ըստ Ռուբեն Ղազարյանի՝ նույն իմաստները, թեև ոչ առաջնային՝ («ավերել, քանդել»), այլև փոխաբերական («քայքայել, ավերել, քանդել, կործանել, խախտել») ունեն *խախտել, խարխալել* բայերը<sup>8</sup>: Հետևաբար միանգամայն իրավացի է Հայկ Ամալյանը՝ արձանագրելով՝ որոշ բառախմբերում «... հատկապես նրանց վերջին մա-

<sup>4</sup> Հմմտ.՝ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Ա, Ե., 1971, էջք 210-211, 381, հ. Գ, Ե., 1977, էջք 15, 316, 585, հ. Դ, Ե., 1979, էջ 437:

<sup>5</sup> Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջք 213, 259:

<sup>6</sup> Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. III, Ե., 1944, էջ 115-116: Արդի հայերենի բառարանները *մեկնել* բայի՝ վերը նշված իմաստները չունեն, իսկ *որոշել* բայի նշված իմաստով բնագրային օրինակները քաղված են Րաֆֆու ստեղծագործությունից (Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 1150: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. IV, Ե., 1980, էջ 120). մերօրյա խոսքում չի օգտագործվում՝ «Նա *որոշեց* (առանձնացրեց՝ Ն. Հ.) նրանց միջից երկու աղջիկ միայն»:

<sup>7</sup> Ըստ ԺՀԼԲԲ-ի՝ բառն արդի հայերենում չի գործածվում, իսկ ասիա ԱՀԲԲ-ում առկա է «Ճեղքերից իրարից բաժանել, անջատել» բացատրությունն առանց որևէ նշումի և բնագրային օրինակի (ԱՀԲԲ, էջ 1459):

<sup>8</sup> Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հ. Ա, Ե., 2000, էջք 548, 561:

սերի բառերը իրար հետ են կապվում փոխաբերական իմաստով, որպես միևնույն երևույթին, առարկային տարբեր կողմերից բնորոշող, որակող բառեր»<sup>9</sup>: Ռուբեն Ղազարյանի առանձնացրած *ղը-ղըրդել*-ի «խախտել» իմաստն էլ (ԳԲ, հ. Ա, էջ 379) վերաբերում է փոխաբերորեն «հուզվել, ալեկոծվել, վրդովվել»-ին, որոնք բառարանային տվյալներով առկա են ինչպես «ուշ միջնադարի հայ բառարանագրության գլուխ-գործոց»-ում (ԲՀ, էջք Ե և 80), այնպես էլ արդի հայերենում (ԱՀԲԲ, էջ 303. տե՛ս նաև ՄՀԲԲ, հ. I, էջ 532):

Ընդունելով Հայկ Ամալյանի վերոնշյալ դիտարկումը՝ այդուհանդերձ կարելի է այն լրացնել՝ նկատելով, որ ՁԲ-ներում շարքերն առավել հաճախ ձևավորվում են հետևանքի իմաստային հիմքով՝ հիշեցնելով *եթե ... ապա*-ով, պայմանական ձևակերպմամբ, հետևանքային հարաբերությամբ կառույցներ<sup>10</sup>: Բառաշարքերում, անշուշտ, այսպիսի հարաբերակցություն չկա, սակայն նշմարվում, գծագրվում է, որ գործողությունը (կամ երևույթը, հատկանիշը) ենթադրում, հանգեցնում է, կամ էլ դրան հետևում է (գուցե նաև անվերապահորեն) մյուսը (կարելի է հավանական համարել, որ թերևս հենց այս օրինաչափությամբ էլ հետագայում առանձնացվել են հատկանիշների աստիճանականությամբ կազմված՝ հոմանիշների բառաշարքերը): Ուրեմն և կարելի է դիմել օրինակների:

Այսպես՝ ՄՄՁ 6762-ում՝ *Ահ. արհաւիր. ահաբեկութիւն. երկիւղ. զարհուրանք. սարսուռ. տողումն. սարսափումն. սոսկումն* ՆԲՇ-ում, «նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր» բառերին հաջորդում է *կասկած*-ը (101ա). երկյուղը, վախը, սարսափը թերևս կասկած են ծնում: *Ծուլանալ. պղերգանալ. հեղգալ. դանդաղել. վե-*

<sup>9</sup> Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 127:

<sup>10</sup> Հմմտ. Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 128: Հարկ է նշել՝ Լ. Հովհաննիսյանը, քննելով XVII դ. փիլիսոփայական-տրամաբանական երկերի լեզուն, արձանագրում է, որ դրանց «... բնորոշ պետք է համարել **նախ** ... **ապա** կառույցների, պատճառի, հիմունքի պարագա երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների առատությունը...» Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը.- «Լեզվի և ոճի հարցեր», VII, Ե., 1983, էջ 135:



*հերոս լինել. գաղջանալ. ցրտանալ. թմբրիլ* ՆԲՇ-ում (112 ա) ծուլանալու, դանդաղելու հետևանքը *կասկածել-ը* և *թուլանալ-ն* են: Իսկ *Ազահ. ընչասէր, արծաթասէր. ժլատ. ըրիշտ. կծծի* ՆԲՇ-ն (101 ա)\* եզրափակող *անողորմ* բառի դեպքում, թեև ոչ անվերապահորեն, բայց կարելի է համաձայնել այն կարծիքին, որ ազահ, ժլատ անձնավորությունը անգուրթ, անխիղճ է: Այդպես նաև *Դիւր. հեշտ. հանգիստ. հանդորր*\*\* ՆԲՇ-ում (105բ) *ընդարձակ* բառի առկայությունը կարող է ընդունելի լինել հետևյալ մեկնաբանմամբ: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ «հարթ տեղ» նշանակությամբ *դիւր* արմատը հայերենի բարբառներում «գործածական է նաև առանձին **դուր** «հարթ, տափարակ» (միայն դաշտի համար ասուած)» ձևով (ՀԱԲ, հ. Ա, էջ 671-672)<sup>11</sup>, այսինքն՝ հարթ տեղը, տափարակը բարբառային «տափարակ, հարթ» իմաստի փոփոխությամբ ենթադրում է ընդարձակ տարածք: Նույնը վերագրելի է *անդորր*-ին. *հեշտ-ը, դյուրիին-ը* հանգեցնում են (այս դեպքում արդեն անվերապահորեն) *հանգիստ*-ին. և դարձյալ Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ *դիւր* «արմատը ունինք նաև **դորր** կամ **դոյր** ձևով, որ պահուած է միայն **աւտորր, աւտոյր (ընտոյր, աւտոյրր)**... ոսկեդարեան բառի մէջ» (ՀԱԲ, ն. տ.):

ՄՄՁ 566 (I)-ում *Չարմանալ. հիանալ. սքանչանալ. հրաշանալ. սիրանալ. աճապանալ. ապշել. ի հիացման լինել* ՆԲՇ-ն (243 ա) ավարտվում է *յիմարանալ* բայով: Հայոց լեզվի բառարանները *զարմանալ-ը, հիանալ-ը, սքանչանալ-ը* բացատրում են նաև որպես «ապշանալ, ապշել» (ՆՀԲ, հ. I, էջ 721, հ. I, էջք 96, 766: ՄՀԲԲ, Ե., հ. II, 1944, էջ 14. հ. III, էջ 104. հ. IV, 1945, էջ 283: ԱՀԲԲ, էջք 367,

\* Հմմտ.՝ նաև *Ըրիշտ. ժլատ. կծծի. ժիշտ. անողորմ. աննուէր. անգուրթ* և *ժլատ. կծծի. յիստ. անագորուն. անգուրթ. ազահ. ընչասէր, արծաթասէր. ըրիշտ* ՆԲՇ-ները (ՄՄՁ 6762, 108ա և 109ա):

\*\* Առկա է նաև ՄՄՁ 566 (I), 3110, 6762-ում՝ *Լայնածաւալ. տարածեալ* ՆԲՇ-ում (համապատասխանաբար՝ 247բ, 90բ և 109բ):

<sup>11</sup> Հմմտ.՝ նաև Հայերեն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան (այսուհետև՝ ՀԳԲ), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 286: Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ա, Ե., 2001, էջ 361:

868: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 353)<sup>12</sup>, ավելին՝ «ապուշ դառնալ՝ կտրել... յիմարել, ապուշանալ» (ՆՀԲ, հ. I, էջ 277: ՄՀԲԲ, հ. I, էջ 209: ԱՀԲԲ, էջ 100): Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ *գարմանալ*-ը, *հիանալ*-ը, *սքանչանալ*-ը հանգեցնում են *խելքը կորցնել*-ին, որոշ չափով՝ *հիմարանալ*-ին:

XVIII դարից ավանդված այս ՁԲ-ներում, սակայն, գերակշռում են «նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր» բառերով ՆԲԾ-ները՝ *Ագի. ձեռ. տուտ. պոչ: Աղաչել. աղերսել. պաղատել. մաղթել... ողորթել. ժտել. թախանձել: Աղքատ. տնանկ. չքաւոր. մուրացիկ կամ մուրիկ. չքուր. անինչ. անստացուած: Անամօթ. անպատկառ. աներես. լիրբ. ժպիրի. յանդուզն. անպարկեշտ. անհամեստ: Հաստատուն. պինտ. անշարժ. անփոփոխ. անխախտ. կայուն. անյողողող. անսասան. անվկանդ. անաղարտելի. անկործանելի. անեղծ: Թրել. թրմել. զանգել. շաղել: Լայնել. ընդարձակել. տարածել. մեծացուցանել. արծարծել. ծաւալել: Չող. ցից. բիր. մահակ. զանիչ: Տաննդ. քանքար. մնաս և այլն:*

Քննվող ՁԲ-ներն առանձնանում են այնպիսի բառաշարքերով, որոնք ընդգրկում են հասկացությունը տեսակային տարբերակմամբ (այս պարագայում էլ հարկ է հիշեցնել, որ ժամանակակից հայերենում նույնարմատ բարդություններով կազմված հոմանիշների շարքերում չբացառվող իմաստային այլ օրինակ՝ տեսակի և սեռի (անտառ և ծառ), ընդհանուրի և մասնավորի հարաբերությունների (խաղ-դերախաղ) մասին է ակնարկում Աշոտ Սուքիասյանը)<sup>13</sup>: Այսպես՝

*Ականց տեսակք. յասպիս. շափիւղայ. գմրուխտ. եղնզնաքար. սարդիոն. ոսկեքար. բիրեղ. տպազիոն. քրիստպրայ. յակիւթ. պըղընձաքար. ամեթոս. սառնատեսակ. սուտակ. դահանակ (ՄՄՁ 6762, 101ա. 566(1), 235ա. 3110, 75բ. 873, 185ա. 775, 53ա):*

<sup>12</sup> Տե՛ս նաև Մ. Ալգերեան, Գ. Ճելալեան, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 743:

<sup>13</sup> Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971, էջ 170-172: Տե՛ս նաև՝ ՀԼՀԲ, էջ 5:

*Բնակարանաց մասունք. խուց. խուղ. սենեակ. վերնատուն. ներքնատուն. շտեմարան. մառան. վերնայարկ. դասիկոն. գալիթ. սրահ. վերնագալիթ. ներքնագալիթ. վայրագալիթ. միջնատուն (ՄՄՁ 6762, 103բ. 566(I), 238բ- 239ա. 3110, 79բ. 873, 188բ. 775, 55բ):*

*Գողոյ տեսակք. գող. աւագակ. զովօղ. մենագէն. հէն. սապատակ կամ սապատակիչ. էլուզակ. ական հատանօղ. (էթէ ծովու ի-ցէ) նաւարտակ կամ աւագակ ծովու (ՄՄՁ 6762, 105ա. 566(I), 240բ. 3110, 75բ. 873, 190ա. 775, 55բ):*

*Սեղանոյ զանազանութիւնք. ընդունելութիւն. խրախութիւն խնջոյ. խրախճան. ճաշ. ընթրիս (ՄՄՁ 6762, 124ա. 566(I), 270ա. 3110, 107ա. 873, 213բ. 775, 74ա):*

*Քնար. ջնար. և պէսպէս տեսակք երգարանաց և նուագարանաց. ջնար. կիթառ. փանթեռն. բամբիռ. տաւիղ. տասնաղի. երգեհօն. թմբուկ. սրինգ. ծնծղայ. փող, եղեգնափող. քանոն. հասարակօրէն կոչեն գործի երգոց (ՄՄՁ 6762, 129բ. 566(I), 277բ-270ա. 3110, 111բ. 873, 220ա. 775, 79բ):*

*Առկա են նաև Աստուծոյ առադրելիք, Բնակարանաց տեսակք, Բուսոյ տեղի, Ջգեստք... (մասունք անուանց)\*, Ջէն... (մասնաւոր անուանք)\*\*, Ժամանակի անունք, Չայնք զանազան կենդանեաց, Չայնք զանազան անկենդանեաց, Չիոյ զանազան տեսակք, Չկանց տեսակք, Չար և պէսպէս տեսակք չարի, Տան մասունք շարքերը:*

\* ՄՄՁ 3110-ում (մասնաւոր անունք) տարբերակն է:

\*\* ՄՄՁ 3110-ում՝ (մասնաւոր անունք) :

**ԲԱՌԱՇԱՐՔԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ  
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝**

Քննելով հոմանիշության չափանիշները ժամանակակից հայերենում՝ Աշոտ Սուքիասյանը նշում է, որ «Ըստ հոմանշության ձևաբանական չափանշի, հոմանիշները պետք է պատկանեն միևնույն խոսքի մասին, այսինքն՝ հոմանշության համար որպես անհրաժեշտ նախապայման առաջ է քաշվում միևնույն խոսքի մասին պատկանելու հարցը»<sup>2</sup>՝ միևնույն ժամանակ չբացատրելով «նաև այն փաստը, երբ որոշ դեպքերում գոյականը և ածականը կամ ածականը և մակբայը միաժամանակ համապատասխանաբար հանդես են գալիս նաև որպես հոմանիշներ»։ Իբրև օրինակ բերվում են *արագ մեղմ, մեկնիչ* բառերը<sup>3</sup>։

XVIII դարից ավանդված ՁԲ-ներում մեծավ մասամբ չի խախտվում բառաշարքը միևնույն խոսքի մասերով կազմության սկզբունքը՝ *Առաստաղ. յարկ. ձեղուն. ցու. Գուր. հոր. վիրապ. վիհ. խորափիտ. Արթուն. զվարթուն. հսկոյ. աննինջ. անքուն. տքուն. լուրջ. զգաստ. Ի սկզբանե. անդստին. ի բնե. յառաջագոյն. Նախ. յառաջ. յառաջագոյն. ի սկզբանե. գառաջին. Երկբայել. երկմտել. երկուանալ. թերահաւատել. Որպէ՛ս. զիա՛րդ. որո՛վ օրինակաւ. զո՛ր օրինակ. որո՛վ կերպիւ. որո՛վ եղանակաւ*։

Եվ դարձյալ, թեև սակավաթիվ, բայց կան տարբեր խոսքի մասերով կազմված ՆԲՇ-ներ, որոնցում՝

ա) հենաբառը գոյական լինելու դեպքում նշվում են՝

▪ ածական (*Ճառագայթ* հենաբառով ՆԲՇ-ում՝ *բոցանշոյլ. բոցատիպ. ճառագայթարձակ. լուսափայլ. լուսաճաճանջ, Գոյն* հե-

<sup>1</sup> ՆԲՇ-ների ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները ներկայացվում են ըստ այն հատկանիշների, որոնք առաջարկում է Ա. Սուքիասյանը «ժամանակակից հայերենի հոմանիշ գույգերի կամ հոմանիշների շարքերի հիմնական տիպերը» առանձնացնելիս (տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 167 -174)։

<sup>2</sup> Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջ 57։

<sup>3</sup> Ն. տ.։

նաբառով ՆԲՇ-ում՝ (եթե զանազան գունով իցե) նշումով՝ *գոյնըգ-գոյն. բազմագոյն. խայտափիտ. խայտաճամուկ, Սուր* հենաբառով ՆԲՇ-ում՝ *մարտացու, Տիղմ* հենաբառով ՆԲՇ-ում՝ (եթե պիտոյ իցե) նշումով՝ *տղմուտ. տղմասիգ, Փառք* հենաբառով ՆԲՇ-ում՝ *սքանչելի*).

- բայ (*Հետ* հենաբառով ՆԲՇ-ում՝ *նշմարել*).

- բ) հենաբառն ածական լինելու դեպքում՝

- գոյական (*Հակառակ* հենաբառով ՆԲՇ-ում՝ *խոչընդակ կամ խոչ, Խոր* հենաբառով ՆԲՇ-ում՝ *անդունդ. վիհ, Խաժամուժ* հենաբառով ՆԲՇ-ում՝ *խուժան. ամբոխ*).

- բայ (*Չար* հենաբառով ՆԲՇ-ում՝ *ընդվզել*), բացատրություն (*Սոսկ* հենաբառով ՆԲՇ-ում՝ անուամբ միայն).

- գ) հենաբառը բայ լինելու դեպքում՝

- բացատրություն (*Մայել. կամ մլաւել. նուալ. կամ է՛ ձայն կատույ* (ՄՄՁ 566 (I), 259բ. 3110, 100բ)):

Առկա են բառաշարքեր, ըստ Աշոտ Աբրահամյանի, միջին հայերենում մեծ մասամբ «առանձին բառական արժեքով» հանդես եկող և որպես ածական գիտակցվող՝ գրաբարի անցյալ դերբայով<sup>4</sup>, որը, Սամվել Անթոսյանի դիտարկմամբ, XV-XVII դարերում առանձնանում է «ածական-որոշի կիրառությամբ»<sup>5</sup>: Այնպես որ բացատրելի է գրչագրերում «առանձին բառական արժեք» ունեցող և որպես ածական ըմբռնվող *Տատանեալ* և *Տարակուսեալ* անցյալ դերբայների առկայությունը. առաջինով սկսվող ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 273բ-274 ա. 3110, 109ա. 6762, 127ա)<sup>\*</sup> արձանագրվում են *էրերեալ, տարտամեալ, տարուբերեալ*, իսկ երկրորդում (ՄՄՁ 566 (I), 274ա. 6762, 127ա)<sup>\*</sup> *վարանեալ* և *տարտամեալ* դերբայները: Այդպիսիք կան նաև *Բղ(խ)ջախոհ (պոռնկացեալ. ՄՄՁ 566(I), 238բ.*

<sup>4</sup> Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 355:

<sup>5</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության (այսուհետև՝ ԱՄԳՀՊ), հ. Ա, Ե., 1972, էջ 372:

<sup>\*</sup> ՄՄՁ 566(I), 6762-ում ՆԲՇ-ն ավարտվում է *մերթ ևս վտարեալ, փոփոխական, անհանգիստ* բառերով:

3110, 79բ. 6762, 103բ), *Գէր (յորացեալ. ՄՄՁ 566 (I), 240ա. 3110, 81բ. 6762, 104բ), Խոնսու (թացեալ. թրջեալ. կակղեալ. թրմեալ. տամկացեալ. ՄՄՁ 566 (I), 250ա. 3110, 92բ. 6762, 111ա), Ծածուկ (սրօղեալ. ՄՄՁ 566(I), 251ա. 3110, 93բ. 6762,111բ), Ծոյլ (թմբբեալ. ՄՄՁ 566 (I), 251բ. 3110, 94ա. 6762, 112ա), Նիհար (հիծեալ. լիծեալ. մաջեալ. տկարացեալ. նուաղեալ կամ նուազեալ. անգօր(ա)ցեալ. լղ(ա)ր(ե)ցեալ. ՄՄՁ 566 (I), 262ա-262բ. 3110, 102բ. 6762, 119ա), Քաղցեալ (նքթեալ. սովեալ. տուայտեալ. ՄՄՁ 566 (I), 277բ. 3110, 111ա. 6762, 129բ) հենաբառերով ՆԲՇ-ներում:*

Ինչ վերաբերում է ենթակայական դերբային, ապա, ըստ Սամվել Անթոսյանի, «*ող - օղ* վերջավորություններով» ենթակայական դերբայը XV-XVII դարերում «հանդես է գալիս անկախ, որպես գոյական» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 376-377): ՁԲ-ներում միակ հենաբառը *Հրաւիրօղ*-ն է (ՄՄՁ 566(I), 257ա. 3110, 98ա. 6762, 115ա). այս ՆԲՇ-ում առկա է նաև *կոչօղ*-ը: Ենթակայական դերբայներ կան *Արթուն (հսկօղ. ՄՄՁ 566 (I), 237ա. 3110, 77բ. 6762, 102բ), Բղ(խ)ջախոհ (չնացօղ. ՄՄՁ 566(I), 238բ. 3110, 79բ. 6762, 103բ), Դիւթ (հնայօղ. ՄՄՁ 566(I), 241բ. 3110, 83բ. 6762, 105բ), Ծոյլ (յամաօղ. ՄՄՁ 566 (I), 251բ. 3110, 94ա. 6762, 112ա), Ոսոխ (ամբաստանօղ. ՄՄՁ 566 (I), 264ա. 3110, 104ա. 6762, 120ա) հենաբառերով ՆԲՇ-ներում:*

Միջին գրական հայերենի խոնարհման համակարգը քննելիս Սամվել Անթոսյանը, արձանագրելով, որ XII-XIV դարերում «Պատճառական բայերը հավասարապես հանդես են գալիս ն՛ գրաբարյան **-ուցանել** վերջավորությամբ, ն՛ **-ցնել** տարբերակով....», նկատում է՝ «.... սովորույթի՛ ուժով միայն պատճառական բայերն ունենում են **-ուցանել** վերջավորությունը»<sup>6</sup>, իսկ ահա XV-XVII դարերում, ըստ հետազոտողի, ի տարբերություն նախորդ շրջանի, «Պատճառական բայերում հաղթել է ժողովրդական ձևը .... այստեղ գտնում ենք **պակսեցնե.... թանձրացնե .... եռցնեն....** ձևերը» (ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 364):

<sup>6</sup> ԱՄԳՀՊ, հ. Բ, 1975, էջ 303 -304 :

Հարկ է նշել, որ քննվող ՁԲ-ներում գերակշռում են գրաբարյան *-ուցանել* վերջավորությամբ պատճառական բայերը, որոնք և՛ հենաբառ են, և՛ բառաշարքի բաղադրիչ-միավոր. *Ամաչեցուցանել, լռեցուցանել, դադարեցուցանել (Արգելուլ), վերջացուցանել (Աւարտել), ողջացուցանել, առողջացուցանել (Բժշկել), թաւալեցուցանել (Գլորել), էացուցանել, գոյացուցանել, խոտորեցուցանել, զառանցուցանել, մոլորեցուցանել (Թիւրել), մեծացուցանել (Լայնել), սպիտակացուցանել (Ծեփել), խոնարհեցուցանել (Ծունր դրնել), մերձեցուցանել, հեռացուցանել (Կցել), արձանացուցանել, ամրացուցանել (Հաստատել), Մերկացուցանել, միացուցանել (Շարակցել), տառապեցուցանել (Չարչարել), շքեղացուցանել, մեծացուցանել (Պսակել), երկեցուցանել, ահացուցանել(Սպառնալ), մահացուցանել (Սպանանել), հմտացուցանել, սովորեցուցանել, ընտելացուցանել (Վարժել), զորացուցանել (Քաջալերել):*

Պատճառական *-ցանել* վերջավորությամբ միակ *բարձրացանել* բայը ՄՄՁ 566(Ը)-ում է՝ *Պսակել* հենաբառով ՆԲՇ-ում\*։ Առանձնացված բայի առիթով հիշատակելի է Աշոտ Աբրահամյանի հավաստմամբ՝ Հրաչյա Աճառյանի արձանագրած՝ պատճառական բայածանցներին վերաբերող հետևյալ դիտարկումը. «Բարբառներում պատճառական բայածանցը հանդես է գալիս **-ցան-**, **-ցան-**.... ձևերով, որոնք նույնպես դրվում են կատարյալի հիմքի և դերբայական մասնիկների միջև.... Ազուլիսի բարբառն ունի **-ցան-//ցան-**, .... իսկ հնդկահայերի մոտ կա **-ցան** .... **պակասացանել, ցավացանել, նստացանել**: ....Մեղրու բարբառն ունի **-ցան-//ցան-....**»՝ նշելով այդ բարբառում Էդուարդ Աղայանի հիշատակած *բի՝ ծի՝ ր-ցանիլ* «բարձրացնել» տարբերակը<sup>7</sup>:

\* ՄՄՁ 775, 873, 3110-ում *բարձրացուցանել* տարբերակն է:

<sup>7</sup> Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Էջ 70: Տե՛ս նաև Է. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 223:

Եթե հենարառը բայ է, ապա ՆԲՇ-ում գերակշռում են հարադիր բայերը<sup>8</sup>, ինչպես՝ *Ամբաստանիլ. կամ ամբաստան լինիլ. դատախազել կամ դատախազ լինել. չարախօսել կամ չարախօս լինել. ոտիս լինել. հակառակ նմա վկայել. մեղադիր լինել կամ մեղադրել (ՄՄՁ 6762, 101բ), Այրել. կիզիլ. բոցակեզ առնել. հուրք ծախել. հրրկեզ առնել. հրձիգ առնել. հրդեհ արկանել. կամ հուր արկանել. ընդ հուր անցուցանել. խանձել և կամ խանձոտել (101բ), Աչառել. ակն առնուլ, հայիլ յերեսս մարդոյ. թիրել կամ պղտորել զիրաւունս (եթէ պիտոյ լիցի) դիրն ևս կաշառս առնուլ (102 ա), Գանել. կամ գան հարկանել. ձաղկել. բրածեծ առնել. բրօք հարկանել. թոպել (104ա), Գուժել. կամ գուժ տալ. գուժական հասանել. բոթ տանել. գուժ առնել (105ա), Դարանել. դարան գործել. ի դարան մտանել. բնակիլ ի դարանի. թաքչիլ ի դարանի. դարանակալ լինել. դարանակալս դնել շուրջ. դողել (105բ), Զանցառել. ըստունգանել. անփոյթ լինել. կամ անփոյթ առնել. անհոզ լինել. անքոյթ լինել. անտես առնել (106ա), Ըմբռնել. կալնուլ. ձեռքակալ առնել. ի բուռն արկանել. ի ձեռն արկանել. բուռն հարկանել գնմանի. զձեռն արկանել (107բ), Ստեղծանել. յոչնչէ գոյացուցանել. կամ ի գոյ ածել. յանէից գոյացուցանել. կամ հաստատել ինչ յոչնչէ (125ա) և այլն:*

Մինևույն ՆԲՇ-ում նկատելի է Մանուկ Աբեղյանի արձանագրած այն իրողությունը, որ հայերենում հարադիրն ու բայը «կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել»՝ ստանալով «մեկ բառի նշանակություն»<sup>9</sup>. ՁԲ-ներում առկա են հետևյալները՝ *անձուկ ունիլ-անձկալ, աւարտ ածել-աւարտել, գան հարկանել- գանել, գուժ տալ - գուժել, գանց առնել-գանցառել, լուռ լինել-լռել, խստավիզ լինել -խստավզել, խոյս տալ-խուսել, համարձակ լինել-համարձակել, հարթ առնել-հարթել, հարթայատակ առնել-հարթայատակել,*

<sup>8</sup> Հարկ է արձանագրել, որ դրանցից շատերը, ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, «փոխաբերական իմաստավորումներով» ձեռք են բերել դարձվածային արժեք՝ վերածվելով դարձվածային միավորների (Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 367):

<sup>9</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 137: Հմմտ.՝ նաև Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 369:



*հնագանդ լինել-հնագանդել, հրաման տալ-հրամայել, ճեմ առնել-ճեմել, շեղջս կուտել -շեղջակուտել, չու առնել-չուել, ջան դնել-ջանալ, ջատագով լինել-ջատագովել, տնագ ունել-տնագել, ցունց տալ-ցնցել, տալ զփառս-փառաւորել, օգնական լինել-օգնել, օգուտ լի-նել-օգտել և այլն:*

Երևույթը նկատելի է նաև տարբեր ՁԲ-ների նույն ՆԲՇ-ում. *ժոյժ ունել* (Համբերել. ՄՄՁ 873, 3110)- *ժուժել, ժուժ կալել* (ՄՄՁ 3110)- *ժուժկալել* (ՄՄՁ 566(I), 775, 6762), *սուրբ առնել* (Լուանալ. ՄՄՁ 6762, 110ա. 566(I), 248բ. 3110, 91ա)- *սրբել* (ՄՄՁ 775, 103բ), *սուպռ առնել* (Հպարտանալ. ՄՄՁ 6762, 115ա)- *սուպռանալ* (ՄՄՁ 566 (I), 256ա. 3110, 97բ), *մարդ էլուզանել* (Շողոքորթել. ՄՄՁ 6762, 120ա)- *մարդէլուզանել* (ՄՄՁ 3110, 103բ)- *մարդէլուզել* (ՄՄՁ 566 (I), 263բ) և այլն:

ՆԲՇ-ներում առկա են նաև՝

ա) նախդրավոր կազմություններ. *ի սկզբանէ, յառաջագոյն* (Նախ), *ի բնէ* (Ի սկզբանէ), *ընդ գրուանաւ, ընդ պատրուակաւ, ի թագստի* (Ծածուկ), *ի սրտէ* (Կամաւ իւրով), *ի վրանս կամ ի խորանըս բնակիլ* (Օթագայել).

բ) նկարագրական արտահայտություններ<sup>10</sup>. *ծափել յալեաց, հողմահար տատանիլ, խառվիլն ծովու, նալին ծածկիլ յալեաց. կուտակք ալեաց լինիլ և այլք այսպիսիք* (Ալեկոծել), *մերկ յամենէ կամ թափուր յամենէ* (Աղքատ), *հայիլ երեսս մարդոյ* (Աչառել), *ի վեր քան զքան, ի վեր քան զմիտս և զխորհուրդս* (Աստուծոյ առադրելիք), *կապել շղթայիք* (Բանտ), *(մեռելոց չոր գլուխ) գանկ, (անբանից գլուխ)խալամ* (Գլուխ), *մանրել ատամամբ, ճնլել լեզուաւ* (Ծամել), *հանել ի նմանէ* (Կողոպտել), *աներկիւղ դիմել, անկասկած գնալ* (Համարձակել), *լոյս վառեալ, լոյս լուցեալ* (Ղամբար), *զանձն իւր ծածկիլ* (Ղօղիլ), *հանել ի նմանէ զհանդերձն* (Մերկացուցանել), *հասարակօրէն կոչեն գործի երգոց* (Քնար) և այլն.

<sup>10</sup> Հ. Ամալյանը «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ները քննելիս նշում է «ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով» արտահայտվող հոմանիշության մասին՝ դրանք պայմանավորելով «բառարանի իսկական գործնական բնույթով»։ Հ. Ամալյան, նշվ. աշխ., 129-130:

զ) բացատրական բառակապակցություններ. *տեսիլ երեսաց (Երես), հակառակ ամեն բարեաց. թշնամի ազգի մարդկան. աշխարհակալն խաւարի. աշխարհակուլ խաւարն. որուն չար (Մատանայ), ի ծագիլ արևոյն. ընդ լուսանալ առաւօտուն (Առաւօտ), հմուտ արուեստին (Արհեստաւոր)* և այլն.

դ) հղումներ և ծանոթագրումներ. «Եթէ պիտոյ իցէ (լիցի)», «Եթէ պիտոյ իցէ (է) տե՛ս», «Եթէ պիտոյ իցէ դնի (դիր) ևս», «Եթէ յարմար իցէ բանին.... դիր ևս....», «տե՛ս և», «Եթէ ընդ այլոց դնի», որոնք, ինչպես նշվել է, վկայում են «բառարանի գործնական բնույթը».

ե) *նչ* ժխտական մասնիկով կազմություններ, ինչպես՝ *Արգելուլ .... ոչ թոյլ տալ. ո՛չ ներել (102բ), Թագուցանել .... ո՛չ բացայայտել (108ա), Լռել .... ո՛չ բանալ զբերան իւր .... ո՛չ տալ զպատասխանի (110ա), Վրիպել .... ո՛չ հաջողիլ (126 ա), Տքնիլ .... ո՛չ ննջել (128ա), Քաղցեալ.... ոչ կերեալ ինչ (129ա).*

զ) հականիշներ<sup>11</sup>. *Տարածել* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 127ա. 566(I), 274 ա. 3110, 109ա) «գորոյ ներհակն է» նշումով արձանագրվում է *կծկել*-ը, կամ առանց նշումի *հեռացուցանել*-ը հավելվում է *Կցել* հենաբառով ՆԲՇ-ի վերջում (ՄՄՁ 6762, 113բ. 566 (I), 254 ա. 3110, 95բ), կամ էլ՝ *Որձակ* հենաբառով ՆԲՇ-ում նշվում է՝ «էգն սորա հաւ, մարի» (ՄՄՁ 6762, 120ա. 566 (I), 263բ. 3110, 104ա):

Աշոտ Սուքիասյանի՝ ժամանակակից հայերենի համար «բառաբերականական առանձնահատկությունների, ինչպես նաև կառուցվածքի տեսակետից» առանձնացրած «բառային հոմանիշների շարքեր»-ի տիպերից<sup>12</sup> քննվող ՁԲ-ներում տարբերակվում են տարարմատ և նույնաձանց ՆԲՇ-ները: Հատկանշական է, որ նույնարմատ և նույնաձանց հոմանիշները մեծ մասամբ առկա են միևնույն ՆԲՇ-ում. գերակշռում են, սակայն, տարարմատները:

<sup>11</sup> Հ. Ամալյանի հավաստմամբ՝ միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններում «հազվագյուտ դեպքերում հանդիպում են նաև գլխաբառի հականիշային մեկնություններ». Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 60:

<sup>12</sup> Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 170:

Միջինհայերենյան շրջանում բուն ժխտական նախածանցներից միայն *ան-* նախածանցի՝ Ռուբեն Ղազարյանի վկայած գործուն լինելու իրողությունը նկատվում է նաև սույն ՁԲ-ներում: Միևնույն բառակազմական ձևույթով՝ *ան-* նախածանցով, առանձնաձևում է *Աստուծոյ առադրելիք. անճառ. անպատում. անհասանելի. անպարագիր. անպարագրելի. անըմբռնելի. անքննելի\**. *անզննելի. անբաւելի. անբովանդակելի. անեզր. անչափ. անհուն. անվախճան. անսկիզբն. անժամանակ. անքանակ. անորակ. աներբ. անուր* ՆԲԾ-ն<sup>13</sup> (ՄՄՁ 566(I), 237ա. 3110, 77բ. 6762, 102բ): Այն ներառում է նաև բառեր՝ կազմված՝ մեկական ընդհանուր՝ *ամեն*, և տարբեր արմատական ձևույթներից՝ *ամենիմաստ. ամենահայր. ամենախնամ. ամենագոր. ամենապարզև. ամենակալ*:

*Ան-* նախածանցով բառերով են ձևավորվել *Անպատեհ (ան-դէպ. անպատկան. անճահ. անպատշաճ. անվայելուչ. անյարմար. ՄՄՁ 566 (I), 236ա. 3110, 76բ. 6762, 102ա) և Ապահով (աներկևան. անքոյթ. անվտանգ. անկասկած. անդորր. խաղաղ. անխաղաղ. անվրդով. անխռով. անդրդուելի. ՄՄՁ 566(I), 236բ. 3110, 77ա. 6762, 102ա) հենաբառերով ՆԲԾ-ները, -աւոր վերջածանցով՝ Պտղաւոր. արգասաւոր. արդիւնաւոր. բեղմնաւոր ՆԲԾ-ն (ՄՄՁ 566(I), 268բ. 3110, 106բ. 6762, 123ա):*

ՄՄՁ 566(I), 3110, 6762 (համապատասխանաբար՝ էջք 254բ, 96ա, 113բ)՝ *Հաղորդ* հենաբառով ՆԲԾ-ում, առկա է բառակազմա-

\* ՄՄՁ 3110-ում՝ *անքնին և անզնին*:

<sup>13</sup> Հ. Ամալյանը, «Բառգիրք հայոց»-ի «բառաքնություններ»-ում վերականգնումներ և ճշտումներ կատարելով և անդրադառնալով որոշ ձեռագրերում հանդիպող «*Անչուչափ. անորոնելի*» բառահոդվածին, գտնում է, որ գլխաբառը պետք է լինի *անշոջափելի* բառի *անշոջափ* կրճատ ձևը՝ միաժամանակ *անշոջափելի* և *անորոնելի* բառերի առիթով նշելով. «Այդ բառերը վերցված են Նարեկից (բան Գ), որտեղ Աստծուն որակելու և փառաբանելու համար, որպես մակդիրներ բերվում են *անճառելի, անտեսանելի, անզննելի, անշոջափելի, անորոնելի* և այլ բառեր» (Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 178-179), այնպես որ ենթադրելի է, որ գրիչները (ընթրոփիակողները) ուսուցողական նպատակներով ՁԲ-ներում ներառել են բառեր կամ կազմություններ հայ մատենագրությունից:

կան հետաքրքիր դիտողություն՝ «*դի՛ր զկից մասնիկն ընդ անուան իրին, որով հաղորդուին\**, և կարիս առատագոյն ճոխաբանել. կից որպէս՝ սեղանակից. մարտակից. կարեկից և այլն», որը հնարավորություն է ընձեռում ամրագրելու, որ քննվող ՁԲ-ներին նույնպես վերագրելի է Հայկ Ամալյանի՝ «Հանդէս բանաստեղծաց»-ի համար արձանագրածը՝ այն «միաժամանակ արժեքավոր է որպէս .... հայ դպրոցի ուսումնական ձեռնարկ»<sup>14</sup>:

Ինչպէս նշվել է, ՆԲՇ-ներում որոշակիորեն առանձնանում են հարադրական կազմությունները, բացատրական բառակապակցություններն ու արտահայտությունները. սրանք, հիմնականում դրվելով ՆԲՇ-ի վերջում, ասես ամփոփում են այն, ինչպէս ՄՄՁ 6762-ից քաղված հետևյալ շարքերում՝ *Ալեկոծել....խառվիլն ծովուն. նաւին ծածկիլ յալեաց. կուտակք ալեաց լինիլ և այլք այնպիսիք* (101ա), *Աղբատ.... մերկ յամենէ կամ թափուր յամենէ* (101բ), *Առաւօտ....ի ծագիլ արեւոյն. ընդ լուսանալ առաւօտուն* (102ա), *Ծերունի .... լցեալ հասակաւ. մերձեցեալ ի գերեզմանն* (111ա), *Գերակրել ....տալ նմա ուտել. (եթէ պիտոյ իցէ) տալ նմա ըմպել* (112բ), *Հարուստ ....առատացեալ ընչիւք* (117ա), *Հնագանդել .... ենթարկել զինքն հրամանաց* (115ա), *Մայել .... ձայն կատույ* (117ա), *Միաբանել....զհետ երթալ խորհրդոց նորա* (117բ), *Վաճառել....ի յառ և ի տուրս պարապիլ* (125բ), *Ցամքիլ....(եթէ զբուսոյ կամ մասանց մարմնոյ դնի) կորուսանել զղալարութիւն* (128ա), *Քաղել....ժողովել ի շտեմարան կամ լնուլ ի հնձան և կամ ի գոգ իւր* (129ա) և այլն:

Երբեմն դրանք անմիջապէս հաջորդում են հենաբառին կամ էլ պարզապէս առադրվում են, ինչպէս՝ *Երկնչիլ. սոսկալ յահէ .... խռովիլ երկիւղէն* (106 ա), *Մերկանալ. ի բաց հանել զհանդերձն. մերկացուցանել. հանել ի նմանէ զհանդերձն* (117 ա), *Մերմանել. արկանել զսերմանիս յերկիր* (124 ա). *Փարիլ. անկանիլ զպարանո-*

\* ՄՄՁ 566 (I), 3110-ում՝ *որով հաղորդք են:*

<sup>14</sup> Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 132:

---

*ցաւ* (128 ք), *Բորբորիլ .... բոցոյն բարձրանալն. բոցոյն ծառանալն* (104 ա), *Ծամել .... մանրել ատամամբ. ճմլել լեզուաւ* (111ա), *Յագել .... ուտել մինչև ցայգ* (118 ա), *Յուսահատել.... հատել յոյս նորա* (118 ք), *Վագել.... փութալի երթալ....կամ ճեպելով ընթանալ* (125ա), *Փափուկ .... գգուանօք սնեալ կամ գրգեալ* (128 ք), *Քաղցեալ .... ոչ կերեալ ինչ* (129 ա), *Օգնել .... յօգնութիւն ժամանելով ի թիկունս հասանել* (130 ա) և այլն:

## ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հայկական վերածնության շրջանում կրթության օջախներում, գրչության արվեստի կենտրոններում, ինչպես արդեն նշվել է, լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ընդօրինակողները ձգտել են հարազատ մնալ բուն օրինակին, արտագրել են՝ ըստ լեզվին տիրապետելու մակարդակի, թեև «... մի չգրված օրենք է եղել նախաստիպ ձեռագրին հարազատ մնալը»<sup>1</sup>: Բայց և չի կարելի բացառել ընդօրինակողի «ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը», և ուրեմն ձեռագրերում հավանական են գրչագրական, ուղղագրական շեղումները, սխալագրությունները, այլև բառային տարբերակները: Նշվածն անվերապահորեն վերագրելի է նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ներին:

Այսպես՝ սխալագրություն կարելի է համարել ՄՄՁ 566 (I), 254 ա) և 6762-ում (113բ)՝ *Հալածել* հենաբառով ՆԲՇ-ում, առկա *արտլուծանալ*-ը. գրաբարի բառարանները վկայում են «արտաքսել հալածելով, տարագրել, ի դուրս հանել, հալածել» նշանակությամբ *արտալածել* (ՆՀԲ, հ. I, էջ 376: ԱԲ, էջ 145)<sup>2</sup>: Այդպես էլ *Ապստամբել* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 236բ. 6762, 102ա) վրկայվող *ընդդառնալ*-ը՝ *ընդդեմ դառնալ*-ը (ԳԴԲ, էջ 98), ՄՄՁ 566 (I), 6762-ում *խափանել* սխալագրությունն է *Խփել. ծածկել. սերեկել. կափուցանել* ՆԲՇ-ում, նույն ՁԲ-ներում և ՄՄՁ 3110-ում *Բընախոս* հենաբառով ՆԲՇ-ում՝ *կորովամիտ*-ի փոխարեն *կորամիտ* տարբերակն է և այլն:

Հովհաննես Մուրադյանը, վերոնշյալը հին ձեռագրերում սովորական երևույթ համարելով, հակված է դրանք դիտարկելու

<sup>1</sup> Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում. «Հայոց լեզվի պատմության հարցեր», 3, Ե., 1991, էջ 8-9:

<sup>2</sup> ՆՀԲ-ն նշում է նաև «ԱՐՏԱՀԱԱԾ... որ և ԱՐՏԱԱԾ. Հալածական» (հ. I, էջ 377):

գրչագրական շեղումներ<sup>3</sup> միաժամանակ նշելով, որ հարցը վերջնականորեն կարող է լուծվել միայն մանրամասն ուսումնասիրությամբ:

Քննվող ՁԲ-ներում առկա են նույնիմաստ և հնչունական որոշ տարբերություն ունեցող բառեր, որոնք լեզվաբանական աշխատություններում դիտվում են բառային տարբերակներ, զուգաձևեր<sup>4</sup>: Այդպիսիք հայերենի հնագույն շրջանի համար արձանագրել և քննել է Գևորգ Ջահուկյանը՝ «բարբառային տարբերակներ» ձևակերպումով<sup>5</sup>, և Վ. դ. գրաբարում՝ Լավրենտի Հովհաննիսյանը<sup>6</sup>: Բառային տարբերակները ստորև առանձնացվում են նշված բոլոր գրչագրերի համատեղմամբ:

*Հնչունական տարբերակներ*

*ա) Չայնավորային փոփոխություններով զուգաձևեր<sup>7</sup>*

Ա/ն և ա/ե հնչունական զուգաձևերն<sup>8</sup> առանձնացվել են Վ. դ. գրաբարում<sup>9</sup>: Նշված հնչունական զուգաձևերից միայն ՄՄԶ 566 (I), 873, 3110-ում է վկայվում *խահարար*<sup>10</sup>-ը, ՄՄԶ 775, 873, 6762-

<sup>3</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչունաբանություն, Ե., 1982, էջ 227:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ Վ դարի գրաբարում, էջ 5-9:

<sup>5</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Ե., 1987, էջ 371-375:

<sup>6</sup> Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 9-58:

<sup>7</sup> Չուգաձևերը ներկայացնելիս առանձնացվում է զուգաձևերի միայն մեկ տարբերակը, քանի որ մյուս գրչագրերում համապատասխան ձայնավորներով տարբերակներն են: Նույնը նաև՝ մյուս հնչունական զուգաձևերի դեպքում:

<sup>8</sup> Բառային տարբերակներին կից՝ փակագծերում, տրվում է հենաբառը (փակագծեր չլինելու դեպքում՝ նշվածը հենաբառ է), այնուհետև՝ ձեռագրահամար(ները), որոշ դեպքերում՝ էջ(եր)ը:

<sup>9</sup> Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ Վ դարի գրաբարում, էջ 9-11:

<sup>10</sup> **խոհ** բառահոդվածում Հ. Աճառյանը նշում է. «Բառս ունի նաև հետևեալ ձևերը. **խոխ**...**խահ**... **խախ** «կերակուր»... =Իրանեան \*xwarh- ձևից, այս բառը հյ. տուրք է **\*խարհ** և **\*խորհ**, որոնց միջից **ր** ձայնը ընկնելով՝ **խահ** և **խոհ**...» (ՀԱԲ, հ. Բ, 1973, էջ 387-388): Լ. Հովհաննիսյանի հավաստմամբ՝ **խոհարար-խահարար** «... բառերը իրանական փոխառություններ են: Հնչունափոխությունը հայերենում չի

ում՝ *վարապանակ*-ը, ՄՄՁ 566 (I), 6762-ում՝ *խահանոց* (*Տան մասունք*), իսկ ՄՄՁ 566 (I)-ում՝ *վերապանակ* (*Ձէն*) զուգաձևերը:

*Ոյ/ՈԻ*: *Ու/ոյ* զուգաձևեր արձանագրվում են V դ. գրաբարում (*առոյգութիւն- առուգութիւն, գերագունութիւն- գերագոյնութիւն*) և համարվում են հնչյունափոխական<sup>11</sup>:

Քննվող ՁԲ-ներում առկա են *ժոյժ ունել* (*Համբերել*, ՄՄՁ 873, 3110), *ժուժել, ժուժ կալել* (ՄՄՁ 3110), *ժուժկալել* (ՄՄՁ 566 (I), 775, 6762), ՄՄՁ 3110 և 6762-ում՝ *անագորուն* (*Չար*), *նժոյկ* (*Չիոյ գանագան տեսակք*, ՄՄՁ 566(I))- *նժոյկ* (ՄՄՁ 6762) զուգաձևերը:

*Երկրաբառների փոփոխություններով տարբերակներ*

Միակը *խոշխոշիւն-խօշխօշէն* տարբերակն է՝ ՄՄՁ 6762-ում՝ *Չայնք գանագան անկենդանեաց* ՆԲՇ-ում (115բ):

*Չայնավորների հավելմամբ և անկմամբ զուգաձևեր*<sup>12</sup>

Միջնավանկի *ա* ձայնավորի անկում է արձանագրվում *մակրրթիլ* (*Մածնուլ*, ՄՄՁ 775), *ու* ձայնավորի անկում՝ *շատագնել* (*Ամաչել*, ՄՄՁ 3110), *ո*-ի անկում՝ *հոլնել* (*Ժողովել*, ՄՄՁ 6762) բայերում:

Միջնավանկի *ա* ձայնավորի անկում արձանագրվում է հիշատակարաններում<sup>13</sup>, և ըստ Հովհաննես Մուրադյանի՝ այն բն-

---

կատարվել, ամենայն հավանականությամբ այդ բառաձևերը հայերենին են անցել իրանական տարբեր սկզբնաղբյուրներից» (Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում, էջ 9-10):

<sup>11</sup> Ըստ Հ. Մուրադյանի՝ այս հնչյունափոխության վկայությունները «հանդիպում են արդեն X-XI դարերի գրավոր աղբյուրներում» և բնորոշ են համարվում արևմտյան տարածքի բարբառներին. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 180-181:

<sup>12</sup> Ինչպես արդեն նշվել է, զուգաձևերը ներկայացնելիս առանձնացվում է զուգաձևերի՝ միայն ձայնավորների հավելմամբ և անկմամբ տարբերակը, քանի որ մյուս գրչագրերում համապատասխան ձայնավորներով տարբերակներն են:

<sup>13</sup> Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997, էջ 11, 15, 30:



րոշ է «կլիլկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին»<sup>14</sup>:

Այս դասակարգմամբ են ներկայացվում նաև *ա* հոդակապով և առանց հոդակապի գուգաձևերը, որոնցից առկա են հետևյալները՝ *համհետնիլ* (ՄՄՁ 6762), *բաղկցել* (ՄՄՁ 566 (I)), *երկմարտութիւն* (ՄՄՁ 566(I)), *օձձուկն* (*Չկանց տեսակք*. ՄՄՁ 566 (I)):

*Ի* ձայնավորի հավելում է արձանագրվում *սակառի-ում* (*Չամբիւղ, Մախաղ*. ՄՄՁ 3110):

բ) *Բաղաձայնական փոփոխություններով գուգաձևեր*<sup>15</sup>

Առկա են հետևյալները

*Չայնեղ / խուլ բաղաձայններով գուգաձևեր*<sup>16</sup>

*Բ/Պ*: Առանձնանում է ՄՄՁ 3110-ը՝ *թմպուկ* (*Քնար*), *թմպրիլ* (*Ծուլանալ*), *թմպրեալ* (*Ծոյլ*), *դամպարն* (*Ճրագ*):

*Գ/Կ*: Դարձյալ ՄՄՁ 3110-ում՝ *խոշտանկել* (*Նեղել*), *ձկտել* (*Չանալ*), *Փափակել* (*Յանկալ*), ՄՄՁ 873-ը՝ *խոշտանկել* (*Չարչարել*. նաև ՄՄՁ 566(I)), *արևակալ* (*Առաւօտ*), *նժոյկ* (*Չիոյ զանազան տեսակք*), *պղերկանալ* (*Յամել*): ՄՄՁ 6762-ում առկա են *արձականք* (*Չայնք զանազան անկենդանեաց*), *նժույկ* գուգաձևերը:

*Դ/Տ*: Այս հնչյունական գուգաձևերը նույնպես գերակշռում են ՄՄՁ 3110-ում՝ *պնտել ի կոճեղս* (*Բանդարկել*), *պնտել* (*Չանալ*), *ջատու* (*Դիւթ*. նաև ՄՄՁ 873), *տեզերել* (*Թափառել*), *ընտոծին* (*Ծառայ*), *նչտեհ* (*Պանդուխտ*), *առատրելիք* (*Աստուծոյ առադրելիք*. նույնը և՛ ՄՄՁ 6762-ում), ՄՄՁ 566 (I)-ում առկա է *կոնտակ-ը* (*Ճա-*

<sup>14</sup> Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 86-87: ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 74: Ռ. Ղազարյանի հավաստմամբ էլ՝ այն միջինհայերենյան հնչյունափոխական երևույթներից է (տե՛ս Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 189):

<sup>15</sup> Զուգաձևերը ներկայացնելիս նույնպես առանձնացվում է գուգաձևերի՝ միայն ձայնեղ կամ խուլ բաղաձայնով տարբերակը, քանի որ մյուս գրչագրերում համապատասխանաբար միայն խուլ կամ միայն ձայնեղ բաղաձայնով տարբերակներն են: Նույնը նաև՝ մյուս հնչյունական գուգաձևերի դեպքում:

<sup>16</sup> Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ XVII դարում «Առհասարակ, դ>թ, գ>կ, նաև կ>գ, գ>ք հնչյունափոխության բազմաթիվ օրինակները վկայում են այդ դարաշրջանում բարբառային հնչյունական համապատասխան արտասանության մասին».<sup>1</sup> Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը .- «Լեզվի և ոճի հարցեր», VII, էջ 153:

դատ), ՄՄՁ 775, 873-ում՝ կնտակ-ը (Հերաթափ), ՄՄՁ 775-ում՝ պանտուխտ-ը (Ճանապարհորդ):

Ձ/Ճ: Միակը ՄՄՁ 566 (I)-ում առկա ջնճան-ն (Թաշկինակ) է: Խուլ/ ձայնեղ բաղաձայններով գուգաձևեր

Պ/Բ: ՄՄՁ 775-ում արձանագրվում է քմբել-ը (Կերակրել):

Կ/Գ: ՄՄՁ 3110-ում առկա են հասզ (Թոշակ), ճանգ (Ճիրան) գուգաձևերը:

Տ/Դ: ՄՄՁ 3110-ում վկայվում են՝ Բանդարկել, ընդանի (Ընդել), վատաբաղդ, չարաբաղդ (Չար), դադարկակեաց (Ծոյլ), ՄՄՁ 775, 873-ում՝ սաղաւարդն (Ձէն), ՄՄՁ 775-ում՝ ստնդու (Մանկակալ):

Ձայնեղ/ շնչեղ խուլ բաղաձայններով գուգաձևեր

Բ/Փ: Խայտափղէտ (Խայտ), շամփուշ (Բղջախոտ) առկա են ՄՄՁ 3110-ում, փարձրավզել-ը (Հպարտանայ)՝ ՄՄՁ 6762-ում:

Գ/Ք: Մաքիլ (Ճիրան. ՄՄՁ 873), տէք (Ձէն. ՄՄՁ 6762):

Դ/Թ: Այս հնչունական գուգաձևերից է ՄՄՁ 775-ում՝ մակըր-թիլ-ը (Մաճնուլ):

Ձ/Չ: ՄՄՁ 873-ում հանդիպում է քրթմնչել-ը (Շնջել):

Շնչեղ խուլ/ ձայնեղ բաղաձայններով գուգաձևեր

Թ/Դ: Չուգաձևերն առկա են ՄՄՁ 775-ում՝ շողոքորդել (Համոզել), կանդեղ (Ղամբար), ՄՄՁ 873-ում՝ օղոց (Ձգեստ), լրդագոյն (Սեաւ. նաև ՄՄՁ 566 (I), 6762), ՄՄՁ 3110-ում՝ սաղարդ (Ոստ), դոփ (Ձէն. նաև ՄՄՁ 566 (I), 6762-ում):

Չ/Ջ: Հառաջել (Լալ), վայրահաջ, շատահաջ (Շատախօս), բանանջել (Ձայնք զանազան կենդանեաց) առկա են ՄՄՁ 3110-ում (վերջինը նաև ՄՄՁ 775, 873-ում), մոնջել-ը՝ ՄՄՁ 6762-ում:

Ք/Գ: Առանձնանում է ՄՄՁ 3110-ը՝ բողոզել (Հեղեղել), գոյգ (Բնչք), թագուն, ի թագստի (Ծածկ), թագչիլ, թագուցանել (Ղօղիլ), ճեղզել, ճագիլ (Ճայթել), սայթագել (Գայթակղել), սիւզ (Օղ), տգնիլ (Արթուն կալ): ՄՄՁ 775-ում առկա է գրգուկ-ը (Թուղթ. նաև ՄՄՁ 873), ՄՄՁ 873-ում՝ ներգևակ-ը (Անկողիս):

*Փ/Բ:* Հանդիպում են միայն ՄՄՁ 3110-ում՝ *Հերաթաբ (Ճաղատ), դոբել (Կաքաւել), խաբանել (Արգելուլ),* և ՄՄՁ 873-ում՝ *կամբսակ (Խձուձ):*

*Շնչեղ խուլ/ խուլ բաղաձայններով* զուգաձևեր

*Թ/Տ:* Միակ օրինակը ՄՄՁ 3110-ում է՝ *կատսայ*, բայց և *Տապակ* հենարանով ՆԲՇ-ում *կաթսայ* զուգաձևն է (109ա):

*Փ/Պ:* ՄՄՁ 3110-ում՝ *յապշտակութիւն (Աւար),* և ՄՄՁ 566 (I)-ում՝ *ցոպարան (Լեզուանի):*

*Ք/Կ:* ՄՄՁ 775, 873-ում արձանագրվում է երկու օրինակ՝ *վարտիկ, անդրավարտիկ (Չգեստ):*

*Այլ կարգի բաղաձայնական փոփոխություններով* զուգաձև-վեր

*Խ/Ղ:* Հովհաննես Մուրադյանի հավաստմամբ՝ XII դ. վերջերից ձեռագրերում սովորական է *ղ-ի* և *խ-ի* գրության շփոթը<sup>17</sup>: Քննվող ՁԲ-ներում առկա հնչյունական զուգաձևերն են. ՄՄՁ 3110-ում՝ *ախքատանոց, թաթաղուն (Առատ), թուխթ դնել (Դաշն. բայց կա նաև թուղթ-ը (88բ)), վաղճան (Մահ), սղալանք (Մեղք), վատարաղդ, տարաբաղդ, խարդաղամիտ (Չար):*

*Ժ/Շ:* ՄՄՁ 3110 առկա է *նշդեհ-ը\**, որին առադրվում են *ակնապուշել-ը (Հայիլ. ՄՄՁ 566(I), 775, 873), ակնապուժել-ը՝ ՄՄՁ 3110, 6762-ում:*

*Ճ/Շ:* Միակը *բաշկոն (Չգեստ)* բառն է ՄՄՁ 3110-ում:

*Ձ/Մ:* ՄՄՁ 3110-ում և ՄՄՁ 6762-ում վկայվում են *սկսբնական (Գլխատր)* և *անսգամ (Խիստ)* զուգաձևերը:

*Ը/Ռ:* ՄՄՁ 3110-ում հիշատակվում են *ձեռքակալ առնել (Ըմբռնել), խրչափող (Պարանոց), ՄՄՁ 6762-ում՝ գորոզանալ (Հպարտանալ), Խայտարակել* զուգաձևերը:

*Ռ>ր* հնչյունափոխության փաստ առկա է հայերենի բարբառներում<sup>18</sup> և միջին հայերեն գրված մի շարք ձեռագրերում<sup>19</sup>: Ըստ

<sup>17</sup> Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 212:

\* Առկա է V դ. գրաբարում (տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 31):

<sup>18</sup> Գ. Զառուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջք 51-62, 48:

Գևորգ Չախուկյանի՝ *ո*-ի և *ր*-ի շփոթությունն ոչ նախաբաղաձայնական դիրքում նկատվում է Կուտիի, Հաճընի, Թավրիզի, Թբիլիսիի, Տումիի, Բուրդուրի և Մարաղայի բարբառներում, առավելապես «արևելահայ» բարբառախոս վայրերում, նաև XII-XV դդ. հիշատակարաններում<sup>20</sup>: Հովհաննես Մուրադյանն էլ սրանք համարում է «բանավոր լեզվի առանձին տարբերակներում կատարված փոփոխություններ...», երբեմն նաև անհատական լեզվի առանձնահատկություններ, որոնք գրիչ-փորագրողների և արտագրողների կողմից մուծվել են գրավոր լեզվի մեջ» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 141):

Ն/Մ: Այս գուգաձևերի երկու օրինակ է առկա ՄՄՁ 3110-ում՝ *բանբասել* և *հանբաւ* (Լուր):

ՄՄՁ 3110-ում առկա է Հ/Յ գուգաձևերի միակ օրինակը<sup>21</sup>՝ *համախոյ լինել* (*Միաբանել*), բայց և *Մտածել* հենաբառով ՆԲՇ-ում վկայվում է *մտախոտ* բառը: Գևորգ Չախուկյանը «Հ-ի դիմաց որևէ դիրքում յ-ի...առկայություն» է արձանագրում «արևմտահայ» մի շարք «բարբառախոս վայրերում»<sup>22</sup>:

*Բաղաձայնների անկումով և հավելումով գուգաձևեր*

Բ/Փ: Քննվող ՁԲ-ներում գերակշռողը *շամբուշ*-ն է: *Թմրել կամ թմրրիլ* հենաբառով ՆԲՇ-ն է առկա ՄՄՁ 566 (I), 3110, 6762-ում, միայն *թմրիլ*-ը՝ ՄՄՁ 775, 873-ում:

*Ծոլլ* հենաբառով ՆԲՇ-ում վկայվում են *թմրրեալ* (ՄՄՁ 873, 6762, 566(I)), *թմրեալ* (ՄՄՁ 775, 873) *թմայրեալ* (ՄՄՁ 3110), *ծուլանալ* հենաբառով ՆԲՇ-ներում՝ *թմրրիլ* (ՄՄՁ 775, 873, 6762), *թրմայրիլ* (ՄՄՁ 3110) գուգաձևերը:

Ն-ի հավելումով են *բառանջել*-ը (*Չայնք*. ՄՄՁ 775, 6762) և *Հնանգանդել*-ը (ՄՄՁ 6762), *ն*-ի անկումով՝ *անըդել*-ը (*Օտար*. ՄՄՁ 6762):

<sup>19</sup> Տե՛ս նաև Չ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 222:

<sup>20</sup> Գ. Չախուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջք 17, 22, 28 :

<sup>21</sup> Ռ. Ղազարյանն այն, իբրև միջինհայերենյան «հավվադեալ» երևույթ, արձանագրում է բառասկզբում և բառամիջում (տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 199):

<sup>22</sup> Գ. Չախուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջք 47, 51, 53, 55, 56:

*Յ/Օ:* Միջձայնավորային դիրքում *-յ*-ի անկում առկա է միայն *արքաուհի* բառում (*Թագուհի*. ՄՄՁ 775):

Բառամիջյան դիրքում *յ*-ի հավելումով բառեր արձանագրվում են ՄՄՁ 3110-ում (նաև՝ ՄՄՁ 873-ում)՝ *խայտայճամուկ*, *խայտայխարհին* (*Գոյն*), *խայտայբղետ* (*Խայտ*), *վահանայձուկն* (*Ձկանց տեսակք*):

*Դրափոխությանը և առանց դրափոխության զուգաձևեր*

ՄՄՁ 6762-ում՝ *Չարչարել* հենաբառով ՆԲՇ-ում, առկա են *վշտագնել-վշտանկել* զուգաձևերը\*, իսկ ՄՄՁ 775, 3110-ում՝ *վըշտանգնել* զուգաձևը:

*զ) Չնաբանական զուգաձևեր*

Գևորգ Ջահուկյանի արձանագրած զուգաձևերից քննվող ՉԲ-ներում առկա է «բարբառային» *լոսել*-ը<sup>23</sup> գրական *լեսել* բայի «ձայնդարձային տարբերակը»<sup>24</sup> (*Ծամել*. *Խորտակել*. ՄՄՁ 775, 873, 3110, 6762), *Լոսել* հենաբառով ՆԲՇ-ում՝ նաև *լեսուլ*-ը (ՄՄՁ 775, 873, 3110, 6762):

Չեռագրահամարներից նկատելի է, որ ձայնդարձային զուգաձևերը միևնույն ձեռագրերում են:

*դ) Բառակազմական զուգաձևեր*

*Ածանցային զուգաձևերը*<sup>25</sup> վերաբերում են միայն բայական

\* Բառային տարբերակներն առկա են ՆՀԲ-ում (ՆՀԲ, հ. II, էջ 829-830):

<sup>23</sup> Միջին հայերենում՝ *լեսուլ>լոսել* բառային տարբերակներում, *ե>ո* ձայնավորների փոփոխություն է արձանագրում Ռ. Ղազարյանը (Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 191): Ըստ Է. Աղայանի՝ բարբառներում լայնորեն գործածվող *լոսել*-ի «մանրել» իմաստային անցումը «կապված է արմատի հնագույն (հնդեվրոպական) «տորոել» նշանակության հետ» (Է. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 75-76):

<sup>24</sup> Մանրամասն տե՛ս՝ ՀԼՊՆԺ, էջ 254-255:

<sup>25</sup> Այսպիսիք Գ. Ջահուկյանը ներկայացնում է «Չնաբանական տարբերակներ» ենթախմբում՝ նշելով, որ «...արդեն վաղնջահայերենում պիտի նկատվեին խոնարհման հիմքերի փոխանցումներ»՝ հ.-ե. ոնգայինով հիմքերի հետագա քայքայումը հավանականորեն հանգեցնելով «վ.-հ. \*- a-ne-mi և \*-e-mi >հ.հ. -ան-եմ և -եմ ձևերի փոխանցումներին՝ **անիծանեմ** և **անիծեմ**, **թքանեմ** և **թքեմ**...» (տե՛ս ՀԼՊՆԺ, էջ 255):

-ան- միջաձանցի առկայությանն ու բացակայությանը: Հարկ է թե-  
րևս նշել, որ Վարազ Առաքելյանը դեռևս Աստվածաշնչում է ար-  
ձանագրել բայական փոփոխականեր (միևնույն բայի և՛ պարզ, և՛ ա-  
ծանցավոր ձևեր)<sup>26</sup>: Գևորգ Ջահուկյանի հավաստմամբ էլ «... դա-  
տելով -ն- ածանցով և անաձանց ձևերի հետագա բարբառային  
բաշխումից՝ կարելի է ասել, որ ածանցավոր ձևերն ավելի բնորոշ  
են եղել արևմտյան, անաձանց ձևերը՝ արևելյան տարածքներին,  
բայց ոչ հոծ կերպով» (ՀԼՊՆԺ, էջ 377-378):

Սույն գուգաձևերը ՁԲ-ներում վկայվում են հավասարաչափ՝  
*ըղձալ (Ցանկալ. ՄՄՁ 566(I), 775, 3110, 6762)*- *ըղձանալ (ՄՄՁ 566*  
*(I), 873, 3450, 6762)*, *հատանել (Կրճատել. ՄՄՁ 775, 873)*- *յատանել*  
*(ՄՄՁ 566(I), 3110)* - *յատնել\** (ՄՄՁ 6762. տվյալ օրինակում ընկել  
է -ան- միջաձանցի -ա-ն): Միայն ՄՄՁ 873-ում են առկա *խփանել* և  
*լիզանել (Լիզել* հենաբառի առկայությամբ) գուգաձևերը, ՄՄՁ 775,  
3110, 6762-ում՝ *խփել*, ՄՄՁ 775-ում՝ *լեզունել կամ լեզուլ*:

ե) *Հիմքակազմ գուգաձևեր*

Քննվող ՁԲ-ներում բայարմատ-կատարյալի հիմք տարբե-  
րակով գուգաձևերը վկայվում են մեկական, այն էլ՝ բայարմատ-  
պատճառական հիմք տարբերակով՝ *խտտորել (Դարձուցանել.*  
*ՄՄՁ 3110)*- *խտտրեցուցանել (ՄՄՁ 566(I), 775, 873, 6762)*, *ճշմար-*  
*տել (ՄՄՁ 566 (I), 775, 3110, 6762)*-*ճշմարտացուցանել (Ճշմարտել.*  
*ՄՄՁ 566 (I), 6762)*:

Համփոփումն նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-  
ներում առկա բառային տարբերակների քննության՝ կարելի է ար-  
ձանագրել, որ բնական է ձայնավորային և բաղաձայնական փո-  
փոխություններով այնպիսի գուգաձևերի առկայությունը, որոնք  
հետագոտողներն արձանագրել են գրաբարում, միջնադարյան գր-  
քավոր աղբյուրներում. պարզապես հետագոտողների նշած՝ ձայ-

<sup>26</sup> Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրական լեզուն և ոճը, Ե., 1984, էջ 151-152:

\* Բայց և նույն ՁԲ-ում ոչ միայն նույն, այլև *Հաստատել* հենաբառով ՆԲԾ-ում *հատանել*-ն է (էջ 114 ք):

նավորային փոփոխություններով առաջին զուգաձևերին հավելվում են այլ վկայություններ: Հարկ է նաև նկատել՝

ա) ձայնավորային փոփոխություններով որոշ զուգաձևերով կարելի է առանձնացնել ընդօրինակված գրչագրերը:

բ) Ինչ վերաբերում է բաղաձայնական փոփոխություններով զուգաձևերին, նկատելի է, որ միևնույն ՁԲ-ում առկա են ն՛ ձայնեղ, ն՛ խուլ բաղաձայններով զուգաձևեր: Թեև որոշ դիրքերում բաղաձայնների ձայնեղությամբ զուգաձևերը, ըստ հետազոտողների, և ինչպես արդեն նշվել է, առավելապես բնորոշ են «արևմտահայ բարբառախոս վայրերի»:

Հետևապես, կարելի է թերևս ընդունել, որ գրչագրերի մեծ մասն ընդօրինակվել է Հայաստանի արևմտյան տարածքներում:

**ԲԱՌԻՄԱՍՏՍՅՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՐԲԵՐԱՆՔՆԵՐ**

Աշոտ Սուքիասյանը, անդրադառնալով հոմանիշների «իմաստաբանական չափանիշների» սահմանմանը և վկայակոչելով Յուրի Ապրեսյանին, նշում է՝ «... հստակորեն դեռ չի որոշվել հոմանիշների իմաստների մոտիկության կամ թույլատրելի տարբերության սահմանները կամ աստիճանները»: Նա միաժամանակ արձանագրում է Յուրի Ապրեսյանի դիտարկումը, որ «Իմաստի նրբերանգը իմաստի իմաստաբանական հատկությունը կամ առանձնահատկությունն է, որ նրա մոտ երևան է գալիս լեզվում գոյություն ունեցող մի քանի բառային միավորների՝ միևնույն հասկացությունն արտահայտելու շնորհիվ», և հավելում Արսեն Այտրեյանի և Ստեփանոս Պալասանյանի դրույթները, ըստ որոնց՝ «... շատ հոմանիշներ հաճախ իրարից տարբերակվում են իմաստային զանազան տարբերություններով և նրբերանգներով», և «...լեզվում գոյություն ունեն ինչպես նույն իմաստն արտահայտող, այնպես էլ՝ իմաստի նրբերանգային տարբերություններ ունեցող հոմանիշներ»<sup>1</sup>: Աշոտ Սուքիասյանն արժարժում է նաև հոմանիշների՝ հոմանշության հիմնական չափանիշ չհանդիսացող՝ մասնակի փոխարինելիության հարցը<sup>2</sup>:

Այս տեսանկյուններից դիտարկելիս ՁԲ-ներում առկա բառիմաստային փոփոխությունները զանազանելու խնդիրը բավական բարդ է. դժվար է վստահաբար պնդել, որ բառը նոր իմաստ, իմաստային նոր երանգ է ձեռք բերել, քանի որ ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ:

Էդուարդ Աղայանը, ճշգրտելով ժամանակակից հայերենի իմաստափոխության ժամանակային սահմանները, նշում է, որ «նույնը կատարել է նաև գրաբարի նկատմամբ». գրաբարյան են համարվել այն իմաստափոխությունները, որոնք տեղի են ունեցել

<sup>1</sup> Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջք 62-63, 14, 18:

<sup>2</sup> Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 64-65:



V-XVIII դդ. գրաբարալեզու գրականության մեջ, «բայց առանձնապես՝ 5-11-րդ դարերի մատենագրության մեջ»<sup>3</sup>: Նկատի առնելով այն, որ հայտնի չէ քննվող ՁԲ-ները ստեղծելու ժամանակը (ինչպես նշվել է, ըստ հետազոտողների՝ հավանական է՝ դրանք կազմվել են ավելի վաղ), բառերի իմաստափոխությունը ճշտելու համար համեմատվել են նաև գրաբարի տպագիր բառարանները: ՁԲ-ներում բառիմաստի փոփոխություն կամ բառի իմաստային նոր երանգ ձեռք բերելն արձանագրվում է գրաբարի, միջին, նաև արդի հայերենի բառարանների համեմատությամբ: Շարադրանքը չճանրաբեռնելու համար չանդրադառնալով իմաստափոխության ենթարկված և լեզվաբանական գրականության մեջ արձանագրված՝ ՁԲ-ներում վկայվող բառերին՝ հարկ է պարզապես թվարկել դրանք՝ *անձոռնի, աշխոյժ, արբանեակ, բառացի, դեզերել, թարմատար, համբակ, հաստոց, մարտկոց, պաշտօնեայ, պարետ, պիտակ, ռձիկ, սերտել* և այլն<sup>4</sup>, այլև արձանագրել, որ ՁԲ-ներում առկա բառերը մեծ մասամբ պահպանում են գրաբարյան բառարաններում նշված իմաստները. դա հավանաբար պայմանավորվում է հետազոտողների նշած՝ վանքերին կից բացված դպրոցներով (վանական) և բխում է բառարանների ուսուցողական, գործնական բնույթից: Բառիմաստների մեծ մասն արդի հայերենի բացատրական բառարաններն արձանագրում են «հնց.», «հին», «գրք.» նշումներով, ինչպես՝ *խնդրել* «որոնել, փնտրել»<sup>5</sup>, *յամբանալ* «ուշանալ, դանդաղել» (հմմտ.՝ համբռնթաց, համբաքայլ), *խուզել* «քննել, հետազոտել» (հմմտ.՝ քննախույզ, հետախույզ), *գայթակղել* «գայթեցնել», *թուլամորթել* «թուլամորթ դառնալ» և այլն:

<sup>3</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 74-75:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս նաև ՀԱԲ, հհ. Ա-Դ: Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955: Պ. Բեդիրյան, Իմաստի փոփոխությունները հայերենում, թեկն. աստեն, Ե., 1955: Պ. Բեդիրյան, Հումանիշների և նրանց առաջացման ուղիների մասին, Գիտական աշխատությունների Հայոց լեզվի բաժին N 1, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄԻ, Ե., 1965, էջ 120-131: Ա. Մուքիսյան, նշվ. աշխ.: Է. Աղայան, նշվ. աշխ.:

<sup>5</sup> Է. Աղայանը արդի հայերենում այս բառի համար նշում է իմաստի փոխհաջորդում. տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 106:

Արդ առանձնացվում են այն բառերը, որոնք նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ներում առկա են նոր իմաստով կամ իմաստային նոր երանգով:

**Արդիւնաւորել** բայն առկա է *Շահել. օգտել. ստանալ. ընդունել գպտուղն* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 263ա. 775, 70բ. 873, 208ա. 3110, 103 ա. 6762, 119բ): Գրաբարի տպագիր բառարանները *արդիւնաւորել*-ը հղում են *արդիւնացուցանել*-ին՝ իբրև «Յարդիւնս ածել. բուսուցանել. աճեցուցանել. արտադրել. պողաբեր և հասուն կացուցանել. և Առնել արդեամբք», այլև «Ի կատարումն հասուցանել. արդեամբք ճշմարտել. կատարել» (ՆՀԲ, հ. I, էջ 355: ԱԲ, էջ 134: ԳԲ, հ. Ա, էջ 207): Մխիթար Մեքաստացին *արդիւնաւորել*-ը բացատրում է «շահ ընել. վաստըկիլ» (ԲՀԼՄՄ, էջ 55 (668)): Մանվել Ջախջախյանը «Մտանալ վարձս ըստ գործոց բարեաց, կամ արժանի լինել վարձուց» նշանակությունն առանձնացնում է աստղանիշով (\*-ով) (ՋԲ, էջ 232), այն է՝ «... աստղանիշ բառքն և նշանակութիւնքն չեն նախնի մատենագրաց, այլ արդիք և նորահընարք» (ՋԲ, էջ 9): Միմոն Գաբամաճյանը ԱԲ-ի նմանությամբ հավելում է «վարձք տալ»-ը (ԳՆԲՀԼ, էջ 197): Ստեփան Մալխասյանցն առանց որևէ նշումի *արդիւնաւորել*-ի համար առադրում է «1. Արդիւնք առաջ բերել, արտադրել մի օգտակար բան իբրև աշխատանքի արդիւնք» իմաստը (ՄՀԲԲ, հ. I, էջ 259): Արդի հայերենի բացատրական բառարանները առաջնային իմաստով նշում են «արդյունավոր դարձնել»-ը, այսինքն՝ «արդյունք բերող, շահեկան դարձնել»-ը (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 214: ԱՀԲԲ, էջ 128): Ասել է՝ ճիշտ այն, ինչ արձանագրվում է ըստ ՁԲ-ների. *արդիւնաւորել*-ը նաև «շահել»-ն է՝ *արդիւնաւորել*-ի «արդյունք ստանալ»-ու իմաստային փոփոխությամբ: Ի հաստատումն նշված «շահեկան, օգտակար» նշանակության՝ կարելի է նաև հիշատակել Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից քաղված հետևյալ նախադասության մեջ *արդիւնաւոր* բառի գործածությունը՝ «Սիրել զսիրելիս պարտական է ամե-



ցել... և այլափոխեալ ձևերով՝ **ապուսել** (**ապ** բացասականով) «ժխտել, ուրանալ, մերժել» (ՀԱԲ, հ. Ա, էջ 266, 404): Ուրեմն կարելի է ամրագրել, որ *բացասել*-ը ՁԲ-ներում ունի «ժխտել, մերժել» իմաստը, որը հաստատվում է ոչ միայն ԲՀԼՄՍ-ով, այլև Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից քաղված «...սյսպես և բանս մեր ի հարկէ նոցա լինի՝ զոր ստորասենք կամ *բացասելք*» նախադասությամբ<sup>8</sup> (ընդգծ.՝ Ն. Հ.):

**Բնախոս** բառով է ավարտվում *Իմաստուն. գիտուն. գերիմաստ. բաբունի. վարդապետ. իմաստասեր. բանասեր. բանիբուն. գրոց աշակերտ կամ հնուտ գրոց. հանճարեղ. ուշիմ. մտացի. կորովամիտ. կորովաբան. մտավարժ. նրբամիտ (տե՛ս գիմուտն). ներհուն* ՆԲՇ-ն (ՄՄՁ 775, 60բ. 3110, 90ա)\*: Գրաբարի տպագիր բառարաններում այն վկայվում է «Որ խօսի զբնութենէ զգալի էակաց ... Եւ Բարոյախօս. առակախօս. Եւ Ճշմարտախօս. Ճշգրտաբան. Հաւաստապատում. հնախօս» նշանակություններով (ՆՀԲ, հ. I, էջ 494: ԱԲ, էջ 190: ԳԲ, հ. Ա, էջ 289): Բնականաբար այդ ամենից կամ էլ այդպես խոսողը ենթադրաբար պետք է իմաստուն լինի (սա էլ հենց հավաստվում է ՆԲՇ-ով)՝ նկատի առնելով, որ, Հրաչյա Աճառյանի վկայությամբ, իրանական լեզուներում *բուն*-ը ունի նաև «հիմ, արմատ, հիմնական» նշանակությունները (ՀԱԲ, հ. Ա, էջ 483), ասել է՝ *բնախոս*-ը «եությունը, իսկությունը, մանրամասները» բացահայտողն է: Մխիթար Մեբաստացու բացատրությունն է «թապիլեթի վրայ խօսող» (ԲՀԼՄՍ, էջ 79 (692)), այսինքն՝ «բնությունից, բարբից խոսող»<sup>9</sup>: Հատկանշական է, որ ՄՀԲԲ-ն, պահպանե-

<sup>8</sup> Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց» /Համաբարբառ, Գիրք Բ, 2012, էջ 93:

\* ՄՄՁ 3110-ում առկա է *բնախօս* տարբերակը:

<sup>9</sup> Ըստ Հ. Աճառյանի՝ արաբ. **تَبَيَّنَ** [tabiat] բառն է, զործածվում է Նախիջևանի, Վանի, Ղարաբաղի բարբառներում (Հ. Աճառեան, Թուրքերեն փոխառեալ բառերը Ուլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 119): *Թապիլեթաթ* բառը «բարք» բացատրությամբ արձանագրում է նաև Եղիա Մուշեղյան Կարնեցին. տե՛ս Եղիա Մուշեղյան Կարնեցի, Թուրքերեն-հայերեն բառարան, Ե., 1986, էջ 49:

լով վերոնշյալ իմաստները, հավելում է «4. Նա որ պարապում է բնախօսութեամբ, բնախօսութեան մասնագետ, ֆիզիոլոգ» նշանակությունը (հ. II, էջ 313), որը միակն է արդի հայերենի բացատրական բառարաններում (ԱՀԲԲ, էջ 195: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 328): Հետևաբար կարելի է բառիմաստի փոփոխություն, թերևս ընդլայնում, արձանագրել ՁԲ-ներում, այլև բառիմաստի որոշակի նեղացում, այսինքն՝ իմաստափոխություն տերմինավորումով<sup>10</sup>՝ արդի հայերենում:

Ինչ վերաբերում է ՄՄՁ 566 (I) (109ա), 6762-ում (247ա) առկա *բանախօս* տարբերակին, ապա այն ևս կարող է ընդունելի համարվել: *Բանախօս*-ը հայերենում ունեցել և պահպանել է «Որ հրապարակախօս լինի. ատենախօս. ճառախօս. հռետոր» իմաստը (ՆՀԲ, հ. I, էջ 433: ԱԲ, էջ 167: ԳԲ, հ. Ա, էջ 256: ՄՀԲԲ, հ. I, էջ 326: ԱՀԲԲ, էջ 167: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 279): Եվ ուրեմն ենթադրելի է, որ հրապարակավ խոսողը, հռետորը, ճառախոսը պետք է առնվազն մտավարժ լինի (անգամ չակնարկելով կորովամիտ, գիտուն, իմաստուն լինելը):

*Չչարել* բայն առկա է միայն ՄՄ 566(I), 3110, 6762 -ում՝ *Նախանձել. մախալ. չարակնել. յաջախել. ընդ ակամբ հայիլ. ռխալ. յեռալ. հեռ ունել* ՆԲՇ-ում (համապատասխանաբար՝ էջք 262ա, 102բ, 118բ): ՆՀԲ-ն բայի համար նշում է՝ «**Չչարանամ, զչարիմ** .... որ և իբր ոմկ. **Չարանալ** ասի. այսինքն Չայրանալ, զայրագնիլ. դժուարիլ, դժկամիլ. եղելոցն չար թուիլ յաչս, և խորիել չարիս հասուցանել. չարակնութեամբ վառիլ ի վրեժ քինու» (ՆՀԲ, հ. I, էջ 751), ԱԲ-ն և ԳԲ-ն առադրում են «ցալիլ, տրտմիլ (բարի մտքով)» (ԱԲ, էջ 300), «նեղանալ» (ԳԲ, հ. Ա, էջ 450) իմաստները, որոնք վկայում է նաև ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 38): Ըստ բառարանային տվյալների՝ *զչարել*-ն ակնհայտորեն սկզբնապես չի ունեցել «նախանձել» նշանակությունը. այն նշվածներին է հավելում Մխիթար Սեբաստացին (ԲՀԼՄՍ, էջ 133 (746)): ԲՀ-ն *զչարիլ*-ը բացատրում է իբրև «խոժոռիլ, կամ խողխողել, կամ սպանանել» (ԲՀ, էջ 105): «Նախանձել» ի-

<sup>10</sup> Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 246:

մաստը հավաստում են արևմտահայերենի բառարանները, որոնք *զյարիլ*-ն արձանագրում են «տժգոհիլ, նախանձիլ»<sup>11</sup>, «նախանձիլ, խոժոռիլ» (ԳՆԲՀԼ, էջ 476) նշանակություններով: «Համառօտ բառարանի ի պէտս նորավարժից»-ը *զյարել*-ը բացատրում է իբրև «բարի նախանձով վառուիլ»<sup>12</sup>: «Նախանձել» իմաստն է հավաստվում նաև *հեռ ունել* հարադրությամբ: Հրայցյա Աճառյանը վկայում է, որ *եռ* արմատից «**հ** սաստկականով» *հեռ*-ն ունի «նախանձ, ոխ, կռիւ» նշանակությունը (ՀԱԲ, հ. Բ, էջք 30, 359. հ. Գ, էջ 81)՝ միաժամանակ փաստելով, որ *խեռ*-ը «Թեև «ոխ, նախանձ» նշանակութեամբ նոյնանում է **հեռ** բառի հետ, բայց այս նշանակութիւնը յետին շփոթութեան արդիւնք է, որ կայ նաև արդի բարբառներում: Հնագոյն օրինակներում այս նշանակութեամբ **խեռ**՝ պէտք է փոխել **հեռ**...» (ՀԱԲ, հ. Բ, էջ 359)<sup>13</sup>: Արդի հայերենի բացատրական բառարանները չեն նշում *զյարել* բայը, բայց և հատկանշական է, որ ըստ ԱՀԲԲ-ի՝ *չարանալ*-ի երկրորդ նշանակությունն է «2. Նախանձել, զյարել» (էջ 1157)՝ ճիշտ այնպես, ինչպես ներկայացվում է ՄՀԲԲ-ում (հ. IV, էջ 14):

**Խարդախամիտ** բառն առկա է *Չար* հենարանով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 265բ. 775, 71բ. 873, 210ա. 3110, 105ա. 6762, 121ա): Բառը՝ «խաբեբայ» նշանակությամբ, հիշատակում են ԱԲ-ն (էջ 372) և Լավրենտի Հովհաննիսյանը<sup>14</sup>: Արդի հայերենի բացատրական բառարանները հավելում են նաև «նենգ» նրբիմաստը (ԱՀԲԲ, էջ 570: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 499), որն էլ «չարարուեստ» (ՆՀԲ, հ. II, էջ 412), «չարագործ» (ԱԲ, էջ 613), «գաղտնի չար դիտատրություն ունեցող» (ՄՀԲԲ, հ. III, էջ 450) և «չար բնավորություն ունեցող»-ն է (ԱՀԲԲ և ԺՀԼԲԲ, ն.տ.): Եվ ուրեմն պարզորոշ է արդի հայերենում *խարդախամիտ*-ի հենց ՆԲՇ-ից բխող «չար» նշանակությունը: Թեև չի կա-

<sup>11</sup> Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1192:

<sup>12</sup> Համառօտ բառարանի ի պէտս նորավարժից, Վենետիկ, 1859, էջ 57:

<sup>13</sup> Խոսքը Վանի և Բաղեշի բարբառների մասին է. հմմտ.՝ ՀԼԲԲ, հ. Բ, էջ 314:

<sup>14</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010, էջ 135:

րելի պնդել, որ խարդախ կամ խաբեբա անձնավորությունն անվերապահորեն չար է:

*Բոյն. որջ. մորի* ՆԲՇ-ում (ՄՄԶ 566(I), 239ա. 775, 55բ. 873, 188բ. 3110, 75բ. 6762, 103բ) առկա *խշտի* բառը հայերենի մի քանի բառարաններ բացատրում են իբրև «Անարգ կամ խիստ՝ գետնատարած անկողին՝ գազանաց և մարդկան. տեղի ընկողմանելոյ. մանաւանդ գետնի վրայ» (ՆՀԲ, հ. I, էջ 955: ԱԲ, էջ 383: ՀԱԲ, հ. Բ, էջ 368: ԳՆԲՀԼ, էջ 625), ԲՀ-ն՝ «տեղի, կամ անկողին» (ԲՀ, էջ 144), մի քանիսն էլ՝ նաև «որջ» (ՋԲ, էջ 681: ԽԲՀՌ, հ. I, էջ 510)<sup>15</sup>: Մխիթար Սեբաստացին նշում է *խշտի*-ի «բուն» իմաստը (ԲՀԼՄՄ, էջ 173 (786)): XX-XXI դարերում հրատարակված բառարաններում բառը վկայվում է իբրև «խղճուկ անկողին, հարդանկողին. ձեղնահարկում փոքրիկ խուց ծառաների համար. կատվի՝ շան համար պառկելու լաթ» (ՄՀԲԲ, հ. II, էջ 277), ՀԼԲԲ-ում՝ «Չուլ, փալաս՝ գցելու և վրան պառկելու համար» (հ. Բ, էջ 344), բայց և ՀԼՀԲ-ում *Բոյն* բառահոդվածում «հնց.» նշումով արձանագրվում է *խշտիք*-ը (նաև՝ *որջ*-ը. էջք 131, 268): Կարելի է հավանական համարել, որ հայերենում «գետնատարած անկողին»-ը հասկացության առավելագույն ընդգրկմամբ և իմաստի ընդլայնմամբ «որջ» է նշանակել<sup>16</sup>:

*Հպարտանալ. ամբարտաւանել. փքանալ. ուռել. յորանալ. գոռոզանալ. բարձրամտել. մեծամտել. բարձրավզել. ընդվզել. ամբարհաւաճել. սնափառիլ. փառամոլիլ. սնապարծել. յանդգնիլ. ժրպրհիլ. սուպոանալ. սիզալ. ընդունայն պանծալ. անձնացոյց լինել*

<sup>15</sup> Առձեռն բառագիրք հայերեն- գաղղիերեն Յօրինեաց Կոմիտաս Ա. Ոսկեան (այսուհետև՝ ԱԲՀԳ), Կ. Պօլիս, 1893, էջ 296: Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց Յօրինեալ ի ձ. Մանուէլ վարդապետէ Քաջունի (այսուհետև՝ ՔՄ), հ. III (Համառօտ հայերէնէ ի գաղղիերէն), Վենետիկ, 1893, էջ 100 (52). փակագծերում նշվում է բառարանի PDF ձևաչափով տարբերակի էջը)). KACIUNI-vo12\_suppl12 dict ARM-FR.pdf

<sup>16</sup> Բայց և նշելի է, որ Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում՝ «փոխանակ խրախուրթեանց ճիչ աղաղակի ընդդեմ հեշտալեաց. անհանգիստ ի *խշտի*՝ յերեկօրեաց զառաօտ խնդրեաք. և ի նմա գեռանդ երանեալք» նախադասության մեջ, *խշտի*-ն «գետնատարած անկողին» է նշանակում (Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց» /Համարաբառ, Գիրք Բ, էջ 93. ընդգծ.՝ Ն. Հ.):

(ՄՄՁ 6762, 115ա. 566 (I), 256բ. 3110, 97բ. 775, 66բ. 873, 203բ) ՆԲՇ-ում առկա *խստավզել*-ը վկայվում է ԺԴ դ. ձեռագրերի հիշատակարաններից «համառել» նշանակությամբ<sup>17</sup>։ ՁԲ-ներում այն իմաստային փոքր-ինչ այլ նրբերանգ ունի։ Ինչպես նշվել է, ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, և ի հաստատումն *խստավզել*-ի հավանական «հպարտանալ» իմաստի՝ մի քանի դիտարկում։

ՆՀԲ-ն արձանագրում է *խստավիզ* բառը՝ «Տ. Խստապարանոց» հղումով՝ վերջինս բացատրելով իբրև «...բարձրավիզ. *անընկճելի*. յամառ. *ընդվզեալ. անսաստ...*» (ՆՀԲ, հ. I, էջ 998. տե՛ս նաև ԳՀԲ, էջ 347. ընդգծ.՝ Ն. Հ.)<sup>18</sup>։ *Անընկճելի*-ն, *ընդվզեալ*-ը, *անսաստ*-ը նաև նշանակում են «չճնշվող, չխոնարհվող, անհնազանդ, ըմբոստ» (հմմտ.՝ ՆՀԲ, հ. I, էջք 149, 323, 776, 781)։

ՀԱԲ-ը վկայում է *Վզան* «հպարտ»-ը, որից *վզանիլ* «հպարտանալ»՝ նշելով՝ «ՆՀԲ համարում է *վիզ* բառից, ինչպես կայ հյ. *ընդվզիլ ....*» (ՀԱԲ, հ. Դ, էջ 333-334)<sup>19</sup>։ ՆՀԲ-ի բնագրային օրինակը Փիլոն Եբրայեցու երկի թարգմանությունից է՝ «Բանս անխոնարհըս, և վզան, և անգայ, նմանեալ կաղնույ, որ բեկցի յառաջ զխոնարհելն և գ՛դալ» (հ. II, էջ 818)։ Միաժամանակ ՆՀԲ-ն ունի «Վզիմ, Տ. Ընդվզիլ» բառահոդվածը. վկայությունը Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ից է (հ. II, էջ 819)։ ԲՀ-ի առանձնացրած *Վզանունն - անխոնարհունն* (էջ 302) բառահոդվածով էլ «չխոնարհվել»-ը փոխաբերական իմաստով հանգում է «հպարտ լինել»-ին։ Այնպես որ «հպարտանալ» իմաստն թերևս ընդունելի է, մանավանդ եթե նկատի առնվեն ՀԼԴԲ-ում արձանագրված՝ *Վիզը ծուռ* «զլխակոր, տխուր, ընկճված, անօգնական», *Վիզը ծուել* «... 3. Խոնարհվել», *Վիզը ծուռ մնալ* «1. Հուսահատվել, վհատվել», *Վիզը կոտրել*

<sup>17</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), հ. Ա, Ե., 1987, էջ 358։

<sup>18</sup> *խստավիզ*-ն առկա է *Խխստ* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 110բ. 566 (I), 249 ա. 3110, 91բ. 775, 62ա. 873, 197ա)։

<sup>19</sup> Գ. Զահուկյանը նշում է. «ՎԶԱՆ «հպարտ». տե՛ս *վիզ*» (Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՋՀՄԲ), Ե., 2010, էջ 710)։



«1. Մեծ չափով վնասել, ընկճել...» (ՀԼԴԲ, էջ 550-551)<sup>20</sup> դարձվածա-  
յին միավորները:

ՄՄՁ 775(76ա), 6762-ում (126ա)՝ *Վնասել. մեղանչել. չարիս  
հասուցանել. չար ինչ առնել նմա* ՆԲՇ-ում, առկա է *խուել* բայը:  
Գրաբարի տպագիր բառարաններն այն մեկնում են «... (որպես  
թե՛ իբրև զխոյ բախել կամ հարկանել...)... Խեթկել. եղջերցել. նեղել.  
հարստահարել. տառապեցուցանել. տագնապել» (ՆՀԲ, հ. II, էջ  
982), «չարչրկել, դպչիլ, քշպել» (ԱԲ, էջ 393), այլն «վիրատրանք  
հասցնել, նեղութիւն պատճառել, տագնապի ենթարկել» (ԳԲ, հ. Բ,  
էջ 590): ԲՀ-ն նշում է «զգուել, կամ խարել, կամ նեղել, կամ անար-  
գել» իմաստները (էջ 147): Մխիթար Սեբաստացին մեկնում է  
«մարդու դպչիլ. գուլում ընել» (ԲՀԼՄՄ, էջ 178 (791)): Հրաչյա Ա-  
ճառյանի՝ «գու.» և հարցական նշումներով դիտարկումը վերաբե-  
րում է բարբառներում (Ախց. Ննխ.) «խանդոտիլ», «զգուիլ, գանիլ»  
նշանակություններով գործածվող *խվալ*-ին («Նո յն է արդեօք *խը-  
վալ*...»): ՀԱԲ, հ. Բ, էջ 413): Հարկ է նշել, որ ՀԼԲԲ-ն առանձնաց-  
նում է Խոտըրքորի և Նոր Նախիջևանի բարբառներում առկա *խը-  
վել*-ը՝ «խորշել, զզվել» նշանակությամբ (հ. Բ, էջ 370), ՄՀԲԲ-ն՝ հա-  
վելում «2. Հարցումնքներով նեղացնել»-ը (հ. II, էջ 306): Բայը *Նե-  
ղել* և *Չարչարել* բառահոդվածներում «հնց.» նշումով արձանա-  
գրում է ՀԼՀԲ-ն (էջք 488, 526): Արևմտահայերենի մի քանի բառա-  
րաններ *խուել* բայը վկայում են «նեղել» և «չարչարել» նշանակու-  
թյուններով<sup>21</sup>: *Խուել*-ի «վնասել» նրբիմաստը ենթադրելի է, քանի որ

<sup>20</sup> ՀԼԲԲ-ում «համառել» նշանակությամբ արձանագրված «*Վիզը ընկնեղ*»-ը բը-  
նորոշ է Ղարաբաղի բարբառին (ՀԼԲԲ, հ. Զ, էջ 70): «Ղարաբաղի բարբառի դարձ-  
վածաբանական բառարան»-ում նշվում է *վեզը կօտըրքել* դարձվածային միավո-  
րը «ընկճվել, խեղճանալ, ուժասպառ լինել, մեծ դժբախտության հանդիպել» ի-  
մաստներով (Ա. Սարգսյան, Շ. Մինասյան, Ղարաբաղի բարբառի դարձվածաբա-  
նական բառարան, Ե., 2017, էջք 460, 348):

<sup>21</sup> Յ. Գայայեան, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Գահիրե, 1938, էջ 196:  
Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, Հալեպ, 1954, էջ 525:  
Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգ-  
րունի, Փ.Կ. Տոնիկեան, Պեյրուք, 1968, էջ 269: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I,  
1992, էջ 872:

վիրավորելը, «նեղություն պատճառելը, տագնապի ենթարկելը» ոչ միայն նեղում, չարչարում են, այլև վնասում:

*Ապառում. անզգամ. սուպո. բիրտ. ըմբոստ. հեստ (տե՛ս խիստըն)* ՆԲՇ-ի **Կամակոր** հենարանը (ՄՄՉ 566(I), 252բ. 775, 64ա. 873, 199բ. 3110, 94բ. 6762, 112բ) ՆՀԲ-ն մեկնում է «Ծամածուռ. խեղաթիւր. ոլորեալ .... և Մոլորեալ. թիւրեալ՝ իրօք կամ նմանութեամբ»՝ նաև նշելով՝ «Ըստ հումաձայնութեան յետին վկայութեանց՝ ռամկօրէն կամ առ յետնագոյնս Կամակոր ասի յամառն և կամապաշտ» (հ. I, էջ 1040): ՆՀԲ-ի վերջին դիտարկմանը Հրաչյա Աճառյանը հավելում է՝ «...բառս կարծելով **կամք** և **կոր** բառերից բարդուած՝ գործածում են «յամառ» իմաստով. և այս սխալ նըշանակութիւնը անցել է նաև արդի հայերէնին» (ՀԱԲ, հ. Բ, էջ 500): Մխիթար Սեբաստացին *կամակոր*-ը բացատրում է «ինաստճի» (ԲՀԼՄՍ, էջ 190 (803))՝ իբրև «թուրքերէնէ փոխառեալ» «յամառ»<sup>22</sup>: «Յամառ» նշանակությունը, թեև առանց վկայության, առանձնացնում են նաև ԱԲ-ն (էջ 417), ՋԲ-ն (էջ 742): Նույնն է վկայում ԽՀՌԲ-ն՝ առադրելով "непокорный, неуступчивый, неговорчивый" իմաստները (հ. I, էջ 555): Հատկանշական է ԲՀ-ի արձանագրածը՝ «կամաւ մեղանչօղ կամ նենգաւոր» (էջ 156): Գրիգոր Տաթևացին, ինչպես պարզորոշ է ստորև ներկայացվող օրինակներից, բառն օգտագործում է նախնական իմաստով՝ «Տասներորդ՝ զի կամակո՛ր էն ի չար շաւիղն. որոց բժշկութիւն դժուարին է», «Եւ զայն որպէս թէ ո՛չ ունիցին. և այնու կոխեսցեն զգլուխ կամակոր օձին», «Եւ կսկի՛ծ է անհաւատից. և կուրացոյց զօձն կամակոր»<sup>23</sup>: ՆԲՇ-ում *կամակոր*-ի «համառ» նշանակությունը կարող է հաստատվել նաև *սուպո* բառով, որը Սվեդիայի բարբառում ունի «համառ (երե-

<sup>22</sup> Հ. Աճառյանը այդ նշանակությամբ *ինաստճի*-ն վկայում է Պոլսի, Վանի, Նախիջևանի բարբառներում (Հ. Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, էջ 143), Եղիա Մուշեղյան Կարնեցի՝ «կամակոր, կամապաշտ» նշանակությամբ (Եղիա Մուշեղյան Կարնեցի, Թուրքերէն-հայերէն բառարան, էջ 50):

<sup>23</sup> Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց»/Համարաբառ, Գիրք Գ, 2012, էջ 28:

խա)» նշանակությունը (ՀԼԲԲ, հ. Ե, էջ 379): Նկատի առնելով բառարանային տվյալները, այլև ՆԲՇ-ում *կամակոր* բառի առկայությունը՝ կարելի է արձանագրել, որ քննվող ՁԲ-ներում արդեն առկա է բառի «յամառ և կամապաշտ», ըստ Հրայցյա Աճառյանի՝ «սխալ» նշանակությունը:

ՄՄՁ 566 (I, 243բ), 6762 (107ա)-ում՝ *Զբաղիլ պատաղել պարայել դատարկանալ* ՆԲՇ-ում, առանձնանում են *պարայել* և *դատարկանալ* բայերը: Գրաբարի տպագիր բառարաններում *պարայել* բայի նշանակություններն են «Պարապ առնուլ. դատարկանալ. յետս կալ. պարապ բերել. դեգերիլ. զհետ լինիլ իմիք. պատկառ կալ», «բան գործ չունենալ» (ՆՀԲ, հ. II, էջ 628: ԱԲ, էջ 689: ԳՀԲ, էջ 585): Հրայցյա Աճառյանը, արձանագրելով նաև Աստվածաշնչում վկայվող «զբաղիլ, պարապ ժամանակը նրանով անց կենալ» նշանակությունը (այս երկրորդ իմաստն են վկայում ԱԲ-ն (ԱԲ, ն. տ.) և ԳԲ-ն (հ. Բ, էջ 403)), բառի՝ «զբաղիլ» նշանակութեան զարգացման համար» համեմատում է հունարենում  $\sigma\chi\omicron\lambda\acute{\alpha}\zeta\omega$ ՝ «պարապ ժամանակ անց կացնել. 2. պարապ ժամանակը մի զբաղմունքի նուիրել, զբաղիլ, ուսումնասիրել», այլև վրացերենում *մոցալէ* «պարապ» - *մոցալէրա* «զբաղիլ» իմաստները (ՀԱԲ, հ. Դ, էջ 57): Մխիթար Մեբաստացին *պարայել*-ը մեկնում է «բանի մէջ տալտըրմիշ ընել» (ԲՀԼՄՍ, էջ 336 (949)), այսինքն՝ ինչպես "перен." (փոխաբերական) նշանակությամբ բացատրում-նշում են թուրքերեն-ռուսերեն բառարանները՝ *daldırmak* "быть погруженным в мысли, задуматься"<sup>24</sup>, ասել է՝ «խորհել, մտածել»: Այս փոխաբերական նշանակության առնչությամբ հարկ է հիշատակել *պարայել* բայի համար Երեմիա Մեղրեցու արձանագրած միակ «խոկալ» իմաստը (ԲՀ, էջ 271), և թերևս պարզ դառնա, թե ինչպես է «փոխառվել» այն: ՄՀԲԲ-ն «պարապ» ազատ ժամանակ գտնել մի բանի համար» նըշանա-

<sup>24</sup> St' u Турецко-русский словарь, М., 1977, ст. 206: Հ. Աճառյանը «թուրքերենէ փոխառեալ» «մխել» նշանակությամբ *տալտըրմիշ ընել*-ը վկայում է Նախիջևանի բարբառում, սակայն «կուժը դատարկել» իմաստով (Հ. Աճառեան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներուն, հ. Գ, էջ 328-329):

կույթունը համարում է «հնացած»՝ նշելով արդեն՝ «գործից ազատ ժամանակը լցնել մի երկրորդական զբաղմունքով, ժամանակը նուիրել մի (հիմնական) աշխատանքի, ազատ ժամանակը նուիրել մեկին՝ սովորեցնելու կամ սովորելու նպատակով» իմաստները (հ. IV, էջ 78): Արդի հայերենի բացատրական բառարաններն արձանագրում են միայն «զբաղվել մի բանով, մի բան սովորել, ուսուցանել, սովորեցնել» նշանակությունները (ԱՀԲԲ, էջ 1201: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 186): Ակնհայտորեն *զբաղիլ*, *սպասողել* բայերին հաջորդող *սպասպել*-ը ՆԲՇ-ում ներառվել է հենց «զբաղվել մի բանով» նշանակությամբ, և Մանուկ Աբեղյանի հավաստմամբ՝ «Կ-նշանակե՛ այս բառը ստացել է սկզբնականի հակառակ նշանակությոն»<sup>25</sup>:

Փոքր-ինչ տարակուսելի է ՆԲՇ-ն եզրափակող *դատարկանալ* բայի առկայությունը. այն հականիշ է վերը նշված բառերին և հայերենում, ըստ բառարանների, ունի միայն «անգործ լինել և կալ. խափանիլ գործոյն և ի գործոցն» (ՆՀԲ, հ. I, էջ 601: ԱԲ, էջ 235: ԳԲ, հ. Ա, էջ 353: ԳՀԲ, էջ 207), «դատարկ դառնալ, դատարկվել» իմաստները (ՄՀԲԲ, հ. I, էջ 494: ԱՀԲԲ, էջ 281: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 480): Թերևս կարելի է ենթադրել, որ ՁԲ-ն ժամանակագրական կտրրվածքով ընդօրինակվել է *սպասպել* բայի՝ իմաստի փոխհաջորդման<sup>26</sup> շրջանում, ասել է՝ ընդօրինակողը, հավելելով *դատարկանալ* բայը, տեղյակ չի եղել *սպասպել*-ի նոր իմաստին և հավելել է *դատարկանալ*-ը իբրև «բան-գործ չունենալ» նշանակությամբ *սպասպել*-ի նույնանիշ:

*Տալ* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 273ա. 775, 76բ. 873, 216ա. 3110, 108բ. 6762, 126ա) առկա *վերատրել* բայը զբաբարի տըպագիր բառարանները վկայում են «Ի վեր տալ իւրմէ. բխել. դուրս տալ. ուռճանալ» նշանակություններով (ՆՀԲ, հ. II, էջ 810: ԱԲ, էջ 758: ԳԲ, հ. Բ, էջ 517: ՄՀԲԲ, հ. IV, էջ 327): Այն, իբրև «տալու տարբեր ձևերից մեկը», ՆԲՇ-ում ներառվել է «նորից, կրկին տալ» նշա-

<sup>25</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. 9, էջ 113:

<sup>26</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 106:

նակությամբ: Բաղադրված է, ըստ Հրաչյա Աճառյանի, «յետին յունաբան հեղինակների մօտ» «վերստին, կրկին, նորից, դարձեալ» նշանակությամբ «իբր յն. ἄνα- նախդիրին համապատասխան» *վեր-* նախածանցով (ՀԱԲ, հ. Դ, էջ 330)<sup>27</sup> և *տալ* բայի հրամայականի «շատ անգամ բարդութեանց և ածանցմանց մէջ մտնող» *տուր* ձևով, որի համար Հրաչյա Աճառյանը «յետնաբար» նշում է «**բացատրել, բարեսրութիւն, փառատրութիւն** են» օրինակներ (ՀԱԲ, հ. Դ, էջ 337): Մխիթար Սեբաստացին մեկնում է «յետ տալ. վրան բերել. եւելցնել» (ԲՀԼՄՍ, էջ 374 (987)): *Վերատրեալ* ձևն իբրև «օտար ազդեցությունների կիրառման տիպական օրինակ» արձանագրվում է Հովհաննես Հովովի «Համառօտութիւն ճարտասանական արհեստի» երկում (ցավոք, ուսումնասիրության մեջ իմաստը չի նըշվում)<sup>28</sup>: ԲՀ-ն *վերատրեալ*-ը հղում է՝ *վերցուցեալ*-ին (էջ 302): *Վերատրել* բայը վկայում է նաև Հովհաննես Բարսեղյանը<sup>29</sup>:

*Քնափ* բառն առկա է *Ծոյլ. յոյլ. պղերգ. դանդաղ. հեղգ. դանդաղկոտ. յապաղկոտ. վեհերոտ. վատ. դատարկակեաց. գաղջ. յամրր. թոյլ. մեղկ. թմբրեալ. յամառոյ. քնեած. անարի ՆԲՇ*-ում (ՄՄՁ 566(1), 251բ. 775, 63բ. 873, 199ա. 3110, 94ա. 6762, 112ա): Ըստ ՀԱԲ-ի՝ բառն առկա է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում «քընկոտ» նշանակությամբ (հ. Դ, էջ 592)<sup>30</sup>: Մխիթար Սեբաստացին *քնափ*-ը հղում է՝ «տե՛ս Քնեած»՝ բացատրելով՝ «քնու խենթ, քնոտ» (ԲՀԼՄՍ, էջ 411 (1024)): ԲՀ-ն բառը բացատրում է «քնով ավշեալ» (էջ 334), նույնն է վկայում Նորայր Բյուզանդացին՝ նշելով, որ բառը առկա է հին բառգրքերում<sup>31</sup>: ՄՀԲԲ-ն «հին բառ կամ նշանակու-

<sup>27</sup> Լ. Հովհաննիսյանը IX դ. վկայում է «վերստին տեսնել» նշանակությամբ *վերստեսանել* բայը (Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 266):

<sup>28</sup> Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 188-189:

<sup>29</sup> Զ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական- ուղղախոսական, տերմինաբանական բառարան (այսուհետև՝ ՀՀԶԲ), Ե., 1973, էջ 871:

<sup>30</sup> Իբրև գրաբարում չվկայված բառ՝ նույն՝ «քնկոտ» նշանակությամբ, արձանագրում է նաև Լ. Հովհաննիսյանը (Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 289):

<sup>31</sup> Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց (այսուհետև՝ ՆԲԲ), Փնեւ, 2000, էջ 745: Հարկ է նաև հիշատակել Ալ. Մարգարյանի առաջարկած ստուգաբանությունը, ըստ որի՝ *քնափ*-ը կազմված է *քնու*

թին» նշումով հավելում է նաև «շատ քնոդ» բացատրությունը (հ. IV, էջ 579): Այդպես է վկայում նաև ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 741), իսկ ԱՀԲԲ-ն՝ առանց որևէ նշումի (էջ 1571): Գրիգոր Փեշտրմալճյանը, *քնափ*-ը հղելով *քնեած*-ին, մանրամասնում է՝ «...և յայսմանէ նրմանութեամբ առեալ, քնեած կոչին արք դանդաղկոտք և պղերգք, և թմրեալք ըզգայութեամբք, և ապուշք մտօք...» (ՓԲ, հ. II, էջ 923), ասել է՝ *քնափ*-ը «քնից թմրած, դանդաղկոտ, ծույլ»-ն է: Այսպես համարելու են տրամադրում «Գիրք հարցմանց»-ից քաղված հետևյալ նախադասությունները՝ «Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղձն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն... և պալղամն ծոյլ և *քնափ*», «Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ .... թէ *քնափ* և թէ կուօդ»<sup>32</sup>, որոնց օգնությամբ կարելի է հավաստել, որ ծույլը կարող է քնատ, քնկոտ լինել, սակայն ամեննին պարտադիր չէ՝ *քնափ*, ասել է՝ շարունակ քնել ցանկացողը ծույլ լինի: *Քնափ*-ի այս իմաստը, ինչպես նշում է Գրիգոր Փեշտրմալճյանը, պայմանավորվում է բառի համաբանական գործածությամբ (ՓԲ, ն.տ.):

\* \*  
\*

Ստորև ներկայացվում են Հրաչյա Աճառյանի առանձնացրած մի քանի «նոր բառեր», որոնք քննվող ՁԲ-ներում առկա են նոր բառիմաստներով կամ իմաստային երանգներով:

**Ղերասան** բառը վկայվում է *Ծաղրաբան. ծաղրածու. հացկատակ. կատակերգու. կատակախօս. կատակաբան* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 250ա. 3110, 93ա. 775, 63ա. 873, 199ա. 6762, 111բ): Հրաչյա Աճառյանը բառը ներկայացնում է «փոխանակ, տեղը. 2. սուտ, ներհակ, հակառակ» նշանակությամբ **Ղեր** նախամասնիկի բառահոդվածում՝ նշելով՝ «...նոր լեզուի մէջ՝ **ղեր** «մէկի արած

և *արբենալ* (*//արբել*) բայի *արբ* արմատներից՝ արտահայտելով «քնով արբած» իմաստը. տե՛ս Ալ. Մարգարյան, Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 157-158:

<sup>32</sup> Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց»/Համաբարբառ, Գիրք Դ, 2013, էջ 909-910:

կամ անելիք բանը» (rôle), որից դերասան (արդեն գիտե Վարդան Յունանեան, Ձեռքածութիւն, 1671, էջ 304)....» (ՀԱԲ, հ. Ա, էջ 655)<sup>33</sup>: Հաշվի առնելով Հրայր Աճառյանի «արդեն գիտե...» պնդումը, այլև բառարանային տվյալները՝ փաստորեն կարելի է արձանագրել, որ հայ իրականության մեջ *դերասան* բառը երկրորդ անգամ հանդիպում է այս ՁԲ-ներում:

«Ձեռքածութիւն յերկինս» գրքի թարգմանիչ Վարդան Հունանյանը «բառարան գրքիս» բաժնում *դերասան*-ը բացատրում է՝ «...իրակօղ առասպելի, և ծիծաղունեաց իրաց. որ անձնայլակեցեալ, վիպէ զա՛ռս օտարաց, ընտեսարանում, կամ ի քաղաքայնում հրապարակի: Դերասան կոչի ևս, ամենայն կատակառու, և խաղարկու՝ նաև նշելով, որ բառը լատիներեն հնչում է «Հիսթորիո»<sup>34</sup>: Այսինքն՝ *դերասան*-ը «կատակ, ծաղր անող» -ն է, ասել է՝ կատակերգական դերեր կատարողը, կատակերգություն խաղացողը: Հարկ է հիշեցնել, որ գրաբարում *խաղ*-ը և *կատակ*-ը նշանակել են «ծաղր. կատակ. այլն», իսկ *կատակ*-ը՝ նաև «կատակերգակ. ծաղրածու. հացկատակ» (ՆՀԲ, հ. I, էջք 913, 1060)<sup>35</sup>:

Թատերագետ Վահրամ Թերզիբաշյանի հավաստմամբ՝ «Մինչև 18-րդ դ. վերջը և նույնիսկ 19-րդ դ. սկիզբը դրամատիկ արվեստը հայ իրականության մեջ դեռևս խստորեն դիֆերենցիացիայի և բյուրեղացման չեն ենթարկված, և թատրոնը դեռևս հանդիսանում էր արվեստի մի բնագավառ, ուր երգը, պարը նույնիսկ կրկեսային արվեստը (լարախաղացությունը, ակրոբատիկան,

<sup>33</sup> Բառը *-ան* ածանցով բաղադրված բառերի շարքում «լատինաբան հայերենում պայմանականորեն նորակազմություն» է համարում Վ. Համբարձումյանը (Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 236):

<sup>34</sup> Ձեռքածութիւն յերկինս, Յօրինեցեալ աշխատասիրութեամբ տեառն Յոհաննու Պօնաի, Եւ թարգմանեցեալ ի հայկական բարբառ, ի Վարդանայ Յունանեան, Հր-ում, 1674, էջ 473 (նշվում է աշխատության PDF ձևաչափով տարբերակի էջը): Լատիներեն *histrio*՝ «актёр» (А. Малинин, Латинско-русский словарь, М., 1961, стр. 301):

<sup>35</sup> Ստ. Մալխասյանցը *խաղարկու*-ն «հզվղ.» նշումով բացատրում է որպես «խաղացող, ներկայացում տողը». ՄՀԲԲ, հ. II, էջ 233:

ատլետիկան) միախառնվում էին»<sup>36</sup>, հետևաբար ընդունելի է *դերասան* բառի առկայությունը նշված ՆԲՇ-ում: Մանավանդ եթե նկատի առնվի նաև Վահրամ Թերզիբաշյանի հիշատակած մեկ այլ փաստ, ըստ որի՝ թեև «Հայ դպրոցական թատրոնի պատմության մեջ» «կոմեդիայի տարրերը» առկա են «դեռևս 17-րդ դարում», այդուհանդերձ «...Կոմեդիան (... Որում հանդես են գալիս «անարի ծուլերը և ընչասերները», որոնք ենթարկվում են ծաղրի ու արհամարհանքի...») որպես ժանր երևան է գալիս 18-րդ դ. վերջերին»<sup>37</sup>:

Բառն արձանագրել են Հակոբ Վիլյոտը՝ իբրև *դերասան* բացատրելով *Comedus, Comicus homo, Hiftrio, Mimus, Pantomimus, Scurra* բառերը <sup>38</sup>, Հարություն Ավգերյանը՝ *դերասան*-ը թարգմանելով *Áctor, Chárlatan, Mime, Mimick, Múmmer*<sup>39</sup> և *Bateleur, Comique, Jongleur*<sup>40</sup>, Մանվել Քաջունին (ՔՄ, էջ 55 (29)), Կոմիտաս Ոսկյանը (ԱԲՀԳ, էջ 181), Ստեփան Մալխասյանցը՝ «արտիստ» (ՄՀԲԲ, հ. I, էջ 507), Աղեքսանդր Խուղարաշյանցը՝ նաև "комедиа́нтъ" (ԽԲՀՌ, հ. 1, էջ 314-315) բացատրություններով: Եվ ըստ վերը նշվածի՝ կարելի է ենթադրել, որ նախապես *դերասան* է համարվել կատակերգուն, կատակերգակը:

Լեզվաբանները (որքան հաջողվել է պարզել) բառին չեն անդրադարձել: Այն պարզապես ընկալվում է որպես «դեր ասող», թեև Լևոն Հախվերդյանը գտնում է, որ «Իմաստաբանական առումով դերասան (դեր ասող) բառը ճիշտ չի բնորոշում մասնագիտության էությունը, քանի որ դեր անձնավորողը ոչ թե դեր է ասում, այլ գործում է, ըստ որում, դերի տեքստն ասելը ևս մտնում է

<sup>36</sup> Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, Ե., 1959, էջ 24:

<sup>37</sup> Վ. Թերզիբաշյան, նշվ. աշխ., էջ 13, 172:

<sup>38</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714, pp. 130 345, 474, 534, 648.

<sup>39</sup> Բառարան անգղիարեն եւ հայերեն, աշխատ. ի Ն. Յ. վրդ.Աւգերեան, Վենետիկ, հ. Ա, 1821, էջ 10-11, 138, 549:

<sup>40</sup> Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, աշխատ. Ն. Յարութին վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1840, էջ 69, 141, 407:



այդ իրողության մեջ»<sup>41</sup>: Արդի հայերենի բացատրական բառարաններում *դերասանի* «Թատերական ներկայացումներում գործող անձանց դերերի մասնագետ կատարող, պրոֆեսիոնալ դերակատար» բացատրությունն է՝ ԱՀԲԲ-ում հետևյալ հավելումով՝ «Արվեստի ստեղծագործությունները հրապարակավ կատարող մարդ, արտիստ» (ԱՀԲԲ, էջ 291: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 499): Ուրեմն արդի հայերենում կարելի է արձանագրել *դերասան*-ի բառիմաստի ընդլայնում:

Նշված ՆԲՇ-ից ՀԱԲ-ում «նոր բառեր» են դիտվում նաև *կատակաբան*-ը, *կատակերգու*-ն, *կատակախօս*-ը (ՀԱԲ, հ. Բ, էջ 536): *Ծաղրաբան*-ը նույնպես վկայված չէ գրաբարի տպագիր բառարաններում (Հրաչյա Աճառյանը իբրև «նոր բառ» է նշում միայն *ծաղրաբանություն*-ը. տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 439):

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *կատակաբան* բառում (այլև *դատարկաբան*, *զավեշտաբան*, *զվարճաբան* և այլն) *բան* բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող»՝ «կատակներ անող, կատակել սիրող (անձ), զվարճաբան, զվարճախոս» (ԱՀԲԲ, էջ 699: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 65): Նույն բացատրությունն ունի նաև *ծաղրաբան*-ը (ԱՀԲԲ, էջ 629), որը հղվում է *ծաղրածու*-ին. վերջինս երրորդ-չորրորդ նշանակություններով և «թատր., հնց.» նշումներով մեկնաբանվում է իբրև «3. Հտպիտախաղերի հերոս-կատակերգակ: 4. Շրջիկ ժողովրդական կատակաբան» (ԱՀԲԲ, էջ 630), «5. Հին կատակերգությունների՝ շրջիկ ներկայացումների մեջ ծիծաղաշարժ անձ» (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 630):

Հարկ է նաև ներկայացնել XVIII դարում և դրանից հետո լույս տեսած բառարանների տվյալները՝ ճշտելու նշված բառերի բառիմաստային փոփոխությունները: Մխիթար Սեբաստացին *ծաղրաբան*-ը հղում է *ծաղրածու*-ին՝ վերջինս բացատրելով «ծիծաղընօղ, մասխարութիւն ընօղ» (ԲՀԼՄՍ, էջ 183 (796)), *կատակերգու*-ն՝ «մասխարութիւն ընօղ» (ԲՀԼՄՍ, էջ 194 (807)): Աղեքսանդր Խուդաբաշյանցը նույնպես *ծաղրաբան*-ը բացատրում է

<sup>41</sup> Լ. Հախվերդյան, Թատերագիտական բառարան, Ե., 1986, էջ 44:

իրրև "шутникъ" և *կատակերգու*-ն հղելով *կատակերգակ*-ին՝ արձանագրում նաև "комедіантъ" նշանակությունը (ԽԲՀՌ, հ. I, էջք 535, 567): Ստեփան Մալխասյանցը *ծաղրաբան*-ը հղում է *գուարձարան-գուարձախօս*-ին՝ որպես «գուարձալի կերպով խօսող, խօսքերով ծիծաղ շարժող, կատակախօս, հանաքչի» (ՄՀԲԲ, հ. II, էջք 32, 324), իսկ *կատակաբան*-ը, *կատակախօս*-ը և *կատակերգու*-ն՝ բացատրում համապատասխանաբար՝ «կատակներով խօսող, կատակներ անող, գուարձախօս, հանաքչի» և «դերասան, որ կատակերգական դեր է կատարում» (ՄՀԲԲ, հ. II, էջ 397): ՄՀԲ-ում *կատակերգու*-ն «կատակախոս, ծաղրածու»-ն է (ՄՀԲ, հ. Ա, էջ 386), արդի հայերենի բացատրական բառարաններում *կատակերգու*-ի երկրորդ իմաստն է «կատակերգական դերեր կատարող դերասան» (ԱՀԲԲ, ն. տ.: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 66): Արդի հայերենում, ըստ բառարանների, վերոհիշյալ բառերի ունեցած իմաստներին զուգորդվել են նորերը, այսինքն՝ պահպանելով հինը՝ դրանք ձեռք են բերել նոր իմաստներ<sup>42</sup>:

**Եփարան** բառի մասին տե՛ս 132-133-րդ էջերում:

**Թարմ**-ը *փափուկ. կակուղ. խոնավ. գողտր. գուարթ. նոր* (ՄՄԶ 6762, 108ա. 566(1), 245ա. 775, 60ա. 873, 194ա. 3110, 88ա) ՆԲԾ-ի հենաբառն է: Ինչպես հավաստում է Նորայր Բյուզանդացին, «Թարմ յիջի ի Նոր Հայկազեան. ի բառ Թաժայ եւ դնի լծորդ ընդ ջերմն» (ՆԲԲ, էջ 222): Իրապես, ՆՀԲ-ն փաստում է՝ «ԹԱԺԱՅ, կամ ԹԱԺԱՀ, կամ ԴԱԺԱՅ .... Բառ ոմկ. թագա, թագէ. այսինքն Նոր, ո՛չ հնացեալ. (գոր այլք Թարմ կոչեցին, լծ. ընդ ջերմն. յն. թերմօս)» (ՆՀԲ, հ. I, էջ 791): ՀԱԲ-ն արձանագրում է *թարմ*-ը միջին հայերենում՝ «թաժա, թագէ, նոր» նշանակություններով՝ նշելով՝ «յիշում են միայն Մխիթար Աբբան և Ջախջախյանը» (հ. Բ, էջ 161)<sup>43</sup>: Հրաչյա Աճառյանը *թարմ*-ը համարում է բնիկ հայերեն բառ՝ համեմատելով նաև «պրս. تر tar «թաց, թարմ», .... յն. τέρογ «քնքուշ, մատղաշ, փափուկ», սաբին. tereno «կակուղ»» և մի քանի այլ տար-

<sup>42</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 101-102:

<sup>43</sup> *Թարմ*-ի մասին տե՛ս նաև Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, էջ 135:

բերակ (ՀԱԲ, ն.տ.): Մխիթար Սեբաստացին և Մանվել Ջախջախյանը բառը բացատրում են «այն, որ զիր խոնաւութիւն և զղալարութիւն ոչ է կորուսեալ» (ԲՀԼ, էջ 311 (344)), «ղալար, մատաղ, փափուկ» (ՋԲ, էջ 563): ՄՀԲԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարաններն առանձնացնում են *թարմ*-ի մի քանի նշանակություն, այդ թվում՝ «առոյգ, կայտառ, աշխոյժը վրան, չոզնած», որ առկա են նաև արևմտահայերենում<sup>44</sup> (ՄՀԲԲ, հ. II, էջ 87: տե՛ս ԱՀԲԲ, էջ 423: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 154): ՄՀԲ-ն վկայում է ՆՀԲ-ի առանձնացրած տարբերակները՝ իբրև «թարմ, նոր» (հ.Ա, էջ 243)<sup>45</sup>:

Թեև վերոնշյալ բառարաններում արձանագրված «առոյգ, կայտառ, աշխոյժը վրան, չոզնած» նշանակությունները հուշում են «թարմ լինել»-ը, այդուհանդերձ ՁԲ-ներում առկա *գուարթ*-ը իբրև «թարմ» արձանագրում են միայն արդի հայերենի բացատրական բառարանները (ԺՀԼԲԲ, հ. II, էջ 51-52: ԱՀԲԲ, էջ 380): Ասել է՝ արդի հայերենում, ըստ բառարանային տվյալների, կիրառվում է ՁԲ-ներում «թարմ» նշանակությամբ վկայվող *գուարթ*-ը:

*Հոշել* բայն առկա է *Կոչել. ձայնել, կարդալ. հրավիրել. ասել. (եթէ անուռ տալ) անուանել. յորջորջել* ՆԲԾ-ում (ՄՄՁ 6762, 113ա. 566(1), 253բ. 775, 64բ. 873, 200բ. 3110, 95ա): Հրաչյա Աճառյանը *հոշել*-ը չի առանձնացնում որպես «նոր բառ» (բառը չեն վկայում գրաբարի տպագիր բառարանները)<sup>46</sup>, «առանձին անգործածական» *հոշ* արմատի համար, բացի մի շարք քերականություններում հանդիպող *հոշական* «կոչական» բառի մի քանի գործածությունից, նա նշում է միայն՝ «...**հոշել** «կոչել» Բառ. երեմ. էջ 185,

<sup>44</sup> Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 145:

<sup>45</sup> Մ. Մուրադյանի հավաստում է՝ «Միջին գրական լեզվի բառապաշարը... զարգացում է ապրում մի քանի ուղղություններով»՝ նշելով, որ այն հարստանում է «բնիկ ծագմամբ» բարբառային բազմաթիվ նոր բառերով՝ հիշատակելով նաև «նոր» իմաստով *թարմ* բառը (տե՛ս Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Ե., 1975, էջ 150):

<sup>46</sup> Խոսքը վերաբերում է հետևյալ բառարաններին՝ ՆՀԲ, ԱԲ, ԲՀԼ, ԳԲ, ԳՀԲ, Նոր բազմիրք հայկազեան լեզուի, սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով, հհ. 1-5, Ժնեւ, 1990:

որից նաև ՓԲ» (ՀԱԲ, հ. Գ, 1977, էջ 114): Այնպես որ *հռչել*-ի դեպքում կարելի է արձանագրել, որ բառի գոյությունը հավաստում են նաև քննվող ՁԲ-ները:

*Իմաստուն* հենաբառով ՆԲՇ-ում (տե՛ս 51-րդ էջում) առանձնանում է *նրբամիտ* բառը: Հրաչյա Աճառյանը *նուրբ* արմատով բաղադրված բառերի շարքում այն համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. Գ, էջ 473): *Նրբամիտ*-ը «սրամիտ, ուշիմամիտ» նշանակություններով առկա է ՋԲ-ում (էջ 1090) և ՓԲ-ում (հ. II, էջ 430): ՄՀԲԲ-ն առանձնացնում է «նուրբ մտածող, նուրբ խելքի տեր, մանր դիտող, խորաթափանց» իմաստները (հ. III, էջ 488): Նույնն են արձանագրում արդի հայերենի բացատրական բառարանները՝ հավելելով «նրբանկատ, փափկանկատ»-ը (ՍՀԲԲ, էջ 1089: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 52), իսկ ՀԼՀԲ-ն հոմանիշների շարքում արձանագրում է նաև *խորիմաստ*, *քաջիմաց*, *խորամիտ* բառերը (էջ 495): *Նուրբ* արմատով բաղադրված բառերից «իմաստուն» նշանակությունն ունի նաև Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում առկա *նրբահայեաց*-ը՝ «...այնպես բթամիտն ոչ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ...»<sup>47</sup>: ՁԲ-ների ՆԲՇ-ն, այլև ՀԼՀԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարանները հուշում են *նրբամիտ*-ի «իմաստուն» նշանակությունը:

Այսպիսով՝ առանձնացված բառերը գրաբարի տպագիր բառարանների համեմատությամբ հանդես են գալիս այլ բառիմաստներով, որոնք հաստատվում են հայ մատենագրության բնագրային օրինակներով, XVIII դարում և XVIII դարից հետո հրատարակված բառարաններով. այդ բառիմաստները մեծավ մասամբ պահպանվում են արդի հայերենում:

\* \*  
\*

Բառարանային դիտարկումներն ու պրպտումները, ինչպես արդեն նշվել է, հնարավորություն են ընձեռում առանձնացնելու

<sup>47</sup> Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց» /Համաբարբառ, Գիրք Գ, էջ 1028:

նան ժամանակակից հայերենում իմաստափոխված կամ իմաստային փոքր-ինչ այլ երանգով առկա բառերը:

Էդուարդ Աղայանի հավաստմամբ՝ «...ժամանակակից հայերենի պատմական իմաստաբանության համար առաջնակարգ նշանակություն ունեն գրաբարյան իմաստափոխությունները, որովհետև մեր լեզվի բառապաշարի հիմնական զանգվածը կամ միջուկը գրական ժառանգորդությամբ գրաբարից է գալիս և գրաբարյան իմաստափոխությունները, բնականաբար, ժառանգորդաբար անցել են ժամանակակից հայերենին»<sup>48</sup>: Նա, վերլուծելով «գրաբարից գրական ժառանգորդությամբ աշխարհաբարին անցած բառերի գրաբարյան և ժամանակակից իմաստների հարաբերակցությունները», հանգում է այն եզրակացության, որ «գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցությունը» որոշելը «հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի ոչ գրաբարյան նշանակությունները..., որոնց օգնությամբ միայն կարելի է ճշտորոշել գրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և դրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին»<sup>49</sup>:

Հարկ է կրկին հիշեցնել ՁԲ-ներն ուսումնասիրողների այն կարծիքը, որ թեև դրանք թվագրվում են որոշակի դարերով, սակայն հավանական է՝ վերաբերում են ավելի վաղ շրջանի. ասվածը վերագրելի է նաև նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ներիին: Այսինքն՝ այս ՁԲ-ներում առկա բառիմաստային փոփոխությունները հավանաբար կատարվել են մինչև XVIII դ.:

Արդ, քննվող ՁԲ-ներում առկա այն բառերի մասին, որոնք իմաստափոխվել են արդի հայերենում:

Ե՛վ գրաբարի, և՛ արդի հայերենի բացատրական բառարանները *արգահատել* բայն արձանագրում են «գթալ, կարեկցել, խըղձալ, խղճահարվել» իմաստներով (ՆՀԲ, հ. I, էջ 343: ԱԲ, էջ 131: ԲՀԼ, էջ 101 (130): ՄՀԲԲ, հ. I, էջ 255: ԱՀԲԲ, էջ 126: ԺՀԼԲԲ, հ. I, էջ

<sup>48</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 76:

<sup>49</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 77- 78:

210: ԳԲ, հ. Ա, էջ 203): Այն առկա է *Մխիթարել. սփռփել. խօսիլ ի սիրտ նորա* ՆԲԾ-ում (ՄՄՁ 566 (I), 260բ. 775, 68բ. 873, 206ա. 3110, 101ա. 6762, 117բ): Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *արգահատել*-ը կազմվել է առանձին անգործածական, «գուր» նշանակությամբ *արգահատ* արմատից (ՀԱԲ, հ. Ա, էջ 302): Արդի հայերենում, այդուհանդերձ, *արգահատել* բայն առավելապես կիրառվում է «արհամարհել» իմաստով: Այդ ոչ հիմնական՝ երկրորդական, իմաստը վկայում է միայն Էդուարդ Աղայանը (ԱՀԲԲ, էջ 126): Աշոտ Սուքիասյանն արձանագրում է ոչ միայն «Արգահատել ....Գթալ, խղճալ, կարեկցել, մեղքանալ, գորովել ....», այլև *արգահատելի* բառաշարքը, որում ներկայացվում են «Խղճալի, խղճուկ, կարեկցելի, կարեկցական, արգահատական, ողորմելի, ցավալի, եղկելի, ողբալի: Գթաշարժ» հոմանիշները (ՀԼՀԲ, էջ 92): Այս բառարանում *արգահատելի* բառն առկա է նաև «Եղկելի.... ողբալի, թշվառական, թշվառ .... խղճալի, ողորմելի, ցավալի, արգահատելի.... եղկական (հզվդ.)» բառաշարքում (ՀԼՀԲ, էջ 108):

Կարելի<sup>50</sup> է արդյոք ընդունել, որ, ինչպես նշում է Էդուարդ Աղայանը, «ըստ իմաստային զարգացման արդյունքի», տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում՝ բառի հին իմաստի կորուստ և նոր իմաստի ձեռքբերում, այլ ձևակերպմամբ՝ բառի նախկին իմաստի փոխարինում նոր իմաստով<sup>50</sup>, թե առավել հավանական է իմաստափոխություն՝ ապաստուգաբանության հիմունքով<sup>51</sup>, այսինքն՝ *արգահատ* արմատի փոխարեն ենթադրել «առանձին անգործածական» *արգ* («յարգ, արժեք, արժանիք». ՀԱԲ, հ. Ա, էջ 301) և *հատ* («կտրելը, հատուած կտոր...., որից *հատանել* «կտրել, կրճատել.... պակասեցնել....»». ՀԱԲ, հ. Գ, էջ 50-51) արմատներով կազմություն: Իմաստային այս անցումը, այդուհանդերձ, տարակուսելի է, քանի որ չի կարելի անվերապահորեն պնդել, որ խղճալի,

<sup>50</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 106: Պ. Բեդիրյանը «Արգահատել «խղճալ» > «արհամարհել» (հմմտ.՝ *արգահատելի// ողորմելի//խղճալի. խղճուկ// թշվառական*) բառերի շարքը ներկայացնում է իբրև բառիմաստի անցման (շրջման) օրինակ (Պ. Բեդիրյան, Իմաստի փոփոխությունները հայերենում, էջ 72):

<sup>51</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 84-86:

խղճուկ, այլև կարեկցանք և խղճահարություն առաջացնող կամ աղերսող անձն արհամարհանքի է արժանի:

Գրաբարի տպագիր բառարաններում *գռեհիկ* բառի գոյականաբար և ածականաբար վկայված իմաստներն են՝ «ռամիկ՝ որ ի գռեհս շրջի. շինական. աշխարհիկ. տխմար. ռամկական. վարի մարդիկ, գեղջուկ, գեղացի» (ՆՀԲ, հ. I, էջ 581: ԱԲ, էջ 227: ԳԲ, հ. Ա, էջ 342): Այն առկա է *Գեղջուկ. գիւղակ. շինական. ռամիկ. ռամկական* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 240ա. 775, 56ա. 873, 189բ. 3110, 81բ. 6762, 104բ): Հրաչյա Աճառյանը համարում է, որ *գռեհիկ*-ը «... «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ»-ն է, «(.... ինչպես կայ հիմայ փողոցային բառը)....» (ՀԱԲ, հ. Ա, էջ 600): *Գռեհիկ*-ի «փողոցային, անճաշակ, անվայել. անտաշ, կոպիտ, տխմար. անմշակ, ռամկական» նշանակություններն արձանագրում է Ստեփան Մալխասյանցը՝ «գիւղացի, շինական» իմաստի համար նշելով, որ այն հատկապես «հնում» է գործածվել (ՄՀԲԲ, հ. I, էջ 471): Արդի հայերենի բացատրական բառարաններում *գռեհիկ*-ը վկայվում է ՄՀԲԲում առանձնացված ածականական, գոյականական, այլև մակբայական նոր կիրառությամբ (ԱՀԲԲ, էջ 259: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 443)<sup>52</sup>: Ուրեմն ընդունելի է արդի հայերենում *գռեհիկ*-ի իմաստափոխությունը՝ Էդուարդ Աղայանի ձևակերպմամբ զգացական -վերաբերմունքային հիմունքով<sup>53</sup>:

Ինչ վերաբերում է ՆԲՇ-ում առկա *գիւղակ* բառին (*գիւղակ*՝ «պզտի գեղ, փոքրիկ գիւղ». ԱԲ, էջ 217: ՄՀԲԲ, հ. I, էջ 441. նաև՝ ԱՀԲԲ, էջ 248: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 421), ապա, նկատի առնելով հաջորդող *շինական*, այլև ՆԲՇ-ն եզրափակող *ռամկական* բառերի առկայությունը, այն կարելի է սխալագրություն համարել՝ ընդունե-

<sup>52</sup> Տե՛ս նաև Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 90: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 104: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 98: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 421: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 87:

<sup>53</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 87: Պ. Բեդիրյանը «*Գռեհիկ* (փողոցային) բառի անցումը «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ» իմաստին» համարում է իմաստափոխություն՝ «կապված հասարակական վերաբերմունքի հետ». Պ. Բեդիրյան, նշվ. ստեղծ., էջ 242:

լով, որ **գիղական** բառի փոխարեն ընդօրինակվել է կրճատ **գիղակ** ձևը. ՆԲՇ-ում **գիղական** բառն ակնհայտորեն ունի «գեղջուկ, ռամիկ, գեղացի» իմաստները: Արդի հայերենի բացատրական բառարաններում **գիղական**-ի համար առկա են «գյուղին, գյուղացուն վերաբերող՝ հատուկ, գյուղի» նշանակությունները (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 421: ԱՀԲԲ, էջ 248): Հրաչյա Աճառյանը հիշատակում է «նոր գրականում ընդունուած **գիղ** ձև...»-ից կազմված **գիղական**-ը (ՀԱԲ, հ. Ա, էջ 563): Մխիթար Սեբաստացին նույնպես արձանագրում է բառի՝ «... գեղացի. կամ գռեհիկ. կամ գեղջուկ» իմաստները (ԲՀԼ, էջ 185 (214)): Ուշագրավ է, որ **գիղական**-ի «գյուղացի» նշանակությունն է վկայում Վարզգեն Համբարձումյանը XIX դարում հրատարակված «Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Թաղիադեանց ի Հայս» երկում՝ նշելով, որ «Գրաբարագիր հեղինակները, որքան էլ հմուտ լինեին գրաբարի հարցերում, նոր պայմաններում չէին կարող խուսափել ժամանակի գրական աշխարհաբարի ազդեցությունից»<sup>54</sup>: Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում բառի գոյականական կիրառությունն են արձանագրում Մանվել Զախջախյանը (ՋԲ, էջ 363), Հրաչյա Աճառյանը (ՀԳԲ, էջ 232), Ստեփան Մալխասյանցը և արդի հայերենի բացատրական բառարանները (ՄՀԲԲ, հ. I, էջ 441: ԺՀԼԲԲ, ն.տ.: ԱՀԲԲ, ն.տ.):

*Ոսոխ. հակառակորդ. ամբաստանող կամ ամբաստան* ՆԲՇ-ի\* (ՄՄՁ 6762, 105բ. 566(I), 241ա. 3110, 83ա) **Դատախազ** հենարառը ՆՀԲ-ի վկայությամբ V դ. է՝ «Ոսոխ, հակառակորդ. Ամբաստանող ի դատարանի» (հ. I, էջ 600): Նույնն են արձանագրում ԱԲ-ն (էջ 234), ԳԲ-ն (հ. Ա, էջ 234), ԲՀԼՄՄ-ն («տաւաճի». էջ 100 (713)), նաև ՄՀԲԲ-ն՝ «հին բառ կամ նշ.» նշումով (հ. I, էջ 493): ԳՀԲ-ում նույն շարքն է՝ *դատակից* բառի հավելումով (էջ 206), իսկ ՀԼՀԲ-ն սահմանափակվում է *Դատախազ. ամբաստան-ով*՝ երկրորդ բառը նշե-

<sup>54</sup> Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., 2010, էջ 250:

\* ՄՄՁ 6762, 566(I), 3110-ում առկա է նաև *Ոսոխ. դատախազ. ամբաստանող. հակառակորդ. կամ հակառակամարտ. թշնամի* ՆԲՇ-ն:



լով «հնգ.» (էջ 162): Արդի հայերենում *դատախազ*-ը այլ իմաստ է ձեռք բերել՝ նշանակելով «օրենքների կիրառումը հսկող պետական պաշտոնյա» և «պետական մեղադրող դատարանում» (ԱՀԲԲ, էջ 279: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 478):

*Ուրանալ. ժխտել. ուրաստ լինել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 265 ա. 775, 71բ. 873, 209բ. 3110, 104բ. 6762, 120բ) առկա *զլանալ* բայի՝ գրաբարի տպագիր բառարաններում վկայվող «Որպես Ջրկել. անիրաւել. դրժել. հատանել զիրաւունս..... նենգել. խարդախել» և «Ժխտել. ուրանալ զիրան և զիրաւունս ...» իմաստներին (ՆՀԲ, հ. I, էջ 737: ԳԲ, հ. Ա, էջ 442) ԱԲ-ն առադրում է «խնայելով տալ»-ը (էջ 295): Նշված իմաստներն արձանագրում է նաև ՄՀԲԲ-ն՝ հավելելով «Խնայել մի բան անել՝ տալ, մերժել»-ը (հ. II, էջ 26): *Չլանալ* բայի «խնայել» նրբիմաստն է հավաստում նաև Հակոբ Վիլյոտը՝ «... զլանալ վարձկանի զվարձս իւր .... զլանալ աղքատի յողորմութենէ»<sup>55</sup>: Իսկ «Գիրք թղթոց»-ից հնարավորություն է ընձեռնվում առանձնացնելու «... ժպրհին զլանալ զերկրպագութիւնն տեառն» նախադասությունը<sup>56</sup>, որից «մերժել, ժխտել»-ի հետ նաև ենթադրելի է «խուսափել» նրբիմաստը:

Արևմտահայերենի բառարանները պահպանել են *զլանալ*-ի վերոնշյալ «մերժել, ժխտել» նշանակությունները<sup>57</sup>, իսկ ահա արեւելահայերենում՝ բառիմաստի փոփոխությամբ հանգել առաջնային «դժվարանալ մի բան անել, խուսափել մի բան անելուց՝ տալուց» իմաստի (ԱՀԲԲ, էջ 375: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 88):

*Որձակ. արքադադ. արլոր (էզն սորա) հաւ. մարի* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 264ա. 775, 71ա. 873, 209բ. 3110, 104ա. 6762, 120ա) առկա *խօսնալ*-ը գրաբարի տպագիր բառարաններում «Աքադադ. և նմանութեամբ՝ .... Բարեխօս. փաստաբան. խօսական. քաջաբան. ճարտարախօս» նշանակություններով է (ՆՀԲ, հ. I, էջ 997: ԱԲ, էջ 399: ԳԲ, հ. Ա, էջ 598): Նույն իմաստները «հնգ.» նշումով է արձա-

<sup>55</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 5.

<sup>56</sup> <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/arm/girk/girk.htm?girk003.htm>.

<sup>57</sup> Հմմտ.՝ Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 130: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 617: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 124:

նագրում ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 313): Արևմտահայերենի բառարաններում *խոսնակ*-ի առաջնային իմաստը «Ռատիոյի՝ հեռուստատեսիլի վրայ լուրեր հաղորդող, լրատու»-ն է, այնուհետև նշվում են «հատուկ յայտագիր վարող», «յոգուտ մեկու մը ի պաշտօնէ խօսող, փաստաբան, ջատագով, պաշտպան», «անձի մը կամ կազմակերպութեան մը կողմէ խօսող, բանբեր, ներկայացուցիչ», «յոգուտ մեկու մը միջնորդող, բարեխօս» իմաստները<sup>58</sup>: Արդի հայերենի բացատրական բառարանները վկայում են «խոսուն, ճարտար» և «հազվադէպ հանդիպող բառ», «փխբ.» նշումներով «դատապաշտպան, պաշտպան» իմաստները՝ արձանագրելով նաև «ռադիոյի հաղորդավար»-ը (ԱՀԲԲ, էջ 596: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 555): Արևելահայերենում այժմ կիրառվող *խոսնակ*-ի՝ «Ազգային Ժողովի նախագահ»՝ «սպիկեր», նշանակությունն արձանագրել է Սեդա Էլոյանը<sup>59</sup>: Այն, ամենայն հավանականությամբ, փոխառություն է ռուսերենից (հմմտ.՝ նաև «the Speaker սպիկեր. ա) անգլիական համայնքների պալատի նախագահ. բ) ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի նախագահ»)՝<sup>60</sup>: Այսօր հաճախակի կիրառվող *մամուլի խոսնակ* բառակապակցությունում բառը թերևս գործածվում է «անձի մը կամ կազմակերպութեան մը կողմէ խօսող, բանբեր, ներկայացուցիչ», նաև «խոսելու շնորհք ունեցող» (այլև «յոգուտ մեկի խօսող») նշանակություններով: Այնպես որ կարելի է արձանագրել, որ արդի արևելահայերենում, «ըստ իմաստային զարգացման արդյունքի», տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում:

**Սեթներթել** բայն առկա է միայն *Զարդարել. յարդարել. պճնել. պճնագարդել. գեղագարդել. պաճուճել. գեղգեղել. յօրինել. շքեղագարդել. պայծառագարդել (շպարել ի ծարիւ և ի սնգոյր)* ՆԲՇ-ում (ՄՄԶ 775, 58ա. 873, 192բ): Ըստ բառարանային տվյալների՝ այն գրաբարում ունեցել է «պաճուճել, պճնել. արուեստակել. հայթայ-

<sup>58</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 888: Ա. Մարգսյան, Արևմտահայերենի բառարան, էջ 155: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 186:

<sup>59</sup> Ս. Էլոյան, Նորաբանությունների բառարան, Ե., 2002, էջ 215:

<sup>60</sup> Անգլերեն-հայերեն բառարան, իմբ.-մբ՝ Հ. Սամանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի, Ե., 1984, էջ 904:

թել. յարդարել. և Փերևեթել<sup>61</sup>», «աւելորդ բաներով զարդարել» նը-  
շանակությունները (ՆՀԲ, հ. II, էջ 704: ԱԲ, էջ 718: ԳԲ, հ. Բ, էջ 450):  
Ստեփան Մալխասյանցի աշխատասիրած բառարանում դրանք  
պահպանվել են (ՄՀԲԲ, հ. IV, էջ 197): Ուշագրավ է Մխիթար Սե-  
բաստացու բացատրությունը՝ «...սեթևեթիլ ասի՝ զարդարիլն զի-  
նուք, կամ սպառագինիլն, և ըստ այսմ ասի ի հին պատմագիրս  
զգօրաց. Այսր այդր սրավառեալ, սեթևեթեալ երթային» (ԲՀԼ, էջ  
978 (1037)), ասել է՝ այն, ինչ հետագայում վկայում է ՆՀԲ-ն՝ նշե-  
լով՝ «փերևեթել» «ճեմել սիգալով»: Թեև արդի հայերենի բառա-  
րանները վկայում են *սեթևեթել*-ի «պաճուճվել, ավելորդ պճնվել,  
շատ զարդարվել» առաջնային իմաստը, սակայն այժմ *սեթևեթել*-ն  
առավելապես գործածվում է բառարաններում նշված «նազել,  
կոտրատվել, ծեքծեքել» երկրորդական իմաստներով (ԱՀԲԲ, էջ  
1288: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 284)<sup>62</sup>:

Այսպիսով՝ պարզորոշ է, որ առանձնացված բառերի՝ արդի  
հայերենի բառարաններում վկայված առաջնային իմաստները չեն  
պահպանվել. այդ բառերը XX դ. վերջերից արդեն իսկ կիրառվում  
են նոր իմաստներով:

<sup>61</sup> ՆՀԲ-ն մեկնում է նաև «ճեմել սիգալով» (ՆՀԲ, հ. II, էջ 941):

<sup>62</sup> Տե՛ս նաև Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1268:  
Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 787: Հայոց լեզուի նոր բառարան, էջ  
754:

## ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ

Գևորգ Ջահուկյանը, անդրադառնալով միջնադարյան բառարաններում «տեղ գտած նորահայտ» որոշ բառերի առաջարկված ստուգաբանությունների, ճշգրտելով դրանք և կատարելով բառաքննական «դիտողություններ», նշում է, որ «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»<sup>1</sup>: Հումանիշների ՁԲ-ները հետազոտողներն էլ հավաստում են, որ «... միջին հայերենով գրված բնագրերում ավելի շատ են հանդիպում նորաբնույթ կամ նորակազմ հոմանիշ բառեր...»<sup>2</sup>, և դրանց «մանրագնին ուսումնասիրությունը ի հայտ կբերի բավական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականության ու ժողովրդական խոսվածքի մեջ»<sup>3</sup>: Ասվածն անվերապահորեն վերագրելի է նաև XVIII դարից ավանդված՝ նույնանիշների ՁԲ-ներին, որոնց մեջ առկա, բայց գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրված բառերը կարելի է համարել նորակազմ: Այս ՁԲ-ները, ինչպես նշվել է, չունեն բնագրային օրինակներ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատելու հայերենի բառակազմության առանձնահատկություններով, հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաև բնագրային օրինակներով<sup>4</sup>, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային անցումներն ու փո-

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին. - Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976, էջ 41:

<sup>2</sup> Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 156:

<sup>3</sup> Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, էջ 36:

<sup>4</sup> Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Գրահավաք» կայքի «Հայերեն բնագրերի առցանց շտեմարան»-ում հայերեն բառերի որոնումը:

փոխությունները<sup>5</sup>: Նորակազմ բառը քննելիս կարևորվում է, թե որ դարից ավանդված ՁԲ-ում է այն վկայվում:

Ըստ միջին գրական հայերենի բառապաշարը քննող, մասնավորապես բառակազմությանն անդրադարձող լեզվաբանների՝ այդ լեզուն «վկայում է գրաբարին անձանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմություն է» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 250): **Նորակազմ պարզ բայեր** արձանագրվում են նաև քննվող ՁԲ-ներում:

Միայն ՄՄՁ 873-ում (215բ)՝ *Վնասել. մեղանչել. չարիս հասուցանել. չար ինչ առնել նմա* ՆԲՇ-ում *խուել* բայի փոխարեն առկա է *խոչել*-ը, ամենայն հավանականությամբ, *խոչ* «Քար կամ փայտ սրածայր՝ արգել և վնասիչ ոտից... արգելք» արմատից (ՆՀԲ, հ. I, էջ 966): Եթե ընդունելի է բայի՝ այս արմատից կազմված լինելը, ենթադրելի է, որ ձեռագիրն ընդօրինակողը *խոչել*-ը կազմել է՝ նաև նկատի առնելով *խոչ* արմատի՝ նշված «արգել և վնասիչ ոտից»-ը՝ «վնասել» իմաստով: Թեև կարելի է նաև հավանական համարել Հրաչյա Աճառյանի՝ «Գիրք վաստակոց»-ից քաղած *խոչառ լինել* հարադրության («անասունների ոտքը բան մտնելով կամ վրնասուելով՝ կաղ ի կաղ քայլելը». ՀԱԲ, հ. Բ, էջ 397) կամ ՄՀԲԲ-ում արձանագրված *խոչառել*-ի («ոտքը մեխի գալ, մեխը ոտքը մտնել (պայտելու ժամանակ)». հ. II, էջ 285)՝ տառերը հապավելով *խոչել* արտագրելը:

*Կերակրել. ջամբել. դարմանել. սնուցանել. ռոճիկ տալ. կամ տալ նմա ուտել (եթե պիտոյ իցե) արբեցուցանել. արբուցանել. տալ նմա ըմպել (ՄՄՁ 566(I), 253ա. 775, 64ա. 873, 200ա. 3110, 95ա. 6762, 112բ) և Սնուցանել. բուծանել. դարմանել. կերակրել. տալ նըմա ուտել. բտել. պարուրել. ռոճիկ տալ. ուտեստ տալ (ՄՄՁ 566(I),*

<sup>5</sup> Նյութը կարելի է նաև առանձնացնել *բառարաններում չվկայված* և հետագայում լույս տեսած *բառարաններում արձանագրված* բառեր դասակարգումներով: Մակայն հավանական կրկնություններից (բառաշարք, ձեռագրահամար, էջ) խուսափելու համար բառերը ներկայացվում են միասնաբար. շարադրանքից պարզորոշ է դառնում բառերի՝ բառարաններում վկայված լինել-չլինելը: Եվ դարձյալ նշվելու են միայն ձեռագրահամարը և էջը:

270ա. 775, 74ա. 873, 213բ. 3110, 107բ. 6762, 124ա) ՆԲՇ-ներում առկա են համապատասխանաբար *նպար* և *պարեն* արմատներով և բայական *-ել* վերջավորությամբ բաղադրված *նպարել* և *պարենել* բայերը: Բառարանները վկայում են *նպարակել*-ը՝ «նպարակօթ թռչակել, պաշարօթ լնուլ» (ՆՀԲ, հ. II, էջ 453), «առատ պաշար տալ» (ԱԲ, էջ 626), «նպարեղենով՝ պարենով ապահովել, պարենաւորել» (ԳԲ, հ. Բ, էջ 300), և *պարենաւորե(ի)լ*-ը՝ «գտանել զպարեն և ճարակել» (ՆՀԲ, հ. II, էջ 632. ԱԲ, էջ 691), «սնուել» (ԳԲ, հ. Բ, էջ 406. տե՛ս նաև ՀԱԲ, հ. Դ, էջ 61) նշանակություններով: *Նպարել* և *պարենել* բայերն արձանագրում է Մխիթար Մեքաստացին՝ «ապրուստ տալով պահել. կերցնելով պահել» բացատրություններով (ԲՀԼՄՍ, էջք 912, 950 (299, 337)), Մանվել Ջախջախյանի կազմած երեքլեզվյան բառարանը՝ աստղանիշով (որ նշանակում է՝ «նոր բառ») իտալերեն *Equippaggiare*-ն բացատրելիս<sup>6</sup>: ՄՀԲԲ-ում, երկուսն էլ «տե՛ս» հղումով են՝ «տե՛ս Նպարակել» («պարենաւորել, ճանապարհի համար հարկաւոր ուտելեղէնը մատակարարել» (հ. II, էջ 486)) և «տե՛ս Պարենաւորել» («Պարեն՝ ուտելեղէն մատակարարել, պարեն տալ: Ուտեստի և այլ մթերքներ պատրաստել, պաշար պատրաստել» (հ. IV, էջ 81)): Հարկ է նշել, որ *նպարեմ*-ը և *պարենեմ*-ը համապատասխանաբար «տե՛ս ի վերոյ *Նպարակեն*» հղումով և «սնուցանել պարենիք. կերակրել» իմաստով հիշատակում է ՓԲ-ն (հ. II, էջք 428, 573), իսկ *նպարել*-ը՝ «Շմ. Կերակրել» հղումով՝ ԽՀՌԲ-ն (հ. II, էջ 248): Երկու բայերն էլ ՀԼՀԲ-ում «հզվդ.» նշումով են (էջք 493, 543): *Պարենել*-ը հիշատակում է նաև ՀԲՀԲ-ն (էջ 774):

Միայն ՄՄՁ 775-ում *Թափառել կամ թափառական շրջել. վտարանդի շրջել. տատանել. դեզերել* ՆԲՇ-ին (60ա) հավելված է *անտունել* բայը: Գրաբարի բառակազմությունը քննելիս առանձնացնելով բայերի բառահիմքերը՝ Լիանա Հովսեփյանը *ան*- ժխտական նախածանցով ձևավորված արդեն գոյություն ունեցող ածականներից կազմված բայերն անվերապահորեն վերագրում է (aS)a

<sup>6</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, ընծայեալ ի լոյս երկասիրութեամբ Մանուէլ վրդ. Ջախջախեան, Վենետիկ, 1804, էջք 292 և թ:

նախածանցավոր սերող հիմքերով բայերի կադապարներին՝ շեշտելով, որ «մեծ մասամբ որպես արդյունք ստացվում են ներգործական և կրավորակերպ չեզոք (*ե, ի լծորդությունների*) բայեր»<sup>7</sup>: Միաժամանակ *անտունել*-ը<sup>8</sup> կարելի է դասել միջին գրական լեզվում վկայվող և գրաբարին անձանոթ այն բազմաթիվ պարզ բայերին, «որոնց մի մասը նորակազմություն է»՝ Արդի հայերենի բացատրական բառարանները նշում են *անտունանալ*-ը՝ «Տունուտեղից զրկվել, աղքատանալ, անտուն դառնալ» (ԱՀԲԲ, էջ 83. ԺՀԼԲԲ, հ. I, էջ 141)՝ ճիշտ նույնպիսի կազմությամբ, ինչպիսին են *ան-* ժխտական նախածանց + գոյական (= ածական)+*ան* ածանց+*ալ* վերջավորություն կադապարով *անհոգանալ, անզթանալ, անբախտանալ, անամոթանալ* և այլ բայեր:

Ըստ Հրաչյա Աճառյանի (նա հիշեցնում է, որ միջին հայերենի բայական համակարգն ուսումնասիրելիս օգտվել է Յոզեֆ Կարստի աշխատություններից)՝ Յոզեֆ Կարստը հավանական է համարում «ոչ-ոնգային» բայաձևերի միջինհայերենյան լինելը՝ *խփանեմ-խփեմ, բեկանեմ-բեկեմ, խցանեմ-խցեմ* և այլն՝ ցանկը լրացնելով *մտեմ, լուծեմ, խստեմ, համեմ* բայերով<sup>9</sup>: Վարազ Առաքելյանը, ինչպես արդեն նշվել է, արձանագրելով դեռևս Աստվածաշնչում առկա բայական փոփոխակներ (մինևնույն բայի և՛ պարզ, և՛ ածանցավոր ձևեր), երևույթը բացատրում է կա՛մ բայական մի ձևի քայքայմամբ և մեկ ուրիշով փոխարինվելով, կա՛մ տարբեր

<sup>7</sup> Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 310:

<sup>8</sup> Գրաբարի բառարանները *անտուն*-ը նշում են իբրև ածական և մակբայ. «Ոյր չիք տուն և բնակարան առանձին. և Որոյ չգուցեն ընտանիք» և «Առանց տան, իբրև պանդուխտ» (ՆՀԲ, հ. I, էջ 247), «1. Տուն տեղ և ընտանիք չունեցող. 2. մ. պանդուխտի պէս» (ԱԲ, էջ 94): Բառն իբրև մակբայ է օգտագործում նաև Գր. Նարեկացին՝ «*Անտուն* շրջի անբովանդակելին...» (ՆՀԲ, հ. I, էջ 247. տե՛ս նաև Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Հայկական համաբարբառ, Ա, Ե., 1975, էջ 129): «Նորակազմ» այս բայն արձանագրվում է նաև Հ. Շիրազի ստեղծագործություններում ([http://www.asu.am/images/stories/HUMANI\\_6\\_.\\_12\\_2019\\_.pdf](http://www.asu.am/images/stories/HUMANI_6_._12_2019_.pdf)):

<sup>9</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա Գիրք, Ե., 1959, էջ 399: Հնմտ.՝ Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 251:

բարբառների ազդեցությամբ, հավելելով նաև այդպիսի բայերի՝ այսօր արդեն չգիտակցվող կերպային կամ բայակարգային զանազանություն ունենալու հավանականությունը<sup>10</sup>: Քննվող ձեռագիր բառարանները հնարավորություն չեն ընձեռում ճշտելու բայերի կերպը:

Վերոնշյալ վերագրելի է նաև ՄՄՁ 775-ում (72ա), 873-ում (210բ)՝ *Չարչարել. տանջել. խոշտանկել. տառապեցուցանել. թոպել. լկել (տալ զտանջանս). գանել. գան հարկանել. խաչել. հարուածս տալ կամ հարկանել. ի խաչ հանել. կոշկոճել. վշտանգել. վշտագնել (կամ) վիշտս հասուցանել. ձաղկել. կտտամահ առնել. կոփել կամ կոփահարել. ձաղել. տե՛ս՝ գնեղելն* ՆԲՇ-ում վկայվող **վշտել**-ին՝ այն միակ տարբերությամբ, որ *վշտել* բայը «վշտանալ» նշանակությամբ և «բնստ.» նշումով (թեև առանց բնագրային օրինակի) արձանագրում է ԱՀԲԲ-ն (էջ 1398):

Եվ դարձյալ ՄՄՁ 775-ում (56բ), 873-ում (189բ) *Գերծել (կամ) գերծուլ. փոքրել զհերս. վարսավիրել\* . սափրել. սրբել. ածիլել .... (եթե՛ մկրատիւ խուզել. յապաւել. կտրել)* ՆԲՇ-ին հավելվում է **վարսել** բայը: Հայերենի բառարանները *վարսել*-ը բացատրում են իբրև «մխել, հարստել, սևեռել, բևեռել, խրել, մխրճել» (ՆՀԲ, հ. II, էջ 738: ԱԲ, էջ 754: ՄՀԲԲ, հ. IV, էջ 916: ԱՀԲԲ, էջ 1369: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 383. տե՛ս նաև՝ ՀԱԲ, հ. Դ, էջ 325): ՆԲՇ-ից պարզորոշ են *վարսել*-ի «մազերը կտրել. սափրել, ածիլել» իմաստները, որոնք չեն վկայում հայոց լեզվի բառարանները:

*Վարս* բառի առնչությամբ Հրաչյա Աճառյանը «փոխ.» նշումով նկատում է՝ «Վրաց. կայ *վարսիմի* «սափրիչ՝ որ մազ է խուզում և արիւն առնում». բայց հաւանաբար ուղղակի պիլ. փոխառութիւն է, որովհետև հայերէնի մէջ *\*վարսիմ* «սափրիլ» բառ գոյութիւն չունի» (ՀԱԲ, հ. Դ, էջ 324): Երեմիա Մեղրեցու բառգրքի քննա-

<sup>10</sup> Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրական լեզուն և ոճը, էջ 151-152:

\* ՄՄՁ 556 (I)-ում (240ա)՝ *վարսաւորել*: ՄՄՁ 775-ում (75բ) և 873-ում (215ա) միաժամանակ առկա է նաև *Վարսավիրել, տե՛ս՝ գգերծուլն* ՆԲՇ-ն:



կան բնագիրը և ծանոթագրություններն աշխատասիրած Հայկ Ամալյանը *Վարսել-վայր տալ* բառահոդվածին (ԲՀ, էջ 300) հավելում է. «N 3468 ձեռագիրը մեկնում է՝ «ցիցն վայր տալ»<sup>11</sup>: ՄՀԲ-ն *վայր տալ*-ը բացատրում է իբրև *շուռ տալ* (հ. Բ, 1992, էջ 358), իսկ ԱՀԲԲ-ն՝ նշում, որ *վայր*-ը «կազմում է հարադիր բայեր՝ ցույց տալով գործողության ուղղվածությունը դեպի ցած...» (էջ 1355): Նշվածը լրացվում է հայերենի բարբառներում գործածվող *վար տալ* և *վեր տալ* հարադրություններով՝ համապատասխանաբար «խուզել (մազերը, բուրդը)» (ՀԼԲԲ, հ. Զ, էջ 29) և «խուզել, ածիլել» նշանակությամբ (ՄՀԲԲ, հ. IV, էջ 338: ԱՀԲԲ, էջ 1355): Ուրեմն, թեև ոչ անվերապահորեն, բայց կարելի է հավաստել *վարսել* («մազերը կըտրել, սափրել») → *վայր տալ* (*//շուռ տալ*), *վար//վեր տալ* («խուզել, ածիլել») իմաստային կապը (ամեն դեպքում չբացառելով դեպի ցած, ներքև ուղղվածությունը):

Հատկանշական է, որ XVII-XVIII դդ. լատինաբան հեղինակների երկերում Վազգեն Համբարձումյանն արձանագրում է «-իչ անծանցով» և ««վարսավիր» նշանակությամբ» *վարսիչ* «նորակազմ բառ»<sup>12</sup>: Եվ այնուհանդերձ, հիմք ընդունելով նաև քննվող ՁԲ-ների սովյալները, կարելի է ենթադրել, որ հայերենում վերոբերյալ նշանակությամբ *վարսել* բայ գործածվել է, բայց չի պահպանվել:

Միայն ՄՄՁ 6762-ում՝ *Ուխտել* հենաբառով ՆԲՇ-ում՝ «(եթե ընդ մարդկան իցե և պիտոյ իցե դնի ևս) դաշինս կռել. զպայման դնել» բացատրությունից հետո *պայմանել*-ի փոխարեն առկա է ***պայմանաւորել*** բայը (120բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *պայմանաւոր*-ը՝ «Որ ինչ ունի զպայման. ուխտական. վճռական...» (ՆՀԲ, հ. II, էջ 595: ԱԲ, էջ 678): Հրաչյա Աճառյանը «նոր բառեր»-ի շարքում հիշատակում է *պայմանաւորուիլ* բայը (ՀԱԲ, հ. Դ, էջ 18): *Պայմանաւորել*-ն արձանագրում է Ստեփան Մալխասյանցը «1. Որեւէ պայմանով սահմանափակել, խոստանալ կամ համաձայնել որոշ պայմանով...» իմաստով (ՄՀԲԲ, հ. IV,

<sup>11</sup> Հ. Ամալյան, Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 322: Նաև՝ ԲՀ, էջ 300:

<sup>12</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 226:

էջ 46): Նույնն է արձանագրում Էդուարդ Աղայանը (ԱՀԲԲ, էջ 1177), մինչ ժՀԼԲԲ-ն «(հզվդ.)» նշումով հիշատակում է միայն «Այս կամ այն պայմանով սահմանել, նախապայման հանդիսանալ»-ը՝ «Համաձայնության գալ, համաձայնվել»-ը նշելով *պայմանավորվել* բայի համար (հ. IV, էջ 157): Հետևաբար կարելի է ընդունելի կամ հավանական համարել, որ XVIII դարից ավանդված ՁԲ-ում *պայմանաւորել* բայն այն նույն նշանակությունն ունի, ինչ Հրաչյա Աճառյանի՝ «նոր բառեր»-ի շարքում հիշատակած *պայմանաւորուիլ* -ը:

Միակ ածանցավոր բայը *եռացուցանել*-ն է: Այն *Կցել. առակցել. յարել. յողել. միաւորել (միայարել) ընդ նմա. կամ միայցուցանել. շողկապել. շարակցել. շարայարել. պատուաստել. շարահիւսել. մերձեցուցանել. կապակցել. կապել. սոսնձել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 775, 64բ. 873, 200բ) ակնհայտորեն ներառվել է «կցել, զողել» նշանակությամբ: Հրաչյա Աճառյանը «նաև իրար զողել» նշանակությամբ *եռցընել* բայը համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 8)՝ համեմատության համար առաջարկելով Հովհաննես Օձնեցու «Ատենաբանութիւն» երկում առկա «...**եռալ** «սիրով միանալ, զողիլ»» բընագրային օրինակը (ՀԱԲ, հ. Բ, էջ 31): Միսիթար Սեբաստացին *եռացուցանել*-ի համար նաև ունի «մէկըզմէկու հետ հալելով կըպցնել» բացատրությունը (ԲՀԼՄՍ, էջ 115 (728)): ՄՀԲԲ-ն *եռացուցանել*-ը հղում է «բարբառային բառ» նշումով *յեռել*-ին, որի իմաստներից է «կցել, կապակցել, զողել»-ը (հ. I, էջ 567, հ. III, էջ 405): Արդի հայերենի բացատրական բառարաններում վկայվող *եռացնել* համանուններից երկրորդը «Մետաղյա մասերի իրար շփվող մակերեսները շիկացնելով հալել ու ձուլել միմյանց. զողել» նշանակությամբ է (ԱՀԲԲ, էջ 331: ժՀԼԲԲ, հ. I, էջ 558): Կարելի է ենթադրել և հավանական համարել, որ *կցել* հենաբառով ՆԲՇ-ում առկա *եռացուցանել*-ով նախապատրաստվում է «եռքով կցել՝ միացնել. մետաղները շիկացնելով կցել՝ զողել» նշանակությամբ *եռակցել* բայի գործածությունը արդի գրական հայերենում:

ՄՄՁ 566(I) (254ա), 3110 (95բ), 6762-ում (113ա-113բ) *եռացուցանել*-ի փոխարեն *հեռացուցանել* բայն է, որի առկայությունը կարելի է բացատրել գրչագիրն ընդօրինակողի՝ *եռացուցանել* բայի

«կցել, միացնել» նշանակությունը չիմանալով. նա պարզապես լր-  
րացրել է *կցել. մերձեցուցանել. սոսնձել* և համանշանակ մյուս բա-  
յերին հականիշ *հեռացուցանել*-ը<sup>13</sup>:

Ստորև առանձնացվում են *նորակազմ նախաձանցավոր  
բայերը*:

Հրաչյա Աճառյանը, անդրադառնալով *ամ* նախդրին, նշում է,  
որ այն «Շատ սովորական է բառակերտության մէջ, ուր դրում է  
բառասկզբում կամ մի նախդիրից յետոյ ...»՝ հավելելով՝ «Յունա-  
բան հեղինակների մօտ դարձել է յն. πρός ձևին համապատասխան  
նախամասնիկ, որով կազմուած են բազմաթիւ բառեր», և հիշատա-  
կելով նաև *առբերել, առդնել* բայերը (ՀԱԲ, հ. Ա, էջ 247): Այդպիսին  
է նաև *Կցել* հենաբառով՝ ՆԲՇ-ում ընդգրկված, *ամ* -ով և *կից* ար-  
մատից կազմված *կցել*-ով բաղադրված *ամակցել* բայը (ՄՄՁ 6762,  
113ա-113բ. 566 (I), 254ա): Այն մի քանի անգամ վկայվում է Հա-  
կոբ Վիլլոտի լատիներեն-հայերեն նոր բառարանում՝ *Affigo* ("Affi-  
go. ere."), *Affocio* ("Affocio. are. jungere."), *Subtexo* ("Subtexo, ere: ad-  
derre.") բառահոդվածներում. թարգմանված «կապել. պրկել. հա-  
րել. բնեռել. պնդել», «գուգել. կցել. միաւորել. յօդել. յարել. մերձե-  
ցուցանել զմի ի միւսն. մօտ բերել», «առադրել» բայերի շարքում հի-  
շատակվում են նաև *ամակցել*-ը և *ամկցել*-ը<sup>14</sup>: Բայը գործածում է  
նաև Խաչատուր Էրզրումեցին («Վասն այսորիկ պիտոյ է աղօթել,  
և աղօթից գողորմութիւն առակցել»)՝ *Առակցել*-ը «կցցել» իմաս-  
տով է վկայում Մխիթար Սեբաստացին (ԲՀԼՄՍ, էջ 44 (657)): Բայն

<sup>13</sup> Թերևս, հիշատակելի է Հ. Աճառյանի այն դիտարկումը՝ «...*եռալ* բառը Ղարա-  
բաղի բարբառում ունի *հեռալ* ձևը» (ՀԱԲ, հ. Բ, էջ 30), որն էլ ըստ նրա «ապացու-  
ցում է *եռ* և *հեռ* արմատների նոյնութիւնը» (ՀԱԲ, ն. տ.), բայց և, հարկ է նշել, որ  
այս դեպքում *հեռալ* ձևը «կցել, միացնել» նշանակությունը չունի:

<sup>14</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 33, 69, 680.

<sup>15</sup> Կարճատառագունեղ համառոտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան  
Խոկականի, ուսումնականի, դրականի, բարոյականի, և այլ: Ստորասական-  
աւ խօսակցութեամբ: Շարադրեցեալ ի լատինականի լեզուջ ի գերապատուելոյ  
Խաչատուրոյ Էրզրումեցոյ աստուածաբան վարդապետէ, Վենետիկ, 1736, էջ 283:

անկա է «լատինաբան հայերեն»<sup>16</sup>-ում՝ *ան-* նախածանցով նորակազմ բառերի շարքում (Արսէն Դպիր «Գիրք սահմանաց», XVIII դ.)<sup>17</sup>: *Առկցեալ* բառը արձանագրում է Մինոն Գաբամաճյանը «բանի մը կցուած. աւելցած» բացատրությամբ՝ միաժամանակ օգտագործելով աստղանիշ և հավաստելով, որ «Բառերու առջև դրուած աստղանիշ կը ցուցնէ նոյն բառերուն նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀ, էջ 169 և Ը): Ստեփան Մալխասյանցն *առկցել* տարբերակը նույնպէս հիշատակում է աստղանիշով, որն այս դեպքում, սակայն, նշում է «հագուադէպ բառ կամ նշանակութիւն»-ը (ՄՀԲԲ, հ. I, էջ 229): Արդի հայերենի բացատրական բառարաններում *առկցել*-ը «կցել, իրար հետ կապակցել՝ միացնել» նշանակությամբ է (ԱՀԲԲ, էջ 107. ԺՀԼԲԲ, հ. I, էջ 180): Բառը հիշատակում է նաև ՀԼՀԲ-ն՝ «Տե՛ս Կապակցել» հղումով (ՀԼՀԲ, էջ 82):

*Առ-*ով և «պարսավելի, անարգելի» նշանակությամբ *բասիր* արմատից կազմված *բասրել*-ով բաղադրված *առբասրել*-ը՝ առկա է *Ջատագովել* հենաբառով ՆԲՇ-ում՝ «(եթէ հարմար իցէ բանին. դիր ևս)» բացատրությունից հետո՝ «արդարացուցանել զբան նոցա կամ զնա. անմեղադրելի ցուցանել զբան նոցա կամ զնա» արտահայտություններին կից (ՄՄՁ 566 (I), 269ա): Բայը՝ «արդարացնել» նըշանակությամբ, առաջին անգամ վկայում է Յոհան Շրյոդերը՝ *առբասրել*-ը ("excusare") բացատրելիս նշելով *անմեղադիր լինել* հարադրությունը<sup>18</sup>:

Քառորդ դար հետո Մխիթար Սեբաստացին *առբասրել* բառահոդվածում նշում է. «... նոյն է ընդ բային բասրել. որ է պարսաւել. կամ մեղադրել. և այլն. քանզի մասնիկն առ. ո՛չ է բացբարձական. այլ ստորասական. և թարմատար: որպէս յայտ է ի բայէն առլնուլ. որ է լնուլ. բայց ոմանք ի նորոց շրջեալ զսա ի ներհակն, ի գործածեն փոխանակ արտաբասրելոյ. որ է անմեղադիր առնել.

<sup>16</sup> Նշվում է չակերտներում, քանի որ ընդունվում է *լատինաբան գրաբար* ձևակերպումը:

<sup>17</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 216-217:

\* ՄՄՁ 6762-ում (123բ) *առ բասրել* տարբերակն է:

<sup>18</sup> Յ. Շրոդեր, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 387:

կամ ջատագովել» (ԲՀԼՄՍ, էջ 59 (82)): Աբբահոր հեղինակած երկասիրության՝ «Եւ որքան առ այսպիսի իմաստութիւն, ոչ ոք որքան և իցէ բթամիտ (միայն թէ չիցէ խելագար) կարէ առբասրել զինքն....» նախադասության մեջ գործածված *առբասրել*-ն անվերապահորեն ունի «պարսաւել կամ մեղադրել» իմաստը<sup>19</sup>:

Մխիթար Սեբաստացու՝ *առբասրել*-ը «արդարացնել» նշանակությամբ գործածելու մասին դիտարկումը թերևս կարելի է վերագրել և հավանական համարել Ղևոնդ Ալիշանի աշխատասիրած տարեգրքում առկա «... և ի մէջ այլոց բանից՝ ասէ. Վանքս աղքատ է, և սակաւ եղբարք բնակենք, ոչ ունենալով զդիպաւորութիւն, և ոչ զանկողինս բաւական: Իբր կամեր այսու առբասրել զինքն, եթէ ոչ պաշտպանիցէր ինձ....» («... իմիջիայլոց ասում է՝ վանքը աղքատ է. չունենալով հարմարություն և բավարար անկողին՝ քիչ կրոնավորներ են բնակվում: Իբր սրանով կամենում էր արդարացնել (կամ գուցէ մեղադրել՝ Ն. Հ.) իրեն, եթէ ոչ պաշտպաներ ինձ») նախադասության դեպքում<sup>20</sup>: Ըստ Ստեփան Մալխասյանցի՝ *առբասրել*-ը «բասրել, պարսաւել, մեղադրել» նշանակությամբ «հազուադէպ բառ» է (ՄՀԲԲ, հ. I, էջ 226): Նույն նշումով և միևնույն նշանակությամբ է արձանագրում նաև ՀԼՀԲ-ն (ՀԼՀԲ, էջ 114): Ի տարբերություն *անկցել*-ի՝ *առբասրել*-ն արձանագրում է միայն Հովհաննէս Բարսեղյանը՝ «պարսաւել» նշանակությամբ և (հնց.) նշումով (ՀԲՀԲ, էջ 113):

<sup>19</sup> Մեկնութիւն գրոց Ժողովողին, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1736, էջ 299. տե՛ս նաև ԲՀԼՄՍ, էջ 47 (660): Այս առիթով՝ շնորհակալություն ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատակից ք. գ. թ. Տիգրան Սիրունյանին լատիներեն *Accuso* բայը հուշելու համար. «*Accuso. are.* Չարախօսիլ զումեքէ: չարախօսութիւնս մատուցանել: չարախօս լինիլ զմմանէ: բազումս և ծանր վնասս չարութեան բերել, դնել, ի վերայ նորա: խնդրել զպատճառս զմմանէ: յանդիմանել զոք վասն: զանգատել: ամբաստանութիւն առնել զմմանէ: մեղադրել զոք: մեզադիր լինել: բիծն, արատ դնել ի վերայ նորա» (տե՛ս J. Villotte, *Dictionarium Novum Latino-Armenium*, p. 13):

<sup>20</sup> Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստչեայ հաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 155:

Բառարաններում չվկայված մյուս կազմությունը **բաղակցել-** ն է՝ **բաղ-** նախածանցով և **կցել** բայով: Հրաչյա Աճառյանի հավաստմամբ՝ **բաղ-**ը «... դարձել է նաև նախամասնիկ՝ համապատասխան հյ. համ, շաղ, շար, յար, կից .... մասնիկներին, որով ստրկօրէն թարգմանուած են շատ յոյն բառեր...» (ՀԱԲ, հ. Ա, էջ 395): Ուրեմն **բաղակցել-**ը համահավասարաթեք է **համակցել**, **հարակցել**, **շարակցել**, **կցկցել** բայերին: Բայն առկա է Մխիթար Սեբաստացու աշխատասիրած քերականության մեջ<sup>21</sup>, և որպէս գլխաբառ՝ երկլեզվյան բառարաններում<sup>22</sup>: Այն «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով արձանագրում են ՄՀԲԲ-ն (հ. I, էջ 319), ԺՀԼԲԲ-ն (հ. I, էջ 274), նաև ԽՀՌԲ-ն (հ. I, էջ 210): **Բաղ** - + **բայ** կաղապարով ՆՀԲ-ում չվկայված կազմություններ է նշում Լավրենտի Հովհաննիսյանը<sup>23</sup>: Վազգեն Համբարձումյանը, արձանագրելով **բաղազանիլ** բայը, գտնում է, որ «լատինաբան հայերեն»-ում «...այս ածանցով շատ հազվադէպ են կազմվել բառեր»<sup>24</sup>:

*Հակատակել. կամ հակառակ կալ. ընդդիմանալ. կամ ընդդէմ կալ. ընդդիմամարտել* (ՄՄՁ 566 (I), 254բ. 6762, 113բ) ՆԲՇ-ում առկա **հակազինել** և **հակամարտել** բայերը բաղադրված են ըստ Հրաչյա Աճառյանի «յետոսկեդարեան հայերէնի մէջ» շատ գործածական «յն. ճնտի- ձնի» համապատասխան **հակ-** նախամասնիկով: Նա «նոր գրականում կազմուած բազմաթիւ բառեր»-ի շարքում արձանագրում է նաև **հակամարտութիւն-**ը (ՀԱԲ, հ. Գ, էջ 11-12): **Հակազինել-**ը վկայում են Հակոբ Վիլյոտը, Մխիթար Սեբաստացին. առաջինը նաև այդպէս է բացատրում լատիներէն *defendo*-ն<sup>25</sup>,

<sup>21</sup> Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, Վենետիկ, 1770, էջք 263, 540:

<sup>22</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատասիրութեամբ Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, հ. II, 1817, էջ 124: Բառարան հայերէն եւ անգղիական, Աշխատասիրեալ ի Յ.Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վարդապետի Աւգերեան, հ. Բ, Վենետիկ, 1825, էջ 110:

<sup>23</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 66:

<sup>24</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 217:

<sup>25</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 199.

երկրորդը նշում է «հակառակ ումեք զինիլ. կամ մարտնչիլ. և կամ հակառակիլ» բացատրությունը (ԲՀԼ, էջ 492 (525)) և գործածում «Բայց եթե ընդդեմ վճռոյ քահանայապետին, և ծերոց հակազինեալ ամնիցէին զամբոխ՝ ոչ լիէին պատժապարտք...» նախադասության մեջ<sup>26</sup>: Էդուարդ Աղայանն արձանագրում է միայն «հակամարտելու դիմադրելու զենք» նշանակությամբ *հակազենք* բառը (ԱՀԲԲ, էջ 792):

Հակոբ Վիլլոտը նույն բառահոդվածում վկայում է նաև *հակամարտել*-ը<sup>27</sup>: Մխիթար Մեքաստացին այն արձանագրում է «հակառակ ումեք մարտնչիլ. կամ հակազինիլ. կամ ընդդիմանալ. և կամ հակառակիլ թէ մարտիւ իցէ, թէ բանիւ, և թէ զանիւ» իմաստներով (ԲՀԼ, էջ 493 (526)), այլև հիշատակում է գրաբարի քերականության մեջ<sup>28</sup>: Հետագայում *հակամարտել*-ը վկայում են Ստեփան Մալխասյանցը (հղվում է *ընդդիմամարտել*-ին. ՄՀԲԲ, հ. III, էջ 14), Էդուարդ Աղայանը՝ «հակադրվել, ընդդիմամարտել. մի բանի դեմ կռվել. փխդրձ. իրար դեմ կռվել՝ պայքարել» նշանակություններով (ԱՀԲԲ, էջ 793), ԺՀԼԲԲ-ն՝ «(հզվդ.)» նշումով (հ. III, էջ 259), այլև արևմտահայերենի բառարանները<sup>29</sup>:

*Համակուտել*-ը ներառվել է *Ժողովել. հաւաքել. կուտել. րամել. գումարել. խմբել. խոնել. խոկել. հոլոնել. բովանդակել. եկեղեցուցանել. հանդէս առնել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762,108բ. 566(I), 246բ. 3110, 89ա. 775, 60բ. 873,195բ): *Համ*- + *բայ* կադապարով այս բաղադրությունը կարելի է հավելել Հրայյա Աճառյանի՝ *համ*- նախածանցի «ամբողջ, բոլորովին, շատ, յոյժ (սաստկական կազմելու

<sup>26</sup> Մեկնություն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, արարեցեալ և շարադրեցեալ ի Միւ. Մեքաստացոյ, Վենետիկ, 1737, էջ 812:

<sup>27</sup> J. Villotte, ն.ս.:

<sup>28</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Մեքաստացոյ, էջ 547:

<sup>29</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, 1992, էջ 1097: Ռ. Սաքապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011, էջ 173: Ա. վրդ. Կոսնեան, նշվ. բառ., էջ 229:

համար)» նշանակությամբ արձանագրած կազմություններին (ՀԱԲ, հ. Գ, էջ 18): *Համակուտել* բառացի կարող է նշանակել «դիզել, շատ կուտել», որ ակնարկում են նաև Մխիթար Սեբաստացու երկասիրությունից քաղված օրինակները՝ «...ի գուր և ունայն է զբեռինս զբաղմանց աւուրց, որք տակաւին գալոց են, ի վերայ, ի վերայ թիկանց մերոց համակուտել», «... ի մի վայր համակուտել զայնս»<sup>30</sup>:

*Համ-* նախածանցով հաջորդ կազմությունը *համահետնիլ*-ն է՝ վկայված *Հետնիլ կամ համահետնիլ. զհետ երթալ կամ երթալ զկնի նորա*<sup>\*</sup>. *զհետ եղև նորա* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 114բ. 566(I), 256 ա. 3110, 97բ. 775, 66ա. 873, 202ա): Այս դեպքում արդեն *համ*-ն արտահայտում է «նոյն, միննոյն» (ՀԱԲ, հ. Գ, էջ 17) նշանակությունը, որը և պարզորոշ է գրաբարի բառարաններում առկա *համահետ* կազմությունից («միահետ. համաշաւիդ. զուգընթաց»)՝ ՆՀԲ, հ. I, էջ 17. «հաւասար քալող»՝ ԱԲ, էջ 463. տե՛ս նաև՝ ԽՀՌԲ, հ. II, էջ 11՝ «Идуший по одной и той же дороге; одинакового поведения»): Տիգրան Սիրունյանի հավաստմամբ՝ *համահետնիլ*-ը «լատիներենի բառային կաղապարների յուրացման հետևանքով և կամ դրանց ազդեցությամբ» Թովմա Աքվինացու երկի հայերեն թարգմանության մեջ առկա նորակազմ բայ է<sup>31</sup>: Այն մի քանի անգամ վկայվում

<sup>30</sup> Մեկնութիւն սբբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, արարեցեալ և շարադրեցեալ ի Մի. Սեբաստացոյ, էջ 140:

<sup>\*</sup> ՄՄՁ 6762-ում՝ *երթալ զկնի նորին*:

<sup>31</sup> Տ. Սիրունյան, Քննայի միարարական կենտրոնում ստեղծված երկերի բառապաշարը. նորաբանություններ և օտարաբանություններ. -«Հայոց լեզվի պատմության հարցեր», հ. IV, Ե., 2021, էջք 205, 249: Այն առկա է նաև գերմանացի կաթոլիկ վանական և հոգևորական Թովմա Գեմբացու երկի հայերեն թարգմանության մեջ («...զի էթէ զօրինակս բարին դիտիցես, կամ լուիցես, համահետնիլ նոցա ջանայցես». տե՛ս Գիրք Թովմայի Քեմփացոյ: Յաղագս. Համահետեմանն Քրիստոսի: Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ յովվերախտ Վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, 1696, Ամստէրոզամ, էջ 87): Ս. Գրիգորյանի հավաստմամբ էլ բայը Գր. Տաթևացու հեղինակածն է՝ «հավասարապես հետևել»՝ նշանակությամբ (տե՛ս Ս. Գրիգորյան, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե., 2014, էջ 55):



է Հակոբ Վիլլոտի կազմած բառարանում, ինչպես, օրինակ, «Imitor, ari.» Հետեւիլ: համահետեւիլ: ....երթալ զկնի ....» բառահոդվածում<sup>32</sup>: Բայը հիշատակում է նաև Մխիթար Սեբաստացին<sup>33</sup>: Հետագայում «միևնոյն ճանապարհով մէկի հետ գնալ, մէկին հետեւել» նշանակությամբ և «հազուադէպ բառ» նշումով *համահետեւել* ն արձանագրում է ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 24), նույն նշանակությամբ միայն ԺՀԲԲ-ն (հ. III, էջ 269): Վազգեն Համբարձումյանը «լատինաբան հայերեն»-ում առանձնացնում է *համազանազանիմ*, *համաժողովել*, *համահաշուիլ*, *համակապեալ* բաղադրությունները<sup>34</sup>: ՆՀԲ-ում չվկայված բառերի շարքում *համ+բայ* կաղապարով, *համ-ի* վերը նշված նշանակությամբ կազմություններ են հիշատակվում նաև Մովսէս Կաղանկատվացու և Գրիգոր Նարեկացու երկերից<sup>35</sup>:

*Արհամարհել. անգոսնել. անգուշել. նշկահել, խոտել. քամահրել. անարգել. անպատուել. առ ոչինչ համարել. առ ոտս հարկանել. մերժել. եպերել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 102բ. 566(I), 237բ. 3110, 77բ. 775, 54բ. 873,187բ) առկա է *տարայարգել*-ը: Հրաչյա Աճառյանը արձանագրել է *տար-ի*՝ «հեռու, հեռավոր» իմաստի մթազրնմամբ *ան-*, *ապ-*, *չ-* ժխտական նախածանցների գործածություն ձեռք բերելը (ՀԱԲ, հ. Դ, էջ 381)<sup>36</sup>: Հետևաբար *տար-* նախածանց + բայ կաղապարով *տարայարգել*-ը նույն «չհարգել»-ն է:

*Տար-* նախածանցով մյուս բաղադրությունը *տարացրել*-ն է. այն կարելի է ձեռագրային հավելում դիտել, քանի որ առկա է միայն ՄՄՁ 566 (I)-ում՝ *Աւերել. եղծանել. ապականել. ջնջել. բնաջինջ առնել. անհետ առնել. աղարտել. փլուզանել. կործանել. քանդել. քակել. քայքայել. տապալել. հարթայատակել. հարթայատակ առնել. հիմնայատակ առնել. ցրել. ջրել* ՆԲՇ-ում (237բ-238ա): ՆՀԲ-

<sup>32</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 357. նաև էջք 592, 291:

<sup>33</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, էջ 547:

<sup>34</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 218-219:

<sup>35</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 159-160:

<sup>36</sup> Տե՛ս նաև՝ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 144:

ն և ՀԱԲ-ը նշում են *ցրել*-ի «Ցիր և ցան առնել, ցրուել, քայքայել. եղծանել. փարատել» իմաստները (ՆՀԲ, հ. II, էջ 919: ՀԱԲ, հ. Դ, էջ 456), և *տար*- նախածանցով այս դեպքում թերևս սաստկացվում են «քայքայել և ցիրուցան անել»-ի նշանակությունները. *տարացրել*՝ «ավերել, հիմնահատակ քանդել»: Բայը հիշատակում է Հակոբ Վիլլոտը լատիներեն *Extendo*-ն թարգմանելիս<sup>37</sup>: Նույն կաղապարով կազմություններ են հանդիպում «լատինաբան հայերեն»-ում, թեև, ինչպես նշվում է, այդ ածանցը գործածվում է սակավաթիվ բառերում (*տարահանոզել, տարացնդիս*)<sup>38</sup>:

Առանձնացվող մյուս **բայերը բաղադրյալ նորակազմություններ** են:

*Աւերել* հենաբառով վերոնշյալ ՆԲՇ-ում առկա **հարթայատակել**-ը բաղադրվել է *հարթ, յատակ* արմատներով և բայական *-ել* վերջավորությամբ: Բառարանները *հարթայատակ*-ը և *յատակել*-ը վկայում են V դ.՝ համապատասխանաբար «Հարթ յատակի, այսինքն հաւասար գետնոյ» (ՆՀԲ, հ. I, էջ 61: ՀԱԲ, հ. Գ, էջ 58) և «քանդել մինչև ի յատակ» (ՆՀԲ, հ. II, էջ 338-339), «գետնի հաւասար ընել» (ԱԲ, 586), «քարուքանդ անել» (ՀԱԲ, հ. Գ, էջ 386), «1. Տապալել, հիմնայատակ առնել» (ԳՀԲ, էջ 503) նշանակություններով: Եվ դարձյալ, բաղադրելով *հարթայատակ*-ն ու *յատակել*-ը, ասես ավելի են սաստկացվում «հիմնահատակ- քարուքանդ- բնաջինջ անել»-ի, «հիմնահատակ ավերել»-ի նշանակությունները:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *նշան* փոխառյալ բառով («=Պիլ. nišān «նշան», պրս. nišān «նշան, նիշ, դրոշմ, հետք...».) ՀԱԲ, հ. Գ, էջ 460) և *գիծ* «գիծ, խազ»-ով (ՀԱԲ, հ. Ա, էջ 556) բաղադրված **նշանագծել** բայն առկա է *Գրել. գծել. գծագրել. ծրել. ծրագրել. նկարագրել. նշանագրել. ընդ գրով արկանել (եթէ ի կարծր նիւթոջ փորել լիցի) քանդակել. փորագրել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 241ա. 6762, 105ա): Բառարանները հիշատակում են *նշանագիծ* բառը. ԽՀՌԲ-ն այն հղում է *Նշանագիր* "быва" բառին (ԽՀՌԲ, հ. II, էջ 239), նույնը և՛

<sup>37</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 292.

<sup>38</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 221:

ՄՀԲԲ-ն՝ «հագուադեպ բառ» նշումով *նշանագիծ*-ը հղելով *նշանախեց*, *նշանագիր*, *մեհենագիր* բառերին և առաջինները բացատրելով որպես «գիր, տառ» (հ. III, էջ 470), վերջինն էլ՝ «Տ. Հերոզիֆ» (հ. III, էջ 298): *Նշանագծել* բայը վկայում է միայն ԱՀԲԲ-ն («Նույնն է՝ Նշագծել»)՝ բացատրելով որպես «1. Նշաններով՝ կետերով կամ գրծերով նշել, նշանակել, նշաններ դնել՝ գծել...» (էջ 1075-1076):

Ինչ վերաբերում է ՄՄՁ 566-ում՝ *Ուխտել* հենաբառով ՆԲՇ-ում (տե՛ս 80-րդ էջում), «(եթե ի յառ և ի տուր)» նշումից հետո առկա *սակարկել*-ին, ապա «պայման, սահմանուած չափ... կարգ, դաշն, օրէնք» նշանակող *սակ* (ՀԱԲ, հ. Դ, էջ 157) և *արկ* արմատներով բաղադրված *սակարկել* բայի՝ «սակարկութիւն ընել» նշանակությամբ «նոր շինուած ըլլալը»-ն արձանագրում է Սիմոն Գաբամաճյանը (ԳՆԲՀԼ, էջ 174): Հրաչյա Աճառյանը նույնպես այն դիտում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 157): ՆՀԲ-ն *սակ արկանել*-ի համար նշում է միայն «դաշնաւորիլ» իմաստը (հ. II, էջ 684)՝ վերջինս բացատրելով որպես «Դաշամբք հաստատել. ուխտել. դաշինս կըռել. դաշնաւոր լինել. հաշտիլ. միաբանիլ. խոսք դնել կամ տալ» (հ. I, էջ 595), իսկ ԱԲ-ն՝ «գին կտրել, դաշ դնել» (էջ 710). այս՝ «Սակարկել, գին կտրել՝ նշանակել» իմաստն է վկայում նաև ԳԴԲ-ն (էջ 250): Գրիգոր Փեշտըմալճյանը *սակ արկանել*-ը հղում է «դաշնաւորիլ ընդ ումեք վասն գնոց իրիք պայմանել զվարձս» նշանակությամբ *սակարկանել*-ին (ՓԲ, հ. II, էջ 620-621): Հետևաբար կարելի է արձանագրել, որ, ըստ բառարանային տվյալների, XIX դ. դեռևս կիրառվել է *սակարկանել*-ը, թեև XVIII դարից ավանդված ՁԲ-ում «(եթե ի յառ և ի տուր)» բացատրությամբ արդեն վկայվում է *սակարկել* բայը: Ստեփան Մալխասյանցի աշխատասիրած և արդի հայերենի բացատրական բառարանները *սակարկել*-ի համար առաջնային են դիտում «Ապրանքի կամ աշխատանքի գնի մասին

խօսել իրար հետ՝ համաձայնութեան գալու նպատակով» իմաստը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 17: ԱՀԲԲ, էջ 1269: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 262)<sup>39</sup>:

Հրաչյա Աճառյանը *վատահամբաւ* բառը համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 311): Նոյնը վերագրելի է *Պարսաւել լուտալ վատաբանել. վատահամբաւել. պախարակել. քամահել. զքամահանս դնել. ի վերայ չարախօսել. տես և զարհամարհելն* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 268ա-268բ. 6762, 123ա) առկա *վատահամբաւել* բային, որը բաղադրված է փոխառյալ *վատ* «զէշ, չար. անպիտան, ծոյլ, անարի, թոյլ» («= Պիլ. .... vat, պագ. vad ... պրս. ۛ bad «զէշ, չար, վատ». ՀԱԲ, հ. Դ, էջ 311) և հայերեն *համբաւ* «հոչակ, տարածուած անուն, լուր» (ՀԱԲ, հ. Գ, էջ 24) արմատներով: Բայն օգտագործում է Խաչատուր Էրզրումեցին («Արդ չէ օրէն վատահամբաւել զոք առանց պատճառի»)՝<sup>40</sup>: Հակոբ Վիլյոտը լատիներէն *dedecoro*-ն բացատրելիս հիշատակում է նաև *վատահամբաւել*-ը<sup>41</sup>: *Վատահամբաւել*-ը արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «վատահամբաւ առնել. կամ ապականել զանուն ուրուք» բացատրությամբ (ԲՀԼ, էջ 1048 (1107)): Հետագայում երկլեզվյան բառարաններում հիշատակում են Մանվել Չախչախյանը՝ իտալերէն *infamare infamato*-ն թարգմանելով «վատահամբաւել»<sup>42</sup>, Հարություն Ավգերյանը՝ անգլերէն *To Stain*-ը բացատրելով «վատահամբաւել»<sup>43</sup>, Մխիթարյան միաբանների կազմած քառալեզվյան բառարանը (*Diffamare*- .... վատահամբաւել .... )<sup>44</sup>, ԽՀՌԲ-ն՝ "Поносить, обезчестить, злословить, опозорить" բացատրությամբ (հ. II, էջ 404), ՄՀԲԲ-ն՝ «Տ. Անուանարկել» հղումով (հ. IV, էջ 304): Ասել է՝ բայը

<sup>39</sup>Տե՛ս նաև՝ Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 769: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 745: Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան հ. II, էջ 1258: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 403:

<sup>40</sup> Համառոտութիւն բարոյականի աստուածաբանութեան շարադրեցեալ ի Խաչատրոյ Էրզրումեցոյ, Վենետիկ, 1709, էջ 367:

<sup>41</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 196-197:

<sup>42</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 415 :

<sup>43</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 816:

<sup>44</sup> Nuovo dizionario italiano-francese-armeno-turco, 1846, Vienna, էջ 266:

գործածվել է XVIII դարում, և այն կիրառել են ժամանակակիցները: Նույն նշանակությամբ, թեև «(հնգ.)» նշումով են վկայում արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1362: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 371 -372), այլև Հովհաննես Գայայանը<sup>45</sup>:

*Գերծել. կամ գերծուլ. փոքրել զհերս. սափրել. սրբել. ածիլել (եթե մկրատիս) խուզել. յապաւել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 240ա. 6762, 104բ) առկա *վարսաւիրել* բայը բաղադրված է, ըստ Հ. Աճառյանի, փոխառյալ *վարս* « երկար մազեր, ծամ» («= Պիլ. vars, սոգդ. vars .... (յատկապէս գլխի)». ՀԱԲ, հ. Դ, էջ 324) և *վիրալ* «սափրել, գերծուլ, մազերը կտրել» («= Պիլ. պազ. vīrāyam (անորոշը vīrāstan) «պատրաստել, կարգաւորել, յարդարել»». ՀԱԲ, հ. Դ, էջ 343)<sup>46</sup> արմատներով: Մխիթար Սեբաստացին այն հիշատակում է ինչպես բառգրքում՝ «.... սափրել. կամ գերծուլ, որ է փոքրել զհերս, այսինքն՝ ածելեօք հատանելով՝ ի բաց ձգել. ռամկ. ածիլել. կամ թրաշ ընել» (ԲՀԼ, էջ 1057 (1116)), այնպես էլ գրաբարի քերականության մեջ<sup>47</sup>: Հետագայում Աղեքսանդր Խոնդարաշյանցը վկայում է բառը՝ "Брить бороду" բացատրությամբ (ԽՀՌԲ, հ. II, էջ 410), ՄՀԲԲ-ն՝ «Տ. Սափրել» հղումով և «հազուադէպ բառ» նշումով (հ. IV, էջ 316), այլև ՀԼՀԲ-ն՝ իբրև *սափրել-ի*՝ «(բրբ.)» *թրաշել-ի* հոմանիշ (էջ 603):

Կարելի է հավանական համարել, որ *վարսաւիրել* բայը գործածվել է հայերենում և արձանագրվել XVIII դարում ստեղծված, այլև նշված բառարաններում:

*Լալ* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 247բ. 6762, 109բ) առկա է *տրտմակցել* բայը, որ ներառվել է շարքին հավելված «(եթե ընդ այլոց դնի) արտասուակցորդ լինել. ռդբակցել. ցաւակից լինել» հատվածում: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ բնիկ հայերեն *տրտում* «տըխուր, վշտալի» (ՀԱԲ, հ. Դ, էջ 440) և ըստ Գևորգ Ջահուկյանի՝ «թերևս բնիկ հնդեվրոպական՝ \*geit-so- կամ \*geit-sk-» *կից* «մոտ, կպած, միասին» (ՋՀՄԲ, էջ 407) արմատներով բաղադրված, «միա-

<sup>45</sup> Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 468:

<sup>46</sup> «.... նշանակության զարգացման համար» տե՛ս ՀԱԲ, ն. տ.:

<sup>47</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, էջ 573:

սին տրտմել» նշանակությամբ բայը վկայում են միայն Ստեփան Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 449) և արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1462: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 536)<sup>48</sup>:

*Փառաւորել. փառաբանել. փառագարդել. տալ զփառս. կամ պատուել. պատիւ դնել. պատիւ տալ. յարգել. զովել. բարեբանել. մեծացուցանել. ներբողել. գերահռչակել. բարեհամբաւել. սքանչելի առնել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 128բ. 566 (I), 276բ. 3110, 110ա. 775, 78բ. 873, 218բ) **փառապատուել**-ը\* բառացի նշանակում է «փառքով պատվել»: Բառը «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշումով արձանագրում է միայն ՄՀԲԲ-ն՝ «Փառաւորել ու պատուել, պատիւ՝ յարգանք ցոյց տալ» (հ. IV, էջ 488): Արդի բացատրական բառարաններում *փառապատուել*-ի բացատրությունը բոլորովին այլ է՝ «Փառով պատել՝ ծածկել, փառ կապել» (ԱՀԲԲ, 1513: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 637):

**Քարկապել**\*\* բայն արձանագրվում է միայն ՄՄՁ 3110-ում՝ *Շարակցել. շարահիւսել. շարամանել. փաղահիւսել. բաղհիւսել. բաղակցել. բաղադրել. յօղել. հիւսել. միաւորել կամ միացուցանել. կցել կամ կցկցել*\*\*\*. *կարկատել. շարակարգել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 119բ. 566(I), 203բ. 775, 70բ. 873, 208բ. 3110, 103բ): ՄՀԲԲ-ն «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով *քարկապ*-ը հղում է *քարհանգուստ*-ին, որն էլ բացատրում է իբրև «Պինդ ձգված՝ դժուար քանդվող հանգոյց, կրկապ» (հ. IV, էջ 562-563). նույն հղումն ունի ՀԼԲԲ-ն (հ. Է, էջ 114): ԱՀԲԲ-ում գործողություն նշելու դեպքում *քարկապ* բառահոդվածից առանձնացվում են *քարկապ անել* և *քարկապ գցել* հարադիր կազմությունները (ԱՀԲԲ, էջ 1561):

Նորակազմ է նաև *օղ, պար* արմատներով և բայական *-ել* վերջավորությամբ բաղադրված **օղապարել**-ը *Թռչել. վերաթնել.*

<sup>48</sup> Տե՛ս նաև՝ Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, էջ 989: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 846: Ռ. Սաքապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, էջ 351:

\* ՄՄՁ 566 (I)-ում *փառապատուել*-ը չկա:

\*\* Մյուս ՁԲ-ներում *Կարկատել* հենաբառն է:

\*\*\* ՄՄՁ 3110-ում *կցկցել* տարբերակն է:

սլանալ. ճախրել. բարձրանալ. թռանել ՆԲՇ-ից (ՄՄՁ 566(I), 246 ա, 775, 60ա. 873, 195ա. 3110, 88բ. 6762, 108բ): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են միայն *օղապար*-ը և *օղապարիկ*-ը՝ «Որ պարէ ընդ օդս՝ իրօք կամ նմանութեամբ...» նշանակությամբ (ՆՀԲ, հ. II, էջ 1023: ԱԲ, էջ 842: ԳԲ, հ. Բ, էջ 648): *Օղապարել* բայն առկա է Մխիթար Մեբաստացու աշխատասիրած քերականության մեջ<sup>49</sup>, ԳՆԲՀԼ-ում՝ «օղի մէջ երերալ չուանի վրայ կամ յակուրջիով» նշանակությամբ (էջ 1386), արևմտահայերէնի բառարանում՝ *Օղապար* բառահոդվածից հետո միայն նշելով՝ «*Բայը՝ Օղապարել*»<sup>50</sup>, նաև ՀԼՀԲ-ի 2-րդ հրատարակության մեջ՝ «Տե՛ս Օղաճախրել» հղումով<sup>51</sup>, և ԱՀԲԲ-ում՝ «բնաստ.» նշումով, «օղում պարել՝ պտույտներ գործելով ճախրել» նշանակությամբ (էջ 1585):

Սույն ՁԲ-ներն առանձնանում են *նորակազմ ածանցավոր բառերով*:

*Օտար. օտարական կամ օտարածին. այլասեռ. այլազգ. անընտել. անձանօթ (եթէ պիտոյ իցէ տե՛ս և գպանդուխտն)* ՆԲՇ-ից (ՄՄՁ 6762, 129բ. 566 (I), 278բ. 3110, 112ա. 775, 80ա. 873, 220բ) հիշատակելի է *այլային* բառը: Այն ճիշտ նույնպիսի կազմությունն է, ինչպիսին են *դերանուն* (այս դեպքում, սակայն, անորոշ դերանուն) + *ային* վերջածանց կաղապարով հայերենում վկայված *իւրային, մերային, ձերային, նոցային* բառերը (ՋՀՄԲ, էջ 795): *Այլային*-ը, ամենայն հավանականությամբ, կազմվել է ի հակադրություն *յուրային*-ի: Ինչ վերաբերում է *օտար* ↔ *այլ* իմաստային առընչությանը, ապա ՆՀԲ-ն *օտար* բառի բացատրություններում արձանագրում է նաև *այլ*-ը (հ. II, էջ 1028)՝ *այլ*-ն էլ նշելով «որպէս Օտար» (հ. I, էջ 82): Նոր Նախիջևանի բարբառում *այլու*-ն ունի «օտար» նշանակությունը՝ «Գնացին, ելան ի դուռս այլուին» (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 53): ԱՀԲԲ-ում *օտար*-ը վկայվում է «կողմնակի, ուրիշ, այլ»

<sup>49</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկագեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Մեբաստացոյ, էջ 583:

<sup>50</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, էջ 1131:

<sup>51</sup> Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ, 2009), Ե., 2009, էջ 1222 :

իմաստներով (էջ 1593): Բառը հիշատակում են Հակոբ Վիլլոտը՝ լատիներեն *Alienigina*-ն «Այլագգի. այլասեռ: .... օտարագգի .... օտար»<sup>52</sup>, Հովհաննես Կոստանդինուպոլսեցին՝ հայերեն շարադրված լատիներեն քերականության մեջ՝ *Alienus*-ը բացատրելով «այլային, այլանդակ»<sup>53</sup>:

*Պարտիզպան. երկրագործ. մշակ. այգեպան. այգեգործ (եթե միայն պահապան է՝ մրգապահ)* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 123ա. 566 (I), 268ա) առկա *անդապան* բառը բաղադրված է «բնիկ հայ» *անդ* «արտ» արմատով (ՀԱԲ, հ. Ա, էջ 186) և «արհեստ կամ զբաղմունք ցույց տվող անուններ» արտահայտող *-(ա)պան* ածանցով<sup>54</sup>: Այն վկայում է միայն ՄՀԲԲ-ն՝ «Անդերի պահապան՝ հսկող» նշանակությամբ (հ. I, էջ 104): Բառարաններն արձանագրում են *անդապահ*-ը (ՆՀԲ, հ. I, էջ 131: ԱԲ, էջ 50: ՋԲ, էջ 82: ԳՆԲՀԼ, էջ 77): Ուշագրավ է, որ *անդապահ* և *անդապան* բառերը «(հնց.)» նշումով և «հանդապահ» բացատրությամբ արձանագրում են միայն ԱՀԲԲ-ն (էջ 52) և ՀԲՀԲ-ն (առաջին բառը՝ նաև «անհանձն.» նշումով. էջ 56):

*Անճինջ*-ն առկա է *Խիստ. խստաբարոյ. խստասիրտ. խստերախ. խստապարանոց. խստավիզ. ամեհի. անսաստ. անզուսպ. անսպառում. բիրտ. (միայն մարդոյ) կամակոր. անուղղայ. անհամոզելի. անխոնարհելի. խստաբան. անհաւան. հետտ. անզգամ (տե՛ս զկամակորն)* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 110բ. 566(I), 249ա. 3110, 91բ. 775, 62ա. 873, 197ա)՝ բառացի «չճնշվող, չճնշված» նշանակությամբ, *ան-* ժխտական նախածանցով և *ճնշել* բայի ենթադրելի *ճին(ջ)* արմատով: Կարելի՞ է արդյոք *ճին(ջ)*-ը դիտել *ճնշել* բայի արմատ: Գևորգ Ջահուկյանը *ճնշել*-ը բխեցնում է հ.-ե. *\*gen-* արմատից (տե՛ս ՋՀՄԲ, էջ 495), թեև նախապես այն նշում էր հարցականով (ՀԼՊՆԺ, էջք 125, 598): Նրա հավաստմամբ՝ հայերենում հ.-ե. հետնալեզվայինների երկրորդ քմայնացումը տեղի է ունենում *ը*-ից և առաջնային շարքի *\*i, \*e* ձայնավորներից առաջ: Այդ

<sup>52</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 39.

<sup>53</sup> Քերականութիւն լաթինական հայերեն շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ, Հռոմ, 1675, էջ 173:

<sup>54</sup> Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, էջ 355:



դիրքում \*g (\*g<sup>u</sup>)-ն տալիս է d<sup>55</sup>, իսկ \*n և \*m ձայնորդներից առաջ, ինչպես հայտնի է, \*e- ն դառնում է /h<sup>56</sup>: Այնպես որ հավանական է հ.-ե. \*gen-ի անցումը հայերեն ճին-ի: Շ-ն, ամենայն հավանականությամբ, աճական է<sup>57</sup>:

*Աւար. կապուտ. կողոպուտ. ապուր. յափշտակութիւն* ՆԲՇ-ն (ՄՄՁ 775, 54բ. 873, 197բ) համապատասխանաբար եզրափակում են *ասպատակութիւն* և *ասպատակասփռութիւն* բառերը՝ երկուսն էլ՝ «Իրան. 'aspataka- ձևից, իբր պիլ. 'aspak «ձիով արշաւանք, ասպատակութիւն»...»-ից (ՀԱԲ, հ. Ա, էջ 273): *Ասպատակութիւն* բառը XVIII դարից հետո արձանագրում է Մանվել Ջախջախյանը: Այն, իբրև «չէթէճութիւն. Scorreria, guásto, sacco» (ՋԲ, էջ 210), ասել է՝ «հարձակում, ավարառություն», առանձնացվում է աստղանիշով (\*-ով), այսինքն՝ «... աստղանիշ բառքն և նշանակութիւնքն չեն նախնի մատենագրաց, այլ արդիք և նորահնարք» (ՋԲ, էջ 9): Բառը կիրառում է Գևորգ Ոսկյանցը («Ատով ատանկ սաստիկ վախ ձգեց անոնց վրան, ինչվան մէյմընալ չէլան ասպատակութիւն ընէլու»)՝<sup>58</sup>, և այն առկա է «Շտեմարան պիտանի գիտելեաց» ձեռնարկում («Աս մարդը աւագակ մըն է եղեր որ ասպատակութիւն ընէլուն համար իր երկու ձեռք կտրեր են»)՝<sup>59</sup>: Հիշատակում են Աղեքսանդր Խուդաբաշյանցը՝ «Հինահարութիւն, Յմ. *Ասպատակութիւն*» (ԽՀՌԲ, հ. II, էջ 59), Սիմոն Գաբամաճյանը՝ «ասպատակ ընէլը. յարձակում» (ԳՆԲՀԼ, էջ 175), Ստեփան Մալխասյանցը՝ «Ասպատակի կատարած գործը. ձիաւոր խմբով արշաւելը թալանելու նպատակով» (ՄՀԲԲ, հ. I, էջ 237), արդի հայերենի բացատրական բառարանները՝ «Ասպատակելը, ասպատակվելը», նաև «Ավարա-

<sup>55</sup> Г. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, ст. 57, 59.

Г. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967, ст. 165.

<sup>56</sup> Г. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, ст. 35.

<sup>57</sup> Տէ՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957, էջ 62-68: Հմմտ.՝ Հ. Սուքիասյան, Աճականը հայերենում, Ե., 1986, էջ 196, 180-181:

<sup>58</sup> Պատմութիւն վարուց մեծի՛ն Կոստանդիանոսի ինքնակալի: Աշխատասիրեալ ի հ. Գևորգայ Ոսկեանց, Վիեննա, 1926, էջ 24:

<sup>59</sup> Շտեմարան պիտանի գիտելեաց, 1840, թիւ 13, էջ 123:

ություն» նշանակություններով (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 187: ԱՀԲԲ, էջ 272): Այն առկա է նաև արևմտահայերենի բառարաններում «Ձիաւոր զօրքով կողոպուտի արշաւանք» իմաստով<sup>60</sup>:

*Ասպատակասփռութիւն*-ը *ասպատակ*, *սփիւռ* արմատներով և *-ութիւն* վերջածանցով բաղադրություն է: Այն, ամենայն հավանականությամբ, կազմվել է գրաբարի տպագիր բառարաններում (ՆՀԲ, հ. I, էջ 315: ԱԲ, էջ 119: ԳԲ, հ. Ա, էջ 186: ԳԴԲ, էջ 42), ՀԱԲ-ում (հ. Ա, էջ 272), ՄՀԲԲ-ում (հ. I, էջ 237) «ասպատակախումբ ուղարկել, ձիաւոր զօրք սփռել՝ կողոպտելու համար» նշանակությամբ վկայված *ասպատակ սփռել* հարադրական կազմության կից գրությամբ<sup>61</sup>:

ՄՄՁ 775 (75ա), 873 (214բ), 3110-ում (108ա)՝ *Սքանչելի. հրաշալի. սխրալի. ափշելի. նորասքանչ. մեծասքանչ. հրաշագան. նորահրաշ. մեծահրաշ. տոսկալի. զարմանալի. զարմանահրաշ* ՆԲՇ-ում, առկա *գերակարող* բառը, Հրայցյա Աճառյանի հավաստմամբ, «յուն. սπερ-» մասնիկին համապատասխան, «յետոսկեդարեան շրջանին» շատ գործածելի *գեր*- նախամասնիկով<sup>62</sup>, *կար* «ուժ, կարողութիւն» (ՀԱԲ, հ. Բ, էջ 542) արմատով և *-ող* ածանցով բաղադրություն է: Ըստ ՄՀԲԲ-ի՝ *գեր*-ը «Գործ է անվում (ոչ ոսկեդարեան հեղինակների մօտ).... բարդութիւնների սկզբում՝ ցոյց տալու համար .... անականների գերադրական աստիճանը» (հ. I, էջ 426): Ուրեմն *գերակարող*-ը «ամենակարող»-ն է. այն կարելի է դասել հայերենում գործուն *գեր(ա)*- նախածանցով<sup>63</sup> + *գոյական* նախատիպ

<sup>60</sup> Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 195: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 457: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 40:

<sup>61</sup> Երկու հոմանիշ բառերի կցումով համանման կազմություն է նաև միայն ՄՄՁ 775-ում (57ա) վկայված է *Հոր. վիրապ. վիհ. խորասփտ* ՆԲՇ-ի հենաբառ *գուրս-հոր*-ը (մյուս ՁԲ-ներում՝ *Գուր*), այն, թերևս, սխալագրություն է:

<sup>62</sup> Հ. Աճառյանի կարծիքով՝ (*գեր*- նախամասնիկով) «... ստրկօրէն թարգմանուած են բազմաթիւ բառեր. ինչ. ...գերակատար=սπερτέλειοσ... (սրանց թիւը Առձեռնում 192 է), բոլորն էլ յետին» (ՀԱԲ, հ. Ա, էջ 539):

<sup>63</sup> Ինչպէս նշում է Ս. Գալստյանը, «**Գերա**- տարբերակը հին կազմություններում դրվել է բաղաձայնով սկսվող նախատիպերի վրա». Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 216:

հիմքով (*կար*) ածական բաղադրություններ կազմող բառակազմական կաղապարին: Ըստ Մերգեյ Գալստյանի՝ այդ բաղադրությունների բառակազմական նշանակությունն է «նախատիպ ածականի արտահայտած հատկանիշի ծայրագույն բարձր, գերադրական աստիճան»<sup>64</sup>:

**Եփեցիկ** բառն առկա է *Խոհարար. խոհակեր. խորտկարար* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 110ա. 566 (I), 249ա. 3110, 91բ. 873, 197ա. 775, 61բ): Բայանհիմք *+իկ* կաղապարը գործուն է հայերենում. վկայվում են գոյականներ և ածականներ՝ *ազդեցիկ, ընկեցիկ, մուրացիկ* և այլն, մանավանդ եթե համեմատվի նաև ՆՀԲ-ում հիշատակվող *երզեցիկ*-ը «երգակ. այր կամ կին» (հ. I, էջ 672: ԳՀԲ-ն նշում է «Երգեցիկ, ա. գ. 1. Երգիչ, երգող (տղամարդ կամ կին)» (էջ 236)): Լեզվաբաններն էլ հավաստում են *-իկ* վերջածանցի՝ միջին հայերենում կենսունակ ածանց լինելը (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 255)<sup>65</sup>: Թերևս հարկ է նշել նաև, որ Արմենակ Մուրվալյանը *-եցիկ* (<-եց +իկ)-ը համարում է «հայոց լեզվի հնացած կամ նեղ բարբառային ածանց»՝ «պահպանված մի քանի բառաձևերում»<sup>66</sup>:

*Թագուհի. արքայուհի. դշխոյ. բամբիշ. տիկին կամ տիկնա(ն)ց տիկին* (ՄՄՁ 6762, 108ա. 566(I), 245բ. 3110, 88ա. 775, 59բ. 873, 194ա) ՆԲՇ-ում ներառված *իշխուհի*-ն կազմվել է հայերենին բնորոշ *արմատ + ուհի* կաղապարով<sup>67</sup>՝ տրոհելի *իշխ* - և *-ուհի* բաղադրիչների: Լավրենտի Հովհաննիսյանը, քննելով և ապա բացառելով *իշխան, իշխել* բառերը իրանական փոխառությունների ցանկից, ամփոփում է ուսումնասիրողների ենթադրություն-կարծիքները՝ ավելի հավանական համարելով *իշխ*- արմատի խեթական կամ «համենայն դեպս անատոլիական ծագումը». նրա հավաստմամբ, ըստ նորագույն ուսումնասիրությունների, խեթերենում կա *išha* «տեր» արմատը<sup>68</sup>: Ուրեմն և հայերենում *իշխուհի*-ն

<sup>64</sup> Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 217-218:

<sup>65</sup> ՄՀԲ-ն վկայում է *եփեց ղնել*-ը՝ «ջրի մեջ եռացնելով խաշել» (հ. Ա, էջ 204) :

<sup>66</sup> Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, էջք 272, 278:

<sup>67</sup> Հմմտ.՝ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 204: Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 176-177:

<sup>68</sup> Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 224-225:

*տիրուհի*-ն է՝ նկատի առնելով նաև վերջինի՝ ՆՀԲ-ի բացատրությունը «...որպես միակ տիկին ամենայն տիկնանց. աշխարհատիկին. թագուհի. դշխոյ երկնի և երկրի» (հ. II, էջ 878):

*Գլխաւոր. նախապետական. սկզբնական. գլուխ. պետ. նախապատիւ. նախամեծար. գերապատիւ. գերագոյն. գահագլուխ. ծայրագոյն. գահերէց. վեհագոյն\*. վերագոյն. գերազանց. բարձրնտիր* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 270ա. 873, 189բ. 3110, 81բ. 6762, 104բ) առանձնանում է *մանաւանդագոյն*-ը: Հետաքրքիր բաղադրություն՝ «աւելի, յատկապէ՛ս» նշանակությամբ, մակբայական կիրառությամբ *մանաւանդ* արմատով և ածականի գերադրական աստիճան կազմող *-(ա)գոյն* ածանցով: Ամենայն հավանականությամբ, կազմվել է ՆԲՇ-ում առկա *գերագոյն*՝ «Վերագոյն. վեհագոյն. Գերագոյն ... գեր քան» (ՆՀԲ, հ. I, էջ 542), և *վերագոյն*՝ «Որ ի վեր է և առավելեալ քան զայլս. վերնագոյն. բարձրագոյն. վեհագոյն. գերագոյն. գերազանց. զօրագոյն» (ՆՀԲ, հ. II, էջ 803), բառերի նմանությամբ ու «առաջնորդ, ղեկավար, գլխավոր» նշանակությամբ: Բառն առկա է Մխիթար Աբբայի «Խոկունն վարուց» երկում («Եվ մանաւանդագոյն ցաւ է ինձ յաղագս կուրութեան իմոյ, որով ոչ ճանաչեմ զթշուառութիւնս իմ»)՝<sup>69</sup>: Նշելով «-գոյն մասնիկով բաղդատական աստիճան ցույց տվող ձևերը»՝ Վազգեն Համբարձումյանը XVIII դ. «լատինաբան հայերեն»-ում արձանագրում է նաև *մանաւանդագոյն*-ը<sup>70</sup>, իսկ XVIII-XIX դդ. գրաբարի բառապաշարի կաղապարային վերլուծության ժամանակ՝ առանձնացնում *մանաւանդաբար* նորակազմությունը<sup>71</sup>:

\* *Վեհագոյն* բառի առնչությամբ հարկ է ներկայացնել Հ. Աճառյանի՝ Ա. Վարդանյանին հղվող դիտարկումը. ըստ Հ. Աճառյանի՝ «Ոսկեդարեան հեղինակների մօտ պատահած *վեհ, վեհագոյն* հազվագիտ բառերը պետք է ուղղել՝ *վեր, վերագոյն*» (ՀԱԲ, հ. Դ, էջ 327):

<sup>69</sup> Խոկունն վարուց: Շարադրեալ ի Մխիթարայ Աբբայէ մեծէ, Վենետիկ, 1753, էջ 17:

<sup>70</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 279:

<sup>71</sup> Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 202:

*Պատիւ. մեծարանք. քննունելութիւն* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 267բ. 6762, 122բ) ներառված *յարգութիւն* բառը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «տե՛ս գՅարգանք» հղումով (ԲՀԼ, էջ 709 (758)): Այն բաղադրված է, ըստ Հրայր Աճառյանի, «օտար փոխառյալ» «առանձին անգործածական» *արգ* «յարգ, արժէք, արժանիք» արմատի *յարգ* ձևով (ՀԱԲ, հ. Ա, էջ 301) և *-ութիւն* վերջածանցով: «Յարգանք ըստ ամենայն նշանակութեան» բացատրությամբ որպէս «նոր բառ» և «... նոր շինուած ըլլալը» արձանագրում են ՋԲ-ն (էջք 25, 1029) և ԳՆԲՀԼ-ն (էջ 981): Բառն առկա է Հարություն Ավգեթյանի երկլեզվյան բառարանում՝ *Cómpliment* բառի բացատրության մեջ<sup>72</sup>: *Յարգութիւն* բառի "Почтение, уважение, честь..." նշանակությունն է վկայում ԽՀՌԲ-ն (հ. II, էջ 194): Վազգէն Համբարձումյանի հավաստմամբ էլ՝ *-ութիւն* ածանցով նորակազմ այս բառն առկա է XVIII դ. «լատինաբան հայերեն»-ում<sup>73</sup>: *Յարգութիւն*-ը «հին բառ կամ նշանակութիւն» նշումով է ՄՀԲԲ ում (հ. III, էջ 398), այլև «տե՛ս Հարգանք 1 նշան.» հղումով՝ ՀԼՀԲ-ում (էջ 377) և ԱՀԲԲ-ում (էջ 843), ԺՀԼԲԲ-ում այն «Հարգելի ինելը, հարգոյապատվություն» իմաստով է (հ. III, էջ 320): Բառը «մեծարանք» նշանակությամբ վրկայում են արևմտահայերենի բառարանները<sup>74</sup>:

*Ներքնակ* բառն է առկա *Անկողին* (և այլք որք այսմ պատկանին) մահիճ. լեհեպ. ծածկարան. բարձ. սաւան. պաստառակալ ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 236ա. 775, 54ա. 873, 186բ. 3110, 95ա. 6762, 101բ -102ա): Այն արձանագրում են Գրիգոր Փեշտրմալճյանը («տե՛ս ի վերոյ Ներքանոց= դնելի ինչ ի ներքոյ. որպէս բազմական, անկողին... մինտեր». ՓԲ, հ. II, էջ 404), ՄՀԲԲ-ն՝ «հզվդ. բառ կամ նշանակութիւն» նշումով և «Տ. Ներքանոց, Ներքնակ» հղումով (հ. III, էջ 459), նաև ՀԼՀԲ-ն՝ *Ներքնակ* բառահոդվածում՝ դարձյալ «հզվդ.» նշումով (էջ 487): *Ներքնակ*-ը և *ներքանոց*-ը հիշատակում

<sup>72</sup> Բառարան անգրիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 172:

<sup>73</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերէնի պատմություն, էջ 226:

<sup>74</sup> Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1072: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 577: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, էջ 293: Ա. վրդ. Կոստեան, նշվ. բառ., էջ 317:

է նաև Մխիթար Սեբաստացին՝ «ներքևնոց. ներքևը ձգելիք: դարձեալ, տեօշէկ. մինտեր...» բացատրությամբ (ԲՀԼՄՍ, էջ 294 (907)): Արդի հայերենի բացատրական բառարանները *ներքևակ* բառ չեն արձանագրում:

Ինչպես նշվել է, բառարանային պրպտումները հնարավորություն են ընձեռում անդրադառնալու նաև որոշ բառերի՝ ժամանակակից հայերենում ձեռք բերած իմաստներին: Եվ այս պարագայում *ներքևակ* բառի առնչությամբ թերևս հարկ է դիտարկել *ներքնակ*-ը, մանավանդ այն, որպես բառային տարբերակ, առկա է ՄՄՁ 3110-ում: Գրաբարի տպագիր բառարաններում *ներքնակ*-ն ունի «Ներքին ազանելի ի ներքոյ պարեգօտի. բաճկոն. վտաւակ», «տակէն հագնելիք», «տակի զգեստ» իմաստները (ՆՀԲ, հ. II, էջ 422: ԱԲ, էջ 616: ԳԲ, հ. Բ, էջ 282): Նույնն են նշում ԲՀԼՄՍ-ն (էջ 294 (907)), ՋԲ-ն (էջ 1017), ՓԲ-ն (հ. II, էջ 405), ԱԲՀԳ-ն (էջ 594): Աղեքսանդր Խոտաբաշյանցն արդեն առադրում է "матраць, тюфякъ" (ԽԲՀՌ, հ. II, էջ 234): Նույն, սակայն ոչ առաջնային իմաստն է առանձնացնում ՄՀԲԲ-ն՝ «Մեծ տոպրակ, մէջը լցրած բուրդ կամ բամբակ կամ խոտ, տափակեցրած և կարած վերևից ներքև, որ տարածում են քնելիս» (հ. III, էջ 457): Հրաչյա Աճառյանը, արձանագրելով գրաբարյան *ներքնակ*-ը, «գւռ.» նշումով բառերի շարքում իբրև «նոր բառ» առանձնացնում է *ներքնակ*-ն առանց բացատրության (ՀԱԲ, հ. Գ, էջ 443-445)՝ ամենայն հավանականությամբ նկատի առնելով *վերմակ*-ին հականիշ *դռշակ*-ը: Փաստորեն Հրաչյա Աճառյանն արձանագրում է երկու *ներքնակ*. բայց արդյոք կարելի՞ է դրանք համանուններ համարել: Հրանտ Պետրոսյանի հավաստմամբ՝ համանունություն կարելի է դիտարկել «միննույն լեզվավիճակում, համակարգում ....». ըստ նրա՝ «համանունության առնչակցություն չի կարելի տեսնել, օրինակ, գրաբարի ու նոր գրական հայերենի բառերի միջև»<sup>75</sup>, հետևաբար ընդունելի է բառիմաստի փոփոխությունը: Եվ քանի որ թվարկելով իմաստափոխության հիմունքները՝ Էդուարդ Աղայանը իմաստափոխությունը

<sup>75</sup> Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 323:

հանգեցնում է որևէ առարկայի (երևույթի, հասկանիչի, գործողության և այլնի) հասկացության անվանումը մի այլ առարկայի .... հասկացությանը փոխադրելուն և տարածելուն, այսինքն՝ «տվյալ բառը մի այլ առարկայի .... հասկացնելուն», ուրեմն և *ներքնակ*-ի դեպքում կարելի է դիտարկել իմաստների փոխհաջորդում, այսինքն՝ «բառի հին իմաստի կորուստ .... և նոր իմաստի ձեռքբերում.... բառի նախկին իմաստի փոխարինում նոր ուղղակի իմաստով»<sup>76</sup>: Հարկ է նշել, որ արդի հայերենի բացատրական բառարաններում(ԱՀԲԲ, էջ 1070: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 32) *ներքնակ*-ի նոր իմաստը առաջնային է, մինչ արևմտահայերենի՝ XX դարում հրատարակված բառարանները վկայում են *ներքնակ*-ի գրաբարյան իմաստները<sup>77</sup>, և միայն Պետրոս Ճիզմեճյանը բառի 6-րդ իմաստ է նշում՝ «անկողնի այն մասը՝ որուն վրայ կը պառկինք՝ կը քնանանք (մեր վրայի ծածկոցը՝ վերմակ)»<sup>78</sup>:

**Վայրագոյն** բառը *Խոնարհ. նուաստ. զիջեալ. ստորնագոյն. խոնարհագոյն* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 249բ. 775, 62բ. 873, 198բ. 3110, 92ա. 6762, 111ա) ներառվել է «խոնարհ, պարկեշտ, համեստ» նշանակությամբ: Բաղադրված է, ըստ Հրաչյա Աճառյանի, «ընդարձակ զարգացում կրած» *վայր* բառով, որի 4-րդ նշանակությունն է՝ «վարը, ցածը, տակը, ներքև» (նա նշում է, որ այն առաջանում է «հող, գետին իմաստից»։ ՀԱԲ, հ. Դ, էջ 300), և ածականի գերադրական աստիճան կազմող *-(ա)գոյն* ածանցով: Այս բառին, սակայն, չի վերաբերում Հրաչյա Աճառյանի՝ *վայր* արմատին առընչվող «նիւթական ցածրութեան գաղափարին հետևում է բարոյական ստորութեան .... գաղափարը» դիտարկումը (ՀԱԲ, հ. Դ, էջ 301)՝ պայմանավորված *վայրագոյն*-ի՝ տվյալ դեպքում «պարկեշտ, համեստ» նշանակության բնեռացմամբ: *Վայրագոյն*-ը վկայում են

<sup>76</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջք 101,106:

<sup>77</sup> Խոսքը վերաբերում է ԳՆԲՀԼ-ին (էջ 1023), Հ. Գայայանի (Բառարան-գանձարան հայերեն լեզուի, էջ 365), Ա. Տեր Խաչատուրյանի, Հ. Գանգրունու, Փ.Կ. Տոնիկյանի (նշվ. բառ., էջ 610), Գ. Ճերեճյանի, Փ.Կ. Տոնիկյանի, Ա. Տեր Խաչատուրյանի (նշվ. բառ., հ. II, էջ 378), Ա. Կոստանյանի (նշվ. բառ., էջ 336) կազմած բառարաններին:

<sup>78</sup> Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1114:

Գրիգոր Փեշտրմալճյանը՝ «ստորնագոյն, խոնարհագոյն, նուաստագոյն» բացատրությամբ (ՓԲ, հ. II, էջ 711), և ՆՀԲ-ն՝ *խոնարհագոյն, նուաստագոյն, ստորնագոյն, ցածագոյն* բառերը բացատրելիս՝ «առաւել խոնարհ (ըստ ամենայն նշ). ցածագոյն. ստորնագոյն. *վայրագոյն ....*», «առաւել կամ յոյժ նուաստ. խոնարհագոյն, ստորնագոյն. *վայրագոյն ....*», «խոնարհագոյն, *վայրագոյն*», «կարի ստորին կամ ներքին. *վայրագոյն*» (հ. I, էջ 962, հ. II, էջք 450, 751, 904. ընդգծ.՝ Ն. Հ.): *Վայրագոյն*-ը գործածում են Մխիթար Սեբաստացին («...զիս ըդ առաջի թշնամեաց իմոց զիս վայրագոյն քան զկեանս քո ցուցանելիր...», «զի ոչ կարէ վայրագոյն ոք առաջնորդ լուծանել...»)՝<sup>79</sup> և Գաբրիել Ավետիքյանը («... ուստի ոչ վայրագոյն ոք քան զերդուօղն, և ոչ ինքն իւրում անձին վկայ լինել կարօղ է յերդման»)՝<sup>80</sup>:

*Չար* հենարառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 265ա-265բ. 6762, 121ա) «դժբախտ» նշանակությամբ առկա *տարաբաղդ* բառի «նոր շինուած ըլլալը»-ն է հավաստում նաև ԳՆԲՀԼ-ն (էջ 1278): *Տարաբաղդ* տարբերակը հիշատակում են Մխիթար Սեբաստացին<sup>81</sup>, Մինաս Բժշկյանցը<sup>82</sup>: ՄՀԲԲ-ն այն հղում է «անբախտ» բացատրությամբ *տարաբախտ*-ին (հ. IV, էջ 381), որն էլ կիրառվում է արդի հայերենում (ԱՀԲԲ, էջ 1416. ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 456):

*Դպրատուն. դպրոց. համալսարան. դասատուն* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 241բ. 6762, 105բ) առկա *ուսումնարան* բառը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «տեղի ուսման, որ և ասի դպրոց» բացատրությամբ (ԲՀԼ, էջ 865 (924)): Հրաչյա Աճառյանը այն նշում է

<sup>79</sup> Մեկնություն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, արարեցեալ և շարադրեցեալ ի Մի. Սեբաստացոյ, էջք 653, 734:

<sup>80</sup> Մեկնություն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, աշխատասիրութեամբ Հ. Գաբրիելի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցոյ, հ. III, Վենետիկ, 1812, էջ 132:

<sup>81</sup> Քերականութիւն գրաբառի յեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ, էջ 575:

<sup>82</sup> Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Շարագրեալ Հ. Մինասայ Բժշկեանց, Վենետիկ, 1830, էջ 335:



«նոր բառերի» շարքում (ՀԱԲ, հ. Գ, էջ 610): Ըստ նրա՝ բաղադրված է առանձին անգործածական *ուս* «սովորելը» «բնիկ հայ» բառով (ՀԱԲ, ն. տ.), և ըստ Գևորգ Ջահուկյանի՝ «հ.-ե. \*men-/mn ածանցից նախորդող *-ու* հիմքային տարրով (հ.-ե. \*eu/u)» ծագած *-ումն*» (ՋՀՄԲ, էջ 812) և «իրան. *-a-dan(a)* ածանցակերպից (*-a* հիմքակազմ տարր + *dana-*«տեղ»)» *-արան* (ՋՀՄԲ, էջ 800) ածանցներով: Բառն առկա է նաև XIX դարում հրատարակված մի գրքում<sup>83</sup>: ԳՆԲՀԼ-ն համարում է «նոր շինումած»՝ «վարժարան» նշանակությամբ (էջ 1097): ԽՀՌԲ-ն հիշատակում է "Училище, школа; лицей, семинария; учебное заведение" նշանակություններով (հ. II, էջ 297): ՄՀԲԲ-ն «Ուսում առնելու տեղ, հիմնարկ, որտեղ աշակերտներին ուսում են տալիս» նշանակությանն առադրում է «դպրոց. (գործ է ածվում սովորաբար ստորին և միջնակարգ դպրոցների համար)» իմաստը (հ. III, էջ 608): Արդի հայերեն բացատրական բառարաններում առաջնային է «Միջնակարգ կամ տարրական մասնագիտական ուսումնական հաստատություն» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 1499: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 611). կարելի է նշել, որ բառը որոշակիորեն իմաստափոխվել է:

ՉԲ-ներում գերակշռում են *նորակազմ բաղադրյալ՝ բարդ և բարդածանցավոր բառերը*:

*Ձանազանել ուրիշ. այլազգ. այլ. տարբեր. ազգի ազգի. գոյնըզգոյն. երփներփն. պէսպէս. բազմադէմ. բազմադիմի. յոզնադիմի. բազմապիսի. բազմօրինակ. բազմակերպ. բիրակերպ* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 106բ. 566 (I), 243բ) առկա է «բնիկ հայ» *այլ* «ուրիշ» արմատով (ՀԱԲ, հ. Ա, էջ 168) և *սարաս* «տարազ, ձև, կերպ» բառով (ՀԱԲ, հ. Դ, էջ 185) բաղադրված *այլասարաս* բառը: Այն վկայվում է Հովհաննես Կոստանդինուպոլսեցու՝ հայերեն շարադրված լատիներեն քերականության «Յաղագս մակբայի» գլխում. նշվում է, որ մակբայներից «ոմանք են այլայլականք», և օրինակ է բերվում *Secus*

<sup>83</sup> Գումար բարձրագոյն հրովարտակաց եւ արձանագրութեանց, վերաբերելոց առ հայկական Լագարեան ճեմարանն արևելեան լեզուաց որ ի Մոսկով, Ս. Պետերբուրգ, 1839, էջ 13:

-ը՝ «տարապէս՝ այլասարաս» թարգմանությամբ<sup>84</sup>: Բառը վկայում է Մխիթար Սեբաստացին՝ «այլաձև, կամ այլով եղանակաւ. կամ այլով կերպիւ» (ԲՀԼ, էջ 31(60)), հետագայում՝ երկլեզվյան բառարաններում որպէս գլխաբառ՝ Հարություն Ավգերյանը<sup>85</sup>, նաև Աղեքսանդր Խուրաբաշյանը՝ "Инообразный, различный, разнообразный" բացատրությամբ (ԽԲՀՌ, հ. I, էջ 39): *Այլասարաս*-ն արձանագրում են Ստեփան Մալխասյանը՝ «Ուրիշ սարաս ունեցող, ուրիշ կերպի, ուրիշ տեսակի» իմաստով (ՄՀԲԲ, հ. I, էջ 78), Աշոտ Սուքիասյանը՝ «տե ս Այլակերպ 1 նշան» հղումով և «հագուաղէպ բառ կամ նշանակութիւն» նշումով (ՀԼՀԲ, էջ 34), նաև Հովհաննէս Բարսեղյանը՝ (հնց.) նշումով (ՀԲՀԲ, էջ 56):

*Ճարտասան. ճարտարաբան\* . հռետոր. րետոր. ճոռոմախօս. ճոռոմարան \*\* . փաստարան. խորախօս* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 116բ. 566(1), 259ա. 3110,100ա. 775, 68ա. 873, 204բ) վկայվում է *ատենարաբան*-ը: Գրաբարի բառարանները արձանագրում են *ատենարանեմ, ատենարանութիւն, ատենարար* բառերը (ՆՀԲ, հ. I, էջ 335: ԱԲ, էջ 128: ԳՀԲ, էջ 108: ԳԲ, հ. Ա, էջ 198. տե՛ս նաև՝ ՀԱԲ, հ. Ա, էջ 287): ՄՀԲ-ն նշում է *ատենարանութիւն*-ը «ատենարանելը, ճառախոսութիւն» նշանակությամբ (հ. Ա, էջ 56):

Սերգեյ Գալստյանը ժամանակակից հայերենում առանձնացնում է *-բան* ածանցով երկու կառույց՝ գոյականից և այլ խոսքի մասերի արմատներից կազմված. առաջինը՝ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (*արվես-*

<sup>84</sup> Քերականութիւն լաթինական հայերէն շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, էջ 154:

<sup>85</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 23:

\* ՄՄՁ 556(1)-ում և 6762-ում *ճարտարան* տարբերակն է:

\*\* Ինչպէս վկայում է Վ. Համբարձումյանը, Խ. Էրզրումցին «ճոռոմութիւն բառը կիրառում է իբրև հոմանիշ ճարտասանութիւն տերմինին, որը պայմանավորված է բառի իմաստային նոր կիրառությամբ». Վ. Համբարձումյան, XVIII-XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը. - «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ II, Ե., 1985, էջ 295:

*տարան, ախտարան, երկրաբան, լեզվաբան* և այլն)<sup>86</sup>: Նրա հավաստմամբ՝ մյուս տիպի բաղադրություններում *-բան* արմատի բառային նշանակությունը (որպես բաղադրության երկրորդ եզր գործածվելիս) «մթագնվում է», և դրանք ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ<sup>87</sup>: Սակայն չի նշվում, թե *-բան* բաղադրիչն այս կազմություններում բառակազմական ի՛նչ նշանակություն ունի, բայց և *լսաբան*-ը բացատրվում է «ձայնագետ», *կոնծաբան*-ը՝ «հարբեցող, հարբեցողության մասնագետ»: Ըստ բառարանների՝ *գոեհկաբան, դատարկաբան, զավեշտաբան, զվարճաբան, կատակաբան, կարճաբան, համառոտաբան, հեզնաբան, հրստակաբան, ճարտարաբան, ճոռոմաբան, մեծաբան, սակավաբան* կազմություններում *-բան* բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող» (*դատարկաբան*՝ «դատարկ բաներ խոսող», *զվարճաբան*՝ «նույնն է *Զվարճախոս*», *սակավաբան*՝ «քիչ խոսող, քչախոս»։ տե՛ս ԱՀԲԲ, էջք 259, 280, 363, 381, 699, 707, 804, 947, 987, 1268, նաև՝ ԺՀԼԲԲ, հ. III, էջք 331, 386, 442): Եվ թեև թվարկվող բաղադրություններում միայն *կատակ*-ն ու *զավեշտ*-ն են գոյական, բայց և այնպես «բնիկ հայ» *ատեան* նաև «2. դատաւորների ժողովը. 4. դատաստան, դատարանի առջև հարցաքննութիւն» նշանակող (ՀԱԲ, հ. Ա, էջ 286) և *բալ* «խօսիլ, ասել» *բա* անգործածական «պարզ արմատի» «միւս ածանցներ»-ից՝ *բան* «խօսք» (ՀԱԲ, հ. Ա, էջ 383-384) արմատներով բաղադրված *ատենաբան*-ն էլ, թերևս, կարող է բառացի նշանակել «ասոյանում, դատարանում խոսող»: Մանավանդ բառը հիշատակում են Մխիթար Մեբաստացին՝ «տիւանը խօսօղ. տիւանի մէջ տաւայ քջօղ» (ԲՀԼՄՄ, էջ 52 (665)), հետագայում Մանվել Զախջախյանը՝ «որ խօսի զբանս յատենի» (ԶԲ, էջ 221), իսկ ԽՀՌԲ և ՄՀԲԲ-ն արդեն՝ «հռետոր» նշանակությամբ (հ. I, էջ 161: հ. I, էջ 249): Նույն իմաստով, բայց և «հնց.» նշումով են առանձնացնում բառը ԱՀԲԲ-ն (էջ 123) և ԺՀԼԲԲ -ն (հ. I, էջ 205): Եվ քանի որ *հռետոր*-ը, բացի «հռետորական արվեստին հմուտ անձ»

<sup>86</sup> Մ. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, էջ 48-49:

<sup>87</sup> Նույն տեղում:

լինելուց, ունի նաև «ճարտարախոս մարդ» և «ճառախոս» իմաստները (ԱՀԲԲ, էջ 898: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 384), ուստի «դատարանում խոսող» անձը (անկախ այն հանգամանքից, թե ում շահերն է ներկայացնում- պաշտպանում) պետք է ճարտար խոսի, ճարտարախոս լինի<sup>88</sup>:

Նույն ՆԲԾ-ից *փաստաբան*-ը Հրաչյա Աճառյանը «նոր բառ» է համարում (ՀԱԲ, հ. Դ, էջ 484): Երեմիա Մեղրեցին բառը բացատրում է որպես «պատճառաբան (ԲՀ, էջ 323), Մխիթար Սեբաստացին՝ հղում՝ «տե՛ս զՊատճառաբան» (ԲՀԼ, էջ 1170 (1237)), սա էլ բացատրելով՝ «պատճառա խօսող. կամ փաստի վարող ի բանս. և կամ փաստաբան» (ԲՀԼ, էջ 912 (971)), այսինքն՝ «Որ պատճառօք խօսի առ արդարացուցանել զդատ կամ զանձն» (ՆՀԲ, հ. II, էջ 614): Թերևս հարկ է հիշատակել հունարենից պատճենված և դասական հայերենում արձանագրված «*փաստբանական* բարդ նորաբանությունը»՝ «պատճառները քննող» նշանակությամբ<sup>89</sup>: *Փաստաբան*-ը գործածում է Միքայել Չամչյանցը («Մոյնպես վտանգեցան և երկոքին քաջ նիզակակիցք նորա. որոց մին՝ այն է Կենսորինոս այր սինկղիտոսական և փաստաբան, զնոյն օրինակ վախճանի ընկալալա...»)՝<sup>90</sup>: Բառը՝ «որ փաստիւք ատենաբան է ի դատաստանի» նըշանակությամբ և աստղանիշով (այսինքն՝ իբրև «նոր բառ») առկա է ՋԲ-ում (էջ 1427): *Փաստաբան*-ը արձանագրվում է նաև XVIII դ. «լատինաբան հայերեն»-ում<sup>91</sup>: Նույն նշանակությամբ («1.Իրաւաբան, որ դատարանում պաշտպանում է մէկի գործը») *փաստա-*

<sup>88</sup> Բառը հիշատակվում է Գ. Լուսինյանի կազմած երկլեզվյան բառարանում՝ «Harangueur, գ. ատենախօս, ատենաբան, հրապարակախօս, բանախօս...» բառահոդվածում. Գուվտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերագրող ֆրանսահայ, հ. I, Փարիզ, 1900, էջ 1018:

<sup>89</sup> Տե՛ս Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010, էջ 69:

<sup>90</sup> ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդապետէ չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Ա, Վենետիկ, 1786, էջ 249: Աշխատությունների խորագրերը տրվում են ըստ տիտղոսաթերթերի՝ պահպանելով ուղղագրությունը:

<sup>91</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 206:

*բան*-ը ամրագրվում է ՄՀԲԲ-ում (հ. IV, էջ 489. տրվում է նաև «2. Ընդհանրապես՝ պաշտպան» իմաստը). այն կիրառելի է նաև այժմ, բայց և ըստ բառարանների՝ որոշակի գործառույթների հավելումով (գործը վարել, իրավաբանական խորհուրդներ տալ և այլն. տե՛ս ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 639: ԱՀԲԲ, էջ 151): ԺՀԼԲԲ-ն «փխբ.» նշումով հավելում է «Լավ ճառախոս, իր խոսքը փաստարկներով հաստատող անձ» իմաստը: Ամեն դեպքում և՛ խոսքը փաստարկող-հիմնավորողը, և՛ ապացույցներով խոսող-ներկայացնողը, և՛ որևէ մեկին պաշտպանողը (այն էլ դատարանում) պետք է փոքր-ինչ հռետոր և ճարտարախոս լինի, որպեսզի կարողանա համոզել լրատողին (առավել ևս երդվյալ ատենակալներին):

*Սեղեխ. հոմանի. բոզ* ՆԲՇ-ն (ՄՄՁ 566(I), 270ա. 775, 74ա. 873, 213բ. 3110, 107ա. 6762, 124ա) ավարտվում է *բոզարած* բառով: Հրաչյա Աճառյանն այն հիշատակում է «նոր բառեր»-ի շարքում (ՀԱԲ, հ. Ա, էջ 8 և էջ 293)՝ նշելով, որ Սուչավայում գործածվում է «*բոզտըրած*» տարբերակը (ՀԱԲ, հ. Ա, էջ 460): Բառը հիշատակվում է ՆՀԲ-ում՝ *Կալատ* բառահոլվածում (հ. I, էջ 1079): ՄՀԲ-ն «պոռնիկ պահող, անառակ, անբարոյական» նշանակությամբ *բոզարած* բառային տարբերակն է արձանագրում Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ից (հ. Ա, էջ 122): Մխիթար Սեբաստացին այն բացատրում է որպես «պոռնիկ. կամ հետևող բոզի. կամ պահող և սիրող զբոզ» (ԲՀԼ, էջ 158 (187)): Բառն առկա է XVIII դ. թարգմանական գրականության մեջ՝ «...այր ամբարիշտ, և չարագործ, և բոզարած, և անաստուած ոմն»<sup>92</sup>, ուշ միջնադարի հայ բանաստեղծ Ստեփանոս Կեղեցու երկերում՝ «Յորժամ որ խօսի, սաստեն. Սո՛ւս կացիր հարբած, բոզարած»<sup>93</sup>, Մանվել Ջախջախյանի կազմած երեքլեզվյան բառարանում՝ *Bertóne, Imputtánito, Pi-*

<sup>92</sup> Գիրք հրաշից ամենօրինեալ սուրբ Աստուածածնին հաւաքեալ թարգմանաբար ի հայ բարբառ ի զանազան պատմութեանց իտալացի հեղինակաց ի հայր զաքարեա վարդապետէ ակնեցոյ, 1771, Վենետիկ, էջ 16:

<sup>93</sup> <https://digilib.aul.am/book/339/345/7687/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>

vo, *Puttanière, Randágio* բառերի բացատրություններում<sup>94</sup>: Ըստ բառարանային տվյալների՝ *բոգարած*-ը գործածվում է հայերենի բարբառներում՝ Արարատյան, Նախիջևանի՝ «բոգաբոյծ»<sup>95</sup>, նաև Կարնո՝ «պոռնկություն անող, պոռնիկների հետ կենակցող» (ՀԼԲԲ, հ. I, էջ 204) նշանակություններով: ՄՀԲԲ-ն առանց որևէ նշումի առադրում է՝ «բոգերի յետևից ընկած» (ՄՀԲԲ, հ. I, էջ 381): Հիշատակված իմաստներով վկայում են նաև արդի հայերենի բացատրական բառարանները՝ ԱՀԲԲ-ում՝ «(ժղ.) Կնամով» հավելմամբ (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 333: ԱՀԲԲ, էջ 198): Հատկանշական է, որ բառը արդի հայերենում պահպանվել է ՆԲՇ-ում առկա հնչյունական տարբերակով:

*Յիմար. մորոս. անմիտ. անիմաստ. տգէտ. անգէտ. ոակայ. տիւմար. ախմար. խելածէտ. խելագար. խելացնոր. յիմարամիտ. ախմարամիտ. բթամիտ. վայրենամիտ. պաճարամիտ. շուարեալ. մանկախել* ՆԲՇ-ում (ՄՄՉ 6762,118ա. 566 (I), 261բ. 3110,102ա. 775, 69ա. 873, 207ա) վկայվող, բառացի «գրաստի խելք ունեցող» նշանակությամբ *գրաստախել*-ը բաղադրվել է *գրաստ* և *խել* արմատներով: Այն, թերևս, կազմվել է ՆԲՇ-ում և հետագայում լույս տեսած բառարաններում առկա *մանկախել*-ի համաբանությամբ: Ըստ «Հայոց լեզվի հանգաբառարան»-ի՝ հայերենում չկան բառավերջում *խել* արմատով կազմություններ<sup>96</sup>. *միտ* արմատով կազմությունները շուրջ յոթ տասնյակ են, մինչդեռ *խելք*-ով բաղադրությունները՝ երեքը<sup>97</sup>: «Անասնամիտ, անմիտ» նշանակությամբ *գրաստամիտ*-ը արձանագրում են ՋԲ-ն (էջ 382), «հազուադեպ բառ կամ նշանակութիւն» նշումով՝ ՄՀԲԲ-ն (հ. I, էջ 475), ԽՀՌԲ-ն (հ. I, էջ 296), այլև ՀԼՀԲ-ն՝ «տե՛ս Բթամիտ» հղումով (էջ 154): ՄՀԲ-ն Վարդան Այգեկցու առակներից առանձնացնում է *մանկայխել(ք)*-

<sup>94</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջք 104, 400, 588, 621, 634:

<sup>95</sup> Հայոց բառ ու բան, Աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի (այսուհետև՝ ԱՀԲՌԲ), Վաղարշապատ, 1912, էջ 110:

<sup>96</sup> Հմմտ.՝ Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976, էջ 121-122:

<sup>97</sup> Հմմտ.՝ Հայոց լեզվի հանգաբառարան, էջք 502-503 և 609:

ը (հ. Բ, էջ 107)<sup>98</sup>, Լավրենտի Հովհաննիսյանը Չաքարիա Քանաքեռցու (XVII դ.) «Պատմագրություն»-ից՝ *պակասսիսելք* կազմությունը<sup>99</sup>:

*Պատերազմ(ն). իսզմ. ոսզմ. մարտ. գուպար. կռիւ. ճակատամարտ ՆԲՇ-ն ավարտվում է «...եթէ միայն ի մէջ երկուց. մենամարտութիւն. եզամարտութիւն. երկ(ա)մարտութիւն»* պարզաբանմամբ (ՄՍՁ 6762, 122ա. 566 (I), 267ա. 873, 211բ. 775, 72բ): Ըստ Արուսյակ Մուրադյանի՝ *եզ-ը* հունարեն *ἐν* (εἶς) «մեկ, միակ» բառն է. նա նշում է՝ «Քերականական թիվ, որը ցույց է տալիս առարկայի կամ գործողություն կատարողի մեկը լինելը»<sup>100</sup>: Ասել է՝ *եզամարտութիւն-ը* նույն *մենամարտութիւն-ն* է: Միջին հայերենում հանդիպում են նաև *եզաբանել-ը* «միաբանել, միավորել, համախմբել» (ՄՀԲ, հ. Ա, էջ 187), *եզանուն-ը*<sup>101</sup>, գրաբարում՝ *եզերորդ-ը* «առաջին» (ՀԱԲ, ն.տ.):

*Երկու, մարտ* արմատներով և *-ութիւն* ածանցով է բաղադրվել *երկամարտութիւն-ը*: Արդի հայերենում պահպանվել է *երկամարտ-ը* իբրև սպորտային եզր և բոլորովին այլ՝ «Սպորտային վարժությունների երկու ձևը իբրև մի ամբողջություն և այդ երկու ձևերով մրցումը» նշանակությամբ արձանագրվել բացատրական բառարաններում (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 584: ԱՀԲԲ, էջ 346):

*Գարշապար. ներբան. կրունկ* ՆԲՇ-ում առկա է *թաթոսից* բաղադրությունը (ՄՍՁ 566(I), 239բ. 775, 56ա. 873, 189բ. 3110, 81ա. 6762, 104ա): ՆՀԲ-ն *թաթք ոսից-ի* բազմաթիվ վկայություններ է քաղում Աստվածաշնչից (հ. I, էջ 790): Մանվել Քաջունին «ի գաղ-

<sup>98</sup> Տե՛ս նաև՝ Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 23-24 :

<sup>99</sup> Լ. Հովհաննիսյան. XVII դարի գրաբարը.- «Լեզվի և ոճի հարցեր», VII, էջ 151:

<sup>100</sup> Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականության տերմինաբանության ստեղծման գործում, էջ 239: *Եզ* արմատի ստուգաբանությունը տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 4:

<sup>101</sup> Վ. Համբարձումյանի հավաստմամբ առկա է Հ. Քոնեցու «Յաղագս քերականին» աշխատության մեջ (Վ. Համբարձումյան, Լատինարան հայերենի պատմություն, էջ 214):

դիերեն» *Tarsipéde* բացատրությամբ արձանագրում է *թաթոտն* բառը (ՔՄ, հ. III, էջ 75 (39)), որը նույն «նախագարշապար, ոտնաթաթ»-ն է<sup>102</sup>: Նկատի առնելով Հրաչյա Աճառյանի՝ *ոտնաման* «նոր բառ»-ի համար «հնից ունինք **ոտից աման**...» դիտարկումը՝ կարելի է ենթադրել, որ հենց կից գրությամբ այս *թաթոտից* բաղադրությունից էլ հետագայում Հրաչյա Աճառյանի նշածի նմանությամբ (սակայն շրջուն կառույցով՝ *թաթոտից*→*ոտից թաթ*→*ոտնաթաթ*) կազմվել է արդի հայերենի բացատրական բառարաններում առկա *ոտնաթաթ*-ը (ԱՀԲԲ, էջ 1144: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 113: ՀԲՀԲ, էջ 746):

Միայն ՄՄՁ 6762-ում (240բ)՝ *Գոյն. երանգ. (եթէ զանազան գունով իցէ) գոյնզգոյն. գունակս գունակս. կամ բազմագոյն. բազմագոյնակս. երփներփն. պէսպէս. յոզներոնգ. խայտախարին. խայտաբղետ* ՆԲԾ-ում են վկայվում *խայտափիտ* և *խայտաճրմուկ* բառերը երկուսն էլ բաղադրված, Հրաչյա Աճառյանի վկայությամբ, «խատուտիկ, պիսակաւոր» նշանակությամբ «բնիկ հայ» *խայտ* արմատով (ՀԱԲ, հ. Բ, էջ 326): Նա *փիտ*-ը համարում է «անյայտ իմաստով և առանձին անգործածական բառ» (ՀԱԲ, հ. Դ, էջ 505). բառահոդվածում արձանագրում է «Ձեռքածութիւն» գրքում առկա *խայտափիտ* բառը՝ հիշատակելով նաև Մանվել Ջախջախյանին (ՀԱԲ, ն. տ.)<sup>103</sup>: Հակոբ Վիլյոտի կազմած բառարանում *խայտափիտ*-ն առկա է «Multicolor, is. բազմագոյն:.... բազմերանգ: ....» բառահոդվածում<sup>104</sup>: Բառը նշում է Միսիթար Սեբաստացին՝ «տե՛ս զԽայտախարիւ. կամ զԽայտաբղետ» հղումով (ԲՀԼ, էջ 367-368 (400-401)): *Խայտափիտ*-ն արձանագրում է ՋԲ-ն (ինչպես և նշում է

<sup>102</sup> К. Ганшина, Французско-русский словарь, М., 1977, ст. 821.

<sup>103</sup> Վ. Համբարձումյանը բառն արձանագրում է «Միայն անվանական.... բաղադրյալ հիմքով կազմված նոր բառեր (սորակազմություններ)» ենթախմբում Վ. Հունանյանի բառարանի II տպագրությունից (1705թ.) հետևյալ դիտարկմամբ. «Անհավանական չէ բնագրի *խայտափիտ* բառի երկրորդ՝ *փիտ* բաղադրիչի և *բիծ* արմատական բառի տարբերակներ լինելը (տարբերակայնությունը)». Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 206:

<sup>104</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 487.



Հրայյա Աճառյանը՝ «Տ. Խայտաբղետ» հղումով և աստղանիշով (այսինքն՝ իբրև «նոր բառ») (ՋԲ, էջք 654, 25): Բառը երկլեզվյան և երեքլեզվյան բառարաններում հիշատակում են Հարություն Ավգեբյանը<sup>105</sup> և կրկին Մանվել Ջախջախյանը<sup>106</sup>: Աղեքսանդր Խուդաբաշյանցն այն արձանագրում է "см. **Խայտախարի и Խայտաբղետ**" հղումով (ԽՀՌԲ, հ. I, էջ 490): ՄՀԲԲ-ում վկայվում է «հագուաղեպ բառ» նշումով (հ. II, էջ 237):

Հրայյա Աճառյանը «զգեստի վրայ գեղեցիկ բանուածք, պատի վրայ նկարուած գարդեր» նշանակությամբ *ճամուկ* արմատով բաղադրված *խայտաճամուկ*-ը «նոր բառ» է դիտում՝ *ճամուկ* բառահոդվածում առանց վկայության նշելով. «... **խայտաճամուկ** (արդի գրականի մեջ) «գոյնզգոյն գարդերով, խատուտիկ»» (ՀԱԲ, հ. Բ, էջ 326. հ. Գ, էջ 180): Բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «խայտախարի. կամ խայտափիտ. ռանկ. խատուտիկ. կամ ալաճայ» բացատրությամբ (ԲՀԼ, էջ 367(400)), հետագայում՝ երկլեզվյան բառարանում Հարություն Ավգեբյանը<sup>107</sup>: Մանվել Ջախջախյանը նույնպես այն համարում է «նոր բառ»՝ «Տ. Խայտախարի» հղումով (ՋԲ, էջ 654): Բառն առկա է նաև Աղեքսանդր Խուդաբաշյանցի կազմած բառարանում (ԽՀՌԲ, հ. I, էջ 489-490): ՄՀԲԲ-ն բացատրում է «Աչքի ընկնող վառ գոյներով, գոյնզգոյն» (հ. II, էջ 236): Բառը վկայում են արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 560: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 477)<sup>108</sup>:

*Յիմար* հենաբառով ՆԲՇ-ից (տե՛ս 109-րդ էջում) *խելածէտ*-ը բաղադրված է հայերեն *խել* և փոխառյալ *-ծէտ*, ինչպես հավաստում են հետազոտողները, անկախաբար չլիքառվող արմատներ-

<sup>105</sup> Բառարան համառոտ ի գաղղիական է հայ, աշխ.-մբ Շ. Յ. վ. Ալգերեան, հ. Ա, Վենետիկ, 1812, էջ 146: Բառարան համառոտ ի հայ է ի գաղղիական, հ. II, էջ 284:

<sup>106</sup> Համառոտ բառարան յիտալական է հայ եւ ի տաճիկ, աշխ.-մբ Շ. Մանուէլ վ. Ջախջախեան, Վենետիկ, 1829, էջք 353, 868, 886:

<sup>107</sup> Բառարան համառոտ ի հայ է ի գաղղիական, հ. II, էջ 284:

<sup>108</sup> Տե՛ս նաև ՀԲՀԲ, էջ 409: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 522: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 236: Ա. վրդ. Կոստեան, նշվ. բառ., էջ 168:

րով (ՀԱԲ, հ. Բ, էջ 228)<sup>109</sup>. վերջինս «պիլ. žatan, zatan «գարնել, հարվածել, խփել», զնդ. jan, պրս. ذاد zadan «գարնել»» բայի հիմքից է (ՀԱԲ, ն. տ.), որը Գևորգ Ջահուկյանի վկայությամբ գիտակցվել է իբրև ինքնուրույն վերջածանց և հայկական հիմքերից կազմել բայեր (ՀԼՊՆԺ, էջ 526. հմմտ.՝ նաև ՋՀՄԲ, էջ 281): Հրաչյա Աճառյանը *-ժէտ-*ը իմաստով նույնական է համարում հայերեն *-հար* -ին (ՀԱԲ, ն. տ.): Լավրենտի Հովհաննիսյանի կարծիքով էլ փոխառյալ որոշ բառերի համաբանությամբ հայերենը *-ժէտ-*ով կերտել է հիվանդություն նշող իմաստային դաշտը համալրող մի քանի նոր բառ: Նրա ենթադրությունն ամրագրում է «նաև *-ժէտ-*ի բառաբարդման կադապարների խիստ սահմանափակությունը», քանի որ այն առկա է միայն վերջահար դիրքում<sup>110</sup>: Եվ դա է հաստատում նաև *խելածէտ* բառը, որը, ինչպես արդեն նշվել է, Հրաչյա Աճառյանը իմաստով նույնական է համարում *խելահար*-ին՝ «խենթացած, խելագարված, խելքը թոցրած» նշանակությամբ<sup>111</sup>: *Խելածէտ*-ն առկա է Մխիթար Մեքաստացու աշխատասիրած քերականության<sup>112</sup>, Հովհան Ոսկեբերանի «Յաղագս քահանայութեան» գրքի թարգմանության մեջ («...զնա ո՛չ իբրև ամբարտաւան, այլ իբրև խելածէտ բամբասեսցէ...»)<sup>113</sup>, Գաբրիել Ավետիքյանի հայկական քերականության «Յարանուն մասնիկք» գլխում՝ «(խելքը սախտած)» բացատրությամբ<sup>114</sup>: Մխիթար Մեքաստացին բառը

<sup>109</sup> Տե՛ս նաև՝ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 131-132: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Ե., 2008, էջ 69:

<sup>110</sup> Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 131-132:

<sup>111</sup> *Խելահար*-ը «բնատ.» նշումով առկա է միայն ԱՀԲԲ-ում (ԱՀԲԲ, էջ 573):

<sup>112</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Մեքաստացոյ, էջ 540:

<sup>113</sup> Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսոյ արքեպիսկոպոսի հատընտիր գիրք եւ ճառք եւ ներբողեանք, Թարգմանեալ ի յոյն բնագրէ երկասիրութեամբ տեառն Հ. Եղիայ վարդապետի Թովմաճանեան կոստանդնուպօլսեցոյ, հ. I, Վենետիկ, 1818, էջ 231:

<sup>114</sup> Քերականութիւն հայկական նորոգ քնութեամբ և կարգաւ աշխատասիրեալ տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցոյ, Վենետիկ, 1815, էջ 235:

հղում է «փախուկ. իենթ. իել» բացատրությամբ *խելագար*-ին (ԲՀԼՄՍ, էջ 169 (782)): ԽՀՌԲ-ն և ՄՀԲԲ-ն վկայում են նույն ձևով, վերջինը՝ «հագուադեպ բառ կամ նշանակություն» նշումով (հ. I, էջ 32: հ. III, էջ 254):

*Խաւարագոյն, խաւարատիպ* բառերն են առկա *Սեաւ. սեւագոյն, սեւաթոյր. թուխ. արջնատես. արջնաթոյր. թխատիպ. մթագոյն. մթնալուրթ. լրթագոյն. սեւատես* (ՄՄՁ 6762,124ա. 566(I), 270 ա. 3110,107 ա. 775, 74 ա. 873, 213 ա) ՆԲՇ-ում: Երկու կազմություններում էլ *խաւար* «մութն. մթություն» արմատն է (ՆՀԲ, հ. II, էջ 933. *մութ(ն)*-ը՝ «թխագոյն». տե՛ս ՆՀԲ, հ. II, էջ 299): Բարդությունները թերևս կազմվել են բառարաններում և ՆԲՇ-ում առկա *սեւագոյն* և *թխատիպ* (=սեւագոյն, ՆՀԲ, հ. I, էջ 813), այլև «մթնագոյն» նշանակությամբ *լրթագոյն* (ՆՀԲ, հ. I, էջ 907) և վաղաշխարհաբարյան աղբյուրներում վկայված «խաւարի նման» նշանակությամբ *խաւարանման*<sup>115</sup> բառերի համաբանությամբ: Հարկ է, սակայն, նշել, որ *խաւարագոյն* բառն օգտագործում է արևմտահայ մամուլը, մասնավորապես *խաւարագոյն գիշեր/ էջեր/ թուական/ բանտ/ ուժեր/ ծամ* արտահայտություններում<sup>116</sup>:

Ստեփան Մալխասյանցն արձանագրում է *խաւարակերպ* - ը՝ «խաւարի նման, մութ, սև» (ՄՀԲԲ, հ. II, էջ 251): Եվ եթե *տիպ*-ն ու *կերպ*-ը ՀԼՀԲ-ում դիտվում են հոմանիշներ (էջ 625), ուրեմն *խաւարատիպ*-ն էլ ունի նույն՝ *խաւարակերպ*-ի իմաստը:

ՆԲՇ-ում առանձնանում է նաև *մթնալուրթ*-ը՝ *մութ(ն)* և *լուրթ* բաղադրիչներով: ՆՀԲ-ում *մութ(ն)* նաև «թխագոյն» է (հ. II, էջ 299), *լուրթ*-ը՝ «Աղօտ սպիտակ խառն ընդ կապոյտ, կամ թխագոյն բաց ...» (հ. I, էջ 903), իսկ *լրթագոյն* հոմանիշը բացատրվում է որպես «...մթնագոյն» (հ. I, էջ 907): Թերևս նաև այս վերջին բացատրությունը նկատի առնելով է Հրաչյա Աճառյանը նշում, որ «...լուրթ է ըստ ոմանց նաև «մութ, սև, թուխ»» (ՀԱԲ, հ. Բ, էջ 304): Բայց և հե-

<sup>115</sup> Ն. Պողոսյան, Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014, էջ 95:

<sup>116</sup>Տե՛ս <https://housho.wordpress.com/2014/06/12/>, <https://horizonweekly.ca/en/25798-2/>, <https://hairenikweekly.com>, [www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com).

տագայում Գևորգ Ջահուկյանն է առանձնացնում *լուրթ*-ի «մուգ, մութ» նշանակությունը (տե՛ս ՋՀՄԲ, էջ 303), Լավրենտի Հովհաննիսյանն էլ գրաբարի գունանունների բառիմաստային խումբը քննելիս *կապոյտ* (ուրեմն նաև՝ *լուրթ*) գունանվան առնչությամբ վկայում է. «...Գունային առանձնահատկությամբ եզրեր ունի սևի, կանաչի, մոխրագույնի և այլ երանգների հետ...»<sup>117</sup> (ընդգծ.՝ Ն.Հ.), իսկ *սեաւ*-ի առնչությամբ՝ փաստում, որ «հ.-ե. ծագումով... *մութ*/*մութն* - արմատը թերևս գործառել է սև, սևություն իմաստով»<sup>118</sup>: Ուրեմն *մթնալուրթ*-ը «սևին տվող» մուգ կապույտն է:

*Սեաւ* («Գույն մթին և խաւարին՝ հակառակ սպիտակի...» ՆՀԲ, հ. II, էջ 704) հենաբառով ՆԲՇ-ն ավարտվում է *սևասեւ*\* բարդությամբ: *Սև* և *տես* արմատներով բաղադրված կազմությունն էլ, հավանաբար, ՆԲՇ-ում «Սեաւ տեւլեամբ կամ տեսակաւ. արջնագոյն. թխագոյն» նշանակությամբ առկա *արջնասեւ*-ի (ՆՀԲ, հ. I, էջ 375) և միջին հայերենի բառարանում «Մթին՝ մռայլ տեսք ունեցող» իմաստով վկայվող *մթնասեւ*-ի (ՄՀԲ, հ. Բ, էջ 133) նմանակումն է: Թեև արդի հայերենին խորթ չէ համանման կազմություններում երկրորդ բաղադրիչ *տես*-ի՝ «տեսք ունեցող, տեսքով» նշանակությունը (հմմտ.՝ *բարետես*, *զեղատես*, *դժնատես*, *սիրունատես*. հմմտ.՝ նաև Վազգեն Համբարձումյանի՝ «լատինաբան հայերեն»-ում արձանագրած *խոնարհատես*-ը<sup>119</sup>), բայց արդի հայերենի բացատրական բառարաններում *սևատես*-ն այլ իմաստ ունի՝ «ամեն ինչ սև գույնով տեսնող, ամեն ինչ մռայլ գույներով տեսնող՝ ներկայացնող՝ բնութագրող, հոռետես» (ԱՀԲԲ, էջ 1295: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 291): Հարկ է թերևս առանձնացնել ՆՀԲ-ում և ՄՀԲԲ-ում արձանագրված «սևագոյն, սև երևացող» նշանակությամբ *սևատեսակ*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 711: ՄՀԲԲ, հ. IV, էջ 208), որը «սևավուն» իմաստով և «հնց.» նշումով վկայում է ԱՀԲԲ-ն (էջ 1295):

<sup>117</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), էջ 115:

<sup>118</sup> Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 123:

\* Այն չկա ՄՄՁ 566 (I)-ում և 3110-ում:

<sup>119</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 208:

*Ճաղատ. մաշտեալ. կնդակ* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 116ա. 566 (I), 258ա. 3110, 99բ. 873, 204ա. 775, 67բ) առանձնանում է **հեքաթափ**-ը: Բառը հիշատակում է Հարություն Ավգերյանը *Bald*-ը և *Dépilous*-ը թարգմանելիս<sup>120</sup>, Մխիթար Սեբաստացին *Կունդ, Հեքատ, Հեքատիմ* բառահոդվածներում (ԲՀԼՄՄ, էջք 186 (209), 195 (218)): Արձանագրվում է ՄՀԲԲ-ում «1. Մազերը թափող: 2. Մազերը թափած» իմաստներով (հ. II, էջ 467) և արդի հայերենի բացատրական բառարաններում վկայվող *մազաթափ* և *վարսաթափ* բառերի հետ (ԺՀԼԲԲ, հ. III, էջք 345, 458, հ. IV, էջ 382: ԱՀԲԲ, էջք 865, 951, 1369):

Միայն ՄՄՁ 3110-ում (95բ)՝ *Կամաւ իւրով. կամաւորաբար իւրովի. կամակոր մտօք. ինքնակամ մտօք. գիտութեամբ կամաց. կամովին. յօժարամիտ սրտիւ. ի սրտէ. մտադիւր. ախորժելով* ՆԲՇ-ում է առկա **յօժարակամ** բառը, որը բաղադրվել է *յօժար* «սրտով պատրաստ, հաճ և հաւան» արմատով (ՀԱԲ, հ. Գ, էջ 413) և փոխառյալ *կամ* «ուզելը. յօժարութիւն, ցանկութիւն» («= Պիլ. kām «կամք, կամեցողութիւն»։ ՀԱԲ, հ. Բ էջ 498) բառով: Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *կամայօժար*-ը՝ բացատրելով որպէս «յօժարակամ» (ՆՀԲ, հ. I, էջ 1041: ԳԲ, հ. Ա, էջ 624): Մխիթար Սեբաստացին *յօժարակամ*-ը մեկնում է՝ «ունօղ գյօժար կամս. կամ յօժարամիտ. և կամ յօժարասիրտ» (ԲՀԼ, էջ 733 (792))՝ բառն օգտագործելով նաև *յօժարասէր*-ը բացատրելիս (ԲՀԼ, ն. տ.): Այն գործածում է Միքայել Չամչյանը («... և ո՛չ ժողովուրդ ինչ այնպէս յօժարակամ և զուարթամիտ մատուցին սատար օգնականութեան ...»)՝<sup>121</sup> հետագայում՝ Գաբրիել Ավետիքյանը («... որ մատուցանես զքեզ պատրաստ կամ յօժարակամ բաշխմամբ ի բազմապատիկ տեսակս բարեաց»)՝<sup>122</sup>: Բառը «Տ. Յօժար» հղումով իբրև «նոր բառ» է

<sup>120</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջք 65, 243:

<sup>121</sup> ՊՍՄՍՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հայր Միքայել վարդապետէ չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Գ, էջ 526:

<sup>122</sup> Նարեկ աղօթից հարազատ և զգուշաւոր լուծմամբ նորոգ բացայայտեալ ի նըպաստ բանասէր աղօթաւորաց, աշխ.-մբ Գաբրիելի Աւետիքեան Կոստանդինուպօլսեցոյ, Վէնետիկ, 1801, էջ 620:

նշում Մանվել Ջախջախյանը (ՋԲ, էջ 1049), այլև Հրաչյա Աճառյանը (ՀԱԲ, հ. Գ, էջ 416): Աղեքսանդր Խոտաբաշյանցը *յօժարակամ*-ը հղում է "добрвольный" իմաստով *յօժարամիտ*-ին (ԽՀՌԲ, հ. II, էջ 213): ՆՀԲ-ն *յօժարակամ*-ն օգտագործում է *յառաջակամ*-ը բացատրելիս (հ. II, էջ 334): Բառը վկայում են ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 423), արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 887: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 370):

*Երգիչ. երգեցիկ. նուագածու. քնարահար. ջնարահար. (եթե կին է) պարանձիկ\*. կաքաւիչ. խաղալիք*՝ ՆԲԾ-ն (ՄՄՁ 566 (I), 246 ա) եզրափակվում է *պարառու* բառով\*\*։ վերջինիս կազմությանն անդրադառնալով՝ կարելի է հավանական համարել *պար առնուլ* «պարել, պար բռնել, պար գալ» (ՆՀԲ, հ. II, էջ 625: ՀԱԲ, հ. Դ, էջ 55: ԳԴԲ, էջ, 243) դարձվածային միավորի կրճատ և միասին գրությունը՝ *-ու* վերջածանցի հավելումով՝ *պարառու*՝ «պարող, պար բրնող» նշանակությամբ (ինչպես՝ *ավարառու, կտակառու, վաշխառու, մտառու* բառերը): Հարկ է նաև փաստել, որ բաղադրության երկրորդ՝ *առու* բաղադրիչը ՆՀԲ-ն բացատրում է «Իբր Առօղ. հաղորդ»<sup>123</sup> հղելով՝ «տե՛ս ի բառն ԱՐԵԱՆԱՌՌԻ, այսինքն արենակից» (հ. I, էջ 312): Հետևաբար *պարառու*-ն ևս կարելի է բացատրել որպես «պարակից», այսինքն՝ «պարի մասնակից կամ պարընկեր», ինչպես որ *պարակից*-ը վկայում են հայերենի բացատրական բառարանները (ՆՀԲ, հ. II, 627: ՄՀԲԲ, հ. IV, էջ 77: ԱՀԲԲ, էջ 1200: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 185)<sup>124</sup>:

\* ՆՀԲ-ն նշում է *պարանցիկ*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 628):

\*\* ՄՄՁ 6762-ում՝ *պարարու* տարբերակն է (106ա): Նույն գրչագրերում՝ *Կաքաւել* հենաբառով ՆԲԾ-ում, առկա է միայն *պար առնուլ* հարադրությունը (ՄՄՁ 566 (I) 253ա. 6762, 112բ):

<sup>123</sup> Սյոպես են բացատրվում *կաշառառու* («առող զկաշառ»), ՆՀԲ, հ. I, էջ 1052), *աւանդառու* («առող զաւանդ ինչ ի պահել»), ՆՀԲ, հ. I, էջ 390), *հարկառու* («որ հարկըս առնու»), ՆՀԲ, հ. II, էջ 64) և այլ բառեր:

<sup>124</sup> Տե՛ս նաև՝ Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1218: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 711: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 691: Ա. վրդ. Կռանեան, նշվ. բառ., էջ 387:

Մխիթար Սեբաստացին հիշատակում է *պարատուփին* բառը՝ «պարատումն. կամ պարումն. որ է կաքաումն ի պարս երգօք ցնծութեան» բացատրությամբ (ԲՀԼ, էջ 922 (981)): Այն վկայում է նաև ՄՀԲԲ-ն՝ «պար առնելը, պար բռնելը» բացատրությամբ և «հին բառ կամ նշանակություն» նշումով (ՄՀԲԲ, հ. IV, էջ 79):

*Ստապաշտ*-ն առանձնանում է *Կոսպաշտ. կոսպարիշտ. ղիցապաշտ. հեթանոս. անհաւատ* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 113ա. 566 (I), 253բ. 3110,95բ. 775, 64բ): *Սուտ* և *պաշտ* արմատներով բաղադրված կազմությունը բառացի նշանակում է «սուտը պաշտող»: Բառը թերևս ստեղծվել է *կոսպաշտ* (ՆՀԲ, հ. I, էջ 1126: ԱԲ, էջ 451) և *ղիցապաշտ* (ՆՀԲ, հ. I, էջ 627: ԱԲ, էջ 247) բառերի համաբանությամբ՝ կեղծ, սուտ համարվող կրոնի՝ կուռքերին երկրպագող հետևորդներին առավել ճշգրիտ բնութագրելու համար, ինչպես և վրկայում են արդի բացատրական բառարանները՝ «սուտ բաներ, կեղծիքը պաշտող, ստության պաշտամունք ունեցող» (ԱՀԲԲ, էջ 1329: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 331):

Միայն ՄՄՁ 873-ում (189բ)՝ *Գեղեցիկ* հենաբառով ՆԲՇ-ում է առկա *սքանչագեղ* բառը: Հայերենի բառարանները հիշատակում են *սքանչելագեղ*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 766: ԱԲ, էջ 743: ՄՀԲԲ, հ. II, էջ 283): Խոբրեն Գալֆայանի խմբագրությամբ հրատարակված «Յանգարան»-ում նշվում են *-գեղ*-ով ավարտվող գոյականական և ածականական արմատներով բազմաթիվ կազմություններ, ինչպես՝ *ամօթագեղ, գունագեղ, երկնագեղ, զարդագեղ, հոչակագեղ* և այլն<sup>125</sup>: Այնպես որ *սքանչ* և «բնիկ հայ» *գեղ* արմատներով (ՀԱԲ, հ. Դ, էջ 288. հ. Ա, էջ 532) բաղադրված *սքանչագեղ*-ը ընդունելի կազմություն է, որ հիշատակում են նաև արդի հայերենի բացատրական բառարանները՝ ԲՀԼ-ում (էջ 1030 (1089)), ՆՀԲ-ում, ԱԲ-ում, ՄՀԲԲ-ում առկա *սքանչելագեղ*-ի կիրառությունն արդի հայերենում համարելով անհանձնարարելի (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 353: ԱՀԲԲ,

<sup>125</sup> Յանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի, խմբագրեաց Խոբրեն Վ. Գալֆայեան, Թեոդոսիա, 1862, էջ 134-135:

էջ 1349): Ուրեմն կարելի է փաստել, որ արդի հայերենում հանձնարարելի *սբանչագեղ*-ը առկա է XVIII դարից ավանդված ՁԲ-ում:

*Լեզուանի. լեզուագար. բաջաղկոտ. շատախօս. դողանջող. բարբաջող. զրաբան. զրախօս. շաղակրատ. տե՛ս գշատախօսն* ՆԲԾ-ում (ՄՄՁ 6762, 109բ. 566 (I), 248ա) վկայվող *վայրախօս, ցոփախօս* բարդությունների երկրորդ բաղադրիչը «խօսք, խօսած կամ ասած բանը» նշանակությամբ *խօս* արմատն է (ՀԱԲ, հ. Բ, էջ 433-434):

*Վայրախօս* բառը հիշատակում է Մխիթար Մեփաստացին «տե՛ս գՎայրապարախօս» հղումով՝ վերջինը բացատրելով «վայրապար խօսող. կամ ունայնաբան. կամ դատարկաբան. և կամ բարբանջող» (ԲՀԼ, էջ 1042 (1101)): Հրաչյա Աճառյանը *վայր*-ը համարում է «... ընդարձակ զարգացում կրած բառ...», չորրորդ «վարը, ցածը, տակը, ներքն» իմաստից հետո նշելով, որ «...նիթական ցածրութեան գաղափարին հետևում է բարոյական ստորութեան, հետևաբար նաև դատարկութեան և ունայնութեան գաղափարը»՝ համեմատության եզրերից առաջարկելով նաև «*ընդվայրախօս*» բառը (ՀԱԲ, հ. Դ, էջ 300-301): Ակնհայտորեն շեշտվում է «բարոյական ստորություն»-ը, որից էլ բխեցվում է ունայն և դատարկ լինելը: Սույն կազմության մեջ «բարոյական ստորությանը» հավելվող *խօս*-ն առավել արտահայտիչ է դարձնում անձի «դատարկ կամ ունայն» լինելը: Գրաբարի բառարանները վկայում են *վայրախօսություն*-ը «շաղկապություն», «փճախօսություն» նշանակություններով (ՆՀԲ, հ. II, էջ 779: ԱԲ, էջ 747): *Վայրախօս*-ը վկայում են ՄՀԲԲ-ն՝ «Տ. Ընդվայրաբան» հղումով՝ վերջինս էլ «դատարկախօս, ունայնախօս» բացատրությամբ (հ. IV, 296), և ՀԲՀԲ-ն՝ (հզվդ.) նըշումով և «ընդվայրաբան» իմաստով (էջ 860):

«Մեղկ, թոյլ, թուլամորթ, թուլամիտ, շաղկապի» իմաստներով *ցոփ* արմատով (ՀԱԲ, հ. Դ, էջ 464) բաղադրված *ցոփախօս*-ը հիշատակում են Մխիթար Մեփաստացին՝ «տե՛ս գՅոփաբան» հրդումով՝ բացատրելով՝ «նա՛ որ ցոփ է բանիւք. կամ դիւրասահ լեզուաւ. կամ վայրաբան. կամ առասպելաբան. և կամ շաղկապաբան: ռամկ. ափեղ ցփեղ խօսիլ» (ԲՀԼ, էջ 1156 (1223)), Էդուարդ



Աղայանը՝ «Նույնն է՝ Ցոփաբերան» (ԱՀԲԲ, էջ 1480), ԺՀԼԲԲ-ն՝ «Տե՛ս Ցոփաբերան» (հ. IV, էջ 564), ՀԼՀԲ-ն՝ «տե՛ս Զագրաբան» հրդուսներով (էջ 639) և ՀԲՀԲ -ն (էջ 917): *Ցոփախօսութիւն* բառը՝ «Տ. Ցոփաբանութիւն» բացատրությամբ, վկայում են ՆՀԲ-ն (հ. II, էջ 918), ԱԲ-ն (էջ 80), Մանվել Զախջախյանը (ԶԲ, էջ 1416) և ՄՀԲԲ-ն՝ «հին բառ կամ նշանակութիւն» նշումով (հ. IV, էջ 472):

Ինչ վերաբերում է ՆԲՇ-ում առկա *դողանջող* և *բարբաջող* բառերին, ապա ըստ Հրաչյա Աճառյանի՝ «նոր գրական լեզուի մէջ միայն «գանգակի ձայն»» նշանակող *դողանջ*-ը նախապես ունեցել է «լացի ձայն», իսկ *դողանջել*-ը՝ նաև «հաջել (շան), հայիոյել, տրրտընջալ» (ՀԱԲ, հ. Գ, էջ 172), «բնաձայնական բառ» *բարբաջ*-ը «ցրնդաբանութիւն, պառաւական անմիտ խօսքեր» (ՀԱԲ, հ. Ա, էջ 419) իմաստները: Տվյալ ՆԲՇ-ում «շաղփաղփել, շաղակրատել» նշանակությամբ *դողանջեմ* և *բարբաջեմ* բայերի ենթակայական դերբայների առկայությունը կարելի է բացատրել, ինչպես նշվել է, Մամվել Անթոնյանի այն դիտարկմամբ, որ միջին հայերենում լայն կիրառություն ունեցող *ող-ող* վերջավորություններով ենթակայական դերբայը XV-XVII դարերում «...հանդես է գալիս անկախ, որպես գոյական...» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 376-377), ուստի հավանական է նաև XVIII դարում:

*Չար* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 265ա-265բ. 6762, 121ա) առկա *խարդաւան*-ը Հրաչյա Աճառյանը համարում է «արմատ առանձին անգործաձական»՝ նշելով՝ «գիտէ միայն Բառերեմ. էջ 139 «կեղծաւոր, պոռնիկ, լլկիչ» նշանակութեամբ» (ՀԱԲ, հ. Բ, էջ 344): Հակոբ Վիլլոտը, լատիներեն *deceptor*-ը բացատրելով «նենգաւոր, նենգագործ, խաբեբայ, խարդախ», բառաշարքում հիշատակում է նաև *խարդաւան*-ը<sup>126</sup>: Միխիթար Սեբաստացու բացատրություններն են՝ «նենգաւոր. կամ դաւաճան. կամ խարդախօղ. կամ կեղծաւոր. կամ չարահնար» (ԲՀԼ, էջ 373 (406)): *Խարդաւան*

<sup>126</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 194.

բառահողվածն առանձնացնում է Հարություն Ավգերյանը<sup>127</sup>: Բարդ հետագայում վկայում է ԽՀՌԲ-ն՝ բացատրելով որպես "Обманчивый, плутоватый, хитрый, коварный, лукавый" (հ. I, էջ 496): Բարդի «դաւադիր» նշանակությունը՝ «հագուադէպ բառ» նշումով, հիշատակում է ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 249): *Խարդաւան*-ը վկայում է Պետրոս Ճիգմեճյանը՝ նշելով նաև «խաբերայ, խարդախ, չարարուեստ, մատնիչ, պատրիչ» հոմանիշները<sup>128</sup>: Կարելի է ենթադրել, որ *Չար* հենաբառով ՆԲՇ-ում *խարդաւան*-ի առկայությունը հուշում է արդի հայերենի բացատրական բառարաններում արձանագրվող *խարդաւանք* բառի՝ «չարություն, չարամտություն, չարանենգություն» ակնարկող «Մեկին վնասելու նենգ ու խարդախ միջոցների ամբողջություն» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 571: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 499):

ՄՄՁ 566 (I)-ը, 775-ը, 873-ը, 3110-ը, 6762-ը, ինչպես արդեն նշվել է, առանձնանում են հասկացությունը տեսակային տարբերակմամբ ընդգրկող բառաշարքերով:

*Ականց տեսակք* բառաշարքում հետևյալ թանկագին քարերի անվանումներն են՝ *յասպիս. շափիւղայ. գմրուխտ. եղնգնաքար. սարդիոն. ոսկեքար. բիրբեդ. տպագիոն. քրիստպրայ. յակինթ. պղնձաքար. ամեթոս. սառնատեսակ. սուտակ. դահանակ* (ՄՄՁ 6762, 101ա. 566(I), 235ա. 3110, 75բ. 775, 53ա. 873, 185ա): Հարկ է նշել, որ այս անվանումներն առկա են Աստվածաշնչում, հետևաբար վկայվում են ՆՀԲ-ում<sup>129</sup>: Արդի հայերենի բացատրական բառարաններն արձանագրում են *հասպիս, շափյուղայ, գմրուխտ, ե-*

<sup>127</sup> Բառարան համառոտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 288: Տե՛ս նաև՝ Բառարան հայերեն եւ անգղիական, հ. Բ, էջ 161:

<sup>128</sup> Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 534:

<sup>129</sup> ՀԱԲ-ը *եղնգնաքար* բառը հիշատակում է *Եղունգն* և *Քար* բառահողվածներում՝ «մի տեսակ ազնիւ քար» բացատրությամբ (հ. Բ, էջ 22. հ. Դ, էջ 558), *ոսկեքար*-ը՝ հիշատակում *Քար* բառահողվածում (հ. Դ, էջ 558): ՆՀԲ-ն վկայում է *քրիստպրաստու* տարբերակը (հ. II, էջ 1015): Ստ. Մալխասյանցը *սառնատեսակ*-ը հիշատակում է «հին բառ կամ հին նշանակություն» նշումով, սակայն ոչ որպես թանկագին քար (ՄՀԲԲ, հ. IV, էջ 185):

դրնգնաքար, սարդիոն, ոսկեքար, բյուրեղ, տպագիոն, հակինթ անվանումները. *ամեթոս*-ը նշվում է որպես *ամետիստ*, *սուտակ*-ը՝ *հակինթ*, *դահանակ*-ը՝ *մալախիտ*. չեն հիշատակվում *քրիստապրա*-ն և *սառնատեսակ*-ը:

*Բնակարանաց տեսակք. պանդոկ. վանք. մենաստան. համալսարան* բառաշարքից (ՄՄՁ 6762, 103բ. 3110, 79բ. 775, 55բ. 873, 188բ) *միայնատուն* բառը բաղադրված է, Հրաչյա Աճառյանի հավաստմամբ, *մի* արմատի՝ «մինակ, առանձին, լոկ» նշանակությամբ «ածանցման մեջ» ներկայացող ձևից, *-այն* մասնիկից կազմված *միայն*-ով (ՀԱԲ, հ. Գ, էջ 316-317) և *տուն* բառով: Անդրադառնալով *միայն*-ից առաջացած *մեն*- ձևին (*միայն* > *մեյն* > *մեն*, *մեն*) և նշելով, որ «*մեն*- ձայնափոխությունը տեղի էր ունեցել Ոսկեդարից էլ առաջ, այնպես որ Ե դարուն գործածում էր իբրև գաւառական ձև»՝ Հրաչյա Աճառյանը փաստում է. «... իսկապես արժեն *միայնամարտ*, *միայնաուր*, *միայնակեաց* ևն, ինչպես որ իրօք գործածուած են մատենագրութեան մեջ» (ՀԱԲ, հ. Գ, էջ 317): Հետևաբար ընդունելի է *միայնատուն* բառը, որին համանման ձևերը, ինչպես վկայում է Հրաչյա Աճառյանը, «գործածուած են մատենագրութեան մեջ»: *Միայն*-ով կազմված *միայնակոի* «մենամարտիկ», *միայնատեսակ* բառերը հիշատակում է Մխիթար Սեբաստացին (ԲՀԼՄՍ, էջ 263 (876)): *Միայնատուն*-ը արձանագրում են ՀԼՀԲ-ն «տե՛ս Առանձնատուն» հղումով (էջ 457) և ՀԲՀԲ-ն (էջ 665):

*Բնակարանաց մասունք. խուց. խուղ. սենեակ. վերնատուն. ներքնատուն. շտեմարան. մառան. վերնայարկ. դստիկոն. գալիթ. սրահ. միջնատուն* բառաշարքում (ՄՄՁ 6762, 103բ. 566 (I), 238բ-239ա) հիշատակվող *վերնագալիթ* բառը՝ բաղադրված է «բնիկ հայ» *վեր* «վերևը, վերի ծայրը» (ՀԱԲ, հ. Դ, էջ 329) արմատով և *գալիթ* «տան, ապարանքի կամ տաճարի բակ կամ նախասենեակ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 528) բառով: *Մակագալիթ*-ն իբրև «վերին գալիթ» բացատրելիս Մխիթար Սեբաստացին գործածում է *վերնագալիթ* բառը (ԲՀԼ, էջ 502(651)): «Վերնի գավիթ, վերնասրահ» իմաստով նշում

են արդի հայերենի բացատրական և հոմանիշների բառարանները (ԱՀԲԲ, էջ 1385: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 402: ՀԼՀԲ, էջ 606)<sup>130</sup>:

Միայն ՄՄՁ 3110-ի նույն բառաշարքում է առկա **ներքնագաւիթ** բառը (79բ): Այն հիշատակում է Գվիդոն Լուսինյանը «Vestibule, ա. անդաստակ, ներքնագաւիթ...» բառահոդվածում<sup>131</sup>: Բառը «ներքնաբակ» բացատրությամբ վկայում են ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 459), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 32), ՀԼՀԲ-ն (էջ 487), իսկ ԱՀԲԲ-ն՝ որպես «ներքին գավիթ» (էջ 1070): Ամենայն հավանականությամբ **ներքնագաւիթ**-ը կազմվել է մյուս գրչագրերում առկա **վերնագաւիթ** բառի նմանությամբ՝ համադրելով «բնիկ հայ» **ներ** «մեջ» արմատը («որ հների մօտ առանձին չէ գործածուած. որից ունինք ի ներքս «ներսը»». ՀԱԲ, հ. Գ, էջ 443) և **գաւիթ** բառը:

*Գողոյ տեսակք. գող. աւագակ. զօվօղ. հէն. սսպատակ. էլուգակ. ական հատ(ա)նօղ. (եթէ ծովու իցէ) աւագակ ծովու* բառաշարքում (ՄՄՁ 6762, 105ա. 566 (I), 240բ) առկա են **սսպատակիչ**, **մենագէն** և **նաւարտակ** բառերը:

«Զիով արշաւանք կամ յարձակում. 2. ձիով արշաւող կամ յարձակուող» նշանակություններով «օտար փոխառեալ» **սսպատակ** բառով («Իրան. aspataka- ձևից». ՀԱԲ, հ. Ա, էջ 272-273) և **-իչ** վերջածանցով (ըստ Գևորգ Ջահուկյանի՝ ծագում է «հ.-ե. 'kiā-ից ('k-+'iā-)' նախորդող 'i- (-ի) հիմքային ձայնավորով». ՋՀՄԲ, էջ 807) բաղադրված **սսպատակիչ**-ը Միսիթար Սեբաստացին հիշատակում է գրաբարի քերականության մեջ<sup>132</sup>: Հարություն Ավգերյանի կազմած երկլեզվյան բառարանում այն գլխաբառ է<sup>133</sup>, նաև նըշվում է անգլերեն *Invader* և *Invasive* բառերը թարգմանելիս<sup>134</sup>: Մանվել Ջախջախյանը *Incrociatore* բառը բացատրում է նաև որպես

<sup>130</sup> Տե՛ս նաև ՀԲՀԲ, էջ 872: Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1328:

<sup>131</sup> Գուրտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերագարդ ֆրանսահայ, հ. I, էջ 792:

<sup>132</sup> Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, էջ 522:

<sup>133</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 90:

<sup>134</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, Ա, էջ 482:

«ասպատակիչ»<sup>135</sup>: Հետագայում բառը «Տե՛ս Ասպատակաւոր» հրդումով արձանագրում են ՋԲ-ն և ԽՀՌԲ-ն. առաջինն իբրև «հէն ձիաւոր» (էջ 210), երկրորդը՝ "На разбой, на добычу ходящій; солдаты, который ходитъ на грабежъ" նշանակությամբ (հ. I, էջ 152): Բառը վկայում են ՄՀԲԲ-ն և ԺՀԼԲԲ-ն՝ իբրև «Ասպատակող, ձիավոր հրոսակ, ասպատակ» (հ. I, էջ 237: հ. I, էջ 187), նաև Պետրոս Ճիզմեճյանը՝ նշելով իբրև ածական՝ «այն որ կասպատակէ»<sup>136</sup>: ՀԼՀԲ-ում *ասպատակիչ*-ին հոմանիշ է դիտվում *օղուպանտ*-ը (էջ 84):

*Մենագէն*-ը բաղադրված է «բնիկ հայ» *մի* «մի, մեկ» և փոխառյալ *գէն* «զէնք, զրահ» («= Պիլ. .... zēn, պագենդ. zīn, զնդ. zaēna «զէնք»». ՀԱԲ, հ. Բ, էջ 93) արմատներով: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ առաջին արմատը «ածանցման մէջ ներկայանում է» նաև *մեն*- ձեւով, որը «գործածում է ածանցների սկիզբը» (ՀԱԲ, հ. Գ, էջ 316-317): ՆՀԲ-ում և ԱԲ-ում առկա է *մենագինեալ* բառը՝ «Տ. Մեկնակագէն» հղումով և «որպէս միայնակ սպառագէն, կամ թեթևագէն» նշանակությամբ (հ. II, էջ 250: էջ 556): Երկու բառարաններն էլ *մեկնակագէն*-ը բացատրում են «ինքնագլուխ զինեալ/ զինուոր». ՆՀԲ-ն մեկնում է նաև «սրիկայ. զօրական. ըստ յն. μονόζωνος. միագօտեալ կամ մենագօտեալ. (որ պէսպէս մեկնի)» (հ. II, էջ 243), իսկ ԱԲ-ն՝ տաճկերեն «չէթէճի» (էջ 553): Բառարաններում *չէթէճի*-ն բացատրվում է որպէս «ասպատակ»<sup>137</sup>, *չէթէ*-ն՝ նաև «2. ավագակախումբ, հրոսակախումբ»<sup>138</sup>: *Մենագէն*-ը «տե՛ս գՄիագօտի» հղումով վկայում է Միխիթար Մերաստացին՝ *միագօտի*-ն բացատրելով՝ «... նա, որ միայնակ ընդդէմ ումէք զինահարի» (ԲՀԼ, էջք 692 (643), 702 (653): Բառը՝ «թեթևագէն» իմաստով, մեկ անգամ գործածում է Միքայել Չամչյանը («... Վասակ և սահակ վեհագունք սի-

<sup>135</sup> Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 353:

<sup>136</sup> Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 457:

<sup>137</sup> Սուքիաս Սօմալեան, Համառօտ բառարան ի տաճկերէնէ յանգղիական եւ ի հայ բարբառ, Վենետիկ, 1843, էջ 136:

<sup>138</sup> Պետրոս Զէքի Կարապետեան, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912, էջ 282:

նեաց, մենագեն գրոհիլ յաջ և յահեակ թևարկուք...» )<sup>139</sup>: Հետագայում այն վկայում է Ստեփան Մալխասյանցը «հագուադեպ բառ» և «Տ. Մեկնակագեն» նշումներով (ՄՀԲԲ, հ. III, էջ 303), *մեկնագեն*-ի՝ «Պարզ թեթև զինված (զինուոր, արշաւախումբ), թեթևագեն» բացատրությամբ (ն. տ., էջ 297): ՀԼԲՀԲ-ն նույնպես բառն արձանագրում է հղումով՝ «Տ. Մեկնագեն»՝ վերջինս համարելով ոչ միայն ռազմական եզրույթ, այլև «հագվադեպ գործածվող բառ» (էջք 449, 452):

Ուշադրության է արժանի այն, որ նույն գրչագրերում՝ *Զոր* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 107բ. 566 (I), 244բ), տրվում են համապատասխանաբար *մեկնագենք* և *մենակագենք* բառերը. առաջինը, ինչպես արդեն նշվել է, առկա է ՆՀԲ-ում և ԱԲ-ում, իսկ ՄՀԲԲ-ն *Մեկնագենք*-ը բացատրում է «Անպատակող հրոսակ» (հ. III, էջ 297): Նկատի առնելով բառարանային տվյալները, այլև *մենակագենք*-ի՝ բառարաններում վկայված չլինելը՝ գրչագրերում *մեկնակ*-ի՝ *մենակ* գրությունը թերևս սխալագրություն է:

Ինչ վերաբերում է *նաւարտակ*-ին, պալ բառին անդրադարձել է Հրայր Աճառյանը՝ նշելով՝ «ՆԱԻԱՐՏԱԿ «ծովահեն»․ ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան: Իր աղբիւրն է անշուշտ Վարդան Յունանեան, Ձեռքածութիւն 1671, էջ 327, ուր Յունանեանի շինած նորակերտ բառերի մէջ կայ նաև *նաւարտակ*՝ վերի նշանակութեամբ» (բառի կազմության մասին տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 436): Ուրեմն բացի Հրայր Աճառյանի նշած՝ Մխիթար Աբբայի բառարանից՝ *նաւարտակ*-ը՝ իբրև «գողոյ տեսակք» և «(երթ ծովու իցէ)» մեկնաբանությամբ, առկա է նաև քննվող ՁԲ-ում<sup>140</sup>:

<sup>139</sup> ՊՍՏՄՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հայր Միքայէ վարդապետէ չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 120:

<sup>140</sup> «Լատինաբան հայերեն»-ում «աւարառու ծովագնաց» նշանակությամբ *նաւարտակ*-ն արձանագրում է նաև Վ. Համբարձումյանը (և դարձյալ Վ. Յունանեանի «Ձեռքածութիւն»-ից). Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 233:

Բառը հիշատակվում է նաև ՄՀԲԲ-ում՝ «հազուադեպ բառ» նշումով և «Նաևով ասպատակություն գործող, ծովահեն» բացատրությամբ (հ. III, էջ 446), ՀԼՀԲ-ում՝ «Նավարտուկ, տե՛ս Ծովահեն» (էջ 482), նույն բացատրությամբ, նույն նշումով՝ ՀԲՀԲ-ում (էջ 699):

*Դիւթ. հմայօղ. կիւս. որովայնակոչ. հաւահարց. թովիչ. ջատու. գարրնկէց. կախարդ. իղձ. վիուկ* բառաշարքում (ՄՄՁ 6762, 105բ. 566 (I), 241բ) առանձնանում են **թրահմայ, ձեռնադիւթ, ձեռնահմայ, ջրահմայ, վիճակրնկէց, օղահմայ, արդրնկէց** բառերը:

Վերոնշյալ բառերի մի խումբը համապատասխանաբար բաղադրված է, Հրաչյա Աճառյանի վկայությամբ, «բնիկ հայ» *ձեռն, ջուր, օղ* արմատներով և «(անեզաբար գործածուած) «կախարդություն, կախարդական գուշակություն» նշանակությամբ՝ «= Պիլ. humāy- ձևից» *հմայ* «օտար փոխառեալ» բառով (ՀԱԲ, հ. Գ, էջ 103. նշվում են *կիւսահմայ, լերդահմայ, հաւահմայ* բառերը):

*Թրահմայ*-ի համար կարելի է թերևս ենթադրել *թրել* բայի \**թուր* (ՀԱԲ, հ. Բ, էջ 213) և վերոհիշյալ *հմայ* արմատներով բաղադրվելը: Հրաչյա Աճառյանի վկայությամբ՝ «ԹՐԵԼ «ալիւր շաղուել, խմոր շինել» .... =Նախնական նշանակութիւնն է «թրջել» և այս իմաստով կապւում է **թուրմ** և **թուրջ** ձևերի հետ. բոլորի պարզ արմատը լինում է \***թուր**, որից **թրել**, և **մ, ջ** աճականներով՝ **թուրմ, թուրջ, թրմել** և **թրջել** ....» (ն. տ.): Բառի կազմության ենթադրելի բացատրության օգտին է վկայում նաև *ալիւրադիւթ* բառը, որ ՆՀԲ-ն մեկնում է իբրև «Դիւթիչ ակերբ. որ հմայէ ի ձեռն ակերբ» (հ. I, էջ 14)<sup>141</sup>, այսինքն՝ «ալյուրով գուշակություն անող»: Հարկ է արձանագրել, որ քննվող ՁԲ-ներում առկա է նաև *Թրել. թրմել. զանգել. շաղել. հայս հարկանել* ՆԲՇ-ն (6762, 108բ. 566 (I), 246ա):

Կարելի է նաև հավանական համարել բառի՝ «բնիկ հայ» *թիռ* («թոիչ, թոչիլը». ՀԱԲ, հ. Բ, էջ 184) բառով և փոխառյալ *հմայ* արմատով բաղադրված լինելը, այսինքն՝ ենթադրել, որ *թրահմայ*-ը ուղղելի է *թրահմայ*, ասել է՝ «թռչունների թոչիքով գուշակություն անող», քանի որ, ինչպես վկայում է «Բառարան Սուրբ Գրոց»-ը,

<sup>141</sup> Տե՛ս նաև ՀԱԲ, հ. Ա, Ե., 1971, էջ 671:

«Գուշակութիւնը քանի մը տեսակ էր. ջրով, հրով, հողով և օդով: Գուշակութիւն կըլլար նաև հաւերու թռիչէն....»<sup>142</sup>:

Հրայյա Աճառյանը *ձեռնահմայ* բառը հիշատակում է «նոր բառեր»-ի շարքում (ՀԱԲ, հ. Գ, էջ 149): Բառն արձանագրում են Հարություն Ավգերյանը՝ *Chirógraphist* -ը հղելով *Chirógrapher*-ին, վերջինն էլ բացատրելով *ձեռնահմայ*<sup>143</sup>, Աղեքսանդր Խոտաբաշյանը՝ թարգմանելով "Хиромантика" (ԽԲՀՆ, հ. II, էջ 92), հետագայում՝ նաև Միմոն Գաբամաճյանը՝ աստղանիշով հավաստելով բառի «նոր շինուած ըլլալը» (ԳՆԲՀԼ, էջ 855): Ստեփան Մալխասյանը, ի տարբերություն Հ. Աճառյանի, *ձեռնահմայ*-ը համարում է «հին բառ» և հղում «ձեռահմայութիւն անող» նշանակությամբ *ձեռնահմայ*-ին (ՄՀԲԲ, հ. III, էջ 164 -165): Բառը վկայում են նաև հայոց լեզվի այլ բառարաններ<sup>144</sup>:

Մանվել Ջախջախյանը *ջրահմայ*-ը վկայում է իբրև «նոր բառ»՝ «որ ջրով հմայութիւնս դիւթութիւնս գործէ: Idromante» նշանակությամբ (ՋԲ, էջ 1221), Ստեփան Մալխասյանը նույնպէս հիշատակում է բառը՝ «ջրով հմայութիւն անող, կախարդ» (ՄՀԲԲ, հ. IV, էջ 148): Միմոն Գաբամաճյանը արձանագրում է «Ջրոյ միջոցաւ հմայութիւն .... (hydromancie)» նշանակությամբ *ջրահմայութիւն* բառի «նոր շինուած ըլլալը»-ը (ԳՆԲՀԼ, էջ 1167):

Ստեփան Մալխասյանը «հին բառ» է դիտում «Օդահմայութիւն անող, օդի միջոցով հմայող» նշանակությամբ *օդահմայ*-ը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 601): Ըստ բառարանային տվյալների՝ այն վկայում են Մխիթար Սեբաստացին՝ «հմայող օդով. նա՝ որ ըստ շարժման. կամ ըստ որպիսութեան օդոյ գուշակէ զապագայ. կամ զծածուկ ինչ» իմաստով (ԲՀԼ, էջ 1239(1306)), Մանվել Ջախջախյանը<sup>145</sup> և

<sup>142</sup> Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 109:

<sup>143</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 142: Տե՛ս նաև «*ձեռնահմայ-Chiromancer*. Բառարան հայերէն եւ անգղիական, հ. Բ, էջ 381:

<sup>144</sup> ՀԼՀԲ, էջ 412: Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 902: Հայոց լեզուի նոր բառարան, հ. II, 1992, էջ 16:

<sup>145</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 10:



Հարություն Ավգերյանը<sup>146</sup>: Միմոն Գարամաճյանը այն հիշատակում է իբրև «նոր շինուած»՝ «օղահմայութիւն ի գործ դնող մարդ» (ԳՆԲՀԼ, էջ 1386): Աղեքսանդր Խոտարաբաշյանցն արձանագրում է միայն օղահմայութիւն-ը՝ "Воздуховолхование" իմաստով (ԽՀՌԲ, հ. II, էջ 500): ՀԼՀԲ-ում *ձեռնահմա-ն*, *ջրահմա-ն*, *օղահմա-ն* հիշատակվում են *ձեռնագուշակ*, *ջրաղյուծ*, *օղաղյուծ* հոմանիշներով և «(անոտ.)» նշումով (էջք 412, 560, 679). այս բառերը նույն նշումով են նաև ՀԲՀԲ-ում (էջք 608, 964, 802): Վերոնշյալ բառերից արդի հայերենի բացատրական բառարաններում առկա է միայն *ձեռնահմա-ն*՝ համապատասխանաբար՝ «Նույնն է՝ Ձեռնագուշակ», «տե՛ս Ձեռահմա» հղումներով (ԱՀԲԲ, էջ 919: ԺՀԼԲԲ, հ. III, էջք 410 և 411):

Նշված բառաշարքից առանձնացված բառերից երկուսը բաղադրված են գրաբարյան՝ «ձգել, վայր գցել, նետել» նշանակությամբ *ընկենուլ* բայի (ՀԱԲ, հ. Բ, էջ 128) անցյալ կատարյալի *ընկեց* ցոյական հիմքով: «Բախտագուշակ, բախտ գցող» նշանակությամբ *վիճակընկեց*-ի առաջին բաղադրիչը «վիճելի մի խնդրի կարգադրութիւնը՝ բախտի նայելով կամ քուէ ձգելով. 2. բախտ, բախտի բերումը...» իմաստներով *վիճակ* փոխառյալ արմատն է («= Պիլ. vāičhak «վիճակ» բառից»։ ՀԱԲ, հ. Դ, էջ 340): Բառը, ամենայն հավանականությամբ, կազմվել է ՁԲ-ներում առկա *գարընկեց* բառի համարանությամբ (վկայվում են նաև *զենընկեց*, *գետընկեց*, *լծընկեց*, *կարթընկեց*, *դիւցընկեց* և այլ բառեր. ՀԱԲ, հ. Բ, էջ 128) հիշեցնելով ՀԼԴԲ-ում «1. Բախտ գուշակել, բախտ բացել... 2. Վիճակ հանել» նշանակություններով վկայվող *վիճակ գցել*-ը (էջ 551): Սա է հուշում նաև Միխիթար Մեքաստացին՝ *վիճակընկեց* բառահոդվածի վերջում նշելով. «ռամկ. Վիճակ ձգող» (ԲՀԼ, էջ 1076 (1135)): Եվ դարձյալ բառը հիշատակում են Մանվել Ջախջախյանը<sup>147</sup> և Հարություն Ավգերյանը<sup>148</sup>, Աղեքսանդր Խոտարաբաշյանցը՝ "Кидаяо-

<sup>146</sup> Բառարան անգղիարեն եւ հայերեն, հ. Ա, էջ 956:

<sup>147</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 755:

<sup>148</sup> Բառարան համառոտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 613:

այի жребий, гадающій; колдун, чародѣй" բացատրությամբ (ԽՀՌԲ, հ. II, էջ 420): *Վիճակընկեց* բառն առկա է նաև ՄՀԲԲ-ում՝ «հագուադեպ բառ» և «Տ. Վիճակարկու» նշումներով (հ. IV, էջ 342), վերջինը «Նա որ վիճակ է ձգում, վիճակ է հանում, վիճակահանութեան մասնակից» իմաստով (ն. տ.): Բառը նույն բացատրությամբ և (հզվդ.) նշումով վկայում է ՀԲՀԲ-ն ( էջ 875):

*Արդընկեց* բառի համար ենթադրելի է *արդ* «ձև. յօրինուած» (ՆՀԲ, հ. I, էջ 345: ՀԱԲ, հ. Ա, էջ 306) արմատով և վերոհիշյալ *ընկեց*-ով բաղադրվելը՝ բառի հավանական «ձևացնող, ստությամբ, խաբեությամբ դյուրոող, հմայող» նշանակությամբ<sup>149</sup>:

*Ձեռն* և *դիւթ* «վիռկ, կախարդ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 671) արմատներով բաղադրված *ձեռնադիւթ*-ը՝ կազմվել է *ձեռնահմայ*-ի, այլև ՁԲ-ներում հիշատակվող *գարեդիւթ*-ի համաբանությամբ և «ձեռքին նայելով գուշակություն անող» նշանակությամբ (բառարաններն այն չեն վկայում):

Անդրադառնալով *Ձկանց զանազան տեսակք* բառաշարքին՝ հարկ է արձանագրել հայ կենդանաբանների կարծիքը, որ «Հայաստանն իր յուրահատուկ ֆաունայով Կովկասի ամենահետաքրքիր տարածքներից է. լինելով լեռնային երկիր և ունենալով լանդշաֆտների ցայտուն արտահայտված բարձունքային գոտիականություն՝ Հայաստանը բնորոշվում է իր ֆաունայի տեսակների բազմազանությամբ»<sup>150</sup>: Գիտնականների հավաստմամբ՝ դա վերաբերում է նաև ձկներին: Հայերն ավանդաբար ձկներից գերադասում են *իշխան*-ը, գիտեն *տառեխի*, *լոքոյի*, *բախտակի*, նաև *թառափի* մասին: Մակայն այս բառաշարքում դրանք չկան, այլ առկա են հետևյալ անվանումները. *գլխան ձուկն*. *կետ ձուկն*. *դլբին*. *դոն*. *մարջան*. *սարտել*. *սուտակ*. *օձաձուկն*. *թրաձուկն*. *վահանաձուկն*.

<sup>149</sup> Բառարաններն արձանագրում են *արդընկեց* բառը՝ «գեղարդ ձգող՝ նետող (կռուկ կամ խաղի մեջ)» իմաստով (ՆՀԲ, հ. I, էջ 351: ԱԲ, էջ 134: ՄՀԲԲ, հ. I, էջ 260): Հարկ է նշել, որ Վ. Համբարձումյանը XVII դ. «լատինաբան հայերեն»-ում առանձնացնում է *սանձընկեց* «նորակազմ» բարդ բառը՝ *ընկեց* «բայարմատ բաղադրիչ» հիմքով (Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 213):

<sup>150</sup> <http://rmas.asj-oa.am/1263/1/178.pdf>

*շունձուկն. որթ ծովային* (ՄՄՁ 6762, 116ա. 566 (I), 257բ. 3110, 99ա. 873, 203բ. 775, 67ա):

*Թրածուկ*-ը և *վահանածուկ*-ը՝ բաղադրված «բնիկ հայ» թուր (ՀԱԲ, հ. Բ, էջ 208), *ձուկն* (ՀԱԲ, հ. Գ, էջ 159), «օտար փոխառեալ» *վահան* (ՀԱԲ, հ. Դ, էջ 296) բառերով, ըստ Հրաչյա Աճառյանի, հանդիպում են «նոր գրականում» (ՀԱԲ, հ. Գ, էջ 159): Դրանք առկա են ԽՀՌԲ-ում՝ համապատասխանաբար "Игла (морская рыба)" և "Малый палтус, камбала (рыба)" բացատրություններով (հ. I, էջ 442, հ. II, էջ 396): Երկու անվանումներն էլ որպես «նոր շինուած» և «նոր բառեր» են վկայում ՋԲ-ն (էջք 582, 1292) և ԳՆԲՀԼ-ն (էջք 533, 1229): Հարկ է նշել, որ բացի նշված բառարաններից՝ *թրածուկն* և *վահանածուկն* բառերը հիշատակում են նաև «Շտեմարան պիտանի գիտելեաց» երկը<sup>151</sup>, Մխիթարյան միաբանների կազմած քառալեզվյան բառարանը<sup>152</sup>, Գաբրիել Մենեվիշյանը<sup>153</sup>, «Բազմավեպ» հանդեսը<sup>154</sup>, Թազվոր Պարտիզպանյանը<sup>155</sup>: Հետագայում դրանք վկայում են ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 238 և հ. IV, էջ 289), արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջք 459, 1352. ԺՀԼԲԲ, հ. II, էջ 238 և հ. IV, էջ 358)<sup>156</sup>:

Հրաչյա Աճառյանը «գլխան «քեֆալ ձուկը»» նշում է «նոր բառերի» շարքում (ՀԱԲ, հ. Ա, էջ 565): *Գլխան ձուկն* հիշատակում են ԽՀՌԲ -ն՝ իբրև "Толстоголовъ (рыба морская)" (հ. I, էջ 281), ՋԲ-ն և ԳՆԲՀԼ-ն՝ տալով «քեֆալ պալըղը» «տաճկերեն» բացատրությունը. առաջինը՝ որպես «նոր բառ» (համապատասխանաբար՝ էջ 363 և

<sup>151</sup> Շտեմարան պիտանի գիտելեաց, հ. II, 1840, էջ 145:

<sup>152</sup> Nuovo dizionario italiano-francese-armeno-turco, 1846, Vienna, էջ 404:

<sup>153</sup> Գ. Մենեվիշեան, Պատկերազարդ բնական պատմութիւն, Ա. Կենդանաբանութիւն վարժարաններու եւ գիմնազիոններու համար, Վիեննա, 1897, էջք 193, 196:

<sup>154</sup> Բազմավեպ, օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց, աշխատասիրութիւն Մխիթարեան միաբանից, հ. Ա, Վենետիկ, 1843, էջք 265, 357:

<sup>155</sup> Առաջնորդ հայերէն ու յունարէն զրուցատրութեանց ի Թ.Ա. Պարտիզպանեանէ, Կ. Պոլիս, 1869, էջ 107:

<sup>156</sup> Տե՛ս նաև՝ Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 1309: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 789: Հայոց լեզուի նոր բառարան, հ. I, էջ 709, հ. II, էջ 864:

էջ 329): Հովհաննես Կոստանդնուպոլսեցու՝ հայերեն շարադրված լատիներեն քերականության «Յաղագս Սեռից Անուանց» հատվածում որպես «արականք» հիշատակվում է նաև *գլխան ձուկն*<sup>157</sup>: Այն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «Քեֆալ, կամ Քեֆալ պալըդը»-ն բացատրելով «գլխան. գլխան ձուկն» (ԲՀԼՄՍ, 679 (1708))<sup>158</sup>, այնուհետև՝ Մանվել Ջախջախյանը և Հարություն Ավգերյանը՝ համապատասխանաբար երեքլեզվյան և երկլեզվյան բառարաններում<sup>159</sup>: Հարկ է նաև նշել, որ ըստ Հրաչյա Աճառյանի՝ «ձուկ» նշանակող *պալըխ*-ը գործածվում է «Պոլսոյ մէջ». նա նաև վկայում է, որ «... բառը ունի նաև զուտ հայերէն համապատասխան ձև. այնպէս որ խօսողը ազատ է խօսակցութեան մէջ այդ բառը գործածելու կամ ոչ»<sup>160</sup>:

Ձկնատեսակների անվանումներում առկա *որթ ծովային*-ը նույնպես հիշատակում է ՋԲ-ն՝ նշելով որպես «նոր բառ» և հղելով «Տե՛ւ Փոկ» (էջ 1132): ԳՆԲՀԼ-ն ունի *որթձուկն*՝ «թինոս» (էջ 1084): Գվիդոն Լուսինյանը *Thon*-ը թարգմանում է *որթձուկն*<sup>161</sup>, և նկատելի է, որ ֆրանսերեն *Thon*-ը թարգմանվում է և՛ *ղոն*, և՛ *որթձուկրն*:

Ինչ վերաբերում է բառաշարքում առկա *շունձուկն* բառին, ապա Հրաչյա Աճառյանը նշում է, որ *շուն* արմատը «աճանցման մեջ մտնում է երկու ձևով. 1. շն- .... – 2. շան» (ՀԱԲ, հ. Գ, էջ 534): *Շնձուկ* տարբերակն իբրև առանց հողակապի նորակազմ բարդ

<sup>157</sup> Քերականութիւն լաթինական հայերէն շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, էջ 25:

<sup>158</sup> Թերևս նշելի է, որ kefal-ը «թրքերէնէ-հայերէն» բառարանում բացատրվում է՝ «ճերմակ համեղ մսով՝ ծովու միջակ ձուկ մը, գլխան» (Թրքերէնէ-հայերէն առձեռն բառարան, աշխատասիրեց Շ. Արիստակէս վրդ. Պօհճալեան, Բսրանպոլ, 1981, էջ 264):

<sup>159</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 156: Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 164:

<sup>160</sup> Շ. Աճառեան, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, հ. Գ, էջ 281:

<sup>161</sup> Գուիտոն Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. II, էջ 733:

բառ վկայում է Վազգեն Համբարձումյանը XVII դ. «լատինաբան հայերեն»-ում<sup>162</sup>: Մխիթար Սեբաստացին որպես գլխաբառ նշում է *շնձուկ*-ը՝ արձանագրելով նաև *շնձուկն* և *շանաձուկն* տարբերակները (ԲՀԼՄՍ, էջ 479 (1506)): Երկլեզվյան բառարաններում *շրնձուկն* հղվում է *շանաձուկն*-ին<sup>163</sup>: Մանվել Ջախջախյանը հիշատակում է և՛ *շանաձուկն*, և՛ *շնձուկն* տարբերակները<sup>164</sup>: *Շնաձուկն* են արձանագրում արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1112: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 77):

*Տան մասուն. ձեղուն. առաստաղ. ցու. յարկ. ծածկոյթ տան. տանիք. երդ. երդիք. ձեղունահան. որմն. պատուհան. լուսամուտ. դուռն. մուտ. ելք կամ ելումուտ. յատակ. սալահատակ. քարայտակ. լրիկ. մայթ. վառարան. սենեակ. սրահ. տե՛ս և զգալիթն կամ զբնակարանն. շտեմարան կամ գինետուն. գետնատուն. մառան. խահանոց կամ խոհակերանոց. ծխնելոյզ, աղբիւր կամ ջրհոր. բուրաստան կամ ծաղկոց պարտիզակ բառաշարքում (ՄՄՁ 566 (I), 273բ. 775, 76բ. 873, 216ա. 6762, 126բ) առանձնանում է **եփարան** բառը, և պարզորոշ է, որ գրչագրերում այն հենց *խոհանոց* նշանակությամբ է: Հրաչյա Աճառյանը *եփարան*-ը համարում է նոր բառ՝ «ստամոքս» իմաստով՝ քաղված «Ձեռքածութիւն յերկինս» գրքից (ՀԱԲ, հ. Բ, էջ 72)<sup>165</sup>: -*Արան* ածանցով «լատինաբան հայերեն»-ի նորակազմությունների շարքում բառն արձանագրում է Վազգեն Համբարձումյանը<sup>166</sup>: Հակոբ Վիլլոտն այն վկայում է *Stomachus* բառահոդվածում<sup>167</sup>: ՆՀԲ-ն *ստամոքս*-ը բացատրում է «ընդունարան և եփարան կերակրոց» (հ. II, էջ 741): XVIII դարից հետո լույս տեսած բառարաններից ՄՀԲԲ-ն «հզվդ.» նշումով է վկայում Հրաչյա*

<sup>162</sup> Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 213:

<sup>163</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջք 514 և 518: Բառարան հայերեն եւ անգղիական, հ. Բ, էջ 481: ԽՀՌԲ, հ. II, էջք 261, 254:

<sup>164</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 134:

<sup>165</sup> *Եփարան*-ը իբրև «նոր բառ» հիշատակում է նաև Գ. Ջահուկյանը (տե՛ս ՋՀՄԲ, էջ 230):

<sup>166</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 225:

<sup>167</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 674.

Աճառյանի առանձնացրած «ստամոքս» իմաստը՝ նաև բացատրելով «որտեղ կերակուրը եփվում է» (հ. I, էջ 605): Քննվող ՁԲ-ներից բացի՝ բառի գոյությունը՝ «եփելու տեղ. օճախ» իմաստով, հավաստում է նաև Մխիթար Սեբաստացին (ԲՀԼՄՄ, էջ 123 (736))<sup>168</sup>՝ ասես նախապատրաստելով «եփելու տեղ. օճախ»→ «խոհանոց» իմաստային անցում -փոփոխությունը: Ըստ բառարանային տվյալների՝ *եփարան*-ը արդի հայերենում չի գործածվում:

Բառաշարքը եզրափակում է *պարտիզակ* բառը՝ բաղադրված *պարտեզ* արմատով և նվազափաղաքչական *-ակ* ածանցով<sup>169</sup>: Մյուս գրչագրերում նվազափաղաքչական *-իկ* ածանցով *պարտիզիկ*-ն է (տե ս ՆՀԲ, ԱԲ, ՀԱԲ, ԳԲ և այլն): «Փոքրիկ պարտեզ» իմաստով *պարտիզակ*-ն ունեն միայն ԱՀԲԲ-ն (էջ 1209), ՄՀԲԲ-ն (հ. IV, էջ 90), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 196), վերջին երկուսը՝ «հզվդ.» նշումով: Գևորգ Պալատցին պարսկերեն *պաղէք*-ը բացատրում է որպես «պարտիզակ, այսինքն վայելուչ պարտեզ»<sup>170</sup>:

*Քնար. ջնար. և պէս պէս տեսակք երգարանաց և նուագարանաց. կիթառ. փանթեռ. բամբիռ. տաւիդ. տասնադի. երգեհօն, թըմբուկ. սրինգ. ծնծղայ. փող. քանոն. հասարակօրէն կոչեն գործի երգոց* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 277բ-278ա. 6762, 129բ) առկա է *եղեգնափող*-ը: *Եղեգն* (ՀԱԲ, հ. Բ, էջ 19) և *փող* «նեղ անցք» (ՀԱԲ, հ. Դ, էջ 512) արմատներով բաղադրված բառն արձանագրում է Մխիթար Սեբաստացին՝ «...փող ինչ շինեալ յեղեգանէ, զոր երգելով հարկանեն. ռամկ. նայ» (ԲՀԼ, էջ 239 (268)): Հակոբ Վիլյոտը լատիներեն *calamus*-ը թարգմանում է «եղեգնեայ շուի. եղեգնափող»<sup>171</sup>, երկլեզվյան բառարաններում հիշատակում են Գևորգ Պալատցին՝

<sup>168</sup> Մխ. Սեբաստացին *եփարան կենդանոյ* բացատրում է նաև իբրև «ստամոքս» (ն. ս.):

<sup>169</sup> Մ. Քաջունիս բառը հիշատակում է այլ իմաստով՝ «Պարտիզակ *jardinière*, որ նշանակում է դաստիարակչուհի մանկապարտեզում». ՔՄ, հ. III, էջ 204 (104):

<sup>170</sup> Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ Դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատցոյ, Կ.Պօլիս, 1826, էջ 407:

<sup>171</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 89.

պարսկերեն *նայ*-ը՝ որպես «եղեգնափող. սրինգ»<sup>172</sup>, Մանվել Ջախջախյանն իտալերեն *cennamélla*-ն՝ իբրև «եղեգնափող»<sup>173</sup>, նաև «յիտալական բարբառոյ» թարգմանված «Կրթութիւն ապաշխարողի» աշխատությունը<sup>174</sup>: Երաժշտական գործիքի անվանումն առկա է ԽՀՌԲ-ում՝ "Флейта, свирѣль" (հ. I, էջ 345), ՄՀԲԲ-ում՝ «Եղեգի փող» (հ. II, էջ 558) բացատրությամբ: Արդի հայերենի բացատրական բառարանները նույնպես վկայում են բառը՝ «2. Եղեգնյա փող (հին երաժշտական գործիք): 3. Նույնն է՝ Եղեգնասարինգ» (ԱՀԲԲ, էջ 323), «Եղեգնասարինգ, շվի» (ԺՀԼԲԲ, հ. I, էջ 549): Այն հիշատակում են Հովհաննես Բարսեղյանը (ՀԲՀԲ, էջ 281), Անդրանիկ Կոանյանը<sup>175</sup>:

Այսպիսով՝ քննությամբ պարզվում է, որ նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ՁԲ-ներում առկա, բայց և գրաբարի տրպագիր բառարաններում չվկայված բառերից շուրջ մեկ տասնյակը արձանագրվում է միայն այդ ՁԲ-ներում, մեկ տասնյակից ավելին՝ Հակոբ Վիլլոտի, Մխիթար Մեբաստացու՝ XVIII դարում, նաև Մխիթարյան հայրերի՝ XIX դարում հրատարակած երկլեզվյան և երեքլեզվյան բառարաններում, քերականական և պատմական տարբեր աշխատություններում (ասել է՝ գրիչները ստեղծել կամ հավելել են բառեր, որոնք գործածել են ժամանակակիցները). ըստ բառարանային տվյալների՝ այդ բառերի մի մասը նույն կամ իմաստային այլ նրբերանգով պահպանվել է հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

<sup>172</sup> Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրե՛ Տէր Յոհաննէսեան Պալատոյ, էջ 319:

<sup>173</sup> Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 111:

<sup>174</sup> Կրթութիւն ապաշխարողի, Վենետիկ, 1751, էջ vij:

<sup>175</sup> Ա. վրդ. Կոանեան, նշվ. բառ., էջ 107:

## ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննվող ՁԲ-ներում մի քանի ՆԲՇ-ներ եզրափակվում են հայերենի բարբառներում և խոսակցական լեզվում հնչյունական տարբերակներով գործածվող բառերով:

Հրայր Աճառյանն աշխարհաբարի առաջին նմուշներում («ԺԵ դ.») արձանագրում է «երկու հատկություն»՝ «գրաբարի առատ խառնուրդ» և «տեղական բարբառների կնիք»՝ նշելով. «...այնպես որ կարելի է ասել, որ ամեն մի գավառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ գրողի գիտության համեմատ մոտենում կամ հեռանում է գրաբարից»<sup>1</sup>, և ըստ նրա դիտարկումների՝ «ԺԸ դարում շարունակվում է դեռ այս ոճը»<sup>2</sup>: Լեզվաբանները նաև այն կարծիքն են հայտնում, որ XVII դարում «գոյություն չունեցող գրական-կանոնացված լեզու, որի նկատմամբ ... բառերը դիտվեին բարբառային»<sup>3</sup>: Նկատի առնելով նշվածը՝ այդուամենայնիվ քննվող ՁԲ-ներում առկա համանման բառերը պայմանականորեն դիտարկվում են որպես բարբառային իրողություններ, քանի որ, ինչպես նշվել է, թեև «... չգրված օրենք է եղել նախաստիպ ձեռագրին հարազատ մնալը», այնուհանդերձ, գրիչները միջամտել են ձեռագրին, արտագրել, ընդօրինակել են՝ հավելելով բառեր՝ «ըստ լեզվին տիրապետելու մակարդակի»: Հետևաբար չպետք է բացառել «միջավայրի լեզվի» ազդեցությունը: Նշվել է նաև, որ ՁԲ-ների ընդօրինակումների քարտեզն ընդգրկուն է, բնականաբար ՁԲ-ներում առկա են հնչյունական տարբերակներ: Բարբառային բառերի պարագայում դրանք կարևոր և հետաքրքրական են այդ բառերի գոյությունը բարբառներում պարզելու առումով: ՁԲ-ներում վկայվող նմանատիպ բառերն արձանագրվում են հայերենի բարբառ-

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II Մաս, Ե., 1951, էջ 445:

<sup>2</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 452:

<sup>3</sup> Տե՛ս մասնավորապես Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 154-155:



ների մեծ մասում. կան նաև առանձին բարբառներում և խոսվածքներում գործածվող բառեր:

Եվ ուրեմն հարկ է ասվածը հաստատել որոշակի օրինակներով:

*Հայիլ. նայիլ. յառել. պշնուլ. նկատել. վերանկատել. վերակնել. կարկատել. տեսանել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 114ա. 556(I), 255ա. 3110, 96բ. 775, 65բ. 873, 201բ) առանձնանում է **ակնսպուշել** բայը: Ըստ բառարանների՝ գրաբարում և միջին հայերենում բառակերպում *ակն* արմատով վկայվում են մոտ մեկ տասնյակ բայեր (*ակնառել, ակնարկել, ակնածել, ակնկալել, ակն(ա)հարիլ, ակնկորել, ակն(ա)բացել* և այլն): Հրաչյա Աճառյանը *պիշ* արմատի («յառած աչքերով նայիլը»)՝<sup>4</sup> «գաւառական» ձևերը թվարկելիս «կարճատես», «շիլ» իմաստներով *պուշ//բուշ* արմատական ձևն է նշում Ալաշկերտի, Մուշի, Նոր Նախիջևանի, Սեբաստիայի, Նոր Բայազետի բարբառներում (ՀԱԲ, հ. Դ, էջ 83-84. տե՛ս նաև՝ ՄՀԲԲ, հ. IV, էջ 118): Միաժամանակ *ակնսպիշ*-ը համարելով «նոր բառ»՝ նա արձանագրում է նաև ԺԷ դարում վկայված *ակնսպուժիլ*-ը՝ «վրան նայելով հիանալ» նշանակությամբ (ՀԱԲ, ն.տ.): ՀԼԲԲ-ն հավելում է Արարատյան, Կարինի, Ակնի, Վանի, Մոկսի բարբառներում գործածվող *պուշ//պյուշ*-ի նաև «աչքերը հառած՝ ակնսպիշ նայող» իմաստը (ՀԼԲԲ, հ. Ե, էջ 138): Եվ ուրեմն նկատի առնելով վերը նշվածը՝ *ակնսպուժիլ*-ից բացի կարելի է ընդունել *ակնսպուշել*-ը՝ փոքր-ինչ սաստկական նշանակությամբ՝ «աչքերը սևեռած, հառած՝ անթարթ նայել»:

*Օրիածան*<sup>5</sup> հենաբառով ՆԲՇ-ն կազմում են **աղեղն ամպոյ. ծիրանի գօտի** հարադրական կազմությունները (ՄՄՁ 566(I), 251բ. 775, 63բ. 873, 199ա. 3110, 93բ. 6762, 112ա):

<sup>4</sup> Հմմտ.՝ «... ոմկ. պուշ, որ յառեալ հայի կկոցեալ աչօք». ՆՀԲ, հ. II, էջ 649:

<sup>5</sup> *Օրիածան* հասկացության բառագուգաբանությունները մանրամասնորեն քննել է Ա. Հանեյանը (Ա. Հանեյան, «Օրիածան» հասկացության բառագուգաբանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր-մշակութային արժեքը. «Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի», Ե., 2005, էջ 87-104):

*Աղեղն ամպոյ*-ի առնչությամբ կարելի է հավանական համարել, որ գրիչը, հետևելով Մուրբ Գրքին (*ծիսածան*-ը «ըստ ուր գրոց՝ ԱՂԵՂՆ ԱՍՏՈՒԾՈՅ» է. ՆՀԲ, հ. I, էջ 1015) և քաջածանոթ սուրբգրային «Ձաղեղն իմ եղից յամպս: Իբրև գտեսիլ աղեղանդ՝ որ ձգի յամպս յաւուրս անձրևաց» նախադասություններին (ՆՀԲ, հ. I, էջ 37), *աղեղն Աստուծոյ*-ի նմանությամբ ստեղծել է *աղեղն ամպոյ* հարադրական կազմությունը:

Ըստ Անի Հանեյանի՝ *ծիսածան* հասկացության բառազուգաբանությունները հիմնականում կազմում են երեք խումբ՝ *աղեղ(ն), գօտի, կանաչ-կարմիր* բառային սկզբնաձևերով, որոնք, ինչպես նշում է հեղինակը, բառակազմական ու հնչյունական տարբերակներով ընդգրկում են բարբառային երեք մեծ տարածք<sup>6</sup>: Ներկայացնելով *ծիրանի գօտի* բառազուգաբանության տարածական բնութագիրը (հայ բարբառների արևմտյան խմբակցության տարբեր բարբառախմբեր՝ Պուլսի միջբարբառախումբ, Կարինի բարբառի Ախալքալաքի, Ախալցխայի մի շարք խոսվածքներ, Համշենի միջբարբառախմբից (Աբխազիա) բազմաթիվ բնակավայրեր, Անտիոք՝ Քեսաբ, Սվեդիա)՝ Անի Հանեյանը հանգում է այն եզրակացության, որ «*ծիրանի գօտի* բառազուգաբանության ընդգրկած ենթատարածքը բավականաչափ ընդարձակ է, ցրիվ և զարմանալիորեն հատկապես ներառում է *ծովափնյա* հայ գաղթավայրերը...., ապա և ցամաքային բնակավայրեր»<sup>7</sup>: Հատկանշական է, որ ԳՀԲ-ն վկայում է *Ծիսածան. աղեղն. իրիս* բառաշարքը (ԳՀԲ, էջ 357):

Գրաբարի տպագիր բառարանները *պատառել* բայն արձանագրում են «պատառ պատառ կոտորել, բեկանել. հերձուլ, ցելուլ, ճեղքել, յօշել, գիշատել. խզել .... եթէ հատմամբ, և եթէ բացմամբ ծերպից»՝ «պատռել, ճեղքել, կտրել, բանալ» նշանակություններով (ՆՀԲ, հ. II, էջ 604: ԱԲ, էջ 681: ԳԲ, հ. Բ, էջ 389-390): *Պատառել*-ի իմաստների նույն տարբերակումն է արդի հայերենի բացատրական բառարաններում՝ «1. Պատռել, ճղել, պատառների բաժանել»

<sup>6</sup> Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 87:

<sup>7</sup> Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 95:

և «3. Ճեղքել, ճղել (հարվածելով)....» (ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 167: ԱՀԲԲ, էջ 1186): Այնպես որ բացատրելի է *Պատաստել. խզել. հերձել. ցելուլ. յերկուս ծուէնս բաժանել. ծուստել* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 267բ. 775, 72բ. 873, 211ա. 3110, 105բ. 6762, 122բ) *խզարել*-ի և *ծիւ ծիւ առնել*-ի առկայությունը: *Խիզարել* բայը քաղելով եկեղեցական երգերի՝ գանձք կամ քարոզք կոչվող հավաքածուից՝ ՆՀԲ-ն վկայում է «Բայ ոմկ. Խիզարով կտրել. սղոցել» (հ. I, էջ 944): Հրաչյա Աճառյանը բայը բխեցնում է *խիզար* «մեծ սղոց»-ից՝ նշելով հայերենի մի շարք բարբառներում գործածվող տարբերակներ և հավելելով՝ արդյոք բառը «....կապ ունի՞ արս. .... arra «սղոց» բառի հետ» (ՀԱԲ, հ. Բ, էջ 364): ՀԼԲԲ-ում արձանագրված է միայն Բուլանըխում գործածվող *խզարտել*-ը՝ «սղոցելով կտրատել» իմաստով (հ. Բ, էջ 378): Հարկ է նշել, որ արդի հայերենի բառարանները, հետևելով Ստեփան Մալխասյանցին (ՄՀԲԲ, հ. II, էջ 260), *խզարել*-ը վկայում են առանց որևէ նշումի (ԱՀԲԲ, էջ 577: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 515: ՀԼՀԲ, էջ 263):

Ինչ վերաբերում *ծիւ ծիւ առնել*-ին, ապա, Հրաչյա Աճառյանի հավաստմամբ, առանձին անգործածական «կտոր, պատառ (մանաւանդ շորի)» նշանակությամբ *ծիւ* արմատը «գտնում է միայն արդի բարբառների մեջ», և *ծիւ ծիւ առնել*-ը նա վկայում է միայն Ղարաբաղի բարբառում՝ «պատառոտել» իմաստով (ՀԱԲ, հ. Բ, էջ 460-461: ՀԳԲ, էջ 516), թեև «Ղարաբաղի բարբառի բառարան»-ում հարադրական կազմությունն այդ իմաստով չի առանձնացվում<sup>8</sup>. Բառարանը նշում է միայն *ծիլ ծիլ առնել*-ը՝ «ծիլերի՝ ծվենների բաժանել»<sup>9</sup>: Հարադրական կազմություններն առկա են ՀԼԲԲ-ում, և դարձյալ չի նշվում, թե *ծիւ ծիւ առնել* և *ծիլ ծիլ առնել* «պատառոտել, մաս-մաս առնել» իմաստները ո՞ր բարբառում են գործածվում (հ. Բ, էջք 408, 404):

<sup>8</sup> Արձանագրվում է միայն «ծվծվալ, ճոճողել» իմաստը. Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 318:

<sup>9</sup> Ա. Սարգսյան, նշվ. բառ., էջ 317:

ՄՄՁ 775 (72ա)-ում *Չուան. պարան. կառան. առասան. (եթե քարակ է) ապաւանդակ. լար. ապառում. (եթե կաշեղէն) փոկ. (եթե ի խոտոյ) կեւ. (եթե յերկաթոյ) շղթայ. (եթե կապ անասնոյ) երասան կամ երասանակ* ՆԲՇ-ն եզրափակում է *ջաւ* բառը: ՀԼԲԲ-ում *ճավ* հնչյունական տարբերակը հղվում է *ճավիկ*-ին, որն էլ «խավարծիլի նման մի տեսակ բանջար» է՝ 10 սմ բարձրությամբ, «մեջը ծակ քաղցրահամ գոխ, որ թթու են դնում, ողորմակոթ»։ Ըստ ՀԼԲԲ-ի՝ գործածվում է Արարատյան, Նոր Բայազետի, Մուշի բարբառախոս վայրերում (հ. Գ, էջ 374), ըստ ԱՀԲՈՒԲ-ի՝ *ճավ*-ն առկա է Մըշո, իսկ *ճավիկ*-ը՝ Բուլանըխի, Շիրակի, Ապարանի բարբառախոս վայրերում (էջ 427: ՄՀԲԲ, հ. III, էջ 205: ՀԼՀԲ, էջ 422): Բառարանները վկայում են նաև Վանում, Մոկսում գործածվող *ճոռ*-ը (ՀԱԲ, հ. Ա, էջ 377: ԱՀԲՈՒԲ, էջ 80: ՀԼՀԲ, էջ 411): Այս առնչությամբ հարկ է անդրադառնալ Հրաչյա Աճառյանի՝ *բագուկ* բառին և ճակնդեղի պիտանի մասերի անվանումներին («արմատը՝ տակ, թևերը՝ բագուկ») վերաբերող դիտարկմանը: Նրա հավաստմամբ՝ Վանի բարբառում առկա *ճոռ*-ը «... բուն նշանակում է «կիսախողովակաձև», բայց նաև՝ «ճակնդեղի կոթերը», և դա, ինչպես նշում է Հրաչյա Աճառյանը, «ձևից առնելով» է «այսպէս կոչուած» (ՀԱԲ, ն. տ.): Կարելի է հավանական համարել՝ քանի որ *ճավ-ճավիկ*-ը «պարան, լար» հիշեցնող «մեջը ծակ քաղցրահամ գոխ» է, ապա այդ նմանությամբ էլ ներառվել է ՆԲՇ-ում: Հատկանշական է, որ, ըստ Գեվորգ Ջահուկյանի, բառասկզբի խուլ պայթականների և կիսաշրփականների ձայնեղություն<sup>10</sup> բնորոշ է Պոլսի և Մշո բարբառախոս վայրերին (թեև Մշո բարբառը քննելիս այս հնչյունափոխությունը չի նշվում)<sup>11</sup>, սակայն երկու բարբառում էլ այս բառում հնչյունական փոփոխություն չի արձանագրվում: Հետևաբար կարելի է ենթադրել, որ *ճաւ*-ը ՆԲՇ-ում *ջաւ* է ընդօրինակվել արևմտյան բար-

<sup>10</sup> Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 46 և Աղյուսակ 2: Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 59:

<sup>11</sup> Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 58-59:

բառախոս որևէ վայրի արտասանությամբ՝ ընդունելով, անշուշտ, որ նախապես բառակազմում հնչել է ճ:

ՄՄՁ 566(1) (266ա), 873 (210բ), 3110 (105ա), 6762-ում (121բ)-ում նույն ՆԲՇ-ն եզրափակում է *տոռնը*\* բառը: ՆՀԲ-ն *տոռն*-ը վրկայում է «Չուան. լար. կապանք. սիրոյ շղթայ. հաղբ. խեղդ» նշանակություններով (հ. II, էջ 889: ԱԲ, էջ 790: ԳԲ, հ. Բ, էջ 568: ԳՀԲ, էջ 661), ՄՀԲ-ն *տոռ*-ը նշում է իբրև «բարբառային բառ»՝ «Չուան, որով կապում են շանը» իմաստով (հ. IV, 443): Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *տոռ*-ը «շան վզի կապ» իմաստով առկա է Բուլանըխի և Մուշի խոսվածքներում (ՀԱԲ, հ. Դ, 421): ՄՀԲ-ն *տոռ*-ը իբրև «1. Պարան, չվան, թոկ: 2. Շղթա, կապանք» արձանագրում է XVI դ. (ՄՀԲ, 2009, էջ 764): Էդուարդ Աղայանի կարծիքով էլ՝ «*տոռն* նախապես նշանակել է «կաշվե պարան, փոկ»<sup>12</sup>: Հայերենի բարբառախոս վայրերում, մասնավորապես Ալաշկերտի, Մուշի, Վանի և Մոկսի (ըստ Սահակ Ամատունու՝ նաև՝ «Ռշտունցիք»), նույնպես գործածվում է առանց վերջնահանգ *-ն*-ի *տոռ*-ը՝ «թոկ, որով կապում են շանը»<sup>13</sup>, իսկ Խոտորջուրում՝ «բարակ թոկ» իմաստներով (ՀԼԲԲ ն. տ.: ԱՀԲՈԻԲ, էջ 634): ՆԲՇ-ում առկա *տոռնը*, այսինքն՝ *ն*-ով վերջավորվող գրաբարյան բառերի՝ «գաղտնավանկ *ն*-ի առկայությամբ *ը* հավելվածականը ստանալը» (ինչպես՝ *սոկնը*, *ծոնգնը*) բնորոշ է Մյունիք-Գողթն-Արցախ տարածքին<sup>14</sup>: Հետևաբար ենթադրելի է, որ ՁԲ-ն կազմվել կամ ընդօրինակվել է այդ տարածքում, կամ էլ այն կազմել (ընդօրինակել) է այդ տարածքին պատկանող անձնավորությունը:

\* *Տոռն* բառն առկա է նաև *Պախուրց. երասանակ. սամետ* ՆԲՇ-ում (ՄՄՁ 873, 210 բ. 3110, 160 բ. 6762, 123 բ):

<sup>12</sup> Է. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 149:

<sup>13</sup> Ըստ ՀԼԲԲ-ի՝ Վանի և Մոկսի բարբառախոս վայրերում նույն նշանակությամբ առկա է *տոռան*-ը (հ. Զ, էջ 221):

<sup>14</sup> Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 48 և Աղյուսակ 2-ը: Է. Աղայան, Մեղրու բարբառը, էջ 174: Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 121: Եվ կրկին հարկ է արձանագրել, որ Ղարաբաղի բարբառին վերաբերող աշխատություններում բառը չի հիշատակվում:

*Օձի*<sup>15</sup> հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 278բ. 775, 79բ. 873, 220 բ. 3110, 112ա. 6762, 130ա) առկա *փողպատ*-ը (ՄՄՁ 775 և 873-ում՝ *պողպատ* տարբերակով) ՆՀԲ-ն հղում է *փողպատ*-ին՝ արձանագրելով՝ «Փողպատ ասի ունկ. որպէս *Օձիք. յագա....*» (հ. II, էջ 953. տե՛ս նաև ԳԲ, հ. Բ, էջ 604): ՄՀԲԲ-ն նույնպէս «օձիք» նշանակությամբ *փողպատ*-ը համարում է բարբառային բառ (հ. IV, էջ 513): Ըստ ՀԼԲԲ-ի՝ բառն այդ իմաստով գործածվում է Վանի, Մուշի, Մալաթիայի, Սասունի, Շատախի բարբառախոս վայրերում<sup>16</sup> (հ. Է, էջ 23): ՄՀԲ-ն «օձիք» նշանակությամբ *փողպատ*-ի բնագրային օրինակներ է քաղում Ֆրիկի և Նահապետ Քուչակի երկերից (էջ 789): Արդի հայերենի բացատրական բառարանները *փողպատ*-ը հղում են *փողկապ*-ին՝ միաժամանակ առանց որևէ հղումի նշելով «օձիք» իմաստը (ՍՀԲԲ, էջ 1531: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 669):

\*  
\* \* \*

Հայերենի բարբառների բառապաշարային տարբերություններն ունեն դրսևորման երկու արտահայտություն՝ բառային (տրվյալ հասկացությունը տարբեր վայրերում առկա է տարբեր բառային միավորներով) և իմաստային (հայերենի համար ընդհանուր (կամ հին հայերենից ավանդված) բառը տարբեր վայրերում ունենում է իմաստային տարբեր կիրառություններ)<sup>17</sup>: Այս տարբերակման մեջ առանձնանում են *նեղ բարբառային* բառերը, որոնք գործածվում են մեկ-երկու բարբառում, ընդգրկում են բարբառային

<sup>15</sup> Գրաբարի անեզական որոշ բառերի՝ եզակի թվով գործածությունը «լատինաբան հայերեն»-ի ձևաբանական համակարգում նկատվող երևույթ է. տե՛ս Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 184: Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 269:

<sup>16</sup> ՀԼԲԲ-ում նշվում է նաև Մտու. համառոտագրությունը, որը, սակայն, բարբառախոս վայրերի ցանկում արտացոլված չէ. ՀԼԲԲ, հ. Ա, էջ XIX:

<sup>17</sup> Հ. Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985, էջ 69-70:

սահմանափակ տարածք, այդ տարածքից դուրս մասամբ կամ ամբողջովին անհասկանալի են, և լրացուցիչ բացատրության կարիք կա: Այդպիսիք ևս առկա են վերոնշյալ ՁԲ-ում:

**Աւօթել** բայով է ավարտվում ՄՄՁ 6762-ում (110բ)՝ *խայտառակել. առակել. ծանակել. նշաւակել. ծաղր առնել. խաղ առնել. տնազել* ՆԲՇ-ն: ՄՀԲ-ում այն «անպատվել, վիրավորել, խայտառակել» նշանակությամբ է՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի XVI դ. արձանագրություններից քաղված միակ օրինակով՝ «Կու գայր հարբած և զդրացիսներն անհարկիք խօսոք ամօթեց» (ՄՀԲ, 2009, էջ 41), որից թերևս պարզորոշ է առավելապես «անպատվել, վիրավորել» իմաստը: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *ամօթել*-ը պոլսահայ բարբառում նշանակում է «ամաչեցնել»<sup>18</sup>, ՀԼԲԲ-ում «ամոթանք տալ, պարսավել» իմաստն է (հ. Ա, էջ 50), ԱՀԲԲ-ն առանձնացնում է «ամոթանք տալ»-ը «հզվդ.» նշումով (էջ 34): 1859թ. Վենետիկում հրատարակված «ի պետս նորավարժից» համառոտ բառարանում *յամօթ առնել* հարադրական կազմությունը բացատրվում է իբրև «խախք ընել»<sup>19</sup>: Հարկ է հիշեցնել, որ *խախք*-ը նույն *խայտառակ*-ն է (հմմտ.՝ *խաղք անել* «անպատվել, ծանակել, այպանել, խայտառակել»): ՀԼԲԲ, հ. Բ, 2002, էջ 274), որը, ինչպես նշում է Հրաչյա Աճառյանը, առկա է Երևանի, Նոր Բայազետի, Պոլսի, Վանի («գւո. խաղք (Ակն, Ասլ., Պլ. խախգ») բարբառներում (ՀԱԲ, հ. Բ, էջ 320: ՀԳԲ, էջ 990): Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում *ամոթ*-ը նաև «անպատվություն, խայտառակություն»-ն է (ԱՀԲԲ, ն.տ.: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 55)<sup>20</sup>: Ուրեմն կարելի է հավանական համարել ՆԲՇ-ում առկա *ամօթել*-ի «խայտառակել» իմաստը, այլև ենթադրել, որ բառն այդ նշանակությամբ գործածվել է որոշակի տարածքում:

*Ըռիշտ. ժյատ. կծծի. ժիշտ. անողորմ. աննուէր. անգութ. տե՛ս գազահն* ՆԲՇ-ի վերջում հավելված **անգահ**-ը (ՄՄՁ 6762, 108ա.

<sup>18</sup> Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 185:

<sup>19</sup> Համառոտ բառարան ի պետս նորավարժից, էջ 3:

<sup>20</sup> Տե՛ս նաև Յ. Գայայեան, նշվ. բառ., էջ 14:

566 (I), 245ա-245բ) Հրաչյա Աճառյանը հիշատակում է «անկուշտ ու անյագ կերպով ուտող, ազահաբար ուտող» նշանակությամբ՝ «= Գրբ. ազահ ձևէն», և իբրև գավառական բառ՝ նշում արևմտյան տարածքի բարբառներին պատկանելը («Այնթապ, Ատանա, Պոլիս, Սիվրիհիսար» և այլն. ՀԳԲ, էջ 95): ՀԼԲԲ-ն, հետևելով և արձանագրելով Հրաչյա Աճառյանի նշած օրինակը, հավելում է Խարբերդը, Մալաթիան և Սվեդիան (հ. Ա, էջ 55): Բառը հիշատակում են ՍՀԲԲ-ն՝ «ազահաբար ուտող. ազահ» բացատրությամբ և «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով (հ. I, էջ 98), և Պետրոս Ճիզմեճյանը<sup>21</sup>: Ուշագրավ է, որ ԱԲ-ն *ազահ*-ը բացատրում է իբրև «արծաթասէր, անգահ» (էջ 1), բայց *անգահ*-ը որպես գլխաբառ չի առանձնացվում: Հետևաբար կարելի է ենթադրել, որ բառը գործածվել է և ծանոթ է եղել ընդօրինակողին: Հարկ է նշել, որ նույն ՁԲ -ներում՝ *ժլատ* հենաբառով ՆԲՇ-ում, *անգահ*-ը չի հիշատակվում:

*Խձուձ*-ն առկա է միայն *Ստոման. կամփասկ* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566 (I), 271ա. 6762, 125ա): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *խձուձ*-ն իբրև «Սափորի՝ տակառի՝ շշի բերանը գոցելու խցան» գործածվում է Սեբաստիայում, Տերենտեում, Մարզվանում, իսկ «ամուր փակված՝ խցված (աման, տակառ, շիշ)» նշանակությամբ *խձուձ*-ը՝ միայն Կեսարիայի բարբառում<sup>22</sup> (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334)<sup>23</sup>: Թեև հարկ է փաստել, որ Սամվել Անթոսյանի՝ Կեսարիայի բարբառին վերաբերող աշխատության մեջ *խձուձ*-ը «ամուր փակված (դուռ, խուփ)»-ն է<sup>24</sup>, ըստ Հովհաննես Գազանճյանի էլ՝ «առանց ամենափոքր ճեղք մնալու փակված, խցուած (դուռ, տուփ եւն)» նշանակությամբ *խձուձ* տար-

<sup>21</sup> Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. I, էջ 211:

<sup>22</sup> Կեսարիայի բարբառում, ինչպես նշում է Ս. Անթոսյանը, «... բառի վերջում ծ-ն հնչվում է ձ ...» (տե՛ս Ս. Անթոսյան, Կեսարիայի բարբառը, Ե., 1961, էջ 33), և, թերևս, այդ է պատճառը, որ *խձուձ* բառում առաջին ծ-ն առնամանկությամբ դարձել է ձ (այդպես է նաև պոլսահայ բարբառում՝ *ծեծ>ձեձ*, *ծիծ>ձիձ*. տե՛ս Ն. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 50):

<sup>23</sup> Տե՛ս նաև Կ. Գաբրիկեան, Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 251 :

<sup>24</sup> Ս. Անթոսյան, նշվ. աշխ., էջ 276:



բերակն առկա է Եվդոկիայի բարբառում<sup>25</sup>: Թերևս Կեսարիայի և Եվդոկիայի բարբառներում առկա *խձուձ/խձուծ*-ը և հայերենի բարբառներում գործածվող *խձուծ*-ը (Լ. Ղզիս. Սս. «Կալի տակի մնացորդ, փոշի դարձած հարդ», Գնձ. Սս. «Կանեփի թելի մաքրված՝ ավելորդ մասը, սանդրուք». ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334) համանուններ համարվեն: Արդի հայերենում *խձուծ*-ը «վուշի՝ կանեփի թելերի կամ առհասարակ ծեծված ցողունների խոխիվ»-ն է, նաև բժշկական՝ «ախտահանված շղարշ (մառլյա), որ մտցնում են խոր վերքերի մեջ՝ թարախը արտածելու կամ արյունահոսությունը կասեցնելու համար», այլև շինարարական (դյուբել) ու ռազմական (օբյուրատոր) եզրույթ (ԱՀԲԲ, էջք 581, 615: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 524):

Մյուս գրչագրերում՝ նույն ՆԲՇ-ում, *բղուղ* բառն է (ՄՄՁ 3110, 107ա. 775, 74բ. 873, 214բ): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *բղուղ*-ը գործածվում է առավել ընդգրկուն տարածքում՝ «Ար., Խրբ., Կր., Մղր., Մշ., Վն., Մկս. և այլն» (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 201): Եվ դարձյալ կարելի է հավանական համարել, որ ընդօրինակողը հավանաբար չի հասկացել *խըձուձ* բառը և արտագրելիս այն փոխել է իրեն հասկանալի «սափորածն, բերանը համեմատաբար լայն կավե փոքր աման» նշանակությամբ *բղուղ*-ով (*ստուման*-ը և *կամփսակ*-ը, ըստ ՆՀԲ-ի, հունարեն համապատասխանաբար «ստամնոս» և «գամփսագիս, կամ գամփսագիս» բառերն են և նշանակում են «... սափոր, կուժ, դորակ, ... աման, անօթ...» (հ. I, էջ 1043. հ. II, էջ 747. այս բառերը հիշատակում է ԳՀԲ-ն (էջք 366, 617)): Կամ էլ ենթադրել, որ ընդօրինակողին անհասկանալի է եղել *բղուղ*-ը և դրա փոխարեն լրացրել է մոտավորապես նույն նշանակությամբ իրեն ծանոթ *խձուձ*-ը:

*Գերեզման. շիրիմ. դամբարան. տապան* ՆԲՇ-ի վերջում (ՄՄՁ 6762, 104բ. 566 (I), 240ա) հավելվել է *ջառն* բառը՝ «դիր հանգրստեան» բացատրությամբ: Հրայյա Աճառյանը, «Աւգոստիանոսի Բաջեցոյ ճանապարհորդութիւն յԵւրոպայ (1614թ.)» աշխատությունից առանձնացնելով *ջառ*-ն իբրև «նորագիւտ բառ», «Տեղն կոչի Քաթարումբայ այս եկեղեցումս կայ բազում ջառներ, որ կռապաշ-

<sup>25</sup> Յ. Գազանձեան, Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը, Վիեննա, 1899, էջ 29:

տի ժամանակին քրիստոնեայքն հոն թաքչել ին ելել» նախադասության մեջ թեականորեն է նշում «այր, քարայր»?» իմաստը (ՀԱԲ, հ. Դ, էջ 123): ՀԼՀԲ-ն *Այր*<sup>2</sup> բառաշարքում վկայում է «հազվադեպ գործածվող» *ջառ*-ը (էջ 35): Բառն իբրև «գաւառական», դարձյալ թեականորեն, այլև «Տ. Ջհաննամ'ի տակ» հղումով նշում է Մտեփան Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 136): Բառը վկայում է նաև ՀԼԲԲ-ն «տե'ս ՋԱՌՆ-ՋՀԱՆԴԱՄՆ» հղումով (հ. Ե, էջ 163), և միաժամանակ նշվում է, որ *ջառ*-ն առանձին գործածվում է Մեղրու բարբառում (ն. տ.): Այնպես որ տվյալ դեպքում կարելի է հավանական համարել ոչ միայն Հրաչյա Աճառյանի ենթադրությունը, այլև «դիր հանգրստեան» բացատրությամբ *ջառ*-ի՝ «գյոռ-գերեզման» «անարգական» նշումով նշանակությունը (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 271):

**Սուպռանալ** բայն առկա է *Հպարտանալ* հենաբառով ՆԲՇ-ում (տե'ս 54-րդ էջում): Երեմիա Մեղրեցին *սուպռ*-ը հիշատակում է «կոպիտ, կամ անտաշ» բացատրությամբ (ԲՀ, էջ 291): Մխիթար Սեբաստացին արձանագրում է «բիրտ. կամ տմարդի. կամ վայրենաբարոյ. կամ թանձրամիտ: ռամկ. կոպիտ....» իմաստները (ԲՀԼ, էջ 997 (1056)): ՀԱԲ-ը վկայում է «բիրտ, կոպիտ» նշանակությամբ *սուպռ* և *սուպռութիւն* բառերը՝ «(երկուսն էլ նորագիւտ բառ)» նշումով (հ. Դ, էջ 243), միաժամանակ «սո'ւպուռ» տարբերակով և «պնդերես անամոթ, ճակատը պինդ» նշանակությամբ արձանագրում Ղարաբաղի բարբառում (ՀԳԲ, էջ 978): Նշված երկու բառերը «գաւառական», «ժողովրդախոսակցական» նշումներով են հայերենի բացատրական (ՄՀԲԲ, հ. IV, էջ 240: ԱՀԲԲ, էջ 1317), այլև միջին հայերենի (ՄՀԲ, հ. Բ, էջ 336) և բարբառային բառարաններում. վերջինները վերոհիշյալ իմաստներին հավելում են նաև Ղարաբաղում և Ուրմիայում հանդիպող «պնդերես, անամոթ», Կարինում (Զվիւ.)՝ «անբարեհամբույր, անդուր», Սեբաստիայում՝ «ստահակ, համառ (երեխա)» նշանակությունները (ՀԳԲ, ն.տ.: ՀԼԲԲ, հ. Ե, էջ 379):

*Սուպռանալ* բայի գործածությունը կարելի է հավանական համարել՝ նկատի առնելով հայերենում *ածական* (=գոյական) + *ան* ածանց+բայական *ալ* վերջավորություն կաղապարով կազմվող *գը-*

վարթանալ, լկտիանալ, ծուլանալ, մեծանալ, տամկանալ և այլ բայերի գոյությունը<sup>26</sup>:

**Քշտել**-ը հիշատակվում է երկու ՆԲՇ-ում՝ *Հատանել. կտրել. կտրատել. ջարդել. խզել. ի բաց հատանել. ի բաց խզել. ի բաց կորզիլ. ի բաց հանել* և *Ջարդել. քանդել. հատանել. յատանել. սրբել. մանրել. փշրել. կտտրել* (ՄՄՁ 566 (I), 255բ և 269ա. 3110, 97ա և 106 բ. 775, 65բ և 73բ. 873, 202ա և 213ա. 6762, 114բ և 123բ): Գրաբարի տպագիր բառարանները *քշտել*-ը բացատրում են «ի բաց վարել հատնելով. կտրել. կորզել. քանդել. յապալել. կոճուպել. ծայրաքաղ առնել. ճղերը կտրտել. կրճատել» (ՆՀԲ, հ. II, էջ 1003: ԱԲ, էջ 836: ԳԲ, հ. Բ, էջ 639: ԳՀԲ, էջ 693. տե՛ս նաև ՋԲ, էջ 1480): Եվ թեև պարզորոշ է *քշտել*-ի՝ ՋԲ-ում առկա «հատանել, կտրել» իմաստը, այդուհանդերձ, հարկ է անդրադառնալ և հետևել բառի իմաստային փոփոխություններին:

ՆԲԲ-ն X-XVII դդ. մատենագրությունից հավելում է «գարնել» (էջ 746), ՀԱԲ-ը՝ առադրում բարբառներում հանդիպող մի շարք իմաստներ՝ «*քշտել* «թևերը սոթտել» (Ալշ.), *քիշտել* «գարնել» (ՀՃ.)<sup>27</sup>, «հարու տալ, եղջերցել» (Սվեդ.), «նուագարան ածել» (Եւդ.), «ուտել» (Երև.)» (հ. Դ, էջ 585): Նույնը «բրբ.» նշումով վկայում է ՄՀԲԲ-ն (հ. IV, էջ 582): Ցավոք, ՀԼԲԲ-ում՝ *քշտել* բառահոդվածում, չի տարբերակվում, թե ո՞ր բարբառում *քշտել*-ը ո՞ր նշանակությամբ է գործածվում, և հայերենի բարբառներին վերաբերող աշխատություններում բառի փնտրտուքն էլ որևէ արդյունքի չհանգեցրեց: Ալաշկերտի խոսվածքը ներկայացնող մենագրության բարբառային բառերի բառարանում, ի հակադրություն Հրաչյա Ա-

<sup>26</sup> Տե՛ս նաև Հայոց լեզվի հանգաբառարան, էջ 99-108:

<sup>27</sup> *Քշտել*-ը «խփել, հարվածել, ծեծել» իմաստով գործածական է նաև Ջեյթունի բարբառում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 196): Ռ. Ղազարյանի հավաստմամբ՝ *քշտել*-ի «1. հարված հասցնել, հարվածել, զարկել, խփել, 2. մի բանի ներսը, մեջը տանել, անցկացնել, լցնել, 3. կեղծել, կեղծ դրամ կտրել, 4. իրար վրա դնել, ի մի հավաքել, 5. նմանություն բերել, դառնալ, փոխվել (մի բանի)» իմաստներն առկա են միջին հայերենում (Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 182):

ճառյանի արձանագրածի, *քշտել*-ը չի վկայվում<sup>28</sup>: Բայց և միաժամանակ նկատելի է, որ արևմտյան խմբակցության բարբառներում (Պոլիս, Եվդոկիա, Մալաթիա, Դերսիմ) գերակշռում է *սոթտել*-ը՝ *սոթթել*, *սոթել* տարբերակներով (ԱՀԲՈԻԲ, էջք 595, 676)<sup>29</sup> (բացառություն են Սասունը և Մուշը՝ *քշտիլ*, *քշտել*)<sup>30</sup>: Սահակ Ամատունու վկայությամբ՝ *քշտել*-ը՝ «Տ. ՍՈԹԹԵԼ» հղումով, առկա է Արարատյան բարբառում (ԱՀԲՈԻԲ, ն. տ.), Ռուբեն Բաղրամյանի հավաստմամբ՝ Շամախիի բարբառում՝ *կրշտել* տարբերակով<sup>31</sup>: «Բրբ.» և «Ժդ.» նշումներով «թները՝ փեշերը ևն հավաքել, սոթտել»-ը արձանագրում են արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ 1574: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 744):

Կարելի էր, իհարկե, շրջանցել և չանդրադառնալ ՁԲ-ներում վկայված վերոնշյալ բառերին՝ դրանք համարելով պարզապես սրխալագրություններ, բայց և ակնհայտ է, որ այդ բառերն առկա են հայերենի բարբառներում: Անշուշտ, քննվող բառերի քանակը որոշակի եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում, բայց և հնչյունական տարբերակների քննությունից նկատելի է, որ դրանք մեծավ մասամբ բնորոշ են Արևմտյան Հայաստանի բարբառախոս վայրերին: Եվ քանի որ նաև նկատելի է, որ տարբերակներ են վկայվում Ղարաբաղի բարբառից, ապա այս առիթով ծագող հարցերի պարագայում հիշատակելի է Հրաչյա Աճառյանի հետևյալ դիտարկումը: Անդրադառնալով Ղարաբաղի բարբառի «նոր հայերենի 31 բարբառներուն մէջ .... ամէնէն տարածուածը» լինելուն՝ նա նշում է, որ այն «.... շատ հեռու տեղեր ալ գացած է. Փոքր-Ասիոյ մէջ Զմիւռնիոյ և Այտընի քովերը հին հայ գաղթականութիւն մը կայ, որ մէկ երկու դար առաջ Ղարաբաղէն հեռանալով այս տեղերը հաստատուեր է», նաև մանրամասնելով՝ «Թէն յիշեալ գաղ-

<sup>28</sup> Բ. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 245-248:

<sup>29</sup> Տե՛ս նաև Յ. Գազանձեան, նշվ. աշխ., էջ 54-55: Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Ե., 1967, էջ 208: Ռ. Բաղրամյան, Դերսիմի բարբառը, Ե., 1960, էջ 168:

<sup>30</sup> Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 166: Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, էջ 274:

<sup>31</sup> Ռ. Բաղրամյան, Շամախիի բարբառը, Ե., 1964, էջ 231:

թականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է, բայց երկու տեղ՝ այն է Պուրտուր և Էօտէմիշ դէռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն Ղարաբաղիք...»<sup>32</sup>:

Այս դիտարկումը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ փաստերը հետաքրքիր են միջբարբառային առնչությունների տեսանկյունից, այլև, ինչպէս իրավացիորեն նկատել է Հովհաննէս Մուրադյանը, «Բարբառների լեզվական հարուստ նյութը հնարավորություն է տալիս համեմատական քննությունների միջոցով թափանցելու լեզվի պատմության խորքերը, վերականգնելու բարբառային տարբերությունները գրավոր պատմության սկզբում և նրանից առաջ, դրանով իսկ նպաստելու մեր պատկերացումների ընդլայնմանը հայերենի հնագոյն շրջանի բարբառային բաժանվածութան աստիճանի մասին»<sup>33</sup>:

<sup>32</sup> Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասատրութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911, էջ 61: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 331: Հ. Աճառյանի հավաստմամբ՝ «... Պուրտուր և Էօտէմիշ գաղթել են Ղարաբաղից ԺԷ դարում կամ ավելի ուշ...» (Անդ, էջ 437): Սրա մասին հիշատակում է նաև Բ. Ուլուբաբյանը (տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981, էջ 54-55):

<sup>33</sup> Հ. Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը, էջ 75:

## ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՌ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները, ինչպես հավաստում են հետազոտողները, պայմանավորվում են նաև օտար լեզվական ազդեցություններով: Մասնավորապես նշվում է, որ փոխառյալ բառերը, ունենալով «տարածման իրենց շառավիղը», նկատելիորեն գերակշռում են տարածքային առումով սահմանային գոտիներում, որտեղ այլալեզու հարևանների հետ շփման հնարավորություններն ավելի շատ են<sup>1</sup>: Այս «հնարավորություններ»-ին թերևս հավելվեն նաև գաղթերն ու բռնագաղթերը, որոնցով նույնպես կարելի է պայմանավորել հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները:

Ըստ հետազոտողների՝ Հայաստանի տարբեր վայրերից ոչ միայն ձեռագրեր են տարվել կրթության տարբեր օջախներ, գրչության արվեստի կենտրոններ ընդօրինակելու-վերակազմելու, և այնուհետև հետ բերվել, այլև ձեռագրեր են ընդօրինակվել թելադրելով: Եվ այս առումով՝ գրիչների՝ ձեռագրին միջամտելու և ըստ լեզվին տիրապետելու մակարդակի՝ արտագրելու ենթադրությունը ամրագրվում է ՁԲ-ների մի քանի բառաշարքեր եզրափակող փոխառյալ բառերով (դրանք թերևս արտացոլում են ժամանակաշրջանի լեզվական վիճակը), որոնք հնչյունական տարբերակներով առկա են հայերենի բարբառներում և խոսակցական լեզվում: Եվ քանի որ բառաշարքերն ավարտվում են փոխառյալ բառերով, կարելի է ենթադրել, որ դրանք միջամտություններ են, և գրիչները հավելել, լրացրել են իրենց իմացածը: Նշվածից բացի՝ հարկ է նրկատի առնել Հովսեփ Օրբելու՝ ժամանակաշրջանին առնչվող դիտարկումը. ըստ նրա՝ արհեստների զարգացման թելադրանքով կարևորվում է ոչ միայն արհեստավորների գրագիտության անհրաժեշտությունը, այլև գրական կերպարների իմացությունը՝ թե՛

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 424: Հ. Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը, էջ 69-70:

տեղական, թե՛ օտար վերնախավի և թե՛ արտահանելու համար նախատեսված արտադրանքը (հմմտ.՝ Սարգիս Պիծակի պատվերները բարձրաստիճան հոգևորականությունից և ազնվականությունից)<sup>2</sup> նկարագարողելու-դրվագագարողելու, գծանկարելու դասական բանաստեղծության լեզվով, այն է՝ պարսից: Լեզու, որը, Հովսեփ Օրբելու հավաստմամբ, պատվավոր տեղ էր զբաղեցնում աշխարհիկ վերնախավում՝ անկախ ազգությունից և դավանանքից<sup>3</sup>: Բարկեն Չուգասյանի համոզմամբ էլ. «Որ պարսկերենը դեռևս XI-XII դարերից ուսուցվել և գիտական լեզու է եղել Հայաստանում, վկայում են ձեռագրական առանձին հաղորդումները և, որ հատկապես շատ արժեքավոր է, Մխիթար Հեքաջին»<sup>4</sup>:

ՄՄՁ 873-ում *Ժամ. ժամանակ. ամանակ. պահ. վայրկեան. րոպե* ՆԲՇ-ն (195ա) եզրափակում է «ժամանակ, պահ» նշող *qah* (𐎠𐎿 𐎡𐎴) բառը: Միջին գրական հայերենում այն դիտվում է պարսկերենից փոխառություն՝ *կեսահ* (*ու պէկեսահ*) տարբերակով և «ժամ» («ու անժամ») նշանակությամբ (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 234): Ստեփան Մալխասյանը *qah*-ը վկայում է իբրև բարբառային բառ՝ նաև «ժամանակ առ ժամանակ, երբեմն-երբեմն» մակբայական կիրառությամբ (ՄՀԲԲ, հ. I, էջ 406): Ըստ ՀԼԲԲ-ի և Սահակ Ամատունու՝ «ժամանակ, պահ» նշող *qah*-ը գործածվում է բարբառային ընդարձակ տարածքում (հ. Ա, էջ 229: ԱՀԲՈԻԲ, էջ 124)<sup>5</sup>: Հրաչյա Աճառյանը վկայում է երկու *qah* արմատ, մեկը՝ «բարձր նստարան, բեմ, 2. պատուի աթոռ (թագաւորի կամ իշխանի), 3. պատիւ, իշխանական աստիճան» իմաստներով, և մյուսը, ինչպես նշում է նա, «(*յեսնաբար*) «դար, բարձր տեղ, ժայռերի գլուխը» նշանակությամբ (ՀԱԲ, հ. Ա, էջ 502. ընդգծ.՝ Ն. Հ.): Առաջինի համար առաջարկելով «պրս. 𐎠𐎿 𐎡𐎴 «գահ, աթոռ»-ը՝ երկրորդ *qah* արմատի

<sup>2</sup> Տե՛ս Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, Ե., 1980, էջ 10:

<sup>3</sup> И. Орбели, Избранные труды, т. I, ст. 260.

<sup>4</sup> Բ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Ե., 1963, էջ 35 (տե՛ս նաև էջ 173):

<sup>5</sup> Տե՛ս նաև Ջ. Բառնասյան, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 124-125:

համար՝ նշում. «Թուի թե նոյն է նախորդ բառի հետ» (ՀԱԲ, ն.տ.): Բայց և միաժամանակ «նորագիտ» *անգահ* «անժամանակ, ուշ» բառը բխեցնում է «Պրս. օճ *gāh* «ժամանակ» բառից՝ **ան** բացասականով» (ՀԱԲ, հ. Ա, էջ 182): Ըստ Հրաչյա Աճառյանի՝ նույն իմաստով և նույն բացատրությամբ *անգահ*-ը հանդիպում է Խիանում (ՀԳԲ, էջ 95): Ի հավելումն՝ հարկ է հիշատակել նրա՝ «ընդարձակ զարգացում կրած» *վայր* բառի առնչությամբ «տեղի գաղափարից ժամանակի գաղափարին անցնելու» մասին դիտարկումը, որ արձանագրվում է *վայր*-ի «մի փոքր ժամանակ» երրորդ նշանակությամբ: Այս դեպքում Հրաչյա Աճառյանն առաջարկում է համեմատել *առաջի* և *յառաջ*, *յետ* և *յետոյ* բառերը, այլև պարսկերեն օճ *gāh*-ը, «որ նշանակում է «տեղ. 2. գահ. 3. ժամանակ, պահ», և «յատկապես գոթ. *θειhs* «ժամանակ», հիիւ. *θing* և հրգ. *ding* «դատական ժողով, ատեան, իր տեղն ու ժամանակը»...»՝ իբրև ամփոփում հավաստելով, որ նախապես այդ բառերը մի որոշ գործողության ժամանակ են նշանակել, սակայն «յետոյ ընդհանրացմամբ՝ առհասարակ «ժամանակ»» (ՀԱԲ, հ. Ա, էջ 286): «Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ արդեն նա նշում է, որ պրս. օճ *gāh* «ժամանակ»-ը ծագում է սանս. *gāthā* «երգ, շարական, օրհներգ» բառից, որից էլ ն.պրս. *gāh*-ի նախ «աղոթքի ժամանակը», ապա այս մասնավոր գաղափարից անցումը «ժամանակ» ընդհանուր գաղափարին<sup>6</sup>: Ժամանակային առումով՝ Հրաչյա Աճառյանի այս դիտարկումը վերջինն է, և դարձյալ շեշտվում է մասնավոր գաղափարից անցումը «ժամանակ» ընդհանուր գաղափարին: Բայց և հարկ է վկայել, որ արդի պարսկերենի բառարաններում օճ *gāh*<sup>7</sup> նշանակում է "1. время, пора; 2. см. گاهى<sup>8</sup>; 3. 2-й компонент слож.

<sup>6</sup> Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 191-192:

<sup>7</sup> Պարսկերեն-ուսերեն բառարանը վկայում է «խսկց.» նշումով «трон, престол» նշանակությամբ համանուն օճ *gāh*-ը. Персидско-русский словарь, т. 2, М., 1983, ст. 383.

<sup>8</sup> Այսինքն՝ «երբեմն, ժամանակ առ ժամանակ». ասել է՝ ՄՀԲԲ-ում արձանագրվածը (ՄՀԲԲ, հ. I, էջ 406):



сл. в знач.: 1) времени.... и 2) места...."<sup>9</sup>: Ասել է՝ արդի պարսկերենում «*gāh*-ը «տեղ» իմաստ է արտահայտում միայն իբրև բաղադրյալ բառերի վերջին բաղադրիչ: Եվ քանի որ հայերենի՝ հիշատակված բարբառային բառարանները *qash* հնչյունական տարբերակ չեն վկայում, կարելի է ենթադրել, որ ՆԲՇ-ին հավելված պարսկերեն «*gāh*-ին հնչյունական արտահայտությամբ և «ժամանակ, պահ» նշանակությամբ ուղղակի համընկնող *qash*-ը անմիջական նոր փոխառություն է:

**Թփանք**-ը վկայվում է միայն ՄՄՁ 775-ում՝ *Զէն. սպառազինություն. անօթ պատերազմի. գործի\* պատերազմի. (իսկ մասնաւոր անունք) սուր. սուսեր. դալապր. նրան. դաշոյ. թուր. վաղարկաւոր\*. արդն\*. մարտացու. աշտէ. տէզ\*. նիզակ. գեղարդ. ասպար. վահան. մկունդ. զրահ. վերտ. վարապանակ\*. սաղաւարտն\*. հրացան. հրազէն. թոփ. նէտ. աղէղն. կապարճ\*. լայնալիճք. փքին. պարս. պարսատիկ ՆԲՇ-ում<sup>10</sup>:*

Հայերենի բարբառներում հնչյունական տարբերակներով գործածվող *թվանք* «հրացան» բառի *թփանք* տարբերակը բառարանային տվյալներով որևէ բարբառում արձանագրված չէ: ՄՀԲ-ն նշում է պարսկերեն *tofang*-ից *թւագ*, *թրւանկ*, *թուանկ* տարբերակները (հ. Բ, էջք 258, 263, 269): ԱՄԳԶՊ-ում *թւանկ*-ը ներառվել է թուրքերեն բառերի ցանկում՝ *tufank* (հ. Ա, էջ 285): Նշված տարբերությունն արձանագրվում է ոչ թե փոխատու լեզվի ճիշտ կամ ոչ ճիշտ լինելը «բացահայտելու», այլ փոխատու լեզվում *-թ-* հնչյունի առկայությունը փաստելու համար: Հրացա Աճառյանը նշում է նաև, որ ժողովրդախոսակցական և գրական թուրքերենի *-թ-* հընչ-

<sup>9</sup> Персидско-русский словарь, т. 2, ст. 383-384.

\* Ինչ վերաբերում է աստղանիշով բառերին, ապա հարկ է նշել՝ ՄՄՁ 3100-ում՝ *գործիք* բառն է, ՄՄՁ 873-ում՝ *վաղակաւոր* տարբերակը, ՄՄՁ 566(I)-ում՝ *արդն*-ը առկա չէ, ՄՄՁ 6762-ում՝ *տէք*, ՄՄՁ 566 (I)-ում՝ *վերապանակ*, ՄՄՁ 775-ում՝ *վարանապակ* և *սաղաւարդն*, ՄՄՁ 566 (I), 6762, 3110-ում՝ *դոփ* տարբերակները, իսկ ՄՄՁ 775, 873-ում՝ *կապարճ*-ը չի վկայվում:

յունը հայերենում « = » (հավասար՝ Ն. Հ.) է *-ֆ*-ի<sup>11</sup>՝ միաժամանակ «թրք. تفك tüfenk»-ի թիւֆէնկ...., թըվանքյ...., թըվէնկ...., թըվանգյ» տարբերակներն արձանագրելով համապատասխանաբար Պոլսի, Վանի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի բարբառներում<sup>12</sup>: Հիշատակելի է նաև Հովհաննես Մուրադյանի հավանական այն ենթադրությունը, որ «հայերենում *f*-ն որպես հնչյուն գիտակցվել է նախ արևմտյան տարածքի բարբառներում, ոչ ուշ, քան VIII դարը, և հետագայում միայն սկսել է տարածվել դեպի **հարակից շրջանները**, չընդգրկելով, սակայն, ամբողջ հայերենը»<sup>13</sup>, որքանով հայտնի է *ֆ* հնչյունի բացակայություն-չգոյությունը Թբիլիսիի, Մեղրիի, Հավարիկի, Խոյի (Ուրմիայի)<sup>14</sup>, Մարաղայի և Ղարաբաղի բարբառներում<sup>15</sup>: Հայերենի բարբառներում գործածվող հնչյունական տարբերակներից *թփանք*-ին «հարազատ» է *թֆանք*-ը, որը ՀԼԲԲ-ն վրկայում է Չհալմահալի բարբառում<sup>16</sup> (հ. Բ, էջ 136): Թեև հավանական չի թվում, որ Չհալմահալի բարբառը կրող անձը, որին խորթ չէր *ֆ* հնչյունը, այն փոխարիներ *փ*-ով: Ուրեմն և կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը պատկանել է *ֆ* հնչյուն չունեցող տարածքի, և *ֆ*-ն արտագրելով *փ՝ թֆանք*-ը դարձրել է *թըփանք*: Բայց և միաժամանակ հարկ է փաստել, որ *ֆ* հնչյուն չունեցող նշված տարածքներում գործածվում են բառի բոլորովին այլ տարբերակներ:

<sup>11</sup> Հ. Աճառեան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրայ եւ թուրքերենէ փոխառեալ բառերը Պոլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներուն, հ. Գ, էջ 31:

<sup>12</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 136:

<sup>13</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, էջ 262:

<sup>14</sup> Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջք 47, 51-62: Այդ է փաստում նաև Ա. Ղարիբյանը (Ա. Ղարիբյան, Համառոտություն հայ բարբառագիտության, Ե., 1941, էջ 264): Մ. Սաստրյանի հավաստմամբ, սակայն, Խոյի բարբառում *ֆ* հնչյուն չկա (Մ. Սաստրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ19-20):

<sup>15</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., ն.տ.: Տե՛ս նաև Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, էջ 62:

<sup>16</sup> Չհալմահալի բարբառն ունի *-ֆ*- հնչյուն. տե՛ս Հ. Աճառեան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, էջ 242:

Հարկ չէր լինի անդրադառնալու *թփանկ* բառին, եթե այն արձանագրած չլիներ վաճառական և բանահավաք, ծնունդով խոտորջուրցի Եղիա Մուշեղյան Կարնեցին XVIII դ. 20-ական թթ. «հայատառ թուրքերենով» կազմած «Թուրքերեն-հայերեն բառարան»-ում<sup>17</sup>, որը լույս է տեսել Բաբկեն Չուգասյանի աշխատասիրությամբ: Նրա կարծիքով՝ Կարնեցին, չունենալով «լեզվական կուռ գիտելիքներ» և լինելով «արևմտահայերենի կրող», «դժվարությամբ է կողմնորոշվել և թուրքերենի ձայնեղները հայերեն տառադարձելիս երկվություն է հանդես բերել՝ դրանք տառադարձելով մերթ հայերեն ձայնեղներով և մերթ խուլերով»<sup>18</sup>: Դրանից բացի՝ ըստ Բաբկեն Չուգասյանի՝ «բարբառային բառերի մի մասը ... գալիս է Կարինի՝ Մուշեղյանի մայր բարբառից, իսկ մյուս մասը՝ հայերենի արևելյան բարբառներից», քանի որ նա իբրև վաճառական և Արևելյան հնդկական ընկերության պաշտոնյա եղել է բազմաթիվ երկրներում<sup>19</sup>: Նկատի առնելով Բաբկեն Չուգասյանի դիտարկումները՝ քննվող բառի առնչությամբ, այդուհանդերձ, հարկ է փաստել, որ Կարնո բարբառին վերաբերող մենագրության մեջ *թրվանք* տարբերակն է (բարբառում էլ առկա է *թ* հնչյուն)<sup>20</sup>: Կարելի է հավանական համարել, որ Կարնեցին իր շրջագայությունների ժամանակ լսել և գրի է առել *թփանկ* բառաձևը (փաստ է բառարանում արձանագրված լինելը), սակայն անհայտ է՝ որ տարածքից:

*Թաշկինակ. դաստարակ. դաստիշոր(ն). վարջամակ. սրբիչ. ձեռ(ն)աջինջ. ջնջան* (ՄՄՁ 566(I), 246ա. 873, 194ա. 3110, 88բ. 6762, 108բ) ՆԲԾ-ն, թերևս, տրոհելի է երկու՝ «թաշկինակ» և «սրբիչ» նըշանակող հատվածների:

Թեև Գևորգ Չախուկյանը հայերենի հնագույն շրջանին բնորոշ է համարում *թաշկինակ - դաստառակ - սուդար - վարջամակ* (ՀԼՊՆԺ, էջ 398) բարբառային տարբերակները՝ նախապես արձա-

<sup>17</sup> Եղիա Մուշեղյան Կարնեցի, Թուրքերեն- հայերեն բառարան, Ե., 1986, էջ 114:

<sup>18</sup> Ն. տ., էջ 22:

<sup>19</sup> Ն. տ., էջ 24:

<sup>20</sup> Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Ե., 1952, էջ 35, 142:

նագրելով, որ «Անձեռոց, սրբիչ... բառերը կազմված են բնիկ հրնդեվրոպական արմատներից, մինչդեռ դաստառակ, սանտր ... ուշ շրջանում մուտք գործած բառեր են» (ՀԼՊՆԺ, էջ 263), բայց և ԳՀԲ-ն նշում է միայն երկու բառ՝ «Թաշկինակ, վարշամակ» (էջ 284): Միջին հայերենի և հայոց լեզվի բարբառային բառարաններում «Թաշկինակ» իմաստով արձանագրվում են *դաստրոճա* (ՄՀԲ, հ. Ա, էջ 167) և *դաստամալ* (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 309-310) փոխառյալ բառերը: *Դաստիմալ, դեստամալ, դաստառակ* հնչյունական տարբերակներն են գործածում ուշ միջնադարի հայ բանաստեղծները<sup>21</sup>, իսկ *դաստառչայ*-ը վկայվում է միջին հայերենում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 278): Միջին հայերենին է բնորոշ նաև թուրքերենից փոխառյալ *եսղլուխ* -ը՝ «Թաշկինակ» իմաստով (ն.տ., էջ 275): Միաժամանակ հարկ է արձանագրել ԲՀ-ի բացատրությունը՝ «Թաշկինակ - որով զքիրտն սրբեն, որ է վարշամակ, կամ մանտիլ, կամ ռուփակ, կամ դաստառակ, կամ քող» (ԲՀ, էջ 116): Ինչ վերաբերում է *դաստիշոք(ն)* բառին, չի կարելի բացառել, որ գրիչը ցանկացել է կազմել քիչ թե շատ հասկանալի բառ՝ պարսկերեն *դաստ* «ձեռք»<sup>22</sup> և հայերեն *շոք* արմատներով, ասել է՝ «ձեռքի լաթ, շոք» (վերջինը միջին հայերենում, արևմտահայ մի քանի բարբառներում (հատկապես Խարբերդ, Բուլանըխ) նշանակում է «կտոր, լաթի կտոր(ներ), հին - մին լաթ» (ՄՀԲ, հ. Բ, էջ 222-223: ՀԼԲԲ, հ. Դ, էջ 273. հմմտ.՝ նաև ՀԱԲ, հ. Գ, էջ 531)), ճիշտ ինչպես լատիներեն *mantēle* (man(manus)-ձեռք և *tēla*-կտոր), հունարեն *χειρόμακτρον* (χειρο-ձեռք և μακτρον-լաթ, կտոր) բառերը, որոնք, նախապես նշանակելով «սրբիչ», հե-

<sup>21</sup> Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI - XVII դդ.), աշխ.-մբ՝ Հ. Սահակյանի, հ. Ա, Ե., 1986, էջ 714. հ. Բ, Ե., 1987, էջ 722:

<sup>22</sup> Լ. Հովհաննիսյանի դիտարկմամբ՝ «Հայերի (կամ... հայ հեղինակի) համար, անշուշտ, հասկանալի են եղել իրանական բառերը, ուստի նա իմանալով, ասենք, **խուն, դաստ** բառերի նշանակությունը, նրանցով կարող էր ստեղծել նոր բառեր, այս դեպքում պարտադիր չէ, որ այդ և նման բառերը անպայման անկախորեն կիրառվեին հայերենում» (Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 136):

տագայում գործածվել են «թաշկինակ» իմաստով<sup>23</sup>: Այս առիթով էլ հարկ է արձանագրել *սրբիչ*-ի՝ ՄՀԲ-ում վկայված «անձեռոց» իմաստը (հ. Բ, էջ 348): Ինչ վերաբերում է *-ի*- մասնիկին, ապա այն, ամենայն հավանականությամբ, պարսկերենում սեռական հոլովին բնորոշ իզաֆեթային կիրառություն է<sup>24</sup>:

ՆԲՇ-ում *սրբիչ* բառին հաջորդում է հայերեն *ձեռ(ն)* և *ջինջ* («... որից ջնջել՝ սրբել, մաքրել...»։ տե՛ս ՀԱԲ, հ. Դ, էջ 128) արմատներով բաղադրված *ձեռ(ն)աջինջ*-ը՝ «ձեռքը մաքրող, սրբող» իմաստով: Թերևս հարկ է հավելել նաև ն՛ իբրև «սրբիչ», և՛ իբրև «շոր» հիշատակվող *ջնջան*-ը (տե՛ս ՀԱԲ, ն. տ.):

ՄՄՁ 775-ում (60ա) ՆԲՇ-ին հավելվում է *մանտիլ* բառը: Հրաչյա Աճառյանը *մանտիլ* «գլխի թաշկինակ»-ը նշում է այն բառերի շարքում, որ «փոխ են առնված ո՛չ թե ուղղակի լատիներենից, այլ հունարենի միջոցով, ըստ որում ներկայացնում են ճիշտ այն ձևերը, որ կրել են լատիներեն բառերը հունարենի մեջ»<sup>25</sup>: *Մանտիլ*-ը գործածում են Առաքել Դավրիժեցին (Ինձ դաստառակ անուն ասի, Ըստ բարբառոյ Հայոց ազգի, Հոռոմ լեզուաւ՝ մանտիլ ասի, Բիրտ եւ հպարտ նենգաւորի)<sup>26</sup>, Աբրահամ Կրետացին (Որ էր. մանտիլ սեւագոյն, բայց՝ պատուական... Տարակոյս էր ինձ, թէ զարդ կարէ Խալիֆայն ի գլուխն փաթաթել զմանտիլն...)<sup>27</sup>: Բառը «Արտախուրակ պարսից: մենտիլ» բացատրությամբ հիշատակում

<sup>23</sup> Մանրամասն տե՛ս Ն. Միմոնյան, Մտուգարանական դիտարկումներ, Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, 130.2.2010, էջ 49-50: Հմմտ.՝ նաև ՀԼՀԲ-ում «Սրբիչ, գ. 1.Անձեռոց, դաստառակ: Երեսարբիչ, ձեռնարբիչ: 2. Ջնջան, ջնջոց, փալաս» բառաշարքը (ՀԼՀԲ, էջ 590):

<sup>24</sup> Գ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Ե., 1980, էջ 154:

<sup>25</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II Մաս, էջք 40, 42: Տե՛ս նաև ՀԱԲ, հ. Գ, էջ 252:

<sup>26</sup><http://digilib.aa.am/book/122/122/1225/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>

<sup>27</sup> <http://gradaran.ejmiatsin.am/patm-abraham-kretaci.html>

է Մխիթար Սեբաստացին (ԲՀԼՄՍ, էջ 673): Փոխառյալ այս բառը<sup>28</sup> հանդիպում է հայերենի բարբառներում «թաշկինակ» (Պոլիս, Վան. ՀԼԲԲ, հ. Դ, էջ 25)<sup>29</sup> և «կանացի գլխի թաշկինակ, վարշամակ» իմաստներով (Թբիլիսի, Կարճևան, Համշեն, Նոր Նախիջևան. ՀԼԲԲ, հ. Դ, էջ 22): ՄՀԲԲ-ն և ՄՀԲ-ն նույնպես նշում են «գլխաշոր, վարշամակ»-ը (ՄՀԲԲ, ն. տ.: ՄՀԲ, ն. տ.): Հարկ է նաև արձանագրել, որ, Պոլսի բարբառից բացի, մյուսներում, ըստ բառարանների, *մանդիլ* հնչյունական տարբերակն է:

*Իրան. հասակ. մարմին* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 109 ա. 566 (I), 247բ) առկա *ղրակ* բառի համար Հրաչյա Աճառյանը նըշում է. «... այս անձանօթ բառը գտնում եմ միայն Գեորգ Դպրի պարսկերեն բառարանում՝ էջ 37 ա, *գաստ* բառի բացատրութեան մեջ» (ՀԱԲ, հ. Ա, էջ 691)՝ «հասակ» նշանակությամբ: Եվ քանի որ վերոնշյալ բառարանը լույս է տեսել 1826 թ., ուրեմն կարելի է նշել, որ *ղրակ* «անձանօթ» բառը հանդիպում է նախ XVIII դարից ավանդված ՁԲ-ում: Բառը հիշատակվում է ՄՀԲԲ-ում «մարդու հասակը, բոյը» բացատրությամբ և «հագուադեպ բառ» նշումով (հ. I, էջ 542):

*Օղի* հենաբառով ՆԲՇ-ն վկայում են երկու ՁԲ-ներ. ՄՄՁ 775-ը՝ *Օղի. գինի. պօզայ. օշարակ. շիրե. շերպեթ* (79բ), և ՄՄՁ 566(I)-ը՝ *Օղի. ցքի. արախ* (278բ): Առաջինն ակնհայտորեն առավել ընդգրկուն է, որքանով ՆԲՇ-ն լրացնում են *պօզայ, շիրե, շերպեթ* փոխառյալ բառերը:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ թուրքերենից փոխառյալ *boza* բառը<sup>30</sup> գործածվում է Պոլսի, Նոր Նախիջևանի բարբառներում՝ *պօզա*

<sup>28</sup>ՄՀԲ-ն նշում է՝ «արաբ., պրսկ. mändil» (2009, էջ 491), ՄՀԲԲ-ն՝ «յուն. mantéla, թաշկինակ» (հ. III, էջ 251): Տե՛ս նաև Ն. Միմոնյան, Ստուգաբանական դիտարկումներ, էջ 49-50:

<sup>29</sup> Հ. Աճառեան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, էջ 228: Աշխատության մեջ Հ. Աճառյանը նշում է բառի՝ արաբերենից փոխառված լինելը («արաբ. مندیل mendil»):

<sup>30</sup> Boza “буза, напиток из проса”. Турецко-русский словарь, М., 1977, ст. 129.

«կորեկաջուր, կորեկով շինուած ըմպելի մը. bozan»<sup>31</sup>, ըստ ՀԼԲԲ-ի՝ Եվրոկիայի<sup>32</sup> (Ամս.) և Հավարիկի բարբառներում՝ համապատասխանաբար՝ *պոզա*՝ «Կորեկից պատրաստած ըմպելիք» (հ. Ե, էջ 97), և *բոզա*՝ «1. Կարասի մեջ եղած՝ եփը տեղը խաղողի հյութ: 2. Կորեկից պատրաստած խմիչք» (հ. Ա, էջ 204), հնչյունական տարբերակներով<sup>33</sup>: Հրաչյա Աճառյանը նշում է, որ արձանագրում է «միայն պոլսահայ բարբառին թրքական փոխառութեանց ձայնական փոփոխութիւնները», քանի որ «... մեր փոխառութիւնները բոլորն ալ կը պատկանին ժողովրդական փոխառութեան տեսակին և ըստ այսմ առաջ եկած են բուն ժողովրդական թուրքերէնէն»<sup>34</sup>, իսկ «Ժողովրդական *b* ձայնին դէմ գրականը ունի միշտ  $\text{b}$  ձևը, որ կը հնչուի նոյնպէս *b*. այս հնչումը անփոփոխ կը մնայ նաև մեր փոխառութեանց մէջ. Օրինակ՝  $\text{بزاز}$  bezzaz = bezaz = պէզազ «կտաւալաճառ» ...»<sup>35</sup>: Հետևաբար ենթադրելի է, որ *պոզա*-ն ՆԲՇ-ում ներառել է Պոլսի բարբառը կրող անձնավորություն: Բառն արձանագրում է Մխիթար Մեքաստացին՝ «կորեկօղի, ցքի կորեկի, խազմուզ ի կորեկէ» նշանակությամբ (ԲՀԼՄՄ, 551 (1580)), հիշատակում՝ Ստեփաննոս Ագոնցը («Նոյնպէս և ըմպելին է յոռի իմն գարեջուր, այն է՝ պօզայ»)՝ *Բօզայ* տարբերակն է կիրառում Զաքարիա Ագուլեցին<sup>37</sup>:

<sup>31</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 299:

<sup>32</sup> Հարկ է արձանագրել, որ «Եւրոկիոյ Հայոց բարբառէն քաղուած գաւառական բառերու» ցանկում այն չի նշվում. հմտ.՝ Յ. Գազանճեան, Եւրոկիոյ հայոց գաւառաբարբառը, էջ 21-23:

<sup>33</sup> ԲՀ-ն բառը հիշատակում է *օղի*-ն բացատրելիս՝ «- բօզայ, կամ ցքին, կամ աբաղ» (էջ 338):

<sup>34</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 17:

<sup>35</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 29: Հ. Աճառյանը նշում է, որ «Տառադարձութեան մէջ ... Նոր-Նախիջևանի ձեւերը Պատկանեանի տառադարձութեամբ (էն) և ճիշտ ու ճիշտ համապատասխան պոլսականին...» (ն.տ., էջ 16): Թէն հարկ է նշել, որ Գ. Ջահուկյանը Նոր Նախիջևանի բարբառում բառակցքի ձայնեղ պայթականների իլություն չի արձանագրում (Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջք 45, 52):

<sup>36</sup> Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, աշխատասիրութեամբ Ստեփաննոսի Ագոնց, Մասն III, Վենետիկ, 1801, էջ 571:

<sup>37</sup> [http://www.yso.am/files/14N\\_Dilbaryan.pdf](http://www.yso.am/files/14N_Dilbaryan.pdf)

Պարսկերենից փոխառյալ *շիրէ*-ն, ըստ ՀԼԲԲ-ի, հայերենի բարբառներում առկա է «Մզած խաղողի հյութ, քաղցու»<sup>38</sup> նշանակությամբ և հնչյունական տարբերակներով, իսկ նշված հնչյունական տարբերակը գործածվում է Մեքաստիայում, Եվրոկիայում, Ամասիայում, Մալաթիայում (ՀԼԲԲ, հ. Դ, էջ 243): Բայց և «դեռ չըխմորված քաղցր նոր գինի» իմաստով՝ միայն Վանի և Ղարաբաղի բարբառներում (ՀԼԲԲ, ն. տ.):

*Շիրայ* բառը *Քաղցու* բառահոդվածում հիշատակում են Մըկըրտիչ Ավգերյանը<sup>39</sup>, ԱԲ-ն (էջ 821): Հակոբոս Պոզաճյանը *շիրէ*-ն բացատրում է որպես «քաղցու. խազմուզ. արին խաղողոյ»<sup>40</sup>: ՄՀԲ-ն նույնպես հիշատակում է իբրև «քաղցր հյութ, քաղցու» (հ. Բ, էջ 595): Հրայր Աճառյանը նշում է «խաղողի ջուր» *շիրա*-ի՝ թուրքերենից, վերջինի էլ՝ պարսկերենից փոխառյալ լինելը («= թրք. شیره šəra = պրս. شیره šire»)<sup>41</sup>: «Քաղցր հյութ, քաղցու» նշանակությամբ *շիրա(յ)*-ն իբրև բարբառային բառ են վկայում ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 518), ԱՀԲԲ-ն (էջ 1109), ԺՀԼԲԲ-ն (հ. IV, էջ 74): Հարկ է նշել, որ արդի պարսկերենի բառարանում شیره [šire] նշանակում է նաև "вино. молодое вино", հազվադեպ էլ (редко)՝ "виноградное вино"<sup>42</sup>: Ուրեմն նկատի առնելով *շիրէ*-ի՝ պարսկերենից փոխառյալ լինելը, նաև հայերենի բարբառներում, ՆԲՇ-ում առկա հնչյունական տարբերակները և իմաստային տարբերությունները՝ կարելի է այն համարել անմիջական նոր փոխառություն: Եվ եթե ընդունելի է *շիրէ*-ի «գինի» նշանակությունը, կարելի է նաև ենթադրել, որ ըն-

<sup>38</sup> Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ «Անուշահամ գինու տեսակ է և քաղցու-ն». տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (III մաս). Խաղողագործություն-գինեգործություն, Ե., 2018, էջ 35:

<sup>39</sup> Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Յորինեաց Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, Վենետիկ, 1846, էջ 774:

<sup>40</sup> Համառոտ բառարան ի տաճկականէ ի հայ ի պէտս դարոցաց, Յորինեալ ի Հ. Յակովբոս վ. Պօզաճեան, հ. II, Վեննա, 1841, էջ 718:

<sup>41</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 262:

<sup>42</sup> Персидско-русский словарь, т. 2, ст. 125.



դորինակողը իրապես տիրապետել է պարսկերենին կամ էլ եղել է Վանի կամ Ղարաբաղի բարբառախոս վայրերից:

Սկատելի է նաև, որ *շիրէ* և *սօզա* բառերն արձանագրվել են Եվդոկիայի բարբառում, սակայն մի դեպքում տարբերությունն իմաստային է, մյուս դեպքում՝ հնչյունական:

Ինչ վերաբերում է «օշարակ» նշանակությամբ *շերպէթ* հրնչյունական տարբերակին, ապա այն, ըստ ՀԼԲԲ-ի, առկա է Կարինի (Շիրակ), Սուրմալուի բարբառախոս վայրերում (հ. Դ, էջ 211): Մանվել Ջախջախյանը նաև այս բառով է բացատրում *Púrğa*-ն՝ «մաքրողական դեղը»<sup>43</sup>: *Շերբէթ*-ը բարբառային բառ է դիտում ՄՀԲԲ-ն (հ. III, էջ 514): Միջին գրական հայերենում *շարբաթ*-ը միայն «շաքարաջուր»-ն է (ԱՄԳՀՊ, էջ 270)՝ ՄՀԲ-ի վկայությամբ նաև *շարպաթ* հնչյունական տարբերակով (ՄՀԲ, 2009, էջ 591)<sup>44</sup>: Թեև հետազոտողները նշում են, որ «փոխատու լեզուների համապատասխան ձևերը չեն օգնում» հայերենի բարբառներում գործածվող «տվյալ հասկացությունն արտահայտող բոլոր զուգաձեվերը մի այնպիսի նախաձևի հանգեցնելուն, որից օրինաչափորեն ծագած լինեին դրանք»<sup>45</sup>, բայց, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ արդի բառարանները նշում են "шербет; сладкий напиток; сироп"-ի՝ արաբերեն شربات [šerbat]<sup>46</sup> և թուրքերեն şerbet հնչելը<sup>47</sup>, որոնցով էլ, թերևս, կարելի է ամրագրել ըստ Ստեփան Մալխասյանցի՝ *շերպէթ*-ի «տաճկերենից» փոխառված լինելը:

Հատկանշական է, որ փոխառյալ վերջին երկու բառերը հաջորդում են *օշարակ*-ին, որը, ըստ բառարանների, փոխառվել է

<sup>43</sup> Բառարան յիտալական լեզուի ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 620:

<sup>44</sup> *Շարպաթ*-ն արձանագրվում է նաև XIV դ. «լատինաբան հայերեն»-ում (Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 248):

<sup>45</sup> Ա. Խաչատրյան, Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985, էջ 101:

<sup>46</sup> Х. Баранов, Арабско-русский словарь, М., 1984, ст. 397.

<sup>47</sup> Турецко-русский словарь, ст. 808.

պահիլավերենից (ՀԱԲ, հ. Դ, էջ 615: ՄՀԲԲ, հ. IV, էջ 608)<sup>48</sup> և լայնորեն գործածվում է հայերենում «այլևայլ հիւթերից պատրաստուած ախորժահամ ըմպելիք, մրգահյութ» նշանակությամբ (ԱՀԲԲ, էջ 1591: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 786): Նկատի առնելով վկայությունները՝ հավանաբար շիրէ-ն ՆԲՇ-ում ներառվել է՝ հաշվի առնելով «մրգահյութ» իմաստը: Հետևաբար հավանական է բառին առնչվող երկու մոտեցում՝ կա մ ընդօրինկողը տիրապետել է օտար լեզվի, կա մ էլ պարզապես հավելել է իր իմացածը:

Անդրադառնալով *Օղի. ցքի. արախ* ՆԲՇ-ին՝ հարկ է արձանագրել, որ գրաբարի և արդի հայերենի բառարաններում վկայված *օղի* («ցքի, բարկ և ոգելից ըմպելի»... (արդի գրականում՝ «արաղ» իմաստով). ՀԱԲ, հ. Դ, էջ 613) և *ցքի* («արմալից պատրաստուած մի տեսակ արբեցուցիչ ըմպելիք, օղի». ՀԱԲ, հ. Դ, էջ 465) բառերով<sup>49</sup> կազմված ՆԲՇ-ում առանձնանում է, ըստ ՄՀԲ-ի, պարսկերենից փոխառյալ *արաղ*-ը՝ *արախ* տարբերակով, որն առկա է Մարտիրոս Դրիմեցու երկերում (ՄՀԲ, 2009, էջ 84)<sup>50</sup>: *Արաղ*-ը գործածվում է բարբառային ընդարձակ տարածքում, կարելի է ասել՝ բարբառային ընդհանրական կիրառություն ունի (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 119): Արդի հայերենի բացատրական բառարաններում *արաղ*-ը «խսկց.» նշումով է (ԱՀԲԲ, էջ 125: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 205):

*Օձի* հենաբառով (ՄՄՁ 566(I), 278բ. 775, 79բ. 873, 220բ. 3110, 112ա. 6762, 130ա) ՆԲՇ-ում վկայվող *գրապան*-ը գրաբարի տպագիր բառարաններում «եզր զգեստուց, որպէս զօձեօք և զլանջօք և զքղանցիք» նշանակությամբ է (ՆՀԲ, հ. I, էջ 584: ԱԲ, էջ 227: ԳԲ, հ. Ա, էջ 342): Հրաչյա Աճառյանը «իրանեան փոխառութիւն»՝ «հագուստի վիզը. հագուստի եզրերը՝ վզի, լանջքի և քղանցքների վըրայ» իմաստով *գրապան*-ի համար «յետնաբար» նշում է *գրապան* «գրպան, ջէք»-ը. նրա հավաստմամբ՝ *գրպան* «ջէք»-ը միակն է ար-

<sup>48</sup> Արդի պարսկերենի բառարան այն բացատրում է իբրև «հյութ» افشرد [äfšore] "2) сок". Персидско-русский словарь, т. 1, М., 1983, ст. 107.

<sup>49</sup> *Օղի* և *ցքի* բառերի մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 36-38:

<sup>50</sup> *Արաղ*-ն արձանագրվում է նաև XVII դ. «լատինաբան հայերեն»-ում (Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 257):

դի գրականում (ՀԱԲ, հ. Ա, էջ 602): ՄՀԲԲ-ն, պահպանելով վկայվածը, համեմատության եզր է առաջարկում *գրպան*-ը (հ. I, էջ 474): ՄՀԲ-ում *գրպանակ*-ը «փոքր գրպան»-ն է (ՄՀԲ, 2009, էջ 154):

Փոխառյալ բառերի առատությամբ առանձնացող ՄՄՁ 775-ում *Ռատ. առատ. ճոխ. շատ կամ քաջ. բարի* ՆԲՇ-ի (79բ) հենաբառը «մոզերին տրուած մի տիտղոս» իմաստով պահլավերենից փոխառյալ *rāt*-ն է (ՀԱԲ, հ. Դ, էջ 142): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են «իմաստուն. ներհուն. հմուտ. ճոխ. պատուաւոր. մեծ», «Տէր (իբրև մակդիր մոզպետաց մոզպետի)» նշանակությունները (ՆՀԲ, հ. II, էջ 681: ԱԲ, էջ 709: ԳԲ, հ. Բ, էջ 434): ՄՀԲԲ-ն «(Կրօն.)» նշումով մասնակիորեն է պահպանում դրանք (հ. IV, էջ 158): ՄՀԲ-ում «Մանր ժամանակագրություններ»-ից քաղված «առատաձեռն. մեծահոգի, վեհանձն, ազնիվ» իմաստներով *ըռատ* տարբերակն է (ՄՀԲ, 2009, էջ 224): Հնչյունական նույն տարբերակը, սակայն «ավագ» նշանակությամբ, վկայվում է միջին գրական հայերենում (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 279): Մանվել Ջախջախյանի բացատրությունն է՝ «առատ. պատուաւոր. ճոխապէս» (ՋԲ, էջ 1225): Հատկանշական է, որ «առատ, շատ» իմաստներով *ռատ* բառը գործածվում է միայն Վանի բարբառում (ՀԼԲԲ, հ. Ե, էջ 230): Եվ քանի որ ակնհայտ է ՋԲ-ում և Վանի բարբառում *ռատ*-ի՝ հնչյունական արտահայտությամբ և նշանակությամբ ուղղակի համընկնումը, ենթադրելի է, որ գրիչը Վանի բարբառը կրող է:

*Վարժ* «կրթութիւն, դաստիարակութիւն, ուսմունք. վարժված, հմուտ, փորձառու» («= Պիլ. varz «գիտութիւն, իմաստութիւն, խոհականութիւն...») փոխառյալ արմատով (նշանակությունները տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 321)<sup>51</sup> և *-ակ* իրանական ածանցով (ՋՀՄԲ, էջ 794) բաղադրված *վարժակ* բառն առկա է *Սշակերտ. դեռավարժ. դեռակիրթ. ուսումնական* ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 102ա. 566 (I), 236բ): Միխիթար Սեբաստացին վկայում է ոչ միայն «վարժօղ. կամ կրթօղ», այլև «Իսկ մերթ վարժեցեալ. կամ կրթեցեալ. և կամ հմուտ»

<sup>51</sup> Պարսկերեն وريدين «մարզել, վարժեցնել», وريدي «1. մարզված. 2. փորձված». տե՛ս Գ. Նալբանդյան, Պարսկերեն-հայերեն բառարան, Ե., 1987, էջ 638:

իմաստները (ԲՀԼ, էջ 1054 (1113)): Կարելի էր ենթադրել, որ այն բառարաններում «կրթական... և ճգնող», «ուսումնական» նշանակություններով առկա *վարժական*-ի (ՆՀԲ, հ. II, էջ 793-794: ԱԲ, էջ 753) սխալ գրությունն է, եթե *վարժակ*-ը՝ «հագուադեպ բառ» նշումով, բայց և «Վարժեցնող, ուսուցանող, կրթող» իմաստով չվկայվեր ՄՀԲԲ-ում (հ. IV, էջ 311): Հարկ է նաև հիշատակել ԺՂ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում արձանագրվող «սովորող» իմաստով *վարժող(ք)*-ը<sup>52</sup>: Հետևաբար կարելի է հավանական համարել, որ «աշակերտ, սան» նշանակությամբ *վարժակ*-ը ժամանակին գործածվել է «մեր ժողովրդական խոսվածքի մեջ»:

Այսպիսով՝ քննվող բառերը մեծավ մասամբ փոխառվել են իրանական լեզուներից. դրանք հնչյունական տարբերակներով և տարբեր նշանակություններով գործածվում են հայերենի բարբառներում. մի քանիսն էլ բարբառային ընդհանրական կիրառություն ունեն:

<sup>52</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, էջ 264:

## ՓՈՒԱՌՅԱԼ ԱՐՄԱՏՈՎ (ԲԱՌՈՎ) ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶԲ-ներում առկա են նաև փոխառյալ արմատով (բառով) և հայերեն մասնիկով կազմություններ<sup>1</sup>: Հետազոտողներն այսպիսի կազմությունները փոխառություն չեն համարում: ԶԲ-ները քննելիս որդեգրվում է այս մոտեցումը: Ինչ վերաբերում է «փոխառյալ» բայերին, ապա նկատի է առնվում, որ «դրանք փոխադրվել են հայերենի մեջ իրենց հիմնական մասով և բայական ձևավորում են ստացել հատկապես -ել մասնիկով»<sup>2</sup>:

*Աճապանալ*-ը\* վկայվում է *Չարմանալ. հիանալ. սքանչանալ. հրաշանալ. սխրանալ. ապշել. ի հիացման լինել. հիմարանալ*\*\* ՆԲՇ-ում (ՄՄՁ 566(I), 143ա. 3110, 85բ. 775, 58բ. 873, 192բ. 6762, 106բ): ՄՀԲ-ն «զարմանալ, հիանալ» նշանակությամբ ունի *աճապ մնալ, յաճապ գալ* հարադրական կազմությունները (հ. Ա, էջ 36): Թեև ըստ ՀԼԲԲ-ի՝ *աճապ*-ը նաև *աջաբ, աճեփ* տարբերակներով գործածվում է հայերենի և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության մի շարք բարբառներում (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 96), սակայն *սջրբնսլ* բայն առկա է միայն Մոկսի բարբառում<sup>3</sup>: Վերջինիս բայական համակարգը քննելիս նաև Մարո Մուրադյանը հավաստում է բարբառում առկա *սջրբնսլ* «զարմանալ»-ը: Ըստ ՀԼԲԲ-ի՝ *աջեբնալի* «զարմանալի» ածականը նույնպես գործածվում է միայն Մոկսի բարբառում (ն. տ.), սակայն բարբառի ձևաբանական իրողությունները ներկայացնելիս հեղինակը չի անդրադառնում ածական ան-

<sup>1</sup> Օտար հիմքով (արմատով) բայերի մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, էջ 114-120:

<sup>2</sup> Ա. Աբրահամյան, Բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 7-8, 1960, էջ 126:

\* ՄՄՁ 6762-ում առկա է *աճապանել* տարբերակը:

\*\* ՄՄՁ 566 (I)-ում առկա է *յիմարանալ*-ը, ՄՄՁ 3110-ում՝ *հիմարեցաւ*, ՄՄՁ 775, 873-ում՝ *յիմարեցաւ* բայաձևը:

<sup>3</sup> Մ. Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, Ե., 1982, էջ 166:

վանը, բնականաբար *աջերնալի* «զարմանալի»-ն աշխատանքում չի արձանագրվում: Բայց և բարբառում գործածվող *ւնջըբնւնլ* բայը հնարավորություն է ընձեռում հավանական համարելու նաև *աջերնալի* ածականի գոյությունը, մանավանդ հայերենում առկա են անորոշ դերբայից *-ի* ածանցով բաղադրված նմանատիպ կազմություններ, ինչպես՝ *սիրելի, համակրելի, ցանկալի, տանելի* և այլն<sup>4</sup>:

Պարսկերենից փոխառյալ لاغر [lağär] "тощий, худой"<sup>5</sup> հիմքով *լղարանալ* կազմությամբ է ավարտվում *Հիւծել. ծիրել. մաշել. հաշել. նուաղիլ. նուազել. հալիլ. յոսկերսն հենուլ. վատիլ. վտտիլ* ՆԲԾ-ն (ՄՄՁ 566(I), 256ա. 775, 66ա. 873, 202ա. 3110, 97բ. 6762, 115ա)\*: Այն վկայում է Հակոբ Վիլլոտը *Contabsfco, Maceo, Tabefco* բառերը թարգմանելիս՝ առադրելով *վատիլ, հաշիլ, մաշիլ, ծիրիլ, նիհարիլ* և այլ բայեր<sup>6</sup>: «Նիհարել» իմաստով *լղարել*-ը, ըստ բառարանների, առկա է Արարատյան, Ղազախի, Ղարաբաղի, Թբիլիսիի, Հավարիկի, Մեղրու բարբառներում (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 233: ԱՀԲՈԻԲ, էջ 252: ՀԳԲ, էջ 427): ՄՀԲԲ-ն այն հղում է *Նիհարել*-ին (հ. II, էջ 203): Արդի հայերենի բացատրական բառարաններում *լղարել*-ը «ժող.» նշումով է (ԱՀԲԲ, էջ 533: ԺՀԼԲԲ, հ. II, էջ 418): Քննվող ՁԲ-ներում առկա *լղարանալ*-ը կարելի է Մխիթար Հեքացու «Ջերմանց մխիթարութիւն» երկից քաղված միակ օրինակով արձանագրված *նիհարանալ* «նիհարել, մաշվել» բայի համաբանական կազմություն դիտել (ՄՀԲ, 2009, էջ 573):

Ինչպես նկատելի է, ՁԲ-ներում հանդիպող փոխառյալ արմատով (բառով) և հայերեն մասնիկով կազմությունները *-անալ* մասնիկով են՝ *աճապանալ, լղարանալ*: Այս պարագայում թերևս

<sup>4</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974, էջ 181:

<sup>5</sup> Персидско-русский словарь, т. 2, ст. 416. ՄՀԲ-ն արձանագրում է միայն *լղար*-ը (ՄՀԲ, հ. Ա, էջ 299):

\* ՁԲ-ներում առկա է նաև *Նիհար. հիւծեալ. կամ փիծեալ. մաշեալ. տկարացեալ. նուազեալ. կամ նուաղեալ. անզօրացեալ. լղարեցեալ. վտիտ. ոսին. ազագուն* ՆԲԾ-ն (ՄՄՁ 775, 59ա. 873, 193ա. 3110, 86բ. 6762, 119ա):

<sup>6</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 167, 455, 334.

հիշատակելի են Աշոտ Աբրահամյանի՝ ժամանակակից հայերենի բայակազմական մի քանի երևույթների վերաբերող հետևյալ դիտարկումները: Նշելով, որ «... նոր և նորագույն փոխառությունների մեջ հայերենում բայեր են կազմվում ինչպես փոխառյալ անվանական, այնպես էլ բայական հիմքերից»՝ նա նկատում է. «... այսպիսի բայակազմության մեջ շատ գործուն և տարածված է *-ել* մասնիկը, սուկ *-ալ* մասնիկով կազմություններ գրեթե չկան, իսկ *-անալ* խմբով կազմությունները համեմատաբար քիչ են: Այս խումբով բայեր են կազմվում հատկապես փոխառյալ ածականներից...»<sup>7</sup>: Հետևաբար *աճապանալ*-ը և *լղարանալ*-ը կարելի է համարել նոր կազմություններ:

*Շիարեալ*-ն առանձնանում է *Յիմար* հենաբառով ՆԲՇ-ում (տե՛ս 109-րդ էջում): Հայերենի բառարանները *շուա(յ)ր*, *շիա(յ)ր*, *շ(ի)վար*, *շ(ը)ւար* հնչյունական տարբերակները՝ «առաւել ուկ.», «գվռ.», «բրբ.» նշումներով, արձանագրում են «մոլորված, շփոթված, անճար, շշմած» իմաստներով (ՆՀԲ, հ. II, էջ 490: ԱԲ, էջ 639: ԲՀ, էջ 251: ՍՀԲ, հ. Բ, էջ 217: ԱՀԲԲ, էջ 1109: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 85): «Վարանել» նշանակությամբ «*շիարիմ* կամ *շուայրիմ* կամ *շուարիմ*» տարբերակներն է հիշատակում նաև Նորայր Բյուզանդացին X-XVII դդ. մատենագրության մեջ (ՆԲԲ, էջ 581): ՀԳԲ-ն, ՍՀԲԲ-ն և ՀԼԲԲ-ն առադրում են Մշո և Վանի բարբառներում հանդիպող «ոդորմելի, խեղճ, անգործ, պարապ, աւարայ» իմաստները՝ ՀԳԲ-ի՝ «սարսախ» իմաստի հավելումով (ՍՀԲԲ, հ. III, էջ 533: ՀԳԲ, էջ 839: ՀԼԲԲ, հ. Դ, էջ 241): Ըստ Ստեփան Մալխասյանցի՝ *սարսախ*-ը «տաճկերեն *sarsak* «ապուշ, տխմար, ախամախ» բառն է (ՍՀԲԲ, հ. IV, էջ 194): *Շուարիմ*-ը բացատրելիս թուրքերեն բառի է հղում նաև Գրիգոր Փեշտրմալճյանը՝ «տարտամ և ապուշ մնալն.... (տաճ. .... շաշմազ)» (ՓԲ, հ. II, էջ 461). վերջինն էլ «թրք. شاشمق šaşmaq»-ն<sup>8</sup> է,

<sup>7</sup> Ա. Աբրահամյան, Բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում, էջ 122:

<sup>8</sup> Ն. Աճառեան, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, էջ 258:

որը Արարատյան, Թբիլիսիի, Ղարաբաղի բարբառներում պահպանվել է շաշ ձևով որպես «ապուշ, տիմար, ախամախ, խելապակաս» (ՄՀԲԲ, հ. IV, էջ 194: ՀԼԲԲ, հ. Դ, էջ 200)<sup>9</sup>: Շիվար-ի «թուլամիտ» նշանակությունը ՀԼԲԲ-ն վկայում է միայն Սեբաստիայի բարբառում (հ. Դ, էջ 241): Այնպես որ ձեռագիր բառարանների «հիմար, տիմար, բթամիտ» նշանակությամբ *շիվարեալ*-ն առկա է Մուշ-Վան բարբառային մերձ տարածքում, այլև Սեբաստիայում: Տվյալ իրողության առիթով տեղին է հիշեցնել պատմական այն փաստը, ըստ որի, ինչպես նշում են պատմաբանները, XI դ. Մենեքերիմ Արծրունին, հանձնելով Վասպուրականը Բյուզանդիային, գաղթում է Սեբաստիա՝ միանալով կայսրությանը, իր հետ տանելով ազնվականության, զինվորականության, բնակչության մի ստվար հատված<sup>10</sup>: Եվ թերևս բացատրելի է քննվող բառի առկայությունը նաև Սեբաստիայի բարբառում:

Միայն ՄՄՁ 775-ում (79բ) է առկա պահլավերենից փոխառյալ, հայերենում «առանձին անգործածական» «լոյս, լուսաւոր, պայծառ» իմաստով *rošn* արմատից (ՀԱԲ, հ. Դ, էջ 146) ***ռոշնութիւն*** կազմությունը: ՆԲՇ-ում ներառվել են *անկեղծութիւն. անխարդախութիւն. ամբիծութիւն. ուղղամտութիւն. անխառնութիւն. մաքրութիւն. սրբութիւն. յստակութիւն* բառերը: Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *ռոշնութիւն*-ի «լուսաւորութիւն. պայծառութիւն. յստակութիւն սրտի. պարզութիւն. պարզամտութիւն» իմաստները (ՆՀԲ, հ. II, էջ 682: ԱԲ, էջ 709: ԳԲ, հ. Բ, էջ 435): Նույնն է արձանագրում ՄՀԲԲ-ն (հ. IV, էջ 163): ԳՀԲ-ն բառաշարքում հիշատակում է նաև *լուսաւորութիւն. պայծառութիւն*, (փխբ.) *պարզութիւն. պարզամտութիւն* հոմանիշները (ԳՀԲ, էջ 599): ՀԼՀԲ-ում բառաշարքն առավել ընդգրկուն է՝ համալրված նաև *պայծառություն, լուսագարդություն, հստակություն, պարզություն, ջինջու-*

<sup>9</sup> Տե՛ս նաև Տ. Նուսասարդեանց, Բառգիրք Արարատեան բարբառի, Տփլիս, 1903, էջ 88:

<sup>10</sup> ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հ. Միքայէ վրդ. չամչեանց կոստանդինուպօլսէցոյ, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 902: И. Орбели, Избранные труды, т. I, ст. 225.



*թյուն, վճիտություն, մաքրություն* (էջ 564): Արդի հայերենի բացատրական բառարաններում բառը «հնց.», «բնաս.» նշումներով է (ԱՀԲԲ, էջ 1264: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 255):

ՄՄՁ 566 (I, 247ա)-ում՝ *Խայտառակել. առակել. ծանակել. նըշառակել. ծաղր առնել. խաղ առնել* ՆԲՇ-ի վերջում *տնազել*-ն է: Հրաչյա Աճառյանն այն համարում է «նոր բառ»՝ «արաբ. ز تانز «ծաղր, կատակ»-ից (ՀԱԲ, հ. Դ, էջ 415): Նորայր Բյուզանդացին *Տնազեւ*-ը հղում է *Թղահեւ*-ին, որը, ըստ բառարանագրի, հանդիպում է Թրակացու քերականության մեջ՝ «արհամարհող, այպանող, թլահող, անգոսնող» փաղանունների շարքում (ՆԲԲ, էջք 713, 230): «Գւռ. բառ կամ նշ.» նշումով *տնազել*-ն արձանագրում է ՄՀԲԲ-ն՝ բացատրելով «տնազն անել, ծաղրել, բամբասել, պախարակել» (հ. IV, էջ 424), *Տնազ* բառահողվածում էլ նշելով. «Գործ է ածվում անել, գալ, տալ բայերի հետ» (ն. տ.): ՄՀԲ-ն առադրում է «կատակել, այպանել» իմաստները (հ. Բ, էջ 393): ՆՀԲ-ն վկայում է «Ոսկիփորիկ» ժողովածուից քաղված *տնազ լինել*-ը (հ. II, էջ 883): Արդի հայերենում արդեն այլ իմաստ է արձանագրվում՝ «մեկի տնազն անել»՝ ԺՀԼԲԲ-ում «ծաղրել»-ի հավելումով (ԱՀԲԲ, էջ 1449: ԺՀԼԲԲ, հ. IV, էջ 513): ՀԼԴԲ-ն նշում է «Ծաղրել՝ մեկի շարժուձևին կամ խոսքին նմանեցնելով» իմաստը (էջ 563):

Ինչ վերաբերում է *տնազել*-ի՝ ՆԲՇ-ում վկայված «խայտառակել» իմաստին, ապա Մխիթար Սեբաստացին *տնազ առնել*-ի համար նշում է. «...և նշանակե ծաղր, կամ խաղ առնել. կամ կատակել. և կամ այպանել. ռամկ. մասխարայ. կամ խախք ընել ....», *տնազ լինիլ*-ի համար էլ՝ արձանագրում՝ «...և նշանակե ծաղր, կամ խաղ առնել. կամ կատակել. և կամ այպն լինիլ. կամ կատակիլ. ռամկ. մասխարայ ըլլալ. կամ խախք ըլլալ» (ԲՀԼ, էջ 1128 (1187))<sup>11</sup>: Ինչպես արդեն նշվել է, *խախք* -ը նույն *խայտառակ*-ն է: Ըստ ՀԼԲԲ-ի՝ *տնազել*-ը կիրառվում է Խարբերդի, *ղնազիլ*-ը՝ Սվեդիայի բարբառում՝ և դարձյալ միայն «տնազ անել, ծաղրել» բա-

<sup>11</sup> Տե՛ս նաև՝ «Տնազ:|| տե՛ս Խախք, և Ծաղր ընելը: Տնազ ընել:|| տե՛ս Ծաղր ընել ....». ԲՀԼՄՍ, էջ 636 (1665):

ցատրությամբ (հ. Ձ, էջ 205): Հրաչյա Աճառյանը Սվեդիայի բարբառում *տնագել*-ի համար հավելում է «այպանել, բամբասել» նշանակությունը (ՀԳԲ, էջ 1035): ՀԼՀԲ-ն *տնագել*-ը հղում է *ծաղրել*-ին՝ առադրելով *խայտառակել, ծաղրուծանակել, ծաղրուծանակի ենթարկել* բայերը (էջ 628, 283): *Տնագել*-ի «խայտառակել» իմաստն էլ կարելի է հաստատել նաև *ամօթել* բայի առկայությամբ: Ուրեմն ենթադրելի է, որ բառն այդ նշանակությամբ գործածվել է, սակայն հետագայում իմաստը չի պահպանվել:

ՄՄՁ 873-ում (190բ) առկա է *Գօսանալ. ընդարմանալ՝ որ է ույուշմիշ ըլլալ*<sup>\*</sup> ՆԲՇ-ն: Այն եզրափակող *ույուշմիշ ըլլալ* կազմության հարադիրը ԱԲ-ի վկայությամբ տաճկերեն *ույուշմագ*-ն է (էջ 306): Հրաչյա Աճառյանը «հայերենի վրայ թուրքերենի ազդեցութիւն»-ը քննելիս հավաստում է, որ իրեն ծանոթ չեն Նոր-Նախիջևանի, Վանի և Ղարաբաղի փոխառությունների աղբյուր «ժողովրդական թրքական բարբառները», ուստի արձանագրում է «միայն պօլսահայ բարբառին թրքական փոխառութեանց ձայնական փոփոխութիւնները»<sup>12</sup>՝ հիշատակելով նաև *ույուշտուրմիշ ընել* «թմրեցնել»-ը, որ «= թրք. اويوشدirmek»-ն է<sup>13</sup>, և փաստում, որ «Ծանր բայերու անցեալ ընդունելութեան *مش մըշ* վերջավորութիւնը .... առանց բացառութեան կը վերածուի *միշ. օր. .... آزمق azmak* «կատղիլ»= ազմիշ ըլլալ «կատղիլ»....»<sup>14</sup>: Սա գրչագրերում հանդիպող միակ թուրքերեն բայաձևն է, որը, ինչպես տվյալ ժամանակաշրջանի համար նշում է Հրաչյա Աճառյանը, «նոր է սկըսած ներմուծուիլ լեզուին մէջ»<sup>15</sup>: Հետևաբար ենթադրելի է, որ սույն գրչագիրը կարող է ընդօրինակություն լինել:

\* ՄՄՁ 775-ում (57ա) *ույուրմիշ ըլլալ* տարբերակն է:

<sup>12</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 18:

<sup>13</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 263:

<sup>14</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>15</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 16:

## ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկ Ամալյանը «Հանդես բանաստեղծաց»-ի բառաշարքը քննելիս նշում է, որ «... երբեմն հոմանիշությունը արտահայտվում է ոչ թե մի առանձին բառով (հոմանիշով), այլ ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով...» դա պայմանավորելով «բառարանի իսկական գործնական բնույթով»<sup>1</sup>: Հայկ Ամալյանի դիտարկմանը կարելի է հավելել նաև հարադրական կազմությունները, որոնցից, ինչպես արձանագրում են հետազոտողները, «Միջին հայերենում իրենց կենսունակությամբ, բաղադրիչների ներքին կապի ու հարաբերության տարբեր դրսևվորումներով աչքի են ընկնում հատկապես հարադրավոր բայերը»<sup>2</sup>, և XV-XVII դարերում «լայն կիրառություն ունեն ... հայերենի **անել, տալ, լինիլ, մնալ** և այլ օժանդակ բայերի հարադրությամբ կազմվող բայաձևերը» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 364-365): Հարկ է հիշատակել Լավրենտի Հովհաննիսյանի` XVII դ. գրաբարին վերաբերող դիտարկումը, որ այն «դրսևորում է նաև մի այլ յուրահատկություն` հանդես բերելով կայուն բառակապակցությունների, դարձվածային, ոճական միավորների հաճախական գործածություն», «դրանց առատությունը և բազմազանությունը» պայմանավորելով «առօրյա, խոսակցական լեզվով»<sup>3</sup>: Աշոտ Սուքիասյանն էլ ժամանակակից հայերենում հոմանիշների բառաշարքերի առանձնահատկություն է համարում «ինչպես բառերով, այնպես էլ դարձվածներով առանձին-առանձին և խառն` հոմանիշ բառերով և դարձվածներով միասին» կազմվելը<sup>4</sup>:

Արձանագրված երևույթները նկատելի են նաև XVIII դարից ավանդված ՄՄՁ 6762-ում և 566(I)-ում ամփոփված ՁԲ-ների ՆԲՇ-ներում, որոնցում որոշակիորեն առանձնանում են հարադիր բա-

<sup>1</sup> Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 129 - 130:

<sup>2</sup> Ռ. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, էջ 127:

<sup>3</sup> Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 179-180:

<sup>4</sup> Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, էջ 143:

յերը<sup>5</sup>, դարձվածային միավորները, այլ բառակապակցությունները<sup>6</sup> և արտահայտությունները<sup>7</sup>: Քննվող ՁԲ-ներում վկայվող հարադրական կազմությունները, ինչպես պարզորոշ է դառնում ստորև, գրիչները կամ ընդօրինակողները քաղել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից. դրանք ՁԲ-ներում ներառվել են, ամենայն հավանականությամբ, նաև ուսուցողական նպատակով: Ինչպես նշվել է, ենթադրելի է, որ XVIII դարից ավանդված՝ նույնանիշների ՁԲ-ները կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի»: Եվ դա փաստարկելու համար քննվող ՁԲ-ներում առկա դարձվածային միավորները, բառակապակցությունները և արտահայտությունները ստորև ներկայացվում են՝ ըստ ամենավաղ վկայության և հետևյալ դասակարգումներով՝ Աստվածաշնչում, այլ երկերում, XVIII դարում և XVIII դարից հետո հրատարակված տարբեր բառարաններում վկայված կազմություններ. առանձնացվում են նաև դրանց նմանությամբ բաղադրված, իմաստային այլ նրբերանգով հավաստված և բառարաններում չարձանագրված կազմությունները:

ՆԲԾ-ներում առկա *դարձվածային միավորներ* (այսուհետև՝ ԴՄ): Ըստ բառարանային տվյալների՝ Աստվածաշնչում վկայվող ԴՄ-ներ<sup>8</sup>

<sup>5</sup> Հարկ է հիշեցնել, որ ՁԲ-ներում առկա հարադիր բայերը «փոխաբերական իմաստավորումներով» ձեռք են բերել դարձվածային արժեք՝ վերածվելով դարձվածային միավորների (Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 357):

<sup>6</sup> Ժամանակակից հայերենի, գրաբարի, միջին հայերենի բառակապակցություններին ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է Վ. Քոսյանը 1975 թ., 1980 թ., 1984 թ. հրատարակած մենագրություններում:

<sup>7</sup> Հ. Ամալյանը ներկայացնում է «Հանդես բանաստեղծաց»-ում առկա մի քանի արտահայտություն՝ նշելով՝ «Նման նշումներ և բացատրություններ կան նաև մյուս բառախմբերում» (Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 129-130) :

<sup>8</sup> Սկզբում տրվում են Աստվածաշնչում վկայված ԴՄ-ները, այնուհետև՝ նաև հայ մատենագրության մեջ առկա օրինակները՝ թերևս հավաստելու, որ քննվող ՁԲ-ները դրանք արձանագրել են ավելի վաղ՝ մինչև գրաբարի բառարանները հրատարակելը: Համեմատվել է նաև Գ. Թոսունյանի առանձնացրած նյութը (Գ. Թոսունյան, Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված դարձվածքները, Լրաբեր հասարակական գիտությունների, 2, 2013, էջ 230-237):

*ա) քստ ՆՀԲ-ի՝*

*ի չափ հասանել (Աճել)*. Չափ բառահողվածում «չափահաս լինել» իմաստով (հ. II, էջ 573)<sup>9</sup>.

*պղտորել զիրաւունս (Աչառել)*. «Նմանությամբ և ոճով ասի» բացատրությամբ *Պղտորել* բառահողվածում (հ. II, էջ 655).

*դնել ի բանտի (Բանտ)*. *Բանտ* բառահողվածում (հ. I, էջ 437)<sup>10</sup>.

*պնդել ի կոճեղս (Բանտ)*. *Կոճի* բառահողվածում (հ. I, էջ 1114).

*ծանրացատումն լինել (Բարկանալ)*. նաև՝ *Խոսրովիկ թարգմանչի*, *Հովհաննես Երզնկացու երկերում* (հ. I, էջ 1009).

*փարատել զցավն (Բժշկել)*. *Փարատեցուցանել* բառահողվածում, *Ժամագրքում*, *Խոսրովիկ թարգմանչի երկում* (բնագրային օրինակում նշվում է՝ «...այսինքն ապաքինեա՛» (հ. II, էջ 936)).

*աղարտ վարել (Եղծանել)*. նաև՝ «Գիրք պիտոյից»-ում «ըստ յն. Աղ սերմանել, կամ ցանել աղս. Տե՛ս Աղարտել» նշումով և հղումով (հ. I, էջ 34)<sup>11</sup>.

*անհոգ լինել (Չանցառել)*. նույն նշանակությամբ (հ. I, էջ 188)<sup>12</sup>.

*ձերբակալ առնել, զձեռն արկանել, ի բուռն արկանել (Ըմբռնել)*. նաև՝ *Ազաթանգեղոսի*, *Մովսես Խորենացու*, *Եղիշեի երկերում* (հ. II, էջք 154, 151. հ. I, էջ 512).

*հեղուլ զարտոսր, կական բառնալ, սուզ առնուլ*, «(եթե ընդ այլոց դնի)» նշումով *արտասուակցորդ լինել (Լալ)*. նաև՝ *Եղիշեի*, *Հովհան Կլիմաքոսի երկերում* (հ. I, էջք 379, 1035. հ. II, էջք 84, 731).

*լռիկ կալ (Լռել)*. «լուռ լինել» իմաստով (հ. I, էջ 905).

<sup>9</sup> ԳԴԲ-ն «չափահաս դառնալ» նշանակությամբ արձանագրում է նաև Մ. Խորենացու երկում, «Կանոնագիրք Հայոց»-ում (էջ 131):

<sup>10</sup> ԳԴԲ-ն *ի բանտի դնել* տարբերակով և «բանտարկել» նշանակությամբ վկայում է նաև Մ. Խորենացու երկում (էջ 108): V-XI դդ. հայ մատենագրության մեջ արձանագրվում է նաև *դնանել ի բանդի* տարբերակը (Ռ. Ղազարեան, Չ. Աւետիսեան, *Նորայայտ բառեր գրաբարում*, Ե., 2007, էջ 34):

<sup>11</sup> ԳԴԲ-ն «փխբ.» նշումով արձանագրում է «քարուքանդ անել, հողին հաւասարեցնել, աւերել» իմաստները (էջ 23):

<sup>12</sup> ԳԴԲ-ն ունի *անհոգ առնել* «անհոգ դարձնել» ԴՄ-ն (էջ 31):

*հաշտ լինել (Խաղաղել)*. «մարդասեր. բարեսեր. հաշտեալ լինել» իմաստով (հ. II, էջ 48).

*ուրախ լինել, գուարթ լինել (Խնդալ)*. «ուրախանալ, ցնծալ» և «անթառամ լինել» իմաստներով (հ. II, էջ 558. հ.ս I, էջ 743).

*զլոյսն ծաւալել (Ծագել)*. *Ծաւալել* բառահոդվածում աստվածաշնչյան «Ծաւալեցի կանուխ լոյս քո» բնագրային օրինակի համար արձանագրելով՝ «յն. ծագեցէ» (հ. I, էջ 1013).

*ժոյժ ունել (Համբերել)*. «տոկալ, հանդուրժել» իմաստով (հ. I, էջ 838-839).

*հաստահիմն առնել* և *հաստատուն առնել (Հաստատել)*. առաջինը՝ նաև Կորյունի երկում (հ. II, էջ 54). երկրորդի աստվածաշնչյան օրինակն է «առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն» (Հո 15:8)<sup>13</sup>: *Կազդուրեցուցանել* բառահոդվածում՝ որպէս բացատրություն (ՆՀԲ, հ. I, էջ 1030).

*գնալ ի տար աշխարհ (Հեռանալ)*. *Տար* բառահոդվածում՝ աստվածաշնչյան «Գնաց ի տար աշխարհ» բնագրային օրինակում (հ. II, էջ 850)<sup>14</sup>.

*հպատակ լինել*<sup>15</sup> (*Հնազանդել*). *Հպատակ* բառահոդվածում, նաև՝ Նովիան Ոսկեբերանի երկերում (հ. II, էջ 125).

*լուր ելնել (Հռչակել)*. նույն իմաստով (հ. I, էջ 903).

*դարանամուտ լինել (Ղօղիլ)*. նաև՝ Եղիշեի երկում (հ. I, էջ 603).

«(եթէ չար իցէ)» նշումով *սատակամահ լինել (Մահ)*. «չարաչար մահուամբ սատակել» իմաստով (հ. II, էջ 697).

*կարճել ի կենաց (Մեռանել)*. «սպանանել, մեռանել» իմաստով (հ. I, էջ 1074).

<sup>13</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Էջմիածին, 2012, էջ 1076: Գործածում է նաև Մ. Չամչյանցը («...կամելով հաստատուն առնել զիշխանութիւն իւր, և անկասկած տիրել ի վերայ ամենայնի ...»): ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784. Յօրինեալ ի Հ. Միքայել վրդ. չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Ա., էջ 208:)

<sup>14</sup> Մտ. Մալխասյանցն արձանագրում է գրաբարյան *ի տար աշխարհ երթալ*-ը՝ «հեռու երկիրներ գնալ, պանդխտութեան գնալ» իմաստով (ՄՀԲԲ, հ. IV, էջ 381):

<sup>15</sup> ՄՄՁ 6762-ում՝ *հպատակ կալ* (115ա), որն արձանագրում է ԳԴԲ-ն (էջ 181):

*կշտապինդ վայելել (Յագել)*. նան՝ Հովհաննես Երզնկացու երկում (հ. I, էջ 1108).

«(Եթե կենդանանալ իցե դնի)» նշումով *յառնել ի մեռելոց (Յառնել)*. «վերստին կենդանանալ մեռելոյն» իմաստով (հ. II, էջ 338).

*յետս դառնալ (Յետս կալ)*. *դառնալ յետս* տարբերակով (հ. II, էջ 357), *յետս կալ*-ը՝ «հեռանալ» նշանակությամբ, *զթիկունս դարձուցանել*-ը՝ «մանաւանդ փախչել» բացատրությամբ (հ. II, էջ 357. հ. I, էջ 812)<sup>16</sup>.

*նախանձ առնել (Նախանձել)*. նույն նշանակությամբ *Նախանձ* բառահոդվածում և *նախանձ առնուլ* տարբերակով (հ. II, էջ 393).

*ի քուն լինել*<sup>17</sup> (*Ննջել*). «զքնով կամ ընդ քնով անկանիլ» իմաստով (հ. II, էջ 1012).

(Եթե ընդ անձին իւրում) *սահմանս դնել (Ուխտել)*. ՆՀԲ-ն *Սահման* բառահոդվածում արձանագրում է «Սահման եղիր և ոչ անցանեն» բնագրային օրինակը (հ. II, էջ 687)<sup>18</sup>, իսկ միայն ՄՄՁ 566 (I)-ում հանդիպող «(Եթե ի յառ և ի տուր)» նշումով *սակ արկանել*-ը՝ վկայում «դաշնաւորիլ» իմաստով (հ. II, էջ 684)<sup>19</sup>.

*լինել մարտ ի մէջ նոցա*<sup>20</sup>, *խաղալ ի վերայ նորա, զգօրս ճակատեցուցանել (Պատերազմել)*. համապատասխանաբար՝ *Մարտ* (հ. II, էջ 229), *Խաղալ* (հ. I, էջ 915), *Ճակատեմ, Ճակատեցուցանեմ* բառահոդվածներում (հ. II, էջ 166).

<sup>16</sup> ԳԴԲ-ն *յետս կալ*-ը Ե. Կողբացու, Գր. Արշարունու երկերում վկայում է «յետ կանգնել», «ապստամբուել, չինազանդուել» իմաստներով (էջ 212), *թիկունս դարձուցանել*-ը՝ Մ. Խորենացու Պատմության մէջ «մէկից երես դարձնել, արհամարհել, անտես անել» նշանակությամբ (էջ 104):

<sup>17</sup> ՆԲՇ-ներում նան *ի քուն եղև* տարբերակն է:

<sup>18</sup> Ստ. Մալխասյանցը *Սահմանել* բառահոդվածում արձանագրում է գրաբարում առկա «ուխտ դնել իւր անձի վերաբերմամբ» նշանակությունը (ՄՀԲԲ, հ. IV, էջ 176): Հարկ է, թերևս, նշել, որ ՀԼԴԲ-ում *սահմանս դնել* ԴՄ-ն նշվում է «սահմանափակել, արգելել, չափավորել» իմաստով (ՀԼԴԲ, էջ 512):

<sup>19</sup> ԳԴԲ-ն վկայում է «սակարկել, զին կտրել՝ նշանակել» իմաստով (էջ 250):

<sup>20</sup> ՁԲ-ներում նան *եղև մարտ ի մէջ նոցա* տարբերակն է:

*վաղ հասանել (Պատրաստել)*. Վաղ բառահոդվածում (հ. II, էջ 771).

*Պնդել զկնի*. «հետամուտ լինել, հալածել, վարել» իմաստով և *զկնի պնդիլ* տարբերակով, *հետամուտ լինել*-ը՝ նաև Սովսես Խորենացու Պատմության մեջ, *զհետ լինել*-ը՝ «հետևիլ» իմաստով (հ. I, էջ 738. հ. II, էջ 90).

*մխել զբազուկս իւր ի գործ (Սկսանել)*. Մխեմ բառահոդվածում «ձգել կամ արկանել զձեռն, բուռն հարկանել» իմաստով (հ. II, էջ 283)<sup>21</sup>.

«(եթէ ինքն զինքն)» նշումով *դեղս առնուլ անձին (Սպանանել)*. «ինքնասպան լինել» իմաստով (հ. I, էջ 608).

*հատանել զգինն (Վաճառել)*. *գինս հատանել* տարբերակով և «յն. ի վաճառ հաներ» բացատրությամբ «Անձանց նոցա գինս հատաներ» նախադասության մեջ (հ. I, էջ 552).

*բանակոիլ լինել (Վիրավորել)*. «վիճել» իմաստով (հ. I, էջ 434)

*խանդակայթ լինել (Ցանկալ)*. նաև՝ Խոսրովիկ թարգմանչի, Անանիա Նարեկացու երկերում (հ. I, էջ 920).

*սքանչելի առնել (Փառաւորել)*. հղվում է Աստվածաշունչը՝ «...ըստ յն. միով բայի ...» (հ. II, էջ 768): Վկայվում է Միքայել Չամչանցի («... նշանակե փառաւորառնել՝ կամ սքանչելի առնել փառօք յերկինս») <sup>22</sup>, Մկրտիչ Ավգերյանի՝ («Միթէ լո՞ւս ց սքանչելիս առնել») <sup>23</sup>, իսկ *զփառս տալ*-ը՝ Կյուրեղ Երուսաղեմացու երկերում («Արդ հայտ է թէ քննել զբնութիւն աստուածութեան անհնար

<sup>21</sup> Տե՛ս նաև՝ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1266:

<sup>22</sup> Մեկնութիւն սաղմոսաց Յօրինեալ ի Միքայել վարդապետէ Չամչեանց, հ. Գ, Վենետիկ, 1817, էջ 422:

<sup>23</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցոյ Հայաստանեայց, յօրինեալ վաւերական բանիւք ճառընտրաց մերոց և այլոց ազգաց հանդերձ ծանօթութեամբք Ի Հ. Մկրտիչ վրդ. Աւգերեան, հ. Է., Վենետիկ, 1813, էջ 434:



է, այլ զփառս տալ հնար է, և արժան է»<sup>24</sup>: *Փառք* բառահողվածում նշվում է *փառս տալ* տարբերակը (ՆՀԲ, հ. II, էջ 935).

*զփորձ առնուլ (Փորձել)*. նաև՝ Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու երկերում (հ. II, էջ 955).

*հարթայատակ առնել (Քակել)*. *հարթայատակ առնել* տարբերակով և «գետնին հավասարեցնել, ավերել» իմաստով (հ. II, էջ 61).  
*բ) քստ ԳԴԲ-ի՝*

*օթևանս առնիլ (Ազանիլ)*. «օթևանել մի տեղ, գիշերել» իմաստով նաև՝ Ագաթանգեղոսի երկում (էջ 277).

*կալ յաղօթս, աղօթս առնել, աղօթս մատուցանել (Աղօթել)*. նաև՝ Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Եզնիկ Կողբացու երկերում (էջք 161, 203, 24).

*ամբաստան լինիլ, դատախազ լինիլ, չարախօս լինիլ, մեղադիր լինել (Ամբաստանիլ)*. «ամբաստանել, զրպարտել, չարախօսել, բողոքել, մեղադրել» իմաստներով նաև՝ Եղիշեի, Եզնիկ Կողբացու երկերում (էջք 25, 67, 236, 196).

*յամօթ լինել, զամօթ հարկանել (Ամաչել)*. «ամաչել, ամօթ ըզգալ, խայտառակուել» նշանակությամբ նաև՝ Եզնիկ Կողբացու, Հովհաննես Դրասխանակերտցու երկերում (էջք 82, 204).

*հրկեզ առնել, հրձիգ առնել (Այրել)*. «հրկիզել, հրդեհել, կրակի մատնել» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու երկերում (էջք 82, 183).

*այցելու լինել (Այց առնել)*. «Այցելու լինել, տե՛ս Այց առնել» հղումով (էջ 28).

*ակն առնուլ (Աչառել)*. նաև՝ Փավստոս Բուզանդի, Եղիշեի երկերում (էջ 21).

*առ ոչինչ համարել, առ ոտս հարկանել (Արհամարհել)*. նաև՝ Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի երկերում (էջ 37).

*ի գլուխ հանել (Աւարտել)*. «ավարտել, վերջացնել» նշանակությամբ նաև՝ Թովմա Արծրունու երկում (էջ 115).

<sup>24</sup> Երանելոյն Կիրոյի Երուսաղեմայ Հայրապետի Կոչումն Ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 146:

*անհետ առնել*\* (*Աւերել*). «անհետ կորցնել, անհետացնել» նը-  
շանակությամբ նաև՝ Անանիա Նարեկացու երկերում (էջ 30).

*բռն լինել* (*Բռնադատել*). «բռնանալ, հարստահարել, զրկել,  
բռնութեամբ՝ ուժով տիրել» իմաստներով (էջ 56).

*զան հարկանել, բրածեծ առնել* (*Գանել*). «ծեծել, ձաղկել, բրով  
ծեծել, գանահարել» իմաստով նաև՝ Եղիշեի, Հովհաննես Դրաս-  
խանակերտցու, Ստեփանոս Սյունեցու երկերում (էջք 56, 59).

*չու առնել* (*Գնալ*). «չուել, գաղթել, քոչել» իմաստով նաև՝ Ա-  
գաթանգեղոսի, Մովսես Խորենացու երկերում (էջ 237).

*ընդ գրով արկանել* (*Գրել*). նաև՝ Եղիշեի, Մովսես Կաղան-  
կատվացու, Արիստակես Լաստիվերտցու երկերում (էջ 94).

*գուժ տալ* (*Գուժել*). *գոյժ տալ* տարբերակով և հղելով *գոյժ  
առնել*-ը (էջ 63).

*զղաշինս կռել, բանս դնել* (*Դաշն*). համապատասխանաբար՝  
«զղաշինք կռել» իմաստով (էջ 66), «բանակցել» նշանակությամբ Ե-  
ղիշեի երկում (էջ 51).

*դարան գործել* (*Դարանել*). նաև՝ Փավստոս Բուզանդի, Մով-  
սես Խորենացու, Թովմա Արծրունու երկերում (էջ 67).

*զահ հարկանել, ահաբեկ լինել* (*Երկնչիլ*). նաև՝ Եղիշեի, Սե-  
բեոսի, Թովմա Արծրունու երկերում (էջք 82, 23).

*անփոյթ լինել, անփոյթ առնել, անտես առնել* (*Զանցառել*).  
նաև՝ Ագաթանգեղոսի, Անանիա Նարեկացու, Հովհան Մամիկոն-  
յանի, Մաշտոց Ա Եղիվարդեցու երկերում (էջք 33, 34).

*առ ոտն հարկանել, ընդ վայր հարկանել* (*Ընկճիլ*). «արհա-  
մարհել, անտեսել. լքել» իմաստներով նաև՝ Եղիշեի, Ղազար Փար-  
պեցու, Թովմա Արծրունու, Ագաթանգեղոսի երկերում (էջք 37, 97).

*ի թիւ արկանել, համար առնուլ* (*Թուիլ*). «թուարկել, թուել,  
հաշվել» իմաստներով նաև՝ Ագաթանգեղոսի, Ուխտանես եպիս-

\* *Անհետ առնել*-ն առկա է նաև *Եղծանել* հենարանով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 106ա.  
566(1), 242ա):

կոպոսի, Փավստոս Բուզանդի, Թովմա Արծրունու երկերում (էջ 118, 169).

*հայս հարկանել (Թրեյ)*. «խմորը լաւ շաղախել» իմաստով (էջ 170).

*թոյլ տալ (Թողուլ)*. «արգելք չլինել, թողնել» նշանակությամբ (էջ 105).

*ունկն դնել, ունկնդիր լինել (Լսել)*. նաև՝ Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Ղևոնդ վարդապետի, Թովմա Արծրունու երկերում (էջ 233).

*լուռ լինել, արի ի բերան լինել (Լռել)\**. նույն նշանակությամբ նաև՝ Սեբեոսի երկում (էջ 143, 49).

*դարան գործել, դարանակալ լինել (Խաբել, Նենգել)*. «դարանել, դաւ նիւթել» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի, Սեբեոսի, Մովսէս Խորենացու, Թովմա Արծրունու, Գրիգոր Նարեկացու երկերում (էջ 67, 68).

*խաղ առնել, ծաղր առնել (Խայտատակել)*. նաև՝ Եղիշեի, Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի, Թովմա Արծրունու, Մովսէս Կաղանկատվացու երկերում (էջ 145, 155).

*խրախ լինել, ծափս հարկանել (Խնդալ)*. «ուրախանալ» իմաստով նաև՝ Հովհաննէս Դրասխանակերտցու Պատմության մէջ (էջ 152, 157).

*զմտաւ ածել, մտախոհ լինել, մտայոյզ լինել (Խորհել)*. նաև՝ Թովմա Արծրունու, Մովսէս Խորենացու, Ղազար Փարպեցու երկերում (էջ 89, 200).

*յառաջ բերել (Օնանի)*. «ստեղծել, գոյացնել» իմաստով (էջ 209).

*ծունր կրկնել, ծունր իջանել, ի գուճս հարեալ (Օունր դնել)*. «ծնրադրել, ծնկի գալ» իմաստով նաև՝ Ագաթանգեղոսի, Եղիշեի,

\* Առկա են նաև *Պապանձիլ* հենարտով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 122ա. 566(Ի), 266բ): «Լռել, պապանձել, չխոսել» նշանակությամբ *արի ի բերան*-ը հանդիպում է միջնադարյան պանդխտության տաղերում (տե՛ս Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV-XVIII դդ.), Քննական բնագիրը, առաջաբանը, ծանոթագրությունները՝ Մ. Մկրտչյանի, Ե., 1979, էջ 189):

Փավստոս Բուզանդի, Սեբեոսի, Թովմա Արծրունու երկերում (էջ 159, 122, 116)։

*այսն առնել, ծաղր առնել (Կատակել)*։ «ծաղրել» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու երկերում (էջ 26, 155)։

*պար առնուլ (Կաքաւել)*։ «պարել» նշանակությամբ (էջ 243)։

*առաթուր կոխան առնել (Կոխել)*։ *կոխան առնել* տարբերակով և «ոտքի տակ առնել, ոտնատակ անել, կոխոտել» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի (էջ 165), *առ ոտն հարկանել*՝ նաև՝ Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու երկերում (էջ 37)։

*ուար հարկանել/առնուլ (Կողոպտել)*։ «կողոպտել, թալանել» իմաստով նաև՝ Ագաթանգեղոսի, Սեբեոսի երկերում (էջ 49)։

*դի տապաստ արկանել, դիաթաւալ առնել, ի սուր սոււերի<sup>25</sup> մաշել (Կոտորել)*։ «սպանել, սրի քաշել» իմաստով նաև՝ Թովմա Արծրունու, Հովհան Մամիկոնյանի, Անանիա Մոկացու, Ստեփանոս Տարոնեցու երկերում (էջ 263, 71, 134)։

*ընդդեմ կալ, հակառակ կալ (Հակառակիլ)*։ նաև՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Եզնիկ Կողբացու երկերում (էջ 98, 169)։

*ի վեգ գալ (Հակառակիլ)*։ «վիճել, կռուել, հակառակուել» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի երկում (էջ 137)<sup>26</sup>։

*երկայնամիտ լինել, գղեմ ունել (Համբերել)*։ «համբերատար լինել» և «դիմադրել, յաղթահարել» նշանակություններով նաև՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Սեբեոսի, Ղևոնդ վարդապետի երկերում (էջ 80, 85)։

*ժաման առնել (Հասուցանել)*։ «հասցնել» իմաստով (էջ 106)։

*ի բաց հատանել, ի բաց հանել (Հատանել)*։ «զատել», «կտրել» իմաստներով նաև՝ Մովսես Խորենացու Պատմության մեջ (էջ 112)։

<sup>25</sup> ՆՀԲ-ում նշվում է՝ «Ի սուր սոււերի», այսինքն ի սայր կամ ի բերան սրոյ. որպէս ասի ստէպ ի սուրբ գիրս, և յայլ գիրս»։ տե՛ս ՆՀԲ, հ. II, էջ 733։

<sup>26</sup> ՄՀԲԲ-ն նշում է, որ «վեճ, կրիւ, հակառակութիւն» նշանակող *վեգ*-ը «գործ է ածվում միայն *ի վեգ գալ* դարձվածքում» (տե՛ս հ. IV, էջ 337)։

*զան հարկանել*, (եթե զերեսն) *ապտակս հանել*, (եթե ոտիք) *զոտս արձակել կամ հարկանել (Հարկանել)*. «ձաղկել, ծեծել», «ապտակել», «ոտնահարել, արհամարհել, անտեսել» իմաստներով նաև՝ Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ստեփանոս Սյունեցու երկերում (էջք 59, 36, 230).

*հեռի լինել, ի բաց կալ, ի բաց լինել (Հեռանալ)*. նաև՝ Գրիգորիս Արշարունու, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Թովմա Արծրունու, Ղևոնդ վարդապետի երկերում, «Կանոնագիրք Հայոց»-ում (էջք 177, 111).

*զհետ երթալ, զհետ լինել (Հետնել)*. նաև՝ Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Ստեփանոս Սյունեցու երկերում (էջ 88).

*հնազանդ լինել, ունկն դնել, ունկնդիր լինել (Հնազանդել)*. «հնազանդուել» իմաստով նաև՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Ղևոնդ վարդապետի, Թովմա Արծրունու երկերում (էջք 179, 233).

*հռչակ հարկանել\**, *քարոզ կարդալ (Հռչակել)*. «հռչակել» և «հրապարակալ յայտարարել» իմաստներով (էջք 181, 275).

*հասու լինել, ի միտ առնուլ, խելամուտ լինել (Ճանաչել)*. «հասկանալ» նշանակությամբ նաև՝ Ագաթանգեղոսի, Ուխտանես եպիսկոպոսի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Սյունեցու, Թովմա Արծրունու երկերում (էջք 172, 128, 147).

*ճեմ առնել (Ճեմել)*. նաև՝ Թովմա Արծրունու երկում (էջ 191).

*յայտնի առնել (Ճշմարտել)*. «յայտնի դարձնել, յայտնել» նշանակությամբ նաև՝ Եզնիկ Կողբացու երկում (էջ 205).

*հեռի առնել, ի բաց դնել, բառնալ ի միջոց, տարագիր\*\* առնել, հալածական առնել (Մերժել)*. «հեռացնել», «մի կողմ թողնել», «մեջտեղից վերացնել», «վտարուել», «հալածել, քշել» իմաստներով նաև՝ Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ագաթանգե-

\* *Հռչակ հարկանել*-ը «(եթե զլոյս)» նշումով առկա է նաև *Տարածել* հենաբառով ՆԲԾ-ում (ՄՄՁ 6762, 127ա. 566(1), 274ա):

\*\* ՆՀԲ-ն *տարագիր* բառի համար նշում է նաև «Իբր Տարադեպ. մերժելի» (հ. II, էջ 851):

դոսի, Սեբեոսի երկերում, «Կանոնագիրք հայոց»-ում (էջք 177, 110, 53, 264, 168).

*փոխել յաշխարհէ, աւանդել զհոգին (Մեռանել)*. նաև՝ Փավստոս Բուզանդի երկում (էջք 272, 48).

*հուպ լինել, մերձ լինել (Մերձենալ)*. «մօտենալ» իմաստով նաև՝ Փավստոս Բուզանդի, Չաքարիա Չազեձորցու երկերում (էջք 180, 197).

*խոյս տալ, տեղի տալ (Մեկուսանալ)*. «խուսափել, հեռանալ» իմաստով նաև՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Թովմա Արծրունու, «հրաժարուել, ընկրկել» իմաստով Չաքարիա Չազեձորցու, «խուսափել, նահանջել» իմաստով՝ Մովսես Խորենացու, Թովմա Արծրունու երկերում (էջք 149, 265).

*հոլանի առնել (Մերկացուցանել)*. նաև՝ Թովմա Արծրունու երկում (էջ 180).

*կցորդ լինել (Միաբանել)*. նաև՝ «Կանոնագիրք հայոց»-ում (էջ 167).

*զմտաւ ածել, ի միտ ածել, մտայոյզ լինել, մտախոհ լինել (Մըտածել)*. նաև՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Ստեփանոս Սյունեցու, Թովմա Արծրունու, *ի խորհուրդ մտանել՝ «խորհրդակցել»* իմաստով՝ Եղիշեի երկերում (էջք 89, 128, 200, 121).

*յաղթական կամ յաղթուկ լինել (Յաղթել)*. նույն նշանակությամբ (էջ 203).

*ակն ունել\** (Յուսալ). նաև՝ Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Սյունեցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու երկերում (էջ 21).

*անյոյս լինել (Յուսահատել)*. նույն իմաստով (էջ 32).

\* Առկա է նաև *Սպասել* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 124բ. 566(1), 270բ):

*ի միտս լինել*\* (*Յիշել*). նաև՝ Մովսես Խորենացու Պատմության մեջ (էջ 128).

*ի քուն լինել, զքնով անկանել* (*Ննջել*). նաև՝ Ագաթանգեղոսի, Հովհան Ոսկեբերանի<sup>27</sup> երկերում (էջք 140, 91).

*ուխտադիր լինել*, (եթե ընդ մարդկան իցե և պիտոյ իցե դնի ևս) *դաշինս կռել* (*Ուխտել*). «ուխտադրել», «դաշինք կռել» իմաստներով (էջք 232, 66).

*չու առնել, ճանապարհ առնել* (*Չուել*). նաև՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Սեբեոսի, Զաքարիա Զագեձորցու երկերում (էջք 237, 190).

*շուրջ պատել* (*Պատել*). «շրջապատել» նշանակությամբ նաև՝ Հովհան Մամիկոնյանի երկում (էջ 226)<sup>28</sup>.

*ի դիմի հարկանել միմեանց*<sup>\*\*</sup>, *տալ պատերազմն, մարտ դնել* (*Պատերազմել*). «ընդհարուել, դեմ կանգնել, զարկուել, հանդիպել» իմաստներով գործածում են նաև Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Սեբեոսը, Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 116-117). վերջինը՝ «կռուել, մարտնչել» նշանակությամբ նաև՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդ վարդապետի երկերում (էջք 262, 195).

*ընդառաջ ելանել* (*Պատահիլ*). *ընդ առաջ ելանել* տարբերակով նաև՝ Փավստոս Բուզանդի, Կորյունի, Սեբեոսի երկերում (էջ 93).

*ճառ արկանել, զբանից բարութեան խօսիլ* (*Պատմել*). «խօսք բացել, խօսք մեջ գցել» իմաստով՝ «ճառ արկեալ զբանից բարութեան ընդ միմեանս խորհեին» (էջ 191).

\* ՀԼԲԲ-ն վկայում է *միտս ա* բարբառային տարբերակը «հիշում եմ, չեմ մոռացել» նշանակությամբ. տե՛ս ՀԼԲԲ, հ. Դ, էջ 60:

<sup>27</sup> ԳԴԲ-ում նշվում է, որ *զքնով անկանել*-ի բնագրային օրինակը վերցվել է Լ. Հովհաննիսյանի բառարանից:

<sup>28</sup> ՆՀԲ-ն, արձանագրելով «ըստ յն. Պարունակել, կամ Պաշարել», հղում է Աստվածաշունչը ( հ. II, էջ 492): Է. Աղայանը նույնպես վկայում է «շրջապատել» իմաստով, սակայն «հնց.» նշումով (ԱՀԲԲ, էջ 1126):

<sup>\*\*</sup> «Եթե ի մարտ իցե դիր» նշումով *ի դիմի հարկանել*-ն առկա է նաև *Պատրաստել* հենաբառով ՆԲԾ-ում (ՄՄՁ 6762, 122բ. 566(1), 267բ-268ա):

«Եթե ի մարտ իցե դիր» *ի դիմի հարկանել* (*Պատրաստել*)։ «ընդհարուել, դեմ կանգնել, զարկուել, հանդիպել» իմաստներով նաև՝ Փավստոս Բուզանդի, Մեբեռսի, Մովսես Խորենացու, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու երկերում (էջ 116)։

*ջան դնել, ունել զջան, զփոյթ ունել, գուն գործել, զհոգ ունել* (*Ջանալ*)։ նաև՝ Ագաթանգեղոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Թովմա Արծրունու երկերում (էջք 247, 273, 64, 179)։

«(Եթե ինքն զինքն)» *երթալ զհարովի* (*Սպանանել*)։ *զհարովին երթալ* տարբերակով և «ինքնասպան՝ անձնասպան լինել» իմաստով նաև՝ Արիստակես Լաստիվերտցու երկում (էջ 87)։

*սպաս կալ* (*Սպասատրել*)։ *ի սպասու կալ* տարբերակով նաև՝ Մեսրոպ Վայոցձորեցու երկում (էջ 134)։

*սկիզբն առնել, ձեռն ի գործի արկանել* (*Սկսանել*)։ նաև՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու երկերում (էջք 251, 186)։

«(Եթե վարումն իրաց դնի ևս)» *ի գործ արկանել* (*Վարել*)։ «գործածել, բանեցնել, գործադրել» նշանակությամբ նաև՝ Կորյունի, Եղիշեի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու երկերում (էջ 115)։

*արթուն կալ* (*Տքնիլ*)։ նույն իմաստով (էջ 44)։

*խրախոյս բառնալ* (*Քաջալերել*)։ «խրախուսել» իմաստով (էջ 153)։

*ձեռնկալու լինել, ի թիկունս հասանել* (*Օգնել*)։ նաև՝ Ագաթանգեղոսի երկում (էջք 187, 118)։

*Ստորև ներկայացվում են, ըստ բառարանային տվյալների, այլ երկերում առկա ԴՄ-ները*

ա) *ըստ ՆՀԲ-ի՝*

*ազատ կացուցանել* (*Ազատել*)։ *Կացուցանել* բառահոդվածում (հ. I, էջ 1078)



*յարբունս հասանել (Աճել)*. Մովսես Խորենացու երկում (հ. I, էջ 342)<sup>29</sup>.

*հակառակ նմա վկայել (Ամբաստանիլ)*. *Ամբաստանեմ* բառահոդվածում՝ «յն. հակառակ վկայեն» հղումով (հ. I, էջ 53).

*զգենուլ զամօթ (Ամաչել)*. *Ամօթ* և *Զգենում* բառահոդվածներում՝ վերջինում առանձնացնելով «նմանությանմբ ասուի» նշումով (հ. I, էջք 77, 727).

*բոցակեզ առնել (Այրել)*. «Հարանց վարք»-ում, Արիստոտելի երկերի թարգմանություններում (հ. I, էջ 509)<sup>30</sup>.

*այց ելանել (Այց առնել)*. *յայց ելանել* տարբերակով Ագաթանգեղոսի և Գրիգոր Նարեկացու երկերում (հ. I, էջ 100).

*աղեխարշ լինիլ (Գութ)*. Ճառընտիրներում (հ. I, էջ 39).

*դարանակալս դնել շուրջ, ի դարան մտանել (Դարանել)*. *Դարանակալ* («Եղին դարանակալս շուրջ զգարաս») և *Դարան* բառահոդվածներում («Ի դարան մտեալ») (հ. I, էջ 603).

*զտավիդ հարկանել (Երգել)*. *Տավիդ* բառահոդվածում՝ «Զաստուածաբարբառ տաւիդն հարկանելով դաւիթ» բնագրային օրինակում (հ. II, էջ 860).

*ահ պատել զնա, ահիւ տազնապել (Երկնչիլ)*. *Ահ* բառահոդվածում (հ. I, էջ28).

*զգէն զգեցուցանել (Զինել)*. Մամվել Կամրջաձորեցու երկում (հ. I, էջ 727).

*տեսուչ լինել, հոգաբարձ լինել (Խնամել)*. «Յաճախապատում»-ում, Եվսեբիոս Կեսարացու, Եփրեմ Խորի երկերում (հ. II, էջք 870, 110). բնագրային օրինակներով վկայվում է նաև *այց առնել*-ի, *այցելու լինել*-ի «խնամարկել» նշանակությունը (հ. I, էջ 100).

*վեհերոտ լինել (Օուլանալ)*. «յն. փո՛յթ լեր» մեկնությամբ՝ Կյուրեղ Երուսաղեմացու երկում (հ. I, էջ 800).

*շեղջս կուտել (Կուտել)*. Փավստոս Բուզանդի երկում (հ. II, էջ 475).

<sup>29</sup> Հիշատակում է նաև Ստ. Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. I, էջ 255):

<sup>30</sup> Նշում է նաև Ստ. Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. I, էջ 389):

*հանել ի նմանէ (Կողոպտել)*. «Բանս հանել ի նմանէ» բնագրային օրինակում «կորզել» նշանակությամբ (հ. II, էջ 45).

*ծայրաքաղ առնել (Կրճատել)*. Աթանաս հայրապետի աստվածաբանական ճառերում (հ. I, էջ 1006).

*կայուն առնել (Հաստատել)*. Ներսես Շնորհալու երկում (հ. I, էջ 1046).

*ի բաց խզել (Հատանել)*. Հովհաննես Դրասխանակերտցու երկում, «Գիրք պիտոյից»-ում (հ. I, էջ 942): Հարկ է նաև հավելել հետևյալ բնագրային օրինակը՝ «...մինչ կարաց զբուն հարագատ ամուսնին սեր ի բաց խզել, և զեղարն յինքն գրաւել»<sup>31</sup>.

*կիցս ընկենուլ (Հարկանել)*. «աքացել, ոտիւք հարկանել» նըշանակությամբ (հ. I, էջ 1101):

*համարձակ լինել, աներկիր զնալ (Համարձակել)*. Հովհաննես Դրասխանակերտցու երկում և «Գիրք պիտոյից»-ում (հ. II, էջ 23. հ. I, էջ 141).

*զարտուղի երթալ (Հեստել)*. *Զարտուղի* բառահոդվածում՝ Դավիթ Անհաղթի ճառերի մեկնության մեջ (հ. I, էջ 722).

*ծանօթ լինել (Ճանաչել)*. Հովհաննես Դրասխանակերտցու, Բարսեղ Կեսարացու երկերում (հ. I, էջ 1010).

*մեկուսի լինել (Մեկուսանալ)*. *ի մեկուսի լինել* տարբերակով՝ Բարսեղ Կեսարացու երկերում (հ. II, էջ 245).

*զհետ երթալ խորհրդոց նորա (Միաբանել)*. *զհետ երթալ*-ը և «հետևիլ. զկնի երթալ. յարիլ և անսալ» նշանակություններն են առկա *Զհետ* բառահոդվածում (հ. I, էջ 738):

«Եթէ առաւել իցէ» նշումով *խճողել զորովայն\** (*Յազել*). Բարսեղ Կեսարացու երկերում (հ. I, էջ 948).

*յաղթուկ լինել (Յաղթել)*. Բարսեղ Կեսարացու՝ սաղմոսների մեկնություններում, Հովհան Ոսկերեբանի երկում (հ. II, էջ 317).

<sup>31</sup> Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 388:

\* Առկա է նաև *Ուտել* հենաբառով ՆԲՇ-ում «(եթէ զորովայն իցէ)» նշումով (ՄՄՁ 6762, 120բ. 566(1), 265ա):

*սաղմն առնել (Յղանալ)*. *սաղմն առնուլ*-ը հղվում է *սաղմնառնել* բային (հ. II, էջ 690).

*վիշտ հասուցանել (Նեղել, Չարչարել)*. Եվսեբիոս Կեսարացու քրոնիկոնում (հ. II, էջ 824).

*արձակել ի մեղաց (Ներել)*. «ազատել» նշանակությամբ (հ. I, էջ 366).

*ուրաստ լինել (Ուրանալ)*. *յուրաստ լինել* տարբերակով (հ. II, էջ 559).

*պատնէշ կանգնիլ (Պատել)*. *Պատնէշ* բառահոդվածում «Առաւել վարի ընդ բայիցս Ածել, Արկանել, Կանգնել, Պատել» նշումով՝ բնագրային օրինակը վկայելով Եղիշէի երկից (հ. II, էջ 616).

*յառաջ առնուլ զճակատն, զգօրս գումարել, էլանել ի վերայ նոցա, յառաջ կացուցանել զնահատակսն, ի վերայ հարձակել\** (*Պատերազմել*). համապատասխանաբար՝ *Յառաջ* (հ. II, էջ 331), *Գումարեմ* բառահոդվածներում՝ պատմիչների երկերում (հ. I, էջ 579), *Մերկանդամ* բառահոդվածում՝ Եփրեմ Խուրի երկերում (հ. II, էջ 255), *Նահատակ* բառահոդվածում (հ. II, էջ 403), *Սրատես* բառահոդվածում «հարձակվել» նշանակությամբ (հ. II, էջ 757).

*պատուհասակից լինել (Պատժել)*. «կրել զնոյն պատուհաս. պատժակից լինել» իմաստով՝ Ներսես Լամբրոնացու մեկնություններում (հ. II, էջ 626).

*զէնս ընթանալ*<sup>32</sup>, *ձիարձակ արշաւել (Պատրաստել)*. համապատասխանաբար՝ *Ընթանամ* և *Ձիարձակ* բառահոդվածներում (հ. I, էջ 776. հ. II, էջ 157).

*փութոյ պնտութեամբ կատարել (Ջանալ)*. *Պնդութիւն* բառահոդվածում *փութոյ պնդութեամբ* տարբերակով՝ Եվսեբիոս Կեսարացու երկում (հ. II, էջ 658).

*ջատագով լինել*, (եթէ հարմար իցէ բանին դիր ևս) *զհրաւունս նոցա ցուցանել (Ջատագովել)*. Գրիգոր Աստվածաբանի ճառերում

\* ՆՀԲ-ն *մակավագիկ առնել*-ը քացատրում է *ի վերայ հարձակիլ* (հ. II, էջ 193):

<sup>32</sup> ՄՆԲԲ-ն արձանագրում է «Ձէնքի դիմել, զէնք բարձրացնել» իմաստով (հ. II, էջ 23):

(հ. II, էջ 671) և Հովհան Ոսկեբերանի մեկնություններում (հ. I, էջ 873).

*արկանել ի բերան սրոյ (Սպանանել)*. «Գիրք պիտոյից»-ում (հ. I, էջ 482).

*սովոր լինել (Սովորի)*. *Սովոր* բառահոդվածում (հ. II, էջ 729).

*յոչնչէ գոյացուցանել (Ստեղծանել)*. Եղիշեի երկում («Որ յոչնչէ գոյացուցեր գերկինս և գերկիր անել») և «Շարակնոց» ժողովածուում (հ. II, էջ 517).

(Եթէ վարումն իրաց դնի ևս) *ի գործ ածել (Վարի)*. «ի գործ դնել. առնել. գործականել» իմաստով (հ. I, էջ 574).

*վարձու տալ (Վճարել)*. *ի վարձու տալ* տարբերակով և «վարձել» իմաստով (հ. II, էջ 795).

*ի փորձ մտանել (Փորձել)*. Գանձք կամ Քարոզք կոչվող ժողովածուներում, Կյուրեղ Երուսաղեմացու երկում (հ. II, էջ 955).

*անձուկ ունել*<sup>33</sup> (*Յանկալ*). «Անձուկ յոյժ ունիմ» բնագրային օրինակով (հ. I, էջ 196).

*ցունց տալ (Ցնցել)*. ՆՀԲ-ն վկայում է երկու անգամ՝ առաջին դեպքում նշելով՝ «որ և ՑՆՑԵԼ. Ռամկօրէն ևեթ ասին. որպէս Շարժլէլ և թօթափել», երկրորդ բնագրային օրինակի համար արձանագրելով՝ «Այս մատեան եհաս ի մեր ձեռս մօտ յաւարտ տպագրութեան գործոյս» (հ. I, էջ 11, հ. II, էջք 917, 1059).

*հիմնայատակ առնել (Քակել)*. Ջենոբ Գլակի երկից միակ բնագրային օրինակում (հ. II, էջ 97).

*օգնական լինել, յօգնութիւն ժամանել, ձեռնտու լինել, նրպաստ լինել, օժանդակ լինել, զօրաւիզ լինել (Օգնել)*. համապատասխանաբար՝ Խոսրովիկ թարգմանչի (հ. II, էջ 1020), Մովսես Խորենացու երկերում (ն. տ.), Աստվածաշնչում և «Հաճախապատում»-ում (հ. II, էջ 154. հ. I, էջ 756), Հովհան Ոսկեբերանի (հ. II, էջ 453), նաև Մովսես Խորենացու, Հովհաննէս Դրասխանակերտցու, Ներսէս Լամբրոնացու երկերում (հ. II, էջ 1024).

<sup>33</sup> ՄՀԲ-ն նշում է «փափագել, կարօտել» իմաստով (հ. I, էջ 148):

բ) ըստ ԳԴԲ-ի՝

*յանգ հանել (Աւարտել)*. «աւարտել, վերջացնել» նշանակությամբ՝ Թովմա Արծրունու երկում (էջ 205).

*ի բարկութիւն բրդել (Բարկանալ)*. «տե՛ս *ի բարկութիւն շարժել*» հղումով՝ Արիստակէս Լաստիվերտցու Պատմությունից միակ բնագրային օրինակում (էջ 108).

*ի գոյ ածել (Էացուցանել, Ստեղծանել)*. Եզնիկ Կողբացու երկից միակ բնագրային օրինակում (էջ 115).

*խորասոյգ առնել (Ընկղմել)*. Ստեփանոս Տարոնեցու երկում (էջ 150).

*ողբս առնել, յարտասուս հարկանել (Լալ)*. «ողբալ, արտասուք թափել, արտասուել» իմաստով՝ Արիստակէս Լաստիվերտցու, Եղիշեի, Ղազար Փարպեցու երկերում (էջք 228, 210).

*խաղաղութիւն առնել (Խաղաղել)*. «խաղաղութիւն հաստատել, խաղաղեցնել» իմաստով՝ Սեբեոսի, Անանիա Նարեկացու երկերում (էջ 145).

*հոգ ածել, վերակացու լինել (Ինամել)*. համապատասխանաբար՝ Հովհաննէս Դրասխանակերտցու Պատմության մեջ, «պաշտպանել» նշանակությամբ՝ «Դասական գրաբարի հատընտիր»-ում (էջք 179, 258).

*ի վերայ հասանել (Խորհել, Յարձակիլ)*. «հասկանալ, ըմբռնել» իմաստով՝ Կորյունի, Մովսէս Խորենացու, Սեբեոսի, «յարձակուել» նշանակությամբ՝ Եզնիկ Կողբացու, Մովսէս Խորենացու երկերում (էջ 137).

*հրաման տալ, պատուէր տալ (Հրամայել)*. Եղիշեի, Սեբեոսի, Ուխտանէս եպիսկոպոսի, Արտավազդ Վանահայր Երաշխավորի երկերում (էջք 181, 242).

*խրատ տալ (Յորդորել)*. Մովսէս Խորենացու Պատմության մեջ (էջ 153).

*լուռ կալ (Պապանձիլ)*. Եղիշեի երկում (էջք 143, 49).

*ահ արկանել (Սպառնալ)*. Եղիշեի, Թովմա Արծրունու, Արտավազդ Վանահայր Երաշխավորի երկերում (էջ 22).

*պատիւ դնել (Փառաւորել)*. «մեծարել» նշանակությամբ՝ Խոսրովի թարգմանչի երկում (էջ 241): Հարկ է ներկայացնել նաև *պատիւ դնել*-ի աստվածաշնչյան վկայությունները՝ «... եւ ոչ գիտաց պատիւ դնել արանց եւ մեծարել զերեսս նոցա» (Յբ 34:19)<sup>34</sup>: Այն արձանագրել են նաև Հակոբ Վիլյոտը՝ *Dignari aliquem honore* բառահոդվածում նշելով *պատիւ դնել նմա*-ն<sup>35</sup>, Գաբրիել Ավետիքյանը («Ընդդէմ սուտ առաքելոց այնպիսեաւ խոհականութեամբ վարել զիր ջատագովութիւն, մինչ զի յաւէտ իւրոց գործակցացն և պաշտաման պատիւ դնել՝ քան իւրում անձինն»)<sup>36</sup>, Հարություն Ավգերյանը՝ *Դնել* բառահոդվածում<sup>37</sup>: ՆՀԲ-ն վկայում է «պատուել» նշանակությամբ *պատիւ առնել*-ը (հ. II, էջ 611).

*հետաքրքիր լինել, հարց ու փորձ առնել (Քննել)*. միայն Հովհաննես Դրասխանակերտցու երկում (էջք 177, 175).

*ի թիկունս հասանել (Օգնել)*. Ագաթանգեղոսի երկում «օգնութեան գալ՝ հասնել» իմաստով (էջ 118):

### *Հայ մատենագրության բնագրային օրինակներով վկայվող ԴՄ-ներ*<sup>38</sup>

*ընդ հուր անցուցանել (Այրել)*. վկայում է Ստեփաննոս Ազունցը («Իսկ հմայք և դիւթութիւնք, և զուստերս և զդստերս իւրեանց ընդ հուր անցուցանել ի պատիւ բահաղու, որպէս գործք բարեպաշտութեան էին առ նոսա»)<sup>39</sup>, հետագայում՝ Մանվել Զախջախյանը *Անցուցանեմ* բառահոդվածում՝ նաև «այրել» նշանակությամբ (ՋԲ, էջ 162).

<sup>34</sup> Համարաբար գրաբար Աստվածաշնչի, էջ 1519:

<sup>35</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 230. նաև՝ էջք 194, 219, 220:

<sup>36</sup> Մեկնութիւն չորեքսասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. II, էջ 4:

<sup>37</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 194: Տե՛ս նաև՝ Բառարան հայերէն եւ անգղիական, հ. Բ., էջ 174:

<sup>38</sup> Սկզբում տրվում են հայ մատենագրության մեջ հանդիպող բնագրային, այնուհետև բառարաններում առկա օրինակները, եթե այդպիսիք կան:

<sup>39</sup> Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ սուրբ գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ Ստեփաննոսի վրդ. Ազունց, հ. Գ., Վենետիկ, 1819, էջ 292:

*յետս նահանջել (Արգելուլ)*. առկա է Գաբրիել Ավետիքյանի աշխատասիրությամբ հրատարակված երկում («...զի կարող էք հոգուվն սրբով նուաճել, կամ յետս նահանջել զձգումն նոցա»)՝<sup>40</sup> և Միքայել Չամչանցի՝ սաղմոսների մեկնության մեջ («... ո՛վ կարասցէ լինել իսփան՝ յետս նահանջել զմեզ ի բարեաց...», «... որ վշտալիս առնելով զանցաւորս՝ փութայ յետս նահանջել զմեզ յայնցանէ»)՝<sup>41</sup>: Այն հիշատակում են Մանվել Զախջախյանը *Ձղջաւ* (ԶԲ, էջ 512) և Հարություն Ավգերյանը *Démouvoir* բառահոդվածներում (««Յետս նահանջել» կասեցուցանել. շրջել զմիտս»)՝<sup>42</sup>: Վկայվում է նաև Եզնիկ Կողբացու երկից «վանել, յետ մղել, մերժել» նշանակությամբ *յետս հարկանել*-ը (ԳԴԲ, էջ 212).

*բրօք հարկանել (Գանել)*. գործածել է Մկրտիչ Ավգերյանը («Յայնժամ ևս առաւել բարկացեալ վաղերիոս՝ հրամայեաց դալար բրօք հարկանել զնա սաստիկ յոյժ»)՝<sup>43</sup>, «... և միանգամայն դալար բրօք հարկանել զթիկունս և զվկանունսն»)՝<sup>44</sup>.

*միաւորել ընդ նմա (Կցել)*. առկա է Ներսես Լամբրոնացու երկում («Վասն այսորիկ եթէ խորհեսցի ոք ի մենջ առ Աստուած հայել, և ըստ կարողութեան միաւորել ընդ նմա, պարտ է նախ գալըն հոգւոյ, այսինքն զմիտս, յաշխարհական իրաց յետս դարձուցանել...»)՝<sup>45</sup>.

*անշարժ պահել (Հաստատել)*. գործածել են Ներսես Շնորհալին («Հարկ եղև սրբոց հարցն՝ մարտնչել ընդ նոսա, և զճշմարտութեան հաւատն՝ որ յառաքելոցն, անշարժ պահել»)՝<sup>46</sup>, «Սուրբ գեկե-

<sup>40</sup>Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. II, էջ 436:

<sup>41</sup>Մեկնութիւն սաղմոսաց Յօրինեալ ի Միքայել վարդապետէ Չամչեանց, հ. Գ, էջք 340, 650:

<sup>42</sup>Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, էջ 203:

<sup>43</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Ը., 1813, Վենետիկ, էջ 162:

<sup>44</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Բ., 1811, Վենետիկ, էջ 434:

<sup>45</sup>Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 230:

<sup>46</sup>Գիրք որ կոչի ընդհանրական Արարեալ Սրբազնասուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսէսի Շնորհալոյ, Մանկտպետրբուրգ, 1788, էջ 164:

ղեցիս անշարժ պահել յաւեժ»<sup>47</sup>), Մկրտիչ Ավգերյանը («... որ կարողն է անշարժ պահել զիս ի ճշմարիտ խոստովանութեան»)՝<sup>48</sup> Մանվել Ջախջախյանը՝ *անշարժ պահել*-ը նշում է *Պինդ* բառահոդվածում (ՋԲ, էջ 1198)։

*հլու լինել* (*Հնագանդել*). առկա է Ղուկաս Ինճիճյանի աշխատության մեջ (...ուսուցանեին թէ չէ՛ պարտ հլու լինել կաթողիկոսին)<sup>49</sup>։

*մնալ ի թաքստի* (*Ղողի*). հիշատակվում է Իսահակ Անկյուրացու վիպասանության մեջ («...իսկ զի՞նչ պարտ է ասել զերկնաւոր դատաւորէն. քանի՞ անարկու չիցէ դատաստան նորին. յորմէ չկարէ ինչ մնալ ի թաքստի և ի ծածուկ»)՝<sup>50</sup>։ Մանվել Ջախջախյանն արձանագրում է *Թաքուստ* բառահոդվածում (ՋԲ, էջ 566)։

*ի թագստի մնալ*\* (*Թագչի*). ՄՀԲԲ-ն արձանագրում է գրաբարում «ծածուկ ապրել. պահուրտել», «պահ մտնել, թաք կենալ» նշանակություններով արձանագրված *թաքստեան*//*ի թաքստեան լինել*, *ի թաքուստ մտանել* տարբերակները (հ. II, էջ93)։

*հանել ի ձեռաց* (*Մերժել*). կիրառում են Մկրտիչ Ավգերյանը («... բայց խղճէին հանել ի ձեռաց գիշատակեալն ի մեծէն բարսղէ այնպիսի գովութեամբ»)՝<sup>51</sup>, Հարություն Ավգերյանը և Մանվել Ջախջախյանը երկլեզվյան բառարաններում՝ համապատասխանաբար՝ *To Wrest* բառահոդվածում առադրելով *խլել*, *հափշտակել* բայերը<sup>52</sup>, և *Far man bassa* բառահոդվածում *հանել ի ձեռաց*-ին հավելելով՝ «թոյլ տալ հափշտակել օտարին, կորուսանել զառիթն»<sup>53</sup>։

<sup>47</sup>Տեառն Ներսեսի Ծնորհալոյ հայոց կաթողիկոսի Բանք Չափաւ, Վենետիկ, 1830, էջ 412։

<sup>48</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Դ., էջ 412։

<sup>49</sup>Ստորագրութիւն հին Հայաստանեայց տեառն Հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան, Վենետիկ, 1822, էջ 245։

<sup>50</sup>Յովսէփայ գեղեցկի գրոյցք ընդ Ասանթթայ ամուսնոյ իւրոյ Յօրինեալ տեառն Իսահակայ ծ. վրդ. Անկիւրացոյ, Յերուսաղէմ, 1849, էջ 227։

\* Ըստ ՆՀԲ-ի՝ Ա. Լաստիվերցցին գործածում է *ի թաքստի լինել*-ը (հ. I, էջ 803)։

<sup>51</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Դ., էջ 354։

<sup>52</sup>Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 973։

<sup>53</sup>Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 445։



*մտերիմ լինել (Միաբանել)*. գործածում է Մկրտիչ Ավգերյանը («Լուսաբ բարի համբաւ զքէն պատուականդ ի զօրագլուխս մեր սարգիսէ յաղագս մտերիմ լինելոյ ի թագաւորութեանս մերում ...»)՝<sup>54</sup> Մանվել Չախչախյանը այդպէս է բացատրում *մտերմանամ* բայը (ՋԲ, էջ 1005)։

*ներող լինել (Ներել)*. օրինակը Մկրտիչ Ավգերյանի աշխատասիրած գրքից է՝ «Եւ զայս գիտեա՛, զի ինքնակալացդ առաւել ա՛նկ է ներող լինել անիրաւութեանց»<sup>55</sup>։ Արձանագրում է նաև Ստեփան Սալխապանցը՝ առաջարկելով երկիմաստություններից խուսափելու համար նախադասության մեջ փոփոխել բառերի դասավորությունը և իբրև օրինակ նշում *ներող լինել*-ը<sup>56</sup>։

*պակաս գտանել (Պակասիլ)*. վկայվում է «Սովերք հայկական»-ում («... այլ ոչ եւս կարծիս ունիմ պակաս գտանել առանց լիութեան, այլ լի և անթերի»)՝<sup>57</sup>։ Ինչ վերաբերում է *պակաս գտանիլ*-ին, այն արձանագրում են ՆՀԲ-ն (*Ճանապարհորդեմ, Յառաջաբերեմ, Յառաջագայիմ, Յառաջանամ, Յառաջատեմ, Յառաջեմ, Պակասեմ* բառահոդվածների բացատրություններում. հ. II, էջք 170, 332, 335, 336, 337, 584) և Մանվել Չախչախյանը երեքլեզվյան բառարանում՝ *Cedere* բառահոդվածում<sup>58</sup>։

*յառաջ խաղալ (Պատրաստել)*. գործածում է Փավստոս Բուզանդը («Եւ տայր հրաման յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից»)՝<sup>59</sup> արձանագրում են Հարություն Ավգերյանը երկլեզվյան և երեքլեզվյան բառարաններում (*To Come, To Go, To Progress, To Put, To Run* և *Avancer, Defluer, Pousser*,

<sup>54</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Բ., էջ 17:

<sup>55</sup>Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Գ., Վենետիկ, 1812, էջ 231:

<sup>56</sup>Գրաբարի համաձայնութիւնը, կազմեց Սո. Մալխասեանց, Թիֆլիս, 1892, էջ 166:

<sup>57</sup>Սովերք հայկականք, ԺԲ, Վենետիկ, 1854, էջ 31:

<sup>58</sup>Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 156:

<sup>59</sup><http://concordance.am/article/36>.

*Procéder* բառահոդվածներում)<sup>60</sup>, և Մանվել Ջախջախյանը իտալերեն *innoltrarsi, avanzare* բառերն իբրև «առաջանալ» բացատրելիս (ՋԲ, էջ 1024): ԴՄ-ն հետաքրքիր է կիրառում Խաչատուր Մյուրմեյանը՝ «Գիտել պա՛րտ է, զի ի նահանջ ամին ի մարտի առաջին աւուրն սկսանի յառաջ խաղալ թիւ մի յետադարձ շարժմամբ...»<sup>61</sup>.

*երանելի առնել (Պսակել)*. առադրվել է *փառաւորել, մեծացուցանել, բարձրացուցանել* բայերին. առկա է Աստվածաշնչում («Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ, երանելի առնէ զնա»<sup>62</sup>, «Անտիոքոս ... սկսաւ ո՛չ միայն բանիք մխիթարութիւն հատուցանել, այլև արդեամբք հաստատել՝ ի մեծութիւնս յաւագութիւնս հասուցանել, երանելի՛ առնել յաշխարհի»<sup>63</sup>): Այն գործածում են Մկրտիչ Ավգերյանը («... սկսաւ ո՛չ միայն բանիք մխիթարութիւն մատուցանել, այլև երդմամբ հաստատել՝ ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցանել, երանելի առնել յիսուսի. գործ ի ձեռն տալ, և բարեկամ անուանել թագաւորաց...»)<sup>64</sup>, Մանվել Ջախջախյանը և Աղեքսանդր Խոնդարաշյանը՝ համապատասխանաբար "Beatificare, dar la beatitudine" (ՋԲ, էջ 456) և "сдѣлать блаженнымъ" արտահայտությունները թարգմանելիս (ԽԲՀՌ, հ. I, էջ 354).

*ռոճիկ տալ. ուտեստ տալ (Մնուցանել)*. վկայությունները հետևյալներն են՝ «Մատթէոս պատրիարքը... խոստացաւ չքաւորներին նմանապէս ռոճիկ տալ և օգնել դրամով»<sup>65</sup>, «Սովելոյ ուտեստ տալ, եթէ մերկ լինի զգեստ տալ ...»<sup>66</sup>: Այս ԴՄ-ները «սնուցանել» նշանակությամբ չկան բառարաններում.

<sup>60</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջք 164, 393, 676, 689, 742: Բառգիրք ի գաղղիականէ ի հայ եւ ի տաճիկ բարբառս, էջք 32-33, 196, 330, 360:

<sup>61</sup> Տօմարագիտութիւն ընդհանուր եկեղեցական եւ քաղաքական, աշխատ. Ն. Խաչատուր վրդ. Միւրմեյան, Վենետիկ, 1818, էջ 19:

<sup>62</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 602:

<sup>63</sup> Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց, հ. II, Վենետիկ, 1805, էջ 629:

<sup>64</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Դ., Վենետիկ, 1813, էջ 392:

<sup>65</sup> Փորձ ազգային եւ գրական եռամսյա հանդէս, թիվ II, Տփլիս, 1876, էջ 175:

<sup>66</sup> Տեղեկագիր Սովելոց խնամատար կեդրոնական յանձնաժողովոյ, 1885, էջ 89:

*սովորութիւն ունել (Սովորիլ)\**. գործածում է Մովսէս Խորենացին Պատմության երկրորդ գրքում («Բայց ասէն զԵրուանդայ ըստ հմայից դժնէայ գոլով ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի վէմն որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, եւ ի հայեցուածոցն դժնութենէ, ասէն, պայթել որձաքար վիմացն»)՝<sup>67</sup>.

*հրամանատար լինել, զիշխանութիւն վարել (Տիրել)*. առաջինը կիրառում են Միքայել Չամչանցը («...եւ նմա զշուք հագարապետութեան հայոց՝ հրամանատար լինել աշխարհին»)՝<sup>68</sup>, Ստեփանոս Սյունեցին («...ն հրամայէ Սիսականացն հրամանատար լինել ի վերայ ամենայն արքունի զօրացն ...»)՝<sup>69</sup>, Հարություն Ավգերյանը (*To Sway* բառահոդվածում՝ առադրելով *տիրել, իշխել, կառավարել* բայերին)<sup>70</sup>: Երկուսն էլ առկա են Հովհան Ռսկեբերանի երկում («Իսկ արդ որոյ գտունն չիցէ բարոք կարգեալ, զիս ըդ կարիցէ եկեղեցոյ աստուծոյ հրամանատար լինել», «...զՄովսիսէ ասէն, ուր կարի դժուարինն է զիշխանութիւն վարել»)՝<sup>71</sup>.

*հանել զմորթն (Քերթել)*. հիշատակում են Մովսէս Կաղանկատվացին<sup>72</sup>, Մխիթար Սեբաստացին («...կամ ի բաց քերել, կամ մորթել, որ է հանել զմորթն. ռամկ. ևս՝ *քերթել*». ԲՀԼ, էջ 1221

\* ՄՄՁ 566(I)-ում *Սովոր* հենարառն է (270 բ):

<sup>67</sup> Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 167-168:

<sup>68</sup> Խրախճան պատմութեան Հայոց, յօրինեալ ի Հայր Միքայել վրդ. չամչեանց, Վենետիկ, 1811, էջ 81:

<sup>69</sup> Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 9:

<sup>70</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 878:

<sup>71</sup> Յովհաննու Ռսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թրթոց Պաւղոսի, հ. I, Վենետիկ, 1862, էջք 81, 486:

<sup>72</sup> [http://language.sci.am/sites/default/files/movses\\_kaghankatvatsi.pdf](http://language.sci.am/sites/default/files/movses_kaghankatvatsi.pdf)

(1288)), Հարություն Ավգերյանը *Excorier*<sup>73</sup>, ՆՀԲ-ն *Յազեմ* (հ. II, էջ 313)<sup>74</sup>, ՋԲ-ն *Հանել* բառահոդվածներում (էջ 840)։

*ի քննութիւն մտանել (Քննել)*։ վկայում են Ստեփաննոս Ագոնցը («... զի ժամանակն և տեղին չէին ի դէպ՝ երկար հարցփորձի ի քննութիւն մտանել...») <sup>75</sup>, Վազգեն Համբարձումյանը «Ջամբը» երկի բառապաշարը քննելիս<sup>76</sup>։

Վկայվածների նմանությամբ բաղադրված ԴՄ-ներ<sup>77</sup>

*նկուն լինել (Ամաչել)*։ ԳԴԲ-ն Աստվածաշնչից արձանագրում է *նկուն առնել* տարբերակը՝ «ընկձել, ենթարկել» նշանակությամբ (էջ 221)։

*հուրք ծախել\* (Այրել)*։ վկայվում է *հուրք վառել* «կրակ տալ, հրդեհել, հրկիզել» (ԳԴԲ, էջ 181), «լափել. սաստակել. կորուսանել» նշանակություններով ունի *հուր* կամ *հրով ծախել* (ՆՀԲ, հ. I, էջ 999)։

նույն ՆԲԾ-ից՝ *հրդեհ արկանել. հուր արկանել* «հրդեհել, հրկիզել» (ԳԴԲ, էջ 180)։ ՄՀԲԲ-ն արձանագրում է *հրդեհ ձգել*-ը (հ. III, էջ 150), ՀԼԴԲ-ն՝ *հրդեհ գցել*-ը «հրդեհել, կրակ տալ, այրել» նշանակությամբ (էջ 373)։

<sup>73</sup> Բառարան համառոտ ի գաղղիական է հայս, հ. I, էջ 199: Բառգիրք ի գաղղիական ի հայ է ի տաճիկ բարբառս, էջ 290:

<sup>74</sup> ՆՀԲ-ում Ե. Կողբացուց քաղված բնագրային օրինակից հետո նշվում է. «(ըստ այսմ թուի յազել լծ. ընդ թ. *եխիզմէք, ոլորել զպարանոցն*, կամ *մորթել*, այսինքն *հանել զմորթն...*)»։ ՆՀԲ, անդ։

<sup>75</sup> Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ սուրբ գրոց, հ. Բ., Վենետիկ, 1819, էջ 435:

<sup>76</sup> [http://echmiadzin.asj-oa.am/2160/1/%23Jamb-P\\_42-54.pdf](http://echmiadzin.asj-oa.am/2160/1/%23Jamb-P_42-54.pdf)

<sup>77</sup> Սույն դասակարգմամբ առանձնացվում են այն ԴՄ-ները, որոնք բառարաններում կամ մատենագրության մեջ վկայվում են բաղադրիչների այլ տարբերակներով, կարելի է ասել՝ առկա ԴՄ-ների նմանությամբ (երբեմն նկատելի է նաև իմաստային այլ նրբերանգ)։ սկզբում նշվում են ՋԲ-ներում, այնուհետև բառարաններում կամ մատենագրության մեջ առկա տարբերակները։

\* ՄՀԲԲ-ն վկայում է *ծախել*-ի նաև «ոչնչացնել» իմաստը (հ. II, էջ 317)։

*արգելուլ ի քանտի (Բանտ)*. ՆՀԲ-ն *Արգելուլ* բառահոդվածում հիշատակում է *դնել ի քանտի*-ն (հ. I, էջ 345)։

*պատճառ կցկցել. պատճառ տալ (Բասրի)*. ՆՀԲ-ն *պատճառըս յօղել*-ը վկայում է Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու երկերից (հ. II, էջ 379)՝ երկրորդի համար նշելով՝ «Ըստ յն. ոճոյ նաս Պատճառս դնել»՝ «պատճառել» նշանակությամբ (հ. I, էջ 440)։

*քամբ առնուլ (Բռնադատի)*. վկայվում են «տիրել, իշխել» նշանակությամբ *գրքամբ ածել // արկանել*-ը (ՆՀԲ, հ. I, էջ 512)<sup>78</sup>։

*դաշնադիր լինել (Դաշն)*. Աստվածաշնչից, Մովսես Խորենացու Պատմությունից արձանագրվում է «դաշնակից դառնալ, դաշնակցել, միաբանել» նշանակությամբ *դաշնավոր լինել*-ը (ԳԴԲ, էջ 66)։

*փոյթ ընդ փոյթ գնալ (Երագել)*. ՆՀԲ-ն *Փոյթ* բառահոդվածում հիշատակում է Մովսես Խորենացու Պատմության մեջ առկա *փոյթ ընդ փոյթ հասուցանել* տարբերակը (հ. II, էջ 953)։

*գքարի հարկանել (Զարկանել)*. վկայվում է *հարկանիցէ քարի*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 994)։

*անդնդասոյգ առնել (Ընկդմել)*. ՆՀԲ-ն ունի *անդնդասոյգ լինել*, որը տարբերվում է նաև իմաստային նրբերանգով՝ «սուզեալ յանդունդս. ծովահեղձ. \*Եգիպտացին անդնդասոյգ լինէր» (հ. I, էջ 134)։

*պահել ի թագստեան (Թագուցանել)*. ՆՀԲ-ում՝ *Թաքուստ* բառահոդվածում, հիշատակվում են *թաքչիլ ի թագստեան, նստել ի թագստեան* տարբերակները (հ. I, էջ 803)։

*լռութիւն տալ (Թագուցանել)*. կարելի է ենթադրել, որ առկա է սխալագրություն, և խոսքը վերաբերում է «լռել» նշանակությամբ (փոխաբերական նշանակությամբ՝ «թաքցնել») *ի լռութեան կալ* կազմությանը, որ վկայում են Աստվածաշունչը («ոչ ճոխաբան լինեն քան զայրմարդ, այլ ի լռութեան կալ»։ Ա Տմ 2:12)<sup>79</sup> և Ման-

<sup>78</sup> «Իւր ձեռքը գցել, նուաճել, հնազանդեցնել» նշանակությամբ արձանագրում է նաև ՄՀԲԲ-ն (տե՛ս հ. I, էջ 392)։

<sup>79</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 839։

վել Ջախջախյանը (ՋԲ, էջ 643): Բայց և կարելի է այն *լռության տալ* կամ *մատնել* («որևէ բանի մասին չխոսել, որևէ բանի վրա ուշադրություն չդարձնել, անտես առնել») ԴՄ-ի նախօրինակ համարել (ՀԼԴԲ, էջ 271)<sup>80</sup>.

*թափառական շրջել (Թափառել)*. ըստ ՆՀԲ-ի՝ Փիլոն Եբրայեցու գործածած «Յանապատ վայր՝ յորում թափառականն (այսինքն թափառեալ) շրջեր» նախադասության մեջ *թափառականը* ունի «որ թափառեալ շրջի» նշանակությունը (հ. I, էջ 801)<sup>81</sup>.

*խոնարհեցուցանել զբարձու (Օռնր դնել)*. *խոնարհեցուցանել զանձն* «ինքն իրեն խոնարհ դարձնել» (ԳԴԲ, էջ 149).

*շուրջ պնդել (Կապել)*. *շուրջ պատել* «շրջապատել» (ԳԴԲ, էջ 226).

*նշուակ առնել (Կատակել)*. *նշուակ լինել* «խայտառակել» (ՆՀԲ, հ. II, էջ 437)<sup>82</sup>.

*յանկ ելանել (Կատարել)*. *յանկ ածել* «վերջ տալ, ավարտին հասցնել» (ԳԴԲ, էջ 206).

*աներկիւղ դիմել, անկասկած գնալ (Համարձակել)*. *աներկիւղ գնալ* «համարձակ գնալ», *անկասկած ի դուրս ելանել* (ՆՀԲ, հ. I, էջք 141, 170).

*ի բաց հեռանալ (Հեռանալ)*. *երթալ ի բաց* «հեռանալ» (ԳԴԲ, էջ 79).

*խստավիզ լինել (Հպարտանալ)*. ՆՀԲ-ն ունի *խստապարանոց լինել* (հ. I, էջ 988), որն առկա է Աստվածաշնչում («... բայց ես ոչ ելից ընդ ձեզ, վասն խստապարանոց լինելոյ»։ Ելք 33 : 3)<sup>83</sup>.

<sup>80</sup> Տե՛ս Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011, էջ 556:

<sup>81</sup> ՄՀԲԲ-ն արձանագրում է *թափառական* բառի մակբայական կիրառությունը՝ «Շրջում է թափառական». ՄՀԲԲ, հ. II, էջ 90:

<sup>82</sup> ՆՀԲ-ն և ՋԲ-ն *Նշուակելմ* բառաևորվածում բացատրում են «նշուակ առնել նախատանագ. առակել. առակ օրինակի կացուցանել. խայտառակել» (ՆՀԲ, հ. II, էջ 437: ՋԲ, էջ 1079):

<sup>83</sup> Համարաբար գրաբար Աստվածաշնչի, էջ 893:

*սեզ լինել (Հպարտանալ)*. *սեզ առնել* («սիգալով ճեմել») տարբերակով արձանագրվում է Գրիգոր Նարեկացու տաղերում (ՆՀԲ, հ. II, էջ 712).

*հաւատարիմ ցուցանել (Ճշմարտել)*. վկայվում են *հաւատարիմ առնել* և *հաւատարիմ լինել* տարբերակները (ՆՀԲ, հ. II, էջ 77).

*ողջակեզ առնել (Մատուցանել)*. բազմիցս վկայվում է Աստվածաշնչում<sup>84</sup>: Առկա է Աթանաս Կոստանդնուպոլսեցու թարգմանությունը հրատարակված երկում («... աստուած փորձեաց զաբրահամ, երբ հրամայեաց նմա ողջակեզ առնել զորդի իւր զիսահակ»)՝ Մխիթար Սեբաստացին արձանագրում է *ողջակեզ ընելը* (ԲՀԼՄՍ, էջ 487 (1514)), ՆՀԲ-ն՝ *ողջակեզ լինելը* (հ. II, էջ 513).

*մեկնել յամբոյս (Մեկուսանալ)*. առկա է *մեկնել յաշխարհէ* - ն՝ «մեռնել, վախճանվել» նշանակությամբ (ԳԴԲ, էջ 196).

*զպէտս հոգւոյն վճարել (Մեռանել)*. ՆՀԲ-ն արձանագրում է՝ «*Զպէտս հոգւոյն հատուցանել, կամ վճարել տեսոն, որպէս Աւանդել զոգփն...*» (հ. II, էջ 648. տե՛ս նաև ՄՀԲԲ, հ. IV, էջ 97).

նույն ՆԲԾ-ից՝ *բառնիլ յաշխարհէ* -ն վկայվում է «կյանքից զրկել, սպանել» նշանակությամբ *բառնալ ի կենացը* (ԳԴԲ, էջ 53), *զկեանս վճարելը* գործածում է XVI-XVII դդ. կրթական-լուսավորական գործիչ Ներսես Մոկացին («Իսկ որ կամեր զկեանս վճարել, Զհոգին յորդին իւր աւանդել, Տէրն, որ եկեալ էր ի խնդրել Յերկինս առ հայր դասակարգել»)՝ Հակոբ Վիլլոտն այն հիշատակում է *Tempus impendere alicui rei* բառահոդվածում<sup>87</sup>: Ըստ ՆՀԲ-ի՝ *վրճարել զկեանս* տարբերակն ունեն Մովսես Խորենացին և Եվսե-

<sup>84</sup> Տե՛ս նաև՝ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջք 1394, 1396:

<sup>85</sup> Աստուածաբանական և բարոյական մեկնություն կաթողիկեաց գրոց երանելոյ Յակոբու առաքելոյն Արարեալ և շարադրեալ ի հայր Ֆրանչեսկոս Դունելլեան, Վենետիկ, 1749, էջ 68:

<sup>86</sup> [https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:Nerses\\_Mokatsi,\\_Verses\\_\(%D5%86%D5%A5%D6%80%D5%BD%D5%A5%D5%BD\\_%D5%84%D5%B8%D5%AF%D5%A1%D6%81%D5%AB,\\_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80\).djvu/98](https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:Nerses_Mokatsi,_Verses_(%D5%86%D5%A5%D6%80%D5%BD%D5%A5%D5%BD_%D5%84%D5%B8%D5%AF%D5%A1%D6%81%D5%AB,_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80).djvu/98)

<sup>87</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 814:

բիոս Կեսարացին (հ. II, էջ 827), ըստ ԳԴԲ-ի՝ Փավստոս Բուզանդը և Հակոբ Ծպատեցին ( էջ 259)։

*ի բաց լքել (Մերժել)*։ *ի բաց լինել* «հեռանալ» (ԳԴԲ, էջ 111)։

*խօսել ի սիրտ նորա (Մխիթարել)*։ ըստ ԳԴԲ-ի՝ գրաբարում առկա է «մտածել, խորհել» նշանակությամբ *խօսել ի սրտի* տարբերակը (էջ 154)։

*յաղթող լինել (Յաղթել)*։ «յաղթող հանդիսանալ, յաղթել» նշանակությամբ արձանագրվում է *յաղթկու լինել*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 317)։

«(եթե կենդանանալ իցե դնի)» նշումով *ի մահուանէ ի կեանս փոխել (Յաննել)*։ ՆՀԲ-ն *Փոխադրութիւն* բառահոդվածում *ի մահուանէ ի կեանս առնուլ* տարբերակը հիշատակում է Աթանաս Ալեքսանդրացու աստվածաբանական ճառերից (հ. II, էջ 946)։

«եթե առ չարն իցե» նշումով *ի հրապոյրս ցոփութիւն արկանել (Յորդորել)*։ ՆՀԲ-ում՝ *Հրապոյրք* բառահոդվածում, Աստվածաշնչից հիշատակվում է *ի հրապոյրս ցոփութեան դարձուցանել*-ը (հ. II, էջ 138)։

*յերկուս ծուենս բաժանել (Պատառել)*։ Ղազար Փարպեցու ձևակերպումն է՝ «...բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուենս...»<sup>88</sup>։

*ռազմ դնել (Պատերազմել)*։ վկայվում են *ռազմ առնել* և *ռազմ գործել* տարբերակները Եղիշեի, Թովմա Արծրունու երկերից (ԳԴԲ, էջ 249)։

*զքամահանս դնել (Պարսաւել)*։ ՆՀԲ-ն ունի *քամահանս առնել*՝ «Տ. Քամահել» նշանակությամբ (հ. II, էջ 976)։ ԳԴԲ-ում «արհամարհել» իմաստով է (էջ 274)։

*պնդել զպսակ, թագիւ պճնել (Պսակել)*։ ըստ ՆՀԲ-ի՝ *պսակեալ թագիւն* և *թագով պսակեալ*-ը վկայված են X-XI դդ. (հ. I,

<sup>88</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Հայկական համաբարբառ, հ. 2, Ե., 1978, էջ 182։

<http://concordance.am/category/%D5%A3%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D6%80/%D5%B2%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80-%D6%83%D5%A1%D6%80%D5%BA%D5%A5%D6%81%D5%AB>



էջ 788): ՀԼԴԲ-ում նույն նշանակությամբ հանդիպում է *պսակ կապել*-ը (ՀԼԴԲ, էջ 503).

*հաստատել ինչ յոչնչէ (Ստեղծանել)\**. հիշատակվում է *յոչնչէ գոյացուցանել*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 517).

*զփոխարէնն տալ (Վճարել)*. ՆՀԲ-ում՝ *Փոխարէն* բառահոդվածում, Աստվածաշնչից քաղված *զփոխարէնը հատուցանել* տարբերակն է (հ. II, էջ 949)<sup>89</sup>.

նույն ՆԲՇ-ից՝ *գղարձն փոխարինէն առնել*. ՆՀԲ-ն *Դարձ* բառահոդվածում նշում է *դարձ առնել* և *դարձ փոխարինի* տարբերակները (հ. I, էջ 604-605).

*ակն արկանել (Տեսանել)*. վկայվում է *յակն արկանել*-ը՝ «բերել յանդիման աչաց այլոց» նշանակությամբ (ՆՀԲ, հ. I, էջ 24).

*հպատակ առնել (Տիրել)*. «հպատակուել» իմաստով առկա են *հպատակ լինել*-ը և *հպատակ կալ*-ը (ՆՀԲ, հ. I, էջ 125. տե՛ս նաև ԳԴԲ, էջ 181).

*արագ արագ առնել* և *տագնապալ երթալ (Փութալ)*. արձանագրվում են *արագ արագ հանել//հրամայել* (ՆՀԲ, հ. I, էջ 336), *տագնապալ գնալ* ԴՄ-ները (ՆՀԲ, հ. II, էջ 836-837):

*Տարբեր բառարաններում վկայվող ԴՄ-ներ. ա) XVIII դարում հրատարակված*<sup>90</sup>

*յաւարտ ածել (Աւարտել)*. Հակոբ Վիլլոտը հիշատակում է *Perago* բառահոդվածում<sup>91</sup>, XIX դարում կիրառում է Առաքել Կոստանյանցը («Մանուկն իբրեւ ետես ընդարձակութիւն կենացն, եթէ ի կասկածանաց երկիւղէ ազատեցաւ անձն իւր, նախ նստեալ մը-

\* ՄՄՁ 873-ում՝ *Ստեղծանել* հենաբառով ՆԲՇ-ում (214ա), *յանէից գոյացուցանել* տարբերակն է:

<sup>89</sup> ՄՀԲԲ-ն *Հատուցանել* բառահոդվածում արձանագրում է «փոխարէնը տալ, փոխարէնը մի բան անել» նշանակությունը (տե՛ս հ. III, 1944, էջ 65):

<sup>90</sup> Սկզբում տրվում են XVIII դարում, այնուհետև հետագայում հրատարակված բառարաններում և մատենագրության մեջ առկա օրինակները:

<sup>91</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 546:

տածեր յետագայ վիճակ գալոյ յիւր վերայ՝ կենացն, թէ արդեօ՞ք կարիցեն զօրն իմոյ դաշնադրութիւնս յաւարտ ածել»)՝<sup>92</sup>

*ի բաց կորզել (Հատանել)*. առկա է Հակոբ Վիլլոտի կազմած բառարանում (*Expungo*-ն թարգմանելիս)<sup>93</sup>, վկայում են Գաբրիել Ավետիքյանը («...փրկել յիշխանութենէ սատանայի՝ նշանակել, հանել ի բաց կորզել ի հեթանոսութենէ...»)<sup>94</sup>, Պլուտարքոսի «Ջուգակշիռք» երկի թարգմանիչը («...հարուածս ի վերայ դնէին՝ որ խնդրէին ի բաց կորզել զայրն»)՝<sup>95</sup>, ՆՀԲ-ն *Բրեւ, Թափեւ, Խլեւ, Շրջաբերական, Տարակորզել* (հ. I, էջք 518, 802, 946, հ. II, էջք 495, 855) և ՋԲ-ն *Թափեւ, Խառեւ, Խլեւ, Կորզեւ* բառահոդվածներում (էջք 565, 658, 675, 795)։

*հարթ առնել (Հարթել)*. Հակոբ Վիլլոտը *Acquo* բառահոդվածում հավելում է *զգետին հաւասարել, հարթել, կոկել, ողորկել* և այլ բայերի<sup>96</sup>, Մանվել Ջախջախյանը՝ հիշատակում *Հարթ* բառահոդվածում (ՋԲ, էջ 853)։

*ի բաց հերքել (Մերժել)*. Հակոբ Վիլլոտը վկայում է *Abjicio, Abjuro, Abrogo, Improbo* բառահոդվածներում<sup>97</sup>։ Բնագրային օրինակը Մկրտիչ Ավգերյանի հեղինակած գրքից է («... զօտարոտի պատմութիւնս ի բաց հերքել, զխառնուրդս ի բաց յապաւել, և զաւանդս հաստատունս պահել»)՝<sup>98</sup>։ Արձանագրում է նաև Մանվել Ջախջախյանը *Հանեւ* բառահոդվածում (ՋԲ, էջ 840)։

*ի բաց հրաժարիլ-ը (Յետս կալ)*. հիշատակում են Հակոբ Վիլլոտը *Repudiare uxorem*-ը թարգմանելիս<sup>99</sup> և Մանվել Ջախջախյանը

<sup>92</sup><http://www.matenadaran.am/ftp/data/Banber18/15.A.Makhalyan.pdf>.

<sup>93</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 291. տե՛ս նաև էջք 219, 221:

<sup>94</sup> Մեկնութիւն չորեքասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. II, էջ 737:

<sup>95</sup> Պլուտարքեայ Քերովսացոյ Ջուգակշիռք, թարգմ. ի բնագրէն Հ. Եղիայ վրդ. Թոմաճանի, հ. Ա, Վենետիկ, 1832, էջ 375: ԳԴԲ-ն վկայում է նաև «կտրել» նշանակությամբ *ի բաց հանել*-ը. տե՛ս ԳԴԲ, էջ 112:

<sup>96</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 30:

<sup>97</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 4, 6:

<sup>98</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Ձ., էջ 136:

<sup>99</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 625:

նր՝ *Ոստնուլ* բառահոդվածում *saitar fuori*- ն թարգմանելով նաև *սարսնուլ, խոյս տալ* (ՋԲ, էջ 1128)։

«(Եթե ընդ անձին իւրում)» նշումով *հաստատել ի միտս իւր* (*Ուխտել*)։ Հակոբ Վիլլոտի բառարանն այն արձանագրում է *Determinare amino* և *Prædefstinare, fecum flatuere* բառահոդվածներում<sup>100</sup>։ ԳԴԲ-ն *հաստատել ի միտս*-ը վկայում է «համոզել» նշանակությամբ (էջ 173)։

*բ) XVIII դարից հետո հրատարակված*

*ուժգին առնուլ, բոնի առնուլ* (*Բոնադատիլ*)։ Մանվել Ջախջախյանը վկայում է *Ուժգին* բառահոդվածում՝ նշելով՝ «*Ուժգին առնուլ*. այսինքն՝ *բոնի*» (ՋԲ, էջ 1137), իսկ *բոնի առնուլ*-ը՝ հիշատակում *Uncicáre* բառահոդվածում<sup>101</sup>։

*հարկանել զկիթառ* (*Երգել*)։ հիշատակում են Հարություն Ավգերյանը՝ «to play on the guitar»-ը բացատրելով «հարկանել զկիթառ»<sup>102</sup>, և Մանվել Ջախջախյանը *Citareggiáre, Citarizzáre* բառահոդվածներում<sup>103</sup>։ Նույն ՆԲԾ-ից *հարկանել զքնար*-ն արձանագրում են ՋԲ-ն *Líra. Քնար*<sup>104</sup>, *Հնչեմ* (էջ 884) և *Cantáre*<sup>105</sup>, ՆՀԲ-ն *Երգեմ* բառահոդվածներում (հ. I, էջ 672), և Մինաս Բժշկյանը՝ «на скрипкѣ играть» թարգմանելով «հարկանել զքնար»<sup>106</sup>։

*ի ձեռն արկանել* (*Ըմբոնել*)։ Մանվել Ջախջախյանը վկայում է *Սձեմ* բառահոդվածում՝ այն հավելելով *ըմբոնել*-ին (ՋԲ, էջ 13), *վտարանդի շրջել*-ը (*Թափառել*)՝ *Պանդիստիմ* (ՋԲ, էջ 1116), *լռին կալ*-ը (*Լռել*)՝ *Լռին* բառահոդվածներում (ՋԲ, էջ 643. տե՛ս նաև ՆՀԲ, հ. I, էջ 905)։ Գրաբարի տպագիր բառարանները նշում են *ձե-*

<sup>100</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 221, 572:

<sup>101</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 876:

<sup>102</sup> Քերականութիւն հայերէն եւ անգղիական, յօրինեալ ի Շ. Յարութիւն վրդ. Աւգերեան, Վէնետիկ, 1819, էջ 169:

<sup>103</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 173: Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջք 114, 123:

<sup>104</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 463:

<sup>105</sup> Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 92:

<sup>106</sup> Քերականութիւն ռուսերէն-հայերէն Մինաս վարդապետի Բժշկեան, 1828, Վէնետիկ, էջ 255:

որն արկանել, լռիկ կալ տարբերակները (ՆՀԲ, հ. I, էջք 151, 905: ԳԴԲ, էջ 185)։

*յառաջ ածել (Օնանիլ)*։ հիշատակում են Հարություն Ավգերյանը *To Produce*-ը թարգմանելիս<sup>107</sup>, Մանվել Ջախջախյանը *Generare* և *Produrre* բառահոդվածներում<sup>108</sup>։ ՆՀԲ-ն արձանագրում է Դիոնիսիոս Արիոպագացու երկում (հ. II, էջ 334)։

*անձնացոյց լինել (Հպարտանալ)*։ Մանվել Ջախջախյանը արձանագրում է երկու բառարանում՝ *Բանավաճառ* (ՋԲ, էջ 286) և *Bello, Fare, Giórgio, Ostentáre*, բառահոդվածներում՝ իտալերեն *far il Giórgio*-ն, *fare il bello*-ն թարգմանելով «*պճնապաճոյճ եղեալ սի-գալ. անձնացոյց լինել. պարծիլ*»<sup>109</sup>։

*համախոհ լինել (Միաբանել)*։ Մանվել Ջախջախյանն արձանագրում է *համախոհ լինել ումեք* տարբերակով<sup>110</sup>։ Հարություն Ավգերյանն այն կիրառում է անգլերեն *To Congrée*-ն թարգմանելիս<sup>111</sup>, ՆՀԲ-ն՝ *Հաւանիս* բառահոդվածում հիշատակում *կամակից, համախոհ լինել* (հ. II, էջ 73), Մխիթարյան միաբանության հայրերը՝ *Stand* բառահոդվածում *Stand with*-ի համար նշելով *համախոհ լինել*<sup>112</sup>։

*յղի լինել (Յղանալ)*։ վկայում են Հարություն Ավգերյանը ֆրանսերեն *Concevoir*-ը<sup>113</sup> և անգլերեն *To Breed*-ը թարգմանելիս<sup>114</sup>, ՆՀԲ-ն և Մանվել Ջախջախյանը *Յղանալ, Յղենալ* բառահոդվածներում (ՆՀԲ, հ. II, էջք 361, 362: ՋԲ, էջ 361, 362), Մխիթարյան միաբանության հայրերը *Portáre* բառահոդվածի բացատրության մեջ<sup>115</sup>։

<sup>107</sup> Բառարան անգղիարեն եւ հայերեն, հ. Ա, էջ 674:

<sup>108</sup> Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջք 294, 617:

<sup>109</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջք 101-102, 308-309, 360, 546:

<sup>110</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 309:

<sup>111</sup> Բառարան անգղիարեն եւ հայերեն, հ. Ա, էջ 1821:

<sup>112</sup> Բառարան յանգղիականէ ի հայ, հ. Ա., Վենետիկ, 1835, էջ 216:

<sup>113</sup> Բառգիրք ի գաղղիականէ ի հայ եւ ի տաճիկ բարբառս, էջ 148:

<sup>114</sup> Բառարան անգղիարեն եւ հայերեն, հ. Ա, էջ 104. տե՛ս նաև էջք 141, 393:

<sup>115</sup> Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, p. 722:

*հեռ ունել* (Նախանձել). ՋԲ-ն և ՆՀԲ-ն նշում են *Հեռամ* բառահոդվածի բացատրություններում (ՋԲ, էջ 87: ՆՀԲ, հ. II, էջ 88).

*ի ներքս փակել* (Պարունակել). արձանագրում է Մանվել Ջախջախյանը *Inchiúdere* և *Inclúdere* բառահոդվածներում<sup>116</sup>.

*գտրիտուրն տալ* (Վճարել). Հարություն Ավգերյանը և Գարրիել Երեցփոխեանցն արձանագրում են երկլեզվյան բառարաններում՝ համապատասխանաբար թարգմանելով *To Rénder*-ը (*տալ գտրիտուրն տարբերակով*)<sup>117</sup> և *Отслуживать, отслужить* բայերը<sup>118</sup>: ՆՀԲ-ն Աստվածաշնչից վկայում է *տալ տրիտուր տարբերակը* (հ. II, էջ 897).

*հետազօտ լինել* (Քննել). առկա է երկլեզվյան բառարաններում՝ *Հետազօտ* բառահոդվածում՝ *Voyez Հետազօտել* և *See Հետազօտել* հղումներով<sup>119</sup>.

*տալ զօրհնություն* (*Օրհնել*). վկայում են Մանվել Ջախջախյանը՝ *Օրհնել* բառահոդվածում բացատրելով՝ «տալ զօրհնություն, բարեմաղթել» (ՋԲ, էջ 1497), և Մխիթարյան միաբանության հայրերը *Segnare* բառահոդվածում<sup>120</sup>.

*ըստ ԽԲՀՌ-ի՝*

*բուռն արկանել* (*Սկսանել*). հիշատակում է Աղեքսանդր Խուդարաշյանցը "предпріяты, вознамѣряться" առաջնային նշանակությամբ (հ. I, էջ 251): Այն, թերևս, կարելի է ԳԴԲ-ի «ձեռնարկել, սկսել» նշանակությամբ արձանագրած *ձեռն արկանել-ի* (էջ 185) նմանությամբ կազմված ԴՄ համարել<sup>121</sup>.

<sup>116</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ Ի: Հարկ է նշել՝ ՆՀԲ-ն *ի ներքս փակել*-ը վկայում է Ն. Շնորհալու երկից (ՆՀԲ, հ. II, էջ 925).

<sup>117</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 718:

<sup>118</sup> Բառարան ի ռուսաց լեզու ի հայ, աշխատ. ի Գարրիէլ Երեցփոխեանց, Տփղիս, 1876, էջ 496-497:

<sup>119</sup> Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 389: Բառարան հայերէն եւ անգղիական, հ. Բ, էջ 359:

<sup>120</sup> Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, p. 906:

<sup>121</sup> ՀԼԴԲ-ում առկա է *ձեռք գարկել*-ը ( էջ 385):

քստ ՄՇԲԲ-ի՝

*յառաջ բերել (Ասել)*։ Ստեփան Մալխասյանցը *Առաջ* բառահոդվածում *առաջ բերել* տարբերակի համար վկայում է նաև «Մէջ բերել, հիշեցնել, կրկնել» իմաստը (հ. I, էջ 216)։ ՀԼԴԲ-ն «խսկց.» նշումով վկայում է «բուծել, աճեցնել, բազմացնել», «առաջացնել» իմաստները (ՀԼԴԲ, էջ 61)։

*ի կատարած հասանել (Աւարտել)*։ ՄՇԲԲ-ն արձանագրում է գրաբարյան *ի կատարած հասուցանել* տարբերակով և «մինչև վերջը հասցնել, իսպառ ջնջել, ոչնչացնել» իմաստով (հ. II, էջ 328)։ Էդուարդ Աղայանը «վերջ, ավարտ» նշանակությամբ հազվադեպ հանդիպող *Կատար* բառահոդվածում նշում է *ի կատար ածել-ը՝* «կատարել, իրագործել, կենսագործել» նշանակությամբ (ԱՇԲԲ, էջ 700)։ ՆՇԲ-ն *Կատարած* բառահոդվածում նշում է՝ «Ի կատարած (յն. είς πότελος. որ և Ի ՍՊԱՌ)» (հ. I, էջ 1061)։

*տնագ անել (Խայտատակել)*։ ՄՇԲԲ-ն վկայում է *Տնագ* բառահոդվածում՝ նշելով՝ «Գործ է ածվում անել, գալ, տալ բայերի հետ» (հ. IV, էջ 424)։ ՀԼԴԲ-ն նշում է «Ծաղրել՝ մեկի շարժումնին կամ խոսքին նմանեցնելով» իմաստը (էջ 563)։ ՆՇԲ-ն ունի «Ոսկիփորիկ» ժողովածուից քաղված *տնագ լինել* ՀԲ-ն (հ. II, էջ 883)։

*ի գութ շարժել (Ողորմիլ)*։ ՄՇԲԲ-ն արձանագրում է *գութը շարժվել* տարբերակով և «գթալ» իմաստով (հ. I, էջ 467)։ ՀԼԴԲ-ն վկայում է *խիղճը շարժել (կամ շարժվել)*-ը՝ «Խղճահարություն, գութ արթնացնել, առաջացնել, առաջ բերել (կամ խղճահարություն, խիղճ, գութ զգալ, խղճահարվել)» նշանակությունը (էջ 287)։

*պսակառոթ<sup>122</sup> առնել (Պսակել)*։ ամենայն հավանականությամբ, կազմվել է միջին հայերենում «պսակվել» նշանակությամբ վկայված *պսակ առնել*-ի նմանությամբ (ՄՇԲ, 2009, էջ 662)։

*ի վաճառ դնել (Վաճառել)*։ Հարություն Ավգերյանը վկայում է *հանել ի վաճառ* տարբերակով *To sent, To vent* և *Vendre* բառա-

<sup>122</sup> ՄՇԲԲ-ն վկայում է *պսակառոթ*-ի գրաբարյան «պսակադրված, ամուսնութեան պսակով պսակված (հարս ու փեսայ)» նշանակությունը (հ. IV, էջ 122)

հողվածներում<sup>123</sup>: ՆՀԲ-ում՝ *Վաճառեն, Վաճառիկ* բառահողվածներում, առկա են *վաճառ հանել* և *ի վաճառ հանեալ* բացատրությունները (հ. II, էջ 775): Ըստ ՄՀԲԲ-ի՝ գրաբարում «ծախու հանել, շուկա բերել ծախելու» նշանակությամբ արձանագրված է *ի վաճառ հանել*-ը (հ. IV, էջ 291)<sup>124</sup>.

*զաչաց առնել (Տեսանել)*. արձանագրում են ՄՀԲԲ-ն՝ *աչքը առնել* տարբերակով և «տեսողությամբ ընդգրկել, աչքի տեսութիւնը զօրել» նշանակությամբ (հ. I, էջ 200), ՀԼԴԲ-ն՝ *աչք առնել* տարբերակով և «տեսնել, նկատել» նշանակությամբ (էջ 81).

*կտտամահ առնել (Չարչարել)*. Ստեփան Մալխասյանցը արձանագրում է գրաբարում վկայված «տանջանքներով սպանել» նըշանակությամբ (ՄՀԲԲ, հ. II, էջ 498).

*ըստ ՀԼԴԲ-ի՝*

*ի բանտ արկանել (Բանտ)*. արձանագրվում է «բանտարկել» նշանակությամբ *բանտ գցել* կամ *դնել*-ը (էջ 108)<sup>125</sup>.

*ի փռշի դարձուցանել (Լոսել)*. հիշատակվում է *փռշի դարձնել* տարբերակով, «(փխր.)» նշումով, «ոչնչացնել» նշանակությամբ (էջ 580)<sup>126</sup>.

*հարուածս տալ\* (Հարկանել)*. արձանագրվում է *հարված տալ* տարբերակով և «Նույնն է՝ Հարված հասցնել» հղումով (էջ 351).

*յառաջարկ անել (Մղել)*. *առաջարկ անել* տարբերակով հիշատակում են ՀԼԴԲ-ն՝ *առաջարկություն անել*-ի համար նշելով նաև «որևէ հարց առաջ քաշել» նշանակությունը (էջ 61), և ԱՀԲԲ-ն՝

<sup>123</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջք 769-770, 939: Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայս, աշխ. Հ. Յ. վրդ. Ավքերեան Անկիւրացոյ՝ Մխթարեան, հ. I, Վենետիկ, 1812, էջ 509:

<sup>124</sup> *Ի վաճառ հանել*-ը վկայում է Հ. Ճելալյանը («...ի վաճառ հանել գտուն քո». տե՛ս Վարք նախնի իմաստասիրաց համառօտեալ ի Հ. Յակոբոսէ վարդապետէ Ճելալեան, Վենետիկ, 1826, էջ 168):

<sup>125</sup> ՀԱԲ-ը *Փոստկայ* բառահողվածում վկայում է *արգելուլ ի բանտի*-ն (հ. Դ, էջ 527):

<sup>126</sup>Տե՛ս նաև Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, էջ 1318:

\* Առկա է նաև *Չարչարել* հենարառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 121բ. 566(1), 266ա):

«1. Նույնն է՝ Առաջարկություն անել: 2. Որևէ առաջարկով դիմել մեկին» հղումով (ԱՀԲԲ, էջ 103).

*ի միտ բերել (Յիշել)*. վկայվում է *միտ(ը) բերել* տարբերակով, «տե՛ս Միտքը բերել» հղումով և «մտաբերել, վերհիշել, հիշել» նըշանակությամբ (էջ 435-436)<sup>127</sup>.

*(Եթէ ընդ մարդկան իցէ և պիտոյ իցէ դնի ևս)* նշումով *գպայմանն դնել (Ուխտել)*. նշվում է *պայմանն դնել* տարբերակով և «պայմանավորվել, պայմանագիր կնքել» իմաստով (էջ 493).

*(Եթէ վարումն իրաց դնի ևս)* նշումով *դնել ի գործի (Վարիլ)* արձանագրվում է *գործի դնել* տարբերակով և «մեկին որևէ գործ տալ կատարելու», «գործադրել, հնարավոր միջոցները օգտագործել» իմաստներով (էջ 175).

*գորտունս հեղուլ (Քրտնել)*. արձանագրվում է *քրտինք թափել* տարբերակով և «դառն՝ շատ աշխատել, դատել, բանել» նշանակությամբ (էջ 604)<sup>128</sup>.

*ըստ ԱՀԲԲ-ի*

*պատճառ տալ (Բարբիլ)*. առկա է «պատճառել, առիթ տալ» նշանակությամբ (էջ 1191)<sup>129</sup>.

*ի չիք դարձուցանել (Եղծանել)*. վկայվում է *ի չիք դարձնել* տարբերակով և «անվավեր դարձնել՝ համարել, վերացնել», «ի դերև հանել, հօդս ցնդեցնել, վերացնել» իմաստներով (էջ 1161):

*Իմաստային այլ նրբերանգով հավաստված ԴՄ-ներ*

*կարդալ առ տէր (Աղօթել)*. հիշատակում է ՆՀԲ-ն *Կարդամ բառահողվածում*՝ նշելով «ձայնել. գոչել. աղաղակել. յօգնութիւն կոչել» իմաստները (հ. I, էջ 1067): Թերևս կարելի է *աղոթել*-ը մեկնել նաև «աստծուն ձայնել, օգնության կանչել» նշանակությամբ.

*ոսոխ լինել (Ամբաստանիլ)*. ՆՀԲ-ն, *Ոսոխ* բառահողվածում արձանագրելով «Աբգարն յառաջին իսկ պատասխանոջն ոսոխ

<sup>127</sup> ԳԴԲ-ն վկայում է «պատկերացնել» նշանակությամբ *ի միտս բերել*-ը (էջ 128) :

<sup>128</sup> Տե՛ս նաև Պ. Բեդիրյան, նշվ. բառ., էջ 1370:

<sup>129</sup> Հարկ է թերևս հիշատակել, որ ՆՀԲ-ն *Բարբեմ*-ի համար վկայում է՝ «Ըստ յն. ոճոյ՝ նաև Պատճառս դնել. պատճառել» (հ. I, էջ 440):



լինի անձին իւրում» բնագրային օրինակը, *nunju*-ը բացատրում է «Հակառակորդ յատենի կամ ի կռուի. դատախազ. թշնամի. դիմամարտ. ախոյեան» (հ. II, էջ 521): *Ոսոխ լինիլ*-ը «հակառակորդ, թըշնամի լինել» նշանակությամբ գործածում է Գրիգոր Տաթևացին («Ութերորդ՝ աստ յեկեղեցոյ ամօթ. և անդ ի սրբոց հոգւոց. և յարութեանն առաջի աստուծոյ և հրեշտակաց ոսոխ լինելով»)՝<sup>130</sup>.

«(եթէ ի տես երթալիցէ ումեք դնի ևս)» նշումով *երթալ ի յողջոյն նմայ (Այց առնել)*. Հարություն Ավգերյանը հիշատակում է *To Congratulate* բառահոդվածում *երթալ ի ողջոյն կամ ի շնորհատրույթին* տարբերակով<sup>131</sup>.

*առաթուր կոխել, ի ներքոյ իւր առնել, առ ոտն կոխել* (Ընկճիլ). *առաթուր*-ի համար ՆՀԲ-ն նշում է. «... վարի ընդ բայս Կոխել, հարկանել ևն. *կոխկոտել, ոտքի տակ առնել*» (հ. I, էջ 282), Աղեքսանդր Խուդաբաշյանը *Առաթուր* բառահոդվածում վկայում է նաև "презирать" նշանակությունը (ԽՀՌԲ, հ. I, էջ 135): *Առաթուր կոխել*-ն արձանագրում են նաև արդի հայերենի բացատրական բառարանները «ոտնատակ տակ //անել, կոխկոտել» նշանակությամբ (ԱՀԲԲ, էջ 101: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 170): Ինչ վերաբերում է *ի ներքոյ իւր առնել*-ին, ՆՀԲ-ն «Է հպատակ» իմաստով վկայում է *ի ներքոյ կացեալ կամ անկեալ* կազմությունները՝ *ի ներքոյ*-ի համար նըշելով՝ «Ի ստորև, ընդ, ենթ ... տակը» (հ. II, էջ 423): ՁԲ-ներում «ընկճել» նշանակությամբ առանձնացվող *ի ներքոյ իւր առնել*-ը արդի հայերենում առկա է *տակը առնել* տարբերակով որպես «հաղթել, ընկճել» (ԱՀԲԲ, էջ 1406: ԺՀԼԲԲ, հ. IV, 1980, էջ 435: ՀԼԴԲ, էջ 555): *Առ ոտն կոխել*-ը գործածում են Փավստոս Բուզանդը («լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի զեկեղեցիս եւ մի զուխտ Աստուծոյ առ ոտն կոխիցեն»)՝<sup>132</sup>, Մովսես Կաղանկատվացին («...որ անիրաւք զայրացեալք առ ոտսն կոխեցին զեկեղեցիս»)՝<sup>133</sup>: ՆՀԲ-ն «կամ հարկանել» նշումով արձանա-

<sup>130</sup> Գր. Տաթևացի, «Գիրք հարցմանց» /Համաբարբառ, հ. Դ, էջ 90:

<sup>131</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 185:

<sup>132</sup> concordance.am/category/գրաբար/փավստոս-բուզանդ

<sup>133</sup> [http://language.sci.am/sites/default/files/movses\\_kaghankatvatsi.pdf](http://language.sci.am/sites/default/files/movses_kaghankatvatsi.pdf)

գրում է *Կոխեւ* բառահոդվածում՝ «արհամարհել, ճնշել, նուաճել, յաղթահարել» բացատրությամբ (հ. I, էջ 1109), Էդուարդ Հյուրմյուզյանը՝ *Կոխկոտել* բառահոդվածում<sup>134</sup>: ԳԴԲ-ն «արհամարհել, ոտնահարել, ոտնատակ տալ, անտեսել» նշանակությամբ *առ ոտն հարկանել*-ը վկայում է Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու երկերում (էջ 37)։

*յետս դարձուցանել (Արգելու)*։ Ներսես Լամբրոնացին վկայում է իմաստային փոքր-ինչ այլ իմաստով՝ «հրաժարվել, հետ կանգնել» (որքանով *հրաժարվել* կամ *հետ կանգնել* հավանական է նաև արգելք լինելու կամ արգելքի հանդիպելու դեպքում)՝ «Վասն այսորիկ եթէ խորհեսցի որ ի մենջ առ Աստուած հայել, և ըստ կարողութեան միաւորել ընդ նմա, պարտ է նախ զակն հոգւոյ, այսինքն զմիտս, յաշխարհական իրաց յետս դարձուցանել...»<sup>135</sup>։

*վրէժխնդիր լինել\** (*Բարկանալ*)։ ԳԴԲ-ն «վրէժ լուծել» նշանակությամբ (հավանական է՝ բարկությունը, զայրույթը մղեն վրէժխնդրության) վկայում է Թովմա Արծրունու, Ուխտանես եպիսկոպոսի երկերում (էջ 260)։

*դարման տանել (Բժշկել)*։ ԳԴԲ-ն «դարմանել, խնամք տանել, հոգալ» նշանակությամբ արձանագրում է Աստվածաշնչում, Ագաթանգեղոսի Պատմության մեջ (էջ 69)։

*գուն գործել (Բռնադատել)*։ ԳԴԲ-ի վկայությամբ՝ Աստվածաշնչում, Եզնիկ Կողբացու երկում «ջանք թափել, ճիգ գործադրել, չարչարվել, ջանալ» նշանակությամբ (էջ 64)։

*ժամադիր լինել (Դաշն)*։ ԳԴԲ-ի վկայությամբ՝ Աստվածաշնչում՝ «ժամանակ և տեղ նշանակել մի բանի համար, ժամադրվել» իմաստով (էջ 106)։

<sup>134</sup> Եդ. Հիրմիզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869, էջ 280։

<sup>135</sup> Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, էջ 230։

\* *Վրէժխնդիր լինել*-ը Գ. Թոսունյանը վկայում է Աստվածաշնչից (Գ. Թոսունյան, Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված դարձվածքները, էջ 235)։

*փող հարկանել (Երզել)*. ԳԴԲ-ն «փող փչել՝ հնչեցնել» նշանակությամբ արձանագրում է Աստվածաշնչում, Եզնիկ Կողբացու երկում (էջ 272).

*սրտաբեկ լինել (Երկնչի)*. ԳԴԲ-ն «սիրտը կտրտվել, վիատվել» նշանակությունը հաստատում է բնագրային օրինակով (էջ 254): Հարկ է, սակայն, արձանագրել ՆՀԲ-ում՝ *Սրտաբեկ* բառահոդվածում, Աստվածաշնչից («Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն»), «Հին տաղարան կամ երգարան եկեղեցական տաղից» ժողովածուից («Սրտաբեկ լինէր հերովդէս արքայն»), Սեբերիանոս Եմեսացու երկից («Որք յանցաւորքն իցեն, սրտաբեկ լինին») քաղված բնագրային օրինակներով (հ. II, էջ 763) ենթադրելի նաև «վախենալ, սարսափել» նշանակությունը<sup>136</sup>.

*շպարել ի ծարիր և ի սնգոյր (Ձարդարել)*. ՆՀԲ-ն արձանագրում է *Շպարիմ* բառահոդվածում՝ «Շպարաւ նկարել գերեսս. ծեփել» նշանակությամբ՝ օրինակը վկայելով Աստվածաշնչից և նշելով «յն. մի բառ», միննույն ժամանակ արձանագրելով՝ «Իսկ ի *Հին բառ*. գրի. \*Շպարել, գեղեցկազարդել: Շեպարել, զարդարել» (հ. II, էջ 493): Հատկանշական է, որ ԱՀԲԲ-ում «փխբ.» նշումով պահպանվել է «զարդարել, գունազարդել, պճնել» իմաստը (էջ 1118).

*հանդէս առնել (Թուիլ. Ժողովել)*. ԳԴԲ-ն «քննել» նշանակությամբ վկայում է Աստվածաշնչում և Եղիշեի երկում (էջ 171), սակայն նկատի առնելով ՆՀԲ-ում՝ *Հանդէս* բառահոդվածում, հիշատակած «համար տալն կամ առնելը» բացատրությունը, այլև վկայված «Փոխատուի և փոխառուի ի մի վայր հասելոց հանդէս առնէ տէր» բնագրային օրինակը (հ. II, էջ 42)՝ կարելի է հավանական համարել *հանդէս առնել*-ի «թուել, հաշվել» իմաստը: ՆՀԲ-ի նույն բառահոդվածում Աստվածաշնչից քաղված հետևյալ բնագրային օրինակներով էլ («Հանդէս արար դաւիթ զօրուն», «Հանդէս արար

<sup>136</sup> Հմմտ.՝ ՀԼԴԲ-ում առկա *սրտաճաք լինել*-ը՝ «սաստիկ վախենալ, սարսափել» (էջ 537):

րին որդիքն բենիամենի», «Հանդէս արա՛ որդւոցն ղնեայ» (հ. II, էջ 42)) կարելի է հավանական համարել «ժողովել» իմաստը.

*ցաւակից լինել (Լայ)*. արձանագրվում է «Կցորդիլ ցաւոց այլոց. կարեկցել. ախտակցել. վշտակցել» իմաստներով (ՆՀԲ, հ. II, էջ 911: ԳԴԲ, էջ 268), որոնք ոչ անվերապահորեն, բայց և կարող են հանգեցնել լաց-ի.

*խնուլ զբերան իւր (Լոնել)*. ՆՀԲ-ն *խնուլ զբերան*-ը վկայում է «Փակել և պատել ամենայն մասամբ. կափուցանել. ցանկել. արգելուլ զամենայն անցս, և չթողուլ ծակ ինչ» նշանակություններով (հ. I, էջ 955): Արդի հայերենում *բերանը փակել*-ը «լռեցնել, պապանձեցնել» է նշանակում (ԱՀԲԲ, էջ 188: ԺՀԼԲԲ, հ. I, էջ 316: ՀԼԴԲ, էջ 121).

*զխաւար փարատել (Լուսաւորել)*. ՆՀԲ-ն «մերժել, ցրուել, հեռացնել» իմաստով քաղում է «Շարակնոց» ժողովածուից (հ. II, էջ 936).

*վերակացու լինել (Խնամել)*. ԳԴԲ-ն արձանագրում է «պաշտպանել» նշանակությամբ «Դասական գրաբարի հատընտիր»-ում (էջ 258).

*երգել ձայնիւ (Խնդալ)*. առադրվում է «երթ ուրախութիւն ...ի շարժմունս մասանց մարմնոյ լինի» նշումից հետո թվարկվող *աստնուլ. ծափս հարկանել. կաքաւել. դոփել* բայերին: Աստվածաշնչի «Եւ կարգեաց առաջի.... երգել ձայնիւ» (Ա Մ՛ն. 16:4)<sup>137</sup> նախադասությունից քաղվող *երգել ձայնիւ*-ն արձանագրվում է 1826թ. հրատարակված՝ հայոց լեզվի քերականության մեջ և բացատրվում՝ «խստովանել Աստծուն»<sup>138</sup>.

<sup>137</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 604:

<sup>138</sup> Քերականութիւն հայոց լեզուի: Նորոգ քննութեամբ յօրինեալ ամբողջ գրաբար. յաւելեալ ի վերջն և զհամառօտութիւն իմն աշխարհաբար ի դիրութիւն աշակերտելոց: Աշխատասիրութեամբ արգրումցի տէր Յարութիւնեան տէր Մեսրոպէ քահանայի, Կոստանդնուպօլիս, 1826, էջ 192:

*ի միտ առնուլ, հասու լինել (Խորհել)*. ԳԴԲ-ն «իմանալ, հասկանալ, ըմբռնել, գլխի ընկնել»<sup>139</sup> և «մտապահել» իմաստներով արձանագրում է Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու, Ստեփաննոս Սյունեցու, Թովմա Արծրունու, Ուխտանես եպիսկոպոսի երկերում (էջք 128, 172)։

*տապաստ անկանել (Ծարաւել)*. ՆՀԲ-ն «անկանիլ տապալմամբ, կամ որպէս սփռոց տարածիլ ի գետնի» իմաստներով վկայում է Աստվածաշնչից (հ. II, էջ 846)։ Կարելի է հավանական համարել, որ գրիչները նկատի են առել նաև աստվածաշնչյան «Տապաստ անկան յանապատի անդ» նախադասությունը (տե՛ս ՆՀԲ, անդ) և ԴՄ-ն ներառել ՆԲՇ-ում։

*նշուակ առնել (Կատակել)*. հիշատակում են Մխիթար Սեբաստացին՝ *Չու ընել* բառահոդվածում այն առադրելով *հոչակ հարկանել, համբալի հարկանել, նշուակ բերել* և այլ բայերի (ԲՀԼՄՍ, էջ 510 (1537)), Հարություն Ավգերյանը (*Pilolier* բառահոդվածում)<sup>140</sup>։

*ծափս հարկանել (Կաքաւել)*. ԳԴԲ-ն արձանագրում է «ծափահարել» և «փխբ.» նշումով «ուրախանալ, խնդալ» իմաստներով (էջ 157)։

*ծայրակտուր առնել (Կրճատել)*. ԳԴԲ-ն վկայում է «մարմնի ծայրանդամները կտրել՝ կտրատել» նշանակությամբ (էջ 156)։

*խափան լինել// առնել* (Հակատակիլ). ՆՀԲ-ն աստվածաշնչյան *խափան լինել// առնել*-ի համար նշում է՝ «յն. ընդհատումն, կամ արգել» և «յն. արգելով» (հ. I, էջ 936)։ ԳԴԲ-ն «արգելք լինել» նշանակությամբ վկայում է Ագաթանգեղոսի Պատմության մեջ (էջ 146)։

*ելանել ի վեր (Համբառնալ)*. ԳԴԲ-ն առանձնացնում է «բացայայտուել, յայտնի դառնալ» նշանակությամբ (էջ 136)։ ՀԼԴԲ-ն *վեր ելնել*-ը հիշատակում է «բարձրանալ» և «կանգնել» իմաստներով (էջ 547)։

<sup>139</sup> Գ. Թոսունյանը Աստվածաշնչից վկայում է *ի միտ առնուլ*-ի «հասկանալ» և «իմանալ» նշանակությունները (Գ. Թոսունյան, Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված դարձվածքները, էջ 235)։

<sup>140</sup> Բառգիրքի գաղղիական է ի հայ եւ ի տաճիկ բարբառս, էջ 551։

*հեռի լինել, ի բաց կալ\*, ի բաց լինել (Հեռանալ)*. ԳԴԲ-ն արձանագրում է Աստվածաշնչում, Գրիգորիս Արշարունու, Ղազար Փարպեցու, Մեբեոսի, Թովմա Արծունու, Ղևոնդ վարդապետի երկերում, «Կանոնագիրք Հայոց»-ում (էջք 177, 111).

*զարտուղի երթալ (Հեստել. Վրիպել)*. ՆՀԲ-ում՝ *Ջարտուղի* բառահոդվածի «Ոչ կարենք զարտուղի երթալ ճանապարհէն» բնագրային օրինակում «խոտորեալ շեղեալ» իմաստով է (ՆՀԲ, հ. I, էջ 722). եթե նկատի առնվի, որ չինագանդվելը, ապստամբելը նաև «ուղուց խոտորվել, շեղվել» է նշանակում, իսկ «արտաքոյ ուղոյ ելանել. խոտորիլ. թիւրիլ. ստերիւրիլ. շեղիլ» նշանակությունները (ՆՀԲ, անդ) կարող են նաև բխել *վրիպել*-ից.

*զբանն արծարծել (Հոչակել)*. ՆՀԲ-ն «նորոգել, գրգռել, շարժել» նշանակությամբ վկայում է *Արծարծել* բառահոդվածում Ներսես Լամբրոնացու՝ Դավթի սաղմոսների մեկնության մեջ՝ «Զի՞նչ կարօտի պարզ բանս արծարծելոյ» (հ. I, էջ 362).

*ընկենուլ արտաքս, տարագիր առնել (Մերժել)*. ՆՀԲ-ն *Արտաքս* բառահոդվածում արձանագրում է, որ գրիչները *արտաքոն*-ն («այսինքն արտաքոյ») հաճախ ընթերցել և գրել են *արտաքս* («դո՛ւրս, դո՛ւրսը»)՝ ներկայացվող օրինակներին հավելելով նաև *ընկենուլ արտաքս*-ը (հ. I, էջ 381), որն էլ ՆԲԾ-ում առադրվում է *արտաքսել* և *աքսորել* բայերին: *Տարագիր առնել*-ը ՆՀԲ-ն վկայում է «վտարել» նշանակությամբ («Զիւրեանց որդիսն տարագիրս առնեն», «Պօղոս և զբամբասօղս տարագիր առնէ յարքայութենէ». հ. II, էջ 851): Գրիգոր Նարեկացուց քաղված բնագրային օրինակում ՆՀԲ-ն նշում է «Իբր Տարաղեպ. մերժելի» իմաստը (ՆՀԲ, ն.տ.): Այն «մերժել» նշանակությամբ են վկայում նաև Մանվել Զախջախյանը (ԶԲ, էջ 1362) և Աղեքսանդր Խուրաբաշյանը (ԽՀՆԲ, հ. II, էջ 436).

*ընդ ակամբ հայիլ (Նախանձել)*. ՆՀԲ-ն արձանագրում է «խեթի կամ խոժոռ աչօք հայել» նշանակությամբ՝ բնագրային օրինակները քաղելով Աստվածաշնչից (հ. I, էջ 24-25).

\* Առկա է նաև *Ապստամբիլ* հենարառով ՆԲԾ-ում (ՄՄՁ 6762, 102ա. 566(1), 236բ):

*թող տալ, անտես առնել (Ներել)*. ԳԴԲ-ն *թող տալ*-ն արձանագրում է «արգելք չլինել, չխափանել, թողնել» (էջ 105), իսկ «(երթ գմեղաց իցե դնի ևս)» նշումով *անտես առնել*-ը՝ «չտեսնելու տալ, անուշադրության մատնել» իմաստով՝ Աստվածաշնչում, Անանիա Նարեկացու երկերում, «Մաշտոց» գրքում (ԳԴԲ, էջ 33)։

*ի խաչ հանել (Չարչարել)*. ՆՀԲ-ն «խաչել» նշանակությամբ բազմիցս արձանագրում է Աստվածաշնչում (հ. I, էջ 922)։

*անհետ լինել, տեղի տալ (Պակասիլ)*. ԳԴԲ-ն համապատասխանաբար արձանագրում է «առանց հետք թողնելու կորչել, անհետանալ» նշանակությամբ Ագաթանգեղոսի Պատմության մեջ (էջ 130), «խույս տալ, խուսափել, չուել, ընկրկել, նահանջել»՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Թովմա Արծրունու երկերում (էջ 265)։

*ի վերայ հասանել (Պատահիլ)*. ԳԴԲ-ն արձանագրում է «ըմբռնել, հասկանալ» և «յարձակուել» իմաստներով (էջ 137). «հանկարծակի հայտնվել (մի դեպքի ժամանակ)» նշանակությունը վրկայում է ՀԼԴԲ-ն (էջ 552)։

*խրախոյս բառնալ (Պատերազմել)*. ԳԴԲ-ն առանձնացնում է «խրախոյսի ձայն բարձրացնել, խրախուսել» իմաստով, աստվածաշնչյան «Փող հարին, խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան» բնագրային օրինակով (էջ 153)։

*խնդրել զվրեժ, առնուլ զվրեժ (Պատժել)*. ԳԴԲ-ն արձանագրում է Աստվածաշնչում, Եղիշեի, Ագաթանգեղոսի երկերում *վրեժ առնուլ*<sup>\*</sup>, *վրեժ խնդրել* տարբերակներով և «վրեժ առնել, վրեժ լուծել, վրեժխնդիր լինել» իմաստով (էջ 260)։

*ի զէս ընթանալ (Պատրաստել)*. վկայում են ՆՀԲ-ն (հ. I, էջ 733), ՄՀԲԲ-ն (հ. II, էջ 23)՝ վերջինս նշելով «զէսքի դիմել, զէսք բարձրացնել» նշանակությունը. նույն ՆԲԾ-ից *ձիարձակ արշաւել*-ը (ՆՀԲ, հ. II, էջ 157: ՄՀԲԲ, հ. III, էջ 174) ենթադրում է, որ «ձիով արշաւակի գնալ»-ը կամ «ձին ամենայն արագութեամբ քշել»-ը

\* Աստվածաշնչյան *վրեժ առնուլ*-ը վկայում է նաև Գ. Թոսունյանը (Գ. Թոսունյան, Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված դարձվածքները, էջ 235)։

(ՄՀԲԲ, ն.տ.) հավանորեն կարող է նաև «ինչ-որ բանի նախապատրաստվել» նշանակել.

*դնել զթագ (Պսակել)*. ՆՀԲ-ն նշում է «թագաւորել» իմաստով (հ. I, էջ 788). համեմատելի է նաև արդի հայերենում արձանագրելով *թագը կապել* «ամուսանցնել»-ը (ՄՀԲԲ, էջ 409).

*գահավէժ առնել (Սպանանել)*. ՆՀԲ-ն վկայում է «Հոսել, հոսիլ ի բարձանց կամ ի դարէ ի վայր» նշանակությամբ (հ. I, էջ 523), ԱԲ-ն՝ բացատրում՝ «վերէն վար ձգել, ինկնալ» (էջ 200), ԳԴԲ-ն կրկնում՝ «վերնից ցած նետել՝ գցել» (էջ 58): Մանվել Ջախջախյանը, այն հիշատակելով *Խարդաւանեմ* և *Վախ* բառահոդվածներում, առաջինին հավելում է «ի վիհ» (ՋԲ, էջ 663), երկրորդի համար նախապես նշում՝ «Սովորաբար վարի ընդ բայից. ի վախէ կամ ի վախից արկանել՝ ընկենուլ՝ մղել գոք» (ՋԲ, էջ 1291).

*բանակոխի լինել (Վիրավորել)*. ՆՀԲ-ում «Հակառակիլ բանիւ. կազել. վիճել» իմաստներով է (հ. I, էջ 434), հիշատակվում է նաև *Կռուեցուցանեմ* բառահոդվածում (հ. I, էջ 1128): Մանվել Ջախջախյանը, Հարություն Ավգերյանը արձանագրում են «վիճել» նշանակությունը (ՋԲ, էջ 631)<sup>141</sup>, իսկ վեճը, ի վերջո, կարող է հանգեցնել նաև վիրավորանքի.

նույն ՆԲԾ-ից *հարկանել սրով կամ նետիւ-ը* ՆՀԲ-ն *Հարկանեմ* բառահոդվածում վկայում է «բախել. ծեծել. տանջել. գանել» իմաստներով (հ. II, էջ 63), իսկ *վերս ի վերայ դնել-ը* հիշատակում է Հարություն Ավգերյանը՝ *Վեր* բառահոդվածում<sup>142</sup>՝ *To Besrik*-ը բացատրելով «վերս ի վերայ դնել, հարկանել, վիրաւորել. խոցել»<sup>143</sup>: ՆՀԲ-ն նույնպես *Վեր* բառահոդվածում վկայում է «վերս ի վերայ եղին» (հ. II, էջ 819-820).

<sup>141</sup> Բառարան համառոտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 127: Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, էջ 127:

<sup>142</sup> Բառարան համառոտ ի հայէ ի գաղղիական, հ. II, էջ 612:

<sup>143</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 83: Տե՛ս նաև՝ Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, էջ 177:



*զանդրադարձն առնել (Վճարել)*. ՆՀԲ-ն *անդրադարձ*-ի համար արձանագրում է նաև «փոխադարձ գործոց» նշանակությունը (հ. I, էջ 136).

*հաստատել զակն ի նա (Տեսանել)*. հիշատակում է Հակոբ Վիլլոտը՝ *In faciem intueri* բառահոդվածում նշելով՝ «*զակն հաստատել, սկեռել ի նա*»<sup>144</sup>: ՆՀԲ-ն *Հաստատել* բառահոդվածում վրկայում է «Մի՛ հաստատեր զակն քո ի նա» բնագրային օրինակը (հ. II, էջ 55): Բացի «նայել, հայացք գցել. ուշադրություն դարձնել, հետևել»-ից՝ այն հիշեցնում է արդի խոսակցականում և բարբառներում «հավանել, ձեռք բերելու ցանկություն ունենալ. վատ մտադրությամբ նայել» նշանակություններով առկա *այք դնել/այք գցել* ԴՄ-ն (ՀԼԴԲ, էջ 31)<sup>145</sup>. նշվածն ասես հաստատվում է հաջորդող *զակն ի նա պշնուլ* կազմությամբ (ՄՄՁ 6762 (127ա)).

*հափշտակիլ հոգուվ (Տեսիլ)*. վկայում են Մանվել Ջախջախյանը *Spirito* բառահոդվածում<sup>146</sup>, Գաբրիել Ավետիքյանը («... որպես Եզեկիելի եղև՝ յափշտակիլ հոգուվ յԵրուսաղեմ և տեսանել զանդ գործեալսն») <sup>147</sup>, ՆՀԲ-ն *Յափշտակեմ* բառահոդվածում («Է վերանալ. և արտաքոյ անձին լինել, կամ վերառեալ լինել ի հիացման» իմաստներով. հ. II, էջ 352), նաև *Աստուածարեմ*-ը բացատրելով «յափշտակիլ հոգով» (հ. I, էջ 330-331. տե՛ս նաև ՋԲ, էջ 219).

*հետաքրքիր լինել (Քննել)*. վկայում են Գաբրիել Ավետիքյանը՝ «Մի՛ հետաքրքիր լինել յունայն և ի մտացածին ուսմունս»<sup>148</sup>, Մանվել Ջախջախյանը՝ *Հետաքրքիր* բառահոդվածում (ՋԲ, էջ 873), այլև ԳԴԲ-ն՝ «հետաքրքրուել» նշանակությամբ (էջ 177): Հարկ է թերևս արձանագրել, որ «հատուկ ուշադրություն դարձնել»-ը, «հետաքրքրություն ցուցաբերել»-ը երբեմն կարող են հարցաքննություն հիշեցնել.

<sup>144</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 297:

<sup>145</sup> Տե՛ս նաև Պ. Բեդիրյան, նշվ. բառ., էջ 80-81:

<sup>146</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ, էջ 769-770: Համառոտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 825:

<sup>147</sup> Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. II, էջ 252:

<sup>148</sup> Անդ, էջ 391:

*ասպնջական լինել (Օգնել)*. ՆՀԲ-ն վկայում է «\*... յն. ընդունել ի տուն իւր, կամ ընդ առաջ ելանել» բացատրությամբ (հ. I, էջ 316): Գործածում են Եզնիկ Կողբացին («Ձի եթէ չար էր, չարին և եթ պարտ էր ասպնջական լինել, և եթէ բարի էր՝ բարտյն») <sup>149</sup>, և Մըկըրտիչ Ավգերյանը («Իսկ վայելչութիւն և զարդ հայրապետանոցին իւրոյ էր *ասպնջական լինել* աղքատացն քրիստոսի...») <sup>150</sup>, Մխիթարյան միաբանության հայրերի կազմած քառալեզվյան բառարանը՝ *Ospizláre* բառահոդվածում <sup>151</sup>.

նույն ՆԲԾ-ից *ձեռնտու լինել*-ը գրաբարի տպագիր բառարանները վկայում են «Ձեռն տալ. ունել զձեռանէ. ի թիկունս հասանել. օգնել... որպէս Առիթ կամ պատճառ գտանիլ... որպէս Անձնատուր լինել» նշանակություններով (ՆՀԲ, հ. II, էջ 154: ԱԲ, էջ 518: ԳԲ, հ. Բ, էջ 110: ԳԴԲ, էջ 188): Նույն իմաստներն են վկայում նաև Գրիգոր Փեշտրմալճյանի (ՓԲ, հ. II, էջ 143), Մանվել Ջախջախյանի (ՋԲ, էջ 915), Աղեքսանդր Խուդաբաշյանցի (ԽՀՌԲ, հ. II, էջ 293) կազմած բառարանները: Առանձնանում է ԱԲ-ն՝ *ձեռնտու լինիմ*-ի համար առանց բնագրային օրինակի արձանագրելով նաև «ինքը զինքը ձեռք տալ» նշանակությունը (էջ 518): Հետագայում նույնն է վկայում Միմոն Գաբամաճյանը (ԳՆԲՀԼ, էջ 856): Ստեփան Մալխասյանցը հավելում է «Շահաւէտ՝ նպատակայարմար լինել, ձեռք տալ» իմաստը (ՄՀԲԲ, հ. III, էջ 167): Արդի հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարանները *ձեռնտու լինել*-ը չեն նշում. *ձեռնտու*-ն բացատրում են նաև «շահավետ, օգտակար, նպաստավոր», միաժամանակ *ձեռք տալ*-ը մեկնում նաև «շահավետ՝ ձեռնտու լինել» (ԱՀԲԲ, էջ 920: ԺՀԼԲԲ, հ. III, էջ 413): Արևմտահայերենի բառարաններում *ձեռնտու* բառի համար նույնպես վկայվում են նաև «շահաւէտ, օգտակար. նպատակայարմար»

<sup>149</sup> Եզնիկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 132:

<sup>150</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Գ, էջ 381:

<sup>151</sup> Nuovo dizionario italiano-francese-armeno-turco, p. 668:

իմաստները<sup>152</sup>: Այն միայն ՀԼՀԲ-ում է առկա «շահավետ լինել, ձեռք տալ» նշանակությամբ, վերջինս՝ «(ժողովրդական դարձված)» նշումով (էջ 412): Կարելի է արձանագրել, որ արդի արևելահայերենում, «ըստ իմաստային զարգացման արդյունքի», տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում, «բառի նախկին իմաստի փոխարինում նոր ուղղակի իմաստով»<sup>153</sup>:

Բացի վերը նշված դասակարգումներից՝ կարելի է առանձնացնել են նաև հետևյալները:

ՆԲՇ-ներում երբեմն առկա են բառարաններում վկայվող ԴՄ-ները՝ ո՛չ ժխտական կամ մի՛ արգելական մասնիկներով կազմություններ

*ոչ բանալ զբերան իւր (Լռել). բանալ զբերան իւր* («Բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր գնտա». ՆՀԲ, հ. I, էջ 482)<sup>154</sup>.

*ոչ տալ զպատասխանի (Լռել). Եղիշեի երկում տալ պատասխանի* «պատասխանել» իմաստով (ԳԴԲ, էջ 261-262).

*ոչ հանել ի վեր (Թագուցանել). Եղիշեի և Եզնիկ Կողբացու երկերում ի վեր հանել՝* «գաղտնիքը բացել, երևան հանել» իմաստով (ԳԴԲ, էջ 136)<sup>155</sup>:

Վկայվում է նաև վերոնշյալի հակառակ երևույթը *ի հեռի ուրեք ձգել (Հեռանալ). ՆՀԲ-ում՝ Ձգեմ* բառահոդվածում՝ «Մի՛ ուրեք հեռի ձգիցիք երթալ» բնագրային օրինակում (հ. II, էջ 148).

*զքնով անկանել (Ննջել. ՄՄՁ 6762, 119ա. 566(I), 262բ).* «Մի՛ զքնով անկանիցիմք» բնագրային օրինակում (ՆՀԲ, հ. II, էջ 1012):

<sup>152</sup> Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. II, էջ 904: Հայոց լեզուի նոր բառարան, էջ 568:

<sup>153</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 106:

<sup>154</sup> ՀԼԴԲ-ն *բերան բանալ*-ը վկայում է նաև «խոսել, խոսք բաց անել, սկսել խոսել» նշանակությամբ (էջ 115):

<sup>155</sup> ՀԼԴԲ-ն արձանագրում է *վերհանել* տարբերակը (էջ 547):

*Ստորև առանձնացվողները կարելի է մեկնել բաղադրիչների՝ բարաններում վկայվող նշանակություններով*, այսպես՝

*ծաղկիլ հասակալ (Աճել)*. ՄՀԲԲ-ն *Ծաղկել* բառահոդվածում արձանագրում է «զարգանալ հասակով, կյանքի ծաղիկ հասակ առնել» նշանակությունը (հ. II, էջ 323)<sup>156</sup>: Աշոտ Սուքիասյանը մինչև նույն բառահոդվածում վկայում է *հասակն առնել*-ը (ՀԼՀԲ, էջ 282).

նույն ՆԲԾ-ից՝ *յառո(յ)գութիւն հասակին հասանել*. ՆՀԲ-ն *Առոյգութիւն* բառահոդվածում նշում է նաև «ծաղիկայ հասակ և զուարթութիւն. արբունք» իմաստները (հ. I, էջ 311).

*հայիլ յերեսս մարդոյ, թիրել գիրաւունս (Աչառել)*. հիշատակելի են Ստեփան Մալխասյանցի՝ *Նայել* և *Թիրել* բառահոդվածներում արձանագրած «Մէկի երեսը նայել, նրանից մի բան ակնկալել, յոյսը նրա վրայ դնել» և «4. Միսլ դատել, անիրաւել: Մէկի իրավունքը թիրել» նշանակությունները (ՄՀԲԲ, հ. III, էջ 441. հ. II, էջ 108)<sup>157</sup>.

*ակնկալ լինել (Յուսալ)*. *ակնկալ* ածական-հարադիրը հիշատակվում է միայն ՄՀԲԲ-ում «ակնկալվող, սպասվող» իմաստով (հ. I, էջ 31).

*օգուտ ընդունել (Օգտիլ)*. հիշեցնում է ՄՀԲԲ-ում «շահել, օգուտ ունենալ», «նպաստաւոր հանգամանքից օգտվել» նշանակություններով վկայվող *օգուտ քաղել*-ը (հ. IV, էջք 538, 600). նույնն է արձանագրում ՀԼԴԲ-ն (էջ 606):

<sup>156</sup> ՆՀԲ-ն *Ծաղկել* բառահոդվածում Ն. Լամբրոնացու՝ Դավթի սաղմոսների մեկնություններից «նմանութեամբ» նշումով վկայում է «Բուսանիւք ի պատանեկութեան, ծաղկեմք երիտասարդութեամբ» օրինակը (հ. I, էջ 1003):

<sup>157</sup> Հմմտ.՝ նաև «Երեսին մտիկ անել՝ մտիկ տալ՝ նայել (աշել) (մեկի), .... 3. Ակնկալիք ունենալ, մի բանի սպասել» (ՀԼԴԲ, էջ 212: Տե՛ս նաև Պ. Բեդիրյան Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, էջ 439):

Գրաբարի տպագիր բառարաններում չարձանագրված ԴՄ-ներ

Քննվող ՁԲ-ներում կան նաև գրաբարի տպագիր բառարաններում<sup>158</sup> չվկայվող ԴՄ-ներ, ինչպես՝ *բնակիլ*// *թաքչիլ ի դարանի* (Դարանել), *անձնացոյց լինել* (Հպարտանալ), *անպատկառ լինել* (Յանդգնել), *հետազօտ լինել* (Քննել), *հլու լինիլ* (Հնազանդել), *նշաւակ առնել* (Կատակել), *զամայութիւն խնդրել* (Մեկուսանալ), *ողակեզ առնել* (Մատուցել), *զքամահանս դնել* (Պախարակել):

Նշվածներից կարելի է առանձնացնել *Գերծել*, *Թագչիլ* և *Յագել* հենաբառերով ՆԲԾ-ներում (ՄՄՁ 6762, 104բ, 108ա, 118ա) հանդիպող համապատասխանաբար *թագթագուր շրջել*, *փոքրել զհերս* և *կշտապինդ վայելել* կազմությունները, որոնք ՆՀԲ-ում առկա են միայն *Թագթագուր*, *Փոքրել*, *Կշտապինդ* բառահոդվածներում. «Հանին զնա ի բանտ անտի, և փոքրեցին զհերս նորա» (հ. II, էջ 961), «Պանդուխտք եղիցին, և թաքթաքուրք ... շրջեսցին» (հ. I, էջ 803), «Կշտապինդ վայելեցեք ի գալստենէ փառաց դորա» (հ. I, էջ 1108):

ՄՄՁ 775-ում (54ա), 873-ում (186բ), 3110-ում (77ա) *Աչառել. ակն առնուլ. հայիլ յերեսս մարդոյ. թիւրել կամ պղտորել զիրաւունըս (եթէ պիտոյ լիցի) դիր ևս կաշառս (առնուլ). սիրել զօշաքաղութիւն* ՆԲԾ-ին հավելված է *կշտաբեկ լինել*\*-ը: *Կշիռ* արմատով և *բեկ* բայարմատով բաղադրված *կշտաբեկ*-ի համար ենթադրելի է երկու բացատրություն: *Կշիռ*-ի՝ «թաթ կամ նժար կշռոյ» (ՆՀԲ, հ. I, էջ 1106 -1107: ԱԲ, էջ 443) և *բեկ*-ի՝ «կտորած» (ՆՀԲ, հ. I, էջ 479: ԱԲ, էջ 184. նաև ՄՀԲԲ, հ. I, էջ 358) նշանակություններն ընդունելիս *կշտաբեկ*-ը բառացի կունենա «կշեռքի նժարը կտորված՝ թեքված»<sup>159</sup>, փխբ.՝ «Որևէ կողմին պաշտպանող» նշանակությունը

<sup>158</sup> Նկատի է առնվում բառարանում գլխաբառ լինելը, ոչ թե բառահոդվածի բացատրություններում հիշատակվելը:

\* ՄՄՁ 6762-ում, 566(1)-ում համապատասխանաբար առկա *կշտամբակ լինել*-ը (102ա) և *կշամբակ լինել*-ը (236բ), ամենայն հավանականությամբ, սխալագրություններ են:

<sup>159</sup> Հարկ է, թերևս, արձանագրել *Բեկել* բայի՝ միայն ԱՀԲԲ-ի առանձնացված «2. Թեքել, շեղել, ծռել» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 184):

(հմմտ.՝ *Կշեռքի նժարը թեքվել (որևէ կողմ)*)՝ «Այս կամ այն կողմին գերազանցություն, նախապատվություն տալ»։ ՀԼԴԲ, էջ 325)։ որն էլ, ի վերջո, հանգում է *աչառել*-ին, *աչառու լինել*-ին։

*Կշռաբեկ*-ի նույն բացատրությունն է *կշիռ*-ի՝ «հաւասարակշռութիւն» (ԱԲ, էջ 443: ՄՀԲԲ, հ. II, էջ 453. տե՛ս նաև «հաւասար, զուգակշիռ. համաչափ», ՆՀԲ, հ. I, էջ 1107) նշանակությունն ընդունելիս՝ «հավասարակշռությունը խախտվել», այսինքն՝ «որևէ կողմին նախապատվություն տալ»։

ՆԲՇ-ի *կաշառու առնուլ* հարադրությունը նկատի առնելով՝ հավանական կարելի է համարել նաև բառարաններում վկայվող «կաշառված» նշանակությամբ *կաշառաբեկ*-ը («Բեկեալ, այսինքն՝ զիջեալ կամ որսացեալ կաշառօք» ՆՀԲ, հ. I, էջ 1052. «կաշառքով որսացուած»՝ ԱԲ, էջ 421: ՄՀԲԲ, հ. II, էջ 387): Մխիթար Մեքաստացին արձանագրում է *կաշառաբեկ*-ը իբրև «ի կաշառաց բեկեցեալ.... գիշատեցեալ. որով իմանի նա. որ առնլով զկաշառս՝ թիրե զիրաւունս եւ զարդարութիւն»։ ԲՀԼ, էջ 435 (468)), իսկ *կաշառ կերցնել*-ին՝ «նոյնանշան բառից յարադրութեամբ» առադրում *կաշառաբեկ առնել*-ը (ԲՀԼՄՍ, էջ 291 (1320)), այսինքն՝ *կաշառաբեկ լինել* «կաշառված լինել», ասել է՝ *աչառու լինել*: Մանավանդ ՆՀԲ-ում *կաշառանամ*-ը բացատրելիս գործածվում է *կաշառաբեկ լինել*-ը (հ. I, էջ 1052), որը վկայում է Մանվել Ջախջախյանը իտալերեն *Danáro, Sapóne, Boccóne* բառահոդվածներում, *pigliare il sapone* և *pigliare il boccone* ԴՄ-ները բացատրելիս<sup>160</sup>: ԴՄ-ն առկա է Պլուտարքոսի «Զուգակշիռք» երկի թարգմանության մեջ («...որով և հրպիլ անգամ յարձաթ նա չառնոյր յանձն՝ թո՛ղ թէ կաշառաբեկ լինել....»)՝<sup>161</sup>:

*Սույգ զգեճուլ*-ն արձանագրվում է *Լալ* հենաբառով ՆԲՇ-ում (ՄՄՁ 6762, 109բ. 566(I), 248ա). աստվածաշնչյան բնագրային օրինակն է՝ «եւ թշուառացիւ եւ սույգ զգեցցիւ սապատք զարդուց ձե-

<sup>160</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջք 111, 229, 691:

<sup>161</sup> Պլուտարքեայ Քերովնացոյ Զուգակշիռք, հ. Բ, Վենետիկ, 1833, էջ 610:

րոց» (Ես. 3: 26)<sup>162</sup>: Այն առկա է նաև Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն» և Կիրակոս Գանձակեցու «Պատմություն հայոց» երկերում<sup>163</sup>: *Սուղ զգենուլ*-ը վկայում են Մանվել Ջախջախյանը (ՋԲ, էջ 581) և ՆՀԲ-ն՝ *Թուխ* (հ. I, էջ 821), Մխիթարյան միաբանների հրատարակած քառալեզվյան բառարանը՝ *Portäre* բառահոդվածներում<sup>164</sup>: Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *սուղ առնուլ*, *սուղ ունել* ԴՄ-ները (ՆՀԲ, հ. II, էջ 731: ԱԲ, էջ 729: ԳԴԲ, էջ 252):

*Ի սուսերի սատակել* (*Կոտորել*. ՄՄՁ 6762, 113 ա. 566 (I), 253բ). Աստվածաշնչում բազմիցս վկայվում է *ի սուր սուսերի անկանիլ*-ը<sup>165</sup>, մեկ անգամ՝ *ի սուր սուսերի սպանանել*<sup>166</sup>: ԳԴԲ-ն *ի սուր սուսերի արկանիլ*-ը արձանագրում է Մովսես Կաղանկատվացու երկում (էջ 134): *Սատակել ի սուր սուսերի* տարբերակն է «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք» երկում<sup>167</sup>: Էդուարդ Հյուրվուզյանը *Թուր* բառահոդվածում *թրէ անցընել*-ը բացատրելիս նշում է *ի սուր սուսերի սատակել*-ը<sup>168</sup>:

*Մեռանել* հենաբառով ՆԲՇ-ից (ՄՄՁ 6762, 117բ. 566(I), 260ա) *ննջել ի տէր*-ն արձանագրում է Մանվել Ջախջախյանը՝ *Páce* բառահոդվածում նշելով՝ «վախճանել (բարեպաշտից)»<sup>169</sup>:

*Նիւթել զնենգութիւն* (*Նենգել*. ՄՄՁ 6762, 119ա. 566(I), 262բ). աստվածաշնչյան օրինակն է՝ «եւ ի սրտի իւրում նիւթ զնենգութիւն» (Առ 26:24)<sup>170</sup>: Առկա է նաև Մովսես Խորենացու երկում. «Իսկ

<sup>162</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1597:

<sup>163</sup> <https://vanuhiblog.wordpress.com/2017/11/20/>

<sup>164</sup> Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, Congregazione Mechitaristica, Vienna, 1846, p. 722:

<sup>165</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1598:

<sup>166</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1597:

<sup>167</sup> Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հ. I, Վենետիկ, 1836, էջ 317:

<sup>168</sup> Եդ. Հիւրվուզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 184:

<sup>169</sup> Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 533:

<sup>170</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1348:

այն որ գնենգութին քութեանց նիւթեաց, եւ դառով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց...»<sup>171</sup>:

Թեև *Պապանձեղ* և *Լռել* հենաբառերով ՆԲՇ-ներում (ՄՄՁ 6762, 121բ. 566 (I), 109բ) արձանագրված *լեզուն ի քիմսն կցել* արտահայտությունը ՆՀԲ-ն վկայում է *Կցել* և *Քիմք* բառահոդվածներում բնագրային օրինակներով («Լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ» (հ. I, էջ 1139), «Լեզուք նոցա ի քիմս իւրեանց կցեցան, Կցեցան լեզուք դիեցիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւս իւրեանց» (հ. II, էջ 1006)), բայց և գրաբարի բառարաններն այն «լռել, պապանձվել» նշանակությամբ չեն վկայում: ՄՀԲԲ-ն նույնպես այն չի հիշատակում: Իսկ ահա ՆԼԴԲ-ն հավաստում է՝ «Լեզուն կոկորդին կպչել, - Նույնն է՝ Լեզուն կապ ընկնել կամ կապվել», վերջինս էլ բացատրում՝ «... պապանձվել (վախից, հուզմունքից...)» (էջ 267): Ուրեմն կարելի է հավանական համարել քննվող ՁԲ-ներում *լեզուն ի քիմսըն կցել*-ի՝ ԴՄ-ի արժեք ձեռք բերելը:

ՄՄՁ 6762-ում *Շողոքորթել. փաղաքշել. ողորթել. համոզել. ամոքել. փայփայել* ՆԲՇ-ից\* (120ա) առանձնանում է *մարդ էլուզանել*-ը, ՄՄՁ 566 (I)-ից՝ *մարդէլուզել* (263բ), ՄՄՁ 3110-ից՝ *մարդէլուզանել* բայերը (103բ): Գրաբարի տպագիր բառարանները դրանք չեն վկայում, և հավանական կլիներ դրանք սխալագրություն համարելը, եթե հնարավոր լիներ անտեսել, նկատի չառնել բառարանային որոշ տվյալներ, որոնցով կարելի է մեկնաբանել հարադիր կազմությունն ու բայերը: ՆՀԲ-ն Աստվածաշնչից վկայում է *մարդէլոյզ* բառը՝ հետևյալ բացատրությամբ՝ «Շողոքորթ՝ համոզակեր. հրապուրօղ. որ էլուզանէ՝ այսինքն հանէ յելուզակաբար զմարդ ի վիճակէ անտի իւրմէ...», և միաժամանակ հավելելով՝ «(գոր ոմանք թարգմանեն մարդագող. կամ ծառայական)» (հ. II, էջ 223): Հրաչյա Աճառյանը *էլուզանել* բայի «երրորդ նշանակությունն է» համարում «գողանալ, կողոպտել»-ը՝ համեմատության համար նշելով՝ «(...

<sup>171</sup> <http://concordance.am/article/36>

\* *Համոզել* հենաբառով ՆԲՇ-ն (ՄՄՁ 6762, 114բ.. 566(I), 255ա) ավարտվում է «տե՛ս և զշողոքորթելն» հղումով:



*հանել* և *յինքն հանել* «գրաւել, խլել, կորզել»)։ որից **մարդելոյզ** «մարդագոյ» ....» (ՀԱԲ, հ. Բ, էջ 8)։ Ստեփան Մալխասյանցը նույնպէս վկայում է «կորզել՝ խլել իւր օգտին, յափշտակել» իմաստով գրաբարյան *հանել յինքն*-ը (ՄՀԲԲ, հ. III, էջ 49-50)։ Նա արձանագրում է ոչ միայն *մարդ* և *ելուզանել* բառերից կազմված *մարդելոյզ*-ը՝ «2. Փոխ. Շողոքորթ, հրապուրող, խաբեբայ, ուղիղ ճանապարհից հանող», այլև *մարդելուզել*-ը՝ «2. Շողոքորթել, հրապուրել, ուղիղ ճանապարհից հանել» նշանակություններով (ՄՀԲԲ, հ. III, էջ 277)։ Այնպէս որ բառարանային տվյալներով կարելի է հավաստված համարել *մարդ ելուզանել*-ի, *մարդելուզել*-ի կամ *մարդելուզանել*-ի՝ ՆԲՇ-ում ներառվելը։ Թեև ըստ իմաստի առավել հավանական է թվում հարադրական կազմության «մարդուն հունից հանել» իմաստը, մանավանդ հայերենում արձանագրվում է *հունից հանել* «Բնական ընթացքից շեղել, կանոնավոր վիճակից դուրս բերել» ԴՄ-ն, բայց և բնագրային միակ, այն էլ թարգմանական օրինակով (ՀԼԴԲ, էջ 374)<sup>172</sup>։

*Դաշն դնել*-ը (*Ուխտել*. ՄՄՁ 6762, 120 ք. 566 (I), 264 ք-265 ա) Մխիթար Սեբաստացին բացատրում է *Դաշն* բառահոդվածում՝ «Եւ այս բառ երբեմն շարակցի ընդ բայի այսպէս, *դաշինս կռել*. կամ *դաշինս հաստատել*. և այլն. և նշանակել *դաշն դնել ընդ ումէք*» (ԲՀԼ, էջ 204 (233))։ Մանվել Ջախջախյանն այն հիշատակում է *Capitolare* («դաշինս հաստատել, յուխտ մտանել») <sup>173</sup>, *Ուխտ* և *Ուխտադրեմ* (ՋԲ, էջ 1138), Հարություն Ավգերյանը՝ *Creér* և *Framer* բառահոդվածներում<sup>174</sup>, այլև Էդուարդ Հյուրմյուզյանը՝ *դաշ դնել* տարբերակով<sup>175</sup>։

<sup>172</sup> Հմմտ.՝ նաև *հունից դուրս գալ* «սովորական ընթացքից դուրս գալ, կանոնավոր վիճակը խախտվել» (ԱՀԲԲ, էջ 919), *հունի մեջ մտնել* «կանոնավոր՝ ճիշտ ընթացքի մեջ մտնել» ԴՄ-ները (ԺՀԼԲԲ, հ. III, էջ 399)։

<sup>173</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 139. տե՛ս նաև էջք 205, 564, 785, 824։

<sup>174</sup> Բառարան համառոտ ի գաղղիականէ ի հայ, հ. I, էջք 113, 225։

<sup>175</sup> Եղ. Հիւրմիւզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 113։

Աստվածաշնչում վկայվող բառակապակցություններ և արտահայտություններ<sup>176</sup>

*դողումն կալա զնոսա\** (Երկնչիլ). աստվածաշնչյան արտահայտությունն է՝ «Եւ դողումն կալա զնոսա անդ» (ՄՂ 47:7), «դողումն կալա զնա» (ՄՂ 49:24), «կալա զնոսա դողումն» (Ելք 15:5)<sup>177</sup>: Հանդիպում է նաև պատարագը սպասավորելու համար կազմված ժողովածուում՝ «....առ ի դիրութիւն պաշտօնէից եկեղեցոյ»<sup>178</sup>: Գրիգոր Նարեկացին գործածում է «.... կալա զնոսա դողումն» տարբերակը<sup>179</sup>.

*տալ նմա ուտել* (Կերակրել. Մնուցանել). աստվածաշնչյան վկայություններն են՝ «Եւ ասաց տալ նմա ուտել» (Մր 5:43), «Եւ հրարամայեաց տալ նմա ուտել» (Ղկ 8:56)<sup>180</sup>: Կիրառում է Գրիգոր Նարեկացին<sup>181</sup>, հիշատակվում է Հայ Առաքելական Եկեղեցու ծիսական գրքում<sup>182</sup>.

*և ել լուր նորա ընդ ամենայն երկիրն* (Տարածել). համապատասխանում է աստվածաշնչյանին՝ «Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորոց» (Մտ 4:24)<sup>183</sup>.

<sup>176</sup> Ներկայացվող բառակապակցությունները և արտահայտությունները քաղվել են գրաբար Աստվածաշնչի համաբարբառից. «Գրահավաք» կալքի որոնումների արդյունքներով ամենավաղ վկայություններն Աստվածաշնչից են: Սկզբում տրվում են Աստվածաշնչում վկայվող, այնուհետև՝ հայ մատենագրության մեջ հանդիպող, XVIII դարում և հետագայում հրատարակված բառարաններում առկա բառակապակցություններն ու արտահայտությունները:

\* ՄՄՁ 6762-ում՝ *դողումն կալա ամենաց*:

<sup>177</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 566:

<sup>178</sup> Սպասաւորութիւն սրբոյ պատարագի, Թրեստ, 1785, էջ 47:

<sup>179</sup> Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից վանականի մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 292:

<sup>180</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1470:

<sup>181</sup> Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից վանականի ողբերգութիւն, Չմիտնիա, 1843, էջ 25:

<sup>182</sup> Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցոյ Հայաստանյայց ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց, Վենետիկ, 1837, էջ 113:

<sup>183</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 838: Տե՛ս ՆՇԲ-ում՝ *Լուր բառահողվածում* (հ. I, էջ 903):

(*արագ արագ*) *զկապուտն ժողովել (Պատրաստել)*. աստվածաշնչյան տարբերակն է՝ «եւ սկսանէին ժողովել զկապուտ կողպուտ զանկելոցն» (Յղթ 15:8)<sup>184</sup>.

*սեղան աստուծոյ (Տաճար)*. բառակապակցությունը բազմիցս հիշատակվում է Ծննդոց գրքում՝ «Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ» (Ծն. 8: 20)<sup>185</sup>: Այն առկա է նաև Հովհաննես Օձնեցու մատենագրության մեջ («...և ի ցամաքել մեղացն ի մենջ՝ լինիմք սեղան Աստուծոյ»)՝<sup>186</sup>.

*տեսիլ երեսաց (Տեսակ)*. վկայվում է Աստվածաշնչում («եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ» (Ղկ 9:29))<sup>187</sup>: Մանվել Զախջախյանը *Կերպարան* բառահոդվածում *տեսիլ երեսաց*-ը հիշատակում է որպես «դէմք» (ՋԲ, էջ 777):

*Ստորև թվարկվողները քաղվել և ներկայացվում են ըստ ՆՀԲ-ի, որում նույնպես առաջին վկայությունները Աստվածաշնչից են*<sup>188</sup>

*հուր անշեջ (Դժոխք)*. հիշատակվում է *Անշեջ* և *Հուր* բառահոդվածներում (հ. I, էջք 214, 616).

*առտնին արկանելի (Զգեստք)*. «Որ ինչ է ի տան... տնական» իմաստով վկայվում է *Առտնին* բառահոդվածում (հ. I, էջ 312).

*որդիք խառնակութեան (Խաժամուժ)*. բառակապակցությունն առկա է *Խառնակութիւն* բառահոդվածում (հ. I, էջ 926).

<sup>184</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջք 782, 960: Տե՛ս նաև ՆՀԲ-ում՝ *Կապուտ* բառահոդվածում (հ. I, էջ 1055):

<sup>185</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1572-1573:

<sup>186</sup> Յովհաննու Բմաստասիրի Աձնեցույ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 136:

<sup>187</sup> Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 1716: Նույնը և՛ «Եւ ի կալ նմա յադօթ՝ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ». տե՛ս Ժամանակագրութիւն եկեղեցույ Հայաստանեայց ըստ կարգադրութեան սրբոց թարգմանչաց եւ այլոց սրբոց հարց մերոց, Վիեննա, 1839, էջ 289:

<sup>188</sup> Սույն հատվածում նաև տրվում են հայ մատենագրության մեջ հանդիպող կամ XVIII դարում և հետագայում հրատարակված բառարաններում առկա, նաև որպես բացատրություն բերվող օրինակները:

*ստգտանելն սրտի, խայթելն խղճի մտաց (խղճել)*. առաջին բառակապակցությունը ասես համապատասխանեցվել է աստվածաշնչյան «Եթե ըստգտանիցեն զմեզ սիրոք մեր» և «Եթե սիրոք մեր զմեզ ոչ ստգտանիցեն» նախադասություններին (հ. II, էջ 787): Երկրորդի համար համեմատելի է Հակոբ Վիլյոտի լատիներեն տարբեր կազմությունների (*Conficientix ftumulus, Conficientix ftumulus urgeri, Morfusanimi, confcientix* և այլն) թարգմանություններում բազմիցս հիշատակվող և գրաբարի տպագիր բառարաններում «խիղճ, խղճմտանք» նշանակությամբ արձանագրվող *խիղճ մտաց*-ը<sup>189</sup>.

*կամակար մտօք (Կամալ իւրով)*. բառակապակցությունը վրկայվում է *Կամակար* բառահոդվածում (հ. I, էջ 1039): Արձանագրում են նաև Մանվել Ջախջախյանը («Vóglia. Կամք. իղձ. փափագ. ցանկություն») <sup>190</sup>, Գաբրիել Ավետիքյանը («... թե կամակար մտօք յանցանելով յետ ընդունելութեան գիտութեան, ո՛չ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ») <sup>191</sup>, Մկրտիչ Ավգերյանը («... կամակար մտօք իբրև աստուածակամ հրամանաւ թողին լքին միաբան զերկիր ծննդեան և զագգ և զտոհմ») <sup>192</sup>, ՆՀԲ-ն՝ *Կամակար*-ը և *Կամակարարար*-ը բացատրելով՝ «կամակար մտօք» (ՆՀԲ, հ. I, էջ 1040), և *Համառ* բառահոդվածում նշելով՝ «Իբր մ. *Կամակար մտօք. համարձակ. յանդգնաբար*» (հ. II, էջ 318), ՋԲ-ն՝ «կամաւորապէս, յօժար կամօք կամ սիրով» իմաստով (ՋԲ, էջ 742).

*հատաւ յոյս նորա (Յուսահատել)*. արտահայտությունը «Հատաւ յոյս մեր» տարբերակով վկայվում է *Հատանեն* բառահոդվածում «կամ նմանությամբ» նշումից հետո (հ. II, էջ 57).

<sup>189</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 160, 484, 620: Տե՛ս նաև ՆՀԲ, հ. I, էջ 944-945: ՋԲ, էջ 674: ԳԴԲ, էջ 147:

<sup>190</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 879:

<sup>191</sup> Մեկնութիւն չորեքասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. III, էջ 100. տե՛ս նաև էջք 120, 215:

<sup>192</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ.Գ., էջ 12:

*գաւազան արմատոյ (Ուստ)*. բառակապակցությունն առկա է *Գաւազան* բառահոդվածում (հ. I, էջ 532)<sup>193</sup>.

*կերկերիլն կոկորդի (Պապանձեղ)*. «... որպէս թէ Քերելով քերիլ. Տամաքիլ կոկորդի. խցանիլ հագագի. խեղդիլ ձայնի» նշանակություններով հիշատակվում է *Կերկերիմ* բառահոդվածում (հ. I, էջ 1091).

*հոսէին ի նմանէ քրտունք արեան (Քրտնէլ)*. համապատասխանում է «Հոսէին ի նմանէ քրտունք իբրև գկայլակս արեան» բնագրային օրինակին (հ. II, էջ 1007):

*Այլ երկերում վկայվող բառակապակցություններ և արտահայտություններ*<sup>194</sup>

*ընդ լուսանալ առաւօտուն (Առաւօտ)*. արտահայտությունը վկայում են Մովսես Կաղանկատվացին «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում<sup>195</sup>, 1648 թ. մի հիշատակարան<sup>196</sup>, Առաքել Դավրիժեցին «Գիրք պատմութեանց» երկում («Իսկ ընդ ընդ լուսանալ առաւօտուն շեշտակի ձիւրնթաց արշամամբ եկին զինուորք...»)<sup>197</sup>, նաև ՆՀԲ-ն *Մահակողմն* բառահոդվածում՝ «Ս. Եփրեմի մատենագրութիւնք»-ից քաղված բնագրային օրինակում (հ. II, էջ 196).

նույն ՆԲԾ-ից *ի ծագիլ արևոյն*. հանդիպում է Գրիգոր Տաթևվացու «Գիրք քարոզութեան որ կոչի ձմեռան հատոր» երկի Ժ. գրվածում՝ «...ա՛յլ է օրինակն եւ այլ ճշմարտութիւն. որպէս ի ծագիլ արևոյն, ճրագի լոյսն նուազի եւ իսպիանի» նախադասության մեջ<sup>198</sup>: ՆՀԲ-ն *Ծագել* բառահոդվածում վկայում է *ի ծագել առաւօտուն* տարբերակը (հ. I, էջ 998).

<sup>193</sup> Տե՛ս նաև Համարաբառ գրաբար Աստվածաշնչի, էջ 466:

<sup>194</sup> Սկզբում տրվում են հայ մատենագրության մեջ հանդիպող բնագրային, այնուհետև բառարաններում առկա օրինակները, եթե այդպիսիք կան:

<sup>195</sup> <http://titus.uni-frankfurt.de/texte/ercs/arm/movskal/movsk.htm?movsk031.htm>

<sup>196</sup> Տե՛ս Հայագիտության հարցեր, 1 (7), 2016, Ե., էջ 57:

<sup>197</sup> Գիրք պատմութեանց Շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրեժացոյ, Ամսթեղօղամ, 1669, էջ 158:

<sup>198</sup> <http://www.digilib.am/book/1476/1779/14290/?lang=en>

*բուռն հարկանել զմմանէ (Ըմբռնել)*<sup>199</sup>. արտահայտությունը գործածում են Միքայել Չամչյանցը («...ն այն ինչ կամեր բուռն հարկանել զմմանէ, զօրացեալ սրբուհույն»)՝<sup>200</sup> Պետրոս Արագոնացու («Եօթենէրորդ. մեծ յիմարութիւն է՝ եթէ յետ նաւաբեկութեան կարիցէ որ ունել տախտակ, որով փրկեսցի, և հապաղիցէ բուռն հարկանել զմմանէ. այլ՝ որպէս ասէ Երոնիմոս, ապաշխարութիւն է երկրորդ տախտակ յետ նաւաբեկութեան. վասն որոյ ո՛չ է պարտ յամել բուռն հարկանել զմմանէ»)՝<sup>201</sup> և Հովհան Ոսկեբերանի («...ն՞ որք ապա հեշտեալ խնդրեսցէ. այնուհետև բուռն հարկանել զմմանէ, եթէ արդեօք ո՛չ միայն ի զարմանացն վրէպ տեսցէ զնա, այլ և ընդ վայր հարեալ ամենայն մարդկանէ»)՝<sup>202</sup> երկերի թարգմանիչները.

*գրոց աշակերտ (Բմաստուն)*. բառակապակցությունը հանդիպում է Պողոս Հովնանյանցի աշխատասիրության մեջ («Աստուգութեանը վրայ հասարակ ու գրոց աշակերտ չըլլող մարդ մին ալ կրնայ վկայութիւն տալ...»)՝<sup>203</sup> և «Շտեմարան պիտանի գիտելեաց» երկում («Դու գիտես որ ես գրոց աշակերտ չեմ...»)՝<sup>204</sup>, «...բայց խորունկ գրոց աշակերտ ըլլալու բաւական յարատևութիւն չունին»)՝<sup>205</sup>.

նույն ՆԲՇ-ից *հմուտ գրոց*-ը ՆՀԲ-ն վկայում է Հովհան Ոսկեբերանի երկի թարգմանությունից (հ. II, էջ 104).

<sup>199</sup> ԳԴԲ-ն *բուռն հարկանել*-ը վկայում է «բռնել» նշանակությամբ (էջ 56):

<sup>200</sup> Պատմություն Հայոց Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Ա, էջ 382:

<sup>201</sup> Գիրք մոլութեանց Շարադրեալ ի Պետրոսէ արեղայէ Արագոնացոյ (Թարգմանեալ ի լատինականէն ի հայ բարբառ ի գաւառն նախչուանու, 1339), Վէնետիկ, 1773, էջ 236:

<sup>202</sup> Մրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսոյ արքեպիսկոպոսի հատընտիր գիրք եւ ճառք եւ ներբողեանք, հ. I, էջ 99:

<sup>203</sup> Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիսաւոր աստեղաց, Գրեաց Հ. Պօղոս վարդապետ Յովնանեանց, Վիեննա, 1841, էջ 119:

<sup>204</sup> Շտեմարան պիտանի գիտելեաց, հ. II, Ջմիւռնիա, 1840, էջ 72:

<sup>205</sup> Շտեմարան պիտանի գիտելեաց, հ. IV, Ջմիւռնիա, 1842, էջ 58:

*երթալ զկնի նորա (Հետևել)*. արտահայտությունն առկա է Ստեփաննոս Ագոնցի երկասիրության մեջ («... տեսանեմք զհաճութիւն Յիսուսի ընդ նմա, և զպատրաստութիւն կամաց նորա թողուլ զամենայն և երթալ զկնի նորա»)՝<sup>206</sup>: ԳԴԲ-ն «հետևել» նշանակությամբ վկայում է *երթալ զհետ*-ը (էջ 79)։

*լոյս վառեալ (Ղամբար)*. բառակապակցությունը վկայում է Գաբրիել Ավետիքյանը («... և միանգամայն լոյս վառեալ յօժմանէդ ըստ սաղմ. դ. 7. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց...»)՝<sup>207</sup>

«(Եթէ չար իցէ)» նշումով *կորուստ կենաց (Մահ)*. արձանագրում են Մխիթար Սեբաստացին («... ընդէ՞ր եղև կորուստ կենաց ամենայն մարդկանց...»)՝<sup>208</sup>, Պետրոս Արագոնացու երկի թարգմանիչը («Քանզի կորուստ ժամանակին է կորուստ կենաց»)՝<sup>209</sup>, Մկրտիչ Ավգերյանը («... ուր աչքին առջևն է կորուստ կենաց ....»)՝<sup>210</sup>, Մեսրոպ Թաղիադյանը («Մինչև ի կորուստ կենաց անգամ մտաբերել...»)՝<sup>211</sup>։

*պսակ յաղթութեան, յաղթողական պարզև (Յաղթանակ)*. բառակապակցություններից առաջինը գործածում է Ագաթանգեղոսը՝<sup>212</sup>, իսկ *յաղթողական պարզև*-ը հիշեցնում է Ստեփան Մալխայանցի արձանագրած *յաղթողական պսակ*-ը (ՄՀԲԲ, հ. III, էջ 384)։

<sup>206</sup> Տեսութիւն նոր կտակարանաց Աստուածաշունչ սուրբ գրոց, բացաքննեալ ըստ աստուածաբանական զննութեանց՝ երկասիրութեամբ տեսան Ստեփաննոսի վարդապետի Ագոնց, հ. Ա, Վենետիկ, 1824, էջ 296:

<sup>207</sup> Նարեկ աղօթից, Համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեսան Հ. Գաբրիելի Աւետիքեան, Վենետիկ, 1827, էջ 518:

<sup>208</sup> Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մխ. Սեբաստացոյ, էջ 712:

<sup>209</sup> Գիրք մոլութեանց, էջ 225:

<sup>210</sup> Դեղ կենաց իբր հոգեւոր բժշկարան, յօրինեալ ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 327:

<sup>211</sup> Պատմութիւն պարսից, յօրագրէ Մեսրոպայ Թաղիադեանց, հ. Ա, Կալկաթա, 1846, էջ 243:

<sup>212</sup> concordance.am/category/գրաբար/ագաթանգեղոս

*ելանել ի վերայ նոցա (Պատերազմել)*. արտահայտությունը գործածում են Ղևոնդ վարդապետը («...եւ վաղվադակի հրաման տայր զօրուն ելանել ի վերայ նոցա»)<sup>213</sup> և Հովսեփ Գաթրըրճյանցը («Զհետ յաղթութեանն Յեփթայեայ եկն այլ պատերազմ... եւ ստիպեցին զնա ելանել ի վերայ նոցա զինուք եւ սպառագինօք»)<sup>214</sup>.

*ծածկեալ քօղով (Պատրուակել)*. բառակապակցությունը հիշատակում է Միքայել Չամչյանցը («...որք իբր քօղով ծածկեալ կան ի մտաց մարդկան») <sup>215</sup>: Այն առկա է Գրիգոր Նարեկացու ճառերում («ծածկեալ քօղով խորհրդոց») <sup>216</sup>.

(եթէ հարմար իցէ բանին դիր ևս) նշումով *անմեղադրելի ցուցանել զբան նոցա կամ զնա կամ առնել (Ջատագովել)*. *անմեղադրելի ցուցանել զբան նոցա կամ զնա* արտահայտությունը Մըխիթար Մեբաստացու աշխատասիրությունից է՝ «Եւ այսպէս զեղելոյ մոռացմանէն իւրաքանչիւր որ ջանայր զինքն անմեղադրելի ցուցանել» տարբերակով <sup>217</sup>, *անմեղադրելի առնել*-ը, գործածում է Պետրոս Արագոնացու երկի թարգմանիչը («զի ոչ կարիցեն անմեղադրելի առնել զինքեանս») <sup>218</sup>.

*անուամբ միայն (Մոսկ)*. բառակապակցությունը կիրառում է Գաբրիել Ավետիքյանը («...և անուամբ միայն կրէ զկենդանութիւն

---

<sup>213</sup> <http://concordance.am/category/%D5%A3%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D6%80/%D5%B2%D6%87%D5%B8%D5%B6%D5%A4-%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF> Տե՛ս նաև՝ <https://khachik-aper.do.am/Ghevond.pdf>

<sup>214</sup> Տիեզերական պատմություն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակ, աշխատ. Հ. Յովսեփայ վ. Գաթրըրճեանց, հ. Ա, Հին պատմություն, Վիեննա, 1849, էջ 240:

<sup>215</sup> Մեկնություն սաղմոսաց, հ. Է, Վենետիկ, 1820, էջ 343:

<sup>216</sup> Մրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ Երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827, էջ 207:

<sup>217</sup> Մեկնություն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթեոսի, էջ 375:

<sup>218</sup> Գիրք մոլութեանց, էջ 435:



մարմնոյ և ախորժանաց նորա»<sup>219</sup>, Հարություն Ավգերյանը երկլեզվյան բառարանում այդպէս է բացատրում *Nominal*-ը<sup>220</sup>.

«Եթէ պիտոյ իցէ» նշումով *վերջին վախճան (Վախճան)*. բառակապակցությունը կիրառում են Յոհան Պոնայի աշխատության թարգմանիչը («Ի վերջոյ վախճանէն արտուղի մարդն մինչ մեղանչէ. որ է պատճառ ամենից չարեաց») <sup>221</sup>, Մխիթար Մեքաստացին («... զի երանութիւն՝ որ է վերջին վախճան մեր՝ է կրկին ....») <sup>222</sup>, Մկրտիչ Ավգերյանը («Պատշաճ էր աստուծոյ հօր, վասն որոյ ամենայն, ոտ որ կարգեալ են ամենայն իբրև ի վերջին վախճան») <sup>223</sup>, Միքայել Չամչյանցը («... և յարիլ ի ստեղծուածս՝ իբր յայն ինչ՝ որ իցէ վերջին վախճան», «... ո՛չ իբր ի վերջին վախճան, այլ իբր յայնպիսի բարի՝ որ ո՛չ կարգի առ աստուած իբր առ վերջին վախճան») <sup>224</sup>: Այն առկա է «մեծամեծաց վարդապետաց մերոց» նվիրված երկի թարգմանության մեջ («Իսկ թէ ի գործս՝ հուպ վախճան դնիցի աստուած, և վերջին վախճան ժամանակաւորս, ամեննին թիւր է: .... հաւիտենականն եղիցի վերջին վախճան») <sup>225</sup>.

նույն ՆԲՇ-ից նույն նշումով *վախճանական պատճառ* բառակապակցությունը կիրառում է Մկրտիչ Ավգերյանը <sup>226</sup>: Մանվել Ջախջախյանն այն արձանագրում է աստղանիշով, այսինքն՝ որպէս նոր բառ՝ իտալերէն՝ *Cáu sa finale; fine* թարգմանելիս (ՋԲ, էջ 1292): *Կատարումն* բառահոդվածում բառակապակցությունը որպէս բացատրություն են նշում ՆՀԲ-ն (հ. I, էջ 1063) և ԱԲ-ն (էջ 426).

<sup>219</sup> Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. III, էջ 490:

<sup>220</sup> Բառարան անգղիարէն եւ հայերէն, հ. Ա, էջ 581:

<sup>221</sup> Ձեռքածութիւն յերկինս, էջ 74 (նշվում է աշխատության PDF ձևաչափով տարբերակի էջը):

<sup>222</sup> Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի, էջ 121:

<sup>223</sup> Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ, հ. III, էջ 56:

<sup>224</sup> Մեկնութիւն սաղմոսաց, հ. Գ., էջ 571:

<sup>225</sup> Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյն մեծին Ալպերտի, Վէնետիկ, 1715, էջ 310:

<sup>226</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Դ., էջ 203:

*խնամակալ տան (Վերակացու)*. բառակապակցությունը գործածում է Միքայել Չամչյանցը («... և փոքրենտիոս պատրիկ խնամակալ տան կայսեր՝ ըստ միջնորդելոյ կրիսսափեայ...»)<sup>227</sup>.

*եհաս համբաւ նորա մինչև (Տարածեալ)*. արտահայտությունը հիշատակվում է Մկրտիչ Ավգերյանի երկասիրության մեջ («Եհաս համբաւ նորա մինչև ի հեթանոսս, և յոյժ խռովեաց զնոսս»)<sup>228</sup>:

*Տարբեր բառարաններում վկայվող բառակապակցություններ և արտահայտություններ. ա) XVIII դարում հրատարակված*

*կապել շղթայիք (Բանտ)*. արձանագրում են Հակոբ Վիլյոտը *Ligo* բառահոդվածում<sup>229</sup>, Մանվել Ջախջախյանը՝ *Aggratigliare*-ն թարգմանելով «կապել շղթայիք, ի բանտ արկանել»<sup>230</sup>, Մկրտիչ Ավգերյանը («... ածին զնա հաւատով անդր՝ կապեալ շղթայիք ի սայլ մի»)<sup>231</sup>, Մխիթարյան միաբանության հայրերը՝ *Catenare* բառահոդվածում<sup>232</sup>, Հովսեփ Գաթըրճյանը («... եւ զբունն կապել շղթայիք»)<sup>233</sup>: ՆՀԲ-ում *երկայթակապ առնել*-ը բացատրվում է «կապել շղթայիք» (հ. I, էջ 686), իսկ *Շղթայ* բառահոդվածում՝ հիշատակվում «Կապեալ կրկին շղթայիք» օրինակը (հ. II, էջ 480).

*տոգորել զունով (Ներկել)*. Հակոբ Վիլյոտը *Coloro* բառահոդվածում «զունել: զունաւորել: ներկել» բայերին հավելում է նաև «ներկի: տոգորել»-ն ու «երանգաւ զունել»-ը<sup>234</sup>: Հարկ է նկատել, որ ՆՀԲ-ում՝ *Տոգորել* բառահոդվածում, արձանագրվում է նաև «ներկանել» նշանակությունը (հ. II, էջ 887).

<sup>227</sup> ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի սկզբանէ յաշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, էջ 129:

<sup>228</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Զ, էջ 9:

<sup>229</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, էջ 445:

<sup>230</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ, էջ 26:

<sup>231</sup> Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Զ, էջ 517:

<sup>232</sup> Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, p. 166:

<sup>233</sup> Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս, աշխատ. Հ. Յովսեփայ վրդ. Գաթըրճեանց, հ. Ա, Հին պատմութիւն, էջ 327:

<sup>234</sup> Անդ, էջ 129:

(եթե հարմար իցե բանին դիր ևս) նշումով *արդարացուցանել զբան նոցա կամ զնա (Ջատագովել)*։ Հակոբ Վիլլոտը *Verifico*-ն թարգմանելիս նշում է՝ *արդարացուցանել զբան իւր*<sup>235</sup>, Մեսրոպ Թաղիադյանցը՝ *արդարացուցանել զբան քո* տարբերակով («Ի հարկե ասե, դու այդպէս կարես արդարացուցանել զբան քո ....»)՝<sup>236</sup>։

*անդուռն բերան (Շատախու)*։ բառակապակցությունն արձանագրում է Հակոբ Վիլլոտը՝ *Blatero* բառահոդվածում նշելով *անդուռն բերան ունիլ* և *անդուռն բերան ունի* բացատրությունները<sup>237</sup>, այնուհետև՝ ՆՀԲ-ն՝ *Անդուռ* բառահոդվածի վերջում՝ «\*Անդուռն բերան,» յն. բարդեալ բառ. «ἀδυσροστομία» նշումով (հ. I, էջ 135), Աղեքսանդր Խուդաբաշյանցը՝ *անդուռն բերան*-ը թարգմանելով "болтунъ, пустомѣля" (ԽԲՀՌ, հ. I, էջ 60), և Արսեն Բագրատունին («Կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք, և ոչ ամենևին ունել անդուռն բերան նման այլոց կանանց.- այս ինքն ոչ ունող անդուռն բերան»)՝<sup>238</sup>։

*արկանել գտերմանիս յերկիր (Սերմանել)*։ վկայում է Հակոբ Վիլլոտը *Confero, ere, argum. Սերմանել: ցանել գտերմն յագարակի: ցան առնել* բառահոդվածում<sup>239</sup>։ ՆՀԲ-ն Աստվածաշնչից արձանագրում է *սերմանեաց սերմ յերկրին* տարբերակը (հ. II, էջ 709)։

*ամանել յաման (Քաղել)*։ Հակոբ Վիլլոտն արտահայտությունը գործածում է՝ թարգմանելով «Պահել: պարհել: համբարել: ի պահ ունիլ» նշանակությամբ *Reverso*-ն և *Servo*-ն<sup>240</sup>։ ՆՀԲ-ն հիշատակում է «Յաման մի՛ ամանեցես» քնագրային օրինակը (հ. I, էջ 51)։

<sup>235</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 725:

<sup>236</sup> Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Թաղիդեանց ի Հայս, հ. I, Կալկաթա, 1847, էջ 370:

<sup>237</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 84:

<sup>238</sup> Տարեքք հայերէն քերականութեան դպրատանց տղոց համար, Յօրինեց Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Վենետիկ, 1848, էջ 264:

<sup>239</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, p. 161:

<sup>240</sup> J. Villotte, Dictionarium Novum Latino-Armenium, pp. 626, 656:

*բ) XVIII դարից հետո հրատարակված*

*փայտ պտղաբեր (Բոյս)*. ՆՀԲ-ն բառակապակցությունը վկայում է *Պտղաբեր* բառահոդվածում՝ մատենագրության մեջ հանդիպող *Ծառ կամ փայտ պտղաբեր* տարբերակով (հ. II, էջ 663).

*դալար վայրի (Բուսոյ/ց տեղի)*. ՆՀԲ-ն *Վայր* բառահոդվածում նշում է *Ի վայրի դալարուք* տարբերակը (հ. II, էջ 778).

*գալարումն աղեաց (Գուլթ)*. ՆՀԲ-ն հիշատակում է *Գուլթ* բառահոդվածում՝ վկայելով՝ «Οιχτωμός, οδζτωφον. Miseratio. մանաւանդ՝ Σπλάγγνα. Viscera. (որ են աղիք. իսկ ըստ հյ. որպէս թէ խութ կամ խթումն և գալարումն աղեաց)» (հ. I, էջ 578): Միևնույն ժամանակ *Գալարեմ* բառահոդվածում հիշատակվում են բնագրային օրինակներ Աստվածաշնչից («Գալարէին աղիք նորա») և Եզնիկ Կողբացուց («Զաղիսն գալարեն...») (ՆՀԲ, ն.տ.).

*անկաւ ահ ի վերայ նորա, եղև ահ ի վերայ ամենեցուն, ահ կալաւ զամենեսին (Երկնչի)*. ՆՀԲ-ում արտահայտությունները նշվում են *Ահ* բառահոդվածում (հ. I, էջ 28).

*անօթ պատերազմի, գործի պատերազմի (Զէն)*. բառակապակցությունները ՆՀԲ -ն վկայում է *Անօթ* և *Գործի* բառահոդվածներում (հ. I, էջք 256, 576).

*կայուն ինչք և գնայուն ինչք (Ինչք)*. առաջին բառակապակցությունը որպես «նոր բառ» արձանագրում է Մանվել Ջախջախյանը («\*Կայուն ինչք: կալուածք: տ. ազարէթ, միւլք. I beni immobili» (ՋԲ, էջ 746). այն հիշեցնում է արդի հայերենում կիրառվող «անշարժ գույք՝ ունեցվածք»-ը (ԱՀԲԲ, էջ 74): Երկրորդը վկայում է Մխիթար Մեբաստացին՝ *Կայուն* բառահոդվածում նշելով «Իսկ թէ զինչ իմանի՝ մինչ ասի կայուն և գնայուն ինչք: տե՛ս գԳնայունն», որն էլ բացատրում է «... գնացական... և կամ անցաւոր, ուստի ստացուածքն, կամ ինչքն, որք ոչ մնան կայուն, այլ գան, և երթան. որպիսիք են դրամք, կամ վաճառք վաճառականաց, և այլք նմանք, ասին՝ գնայունք» (ԲՀԼ, էջք 431 (464), 188 (217)). այն համեմատելի է Ստեփան Մալխասյանցի իբրև իրավաբանական եզրույթ արձանագրած «Շարժական գոյք կամ ստացուածք»-ին (ՍՀԲԲ, հ. III, էջ 506).

*ցայթ լուսոյ (Լոյս)*. ՋԲ-ն բառակապակցությունը վկայում է *Տայտք* բառահոդվածում որպես «նոր բառ» և «ոամկօրէն» «ծաթելը» նշանակությամբ (էջ 1407).

*շառաւիղ լուսոյ (Ճառագայթ)*. վկայում են Մանվել Ջախջախյանը՝ թարգմանելով *խտալերեն Refrangibile*-ն և *Refratto* բառերը<sup>241</sup>, ՆՀԲ-ն և Մանվել Ջախջախյանը *Ճառագայթ* բառահոդվածում՝ որպես բացատրություն (ՆՀԲ, հ. II, էջ 172: ՋԲ, էջ 927).

*հրամանաւ արգելուլ (Հրամայել)*. նշում են Մանվել Ջախջախյանը՝ *Divietare*-ն թարգմանելով «արգելուլ հրամանաւ»<sup>242</sup>, *Խափանիլ* բառահոդվածում *արգելանիլ հրամանաւ* տարբերակով (ՋԲ, էջ 667), և Հարություն Ավգերյանը՝ վկայելով *Décrier* բառահոդվածում<sup>243</sup>.

*ընդունել զգոյն (Ներկել)*. Մանվել Ջախջախյանը կիրառում է իտալերեն *Incolorarsi*-ն թարգմանելով նաև «գունաւորիլ, ներկանիլ»<sup>244</sup>.

*անսանձ լեզու (Շատախիտ)*\*. ՆՀԲ-ի վկայությամբ՝ առկա է Մարգիս վարդապետի երկում (հ. I, էջ 234).

*թուիլ նմա, երևիլ նմա (Կարծել)*. հարկ է անդրադառնալ ՆՀԲ-ում առկա *Կարծեմ* և *Երեւիմ* բառահոդվածների բացատրություններին. առաջինի դեպքում այն համապատասխանում է ՋԲ-ում վկայվող ՆԲԾ-ին՝ «Համարել, վարկանել, դատել. թուիլ ինքեան», երկրորդի համար ՆՀԲ-ն նշում է. «Բայց առաւել ասի ի մեզ Թուի, ուր ուրեք յոյնք ասեն, Չար երևի, խիստ երևի, և այլն» (հ. I, էջք 1069, 678-679).

*ժողովել ի շտեմարան (Քաղել)*. վկայում է Մխիթարյան միաբանության հայրերի կազմած քառալեզվյան բառարանը *Ripósta* բառահոդվածում *Far-, faire provision*-ը թարգմանելիս<sup>245</sup>:

<sup>241</sup> Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, էջ 614:

<sup>242</sup> Անդ, էջ 273:

<sup>243</sup> Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, էջ 193:

<sup>244</sup> Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, էջ 349:

\* ՄՄՁ 6762-ում (119բ) *սպերասան անսանձ լեզու* տարբերակն է: ՄՀԲԲ-ն *սպերասան լեզու*-ն վկայում է «անգուսպ, անզգամ» նշանակությամբ (հ. I, էջ 208):

*Բառարաններում վկայվածների նմանությամբ բաղադրվածներ*

*հնուտ արուեստին (Արհեստաւոր)*. ՆՀԲ-ն *Հնուտ* բառահոդվածում նշում է «Գիրք պիտոյից»-ից քաղած «*հնուտ արուեստաւորք, կամ լտոդք*»-ը (հ. II, էջ 104), իսկ ՍՀԲԲ-ն՝ նշված բառահոդվածում ներկայացնում «Նա հնուտ է արհեստին (կամ արհեստի մէջ)» օրինակը (հ. III, էջ 114).

*լի ցասմամբ (Բարկանայ)*. ՆՀԲ-ն *Լի* բառահոդվածում՝ բընագրային օրինակում, վկայում է *լի չարեօք*-ը (հ. I, էջ 885).

*անտառի մայր (Բոյս)*. բառակապակցության համար պարզապես հարկ է հղել ՀԱԲ-ի *Մայր* բառահոդվածը, որում նշվում է. «... անտառային մի բարձր ծառ է. ըստ ՆՀԲ եղին, նոճի, թեղօշ, ըստ Արթինեան, Աստուածաշունչի տունկերը... որից *մայրի* «անտառ» ....», որ վկայում են «ՍԳր. Վեցօր. Եղիշ.»» (ՀԱԲ, հ. Գ, էջ 247).

*ական հատանող (Գողոյ տեսակք)*. ըստ ԳԴԲ-ի՝ *ական հատանել* ԴՄ-ն բազմիցս գործածվում է Աստվածաշնչում՝ որպես «ական փորել, փոս՝ անցք բացել»՝ «Ուր գողք ական հատանեն և գողանան... Գող ական հատանէ և տանի... Եւ ոչ գողք ական հատանեն և գողանան...» (էջ 20).

*անցեալ զաւորք, հնացեալ ժամանակաւ, յեցեալ յալիս ծերութիւն, մերձեցեալ ի գերեզման (Ծերունի)*. հիշեցնում են գրաբարի տպագիր բառարաններում և հայ մատենագրության մեջ վկայվող *անցանել զաւորքք* («օրերն անցած լինել, ծերանալ». ԳԴԲ, էջ 33), *հնացեալ ծերութեամբք կամ աւորքք* (ՆՀԲ, հ. II, էջ 106), *յալիս ծերութեան* («Մեռաւ յալիս ծերութեան. այլ չէ յայտ թիւ ամաց աւորց կենաց նորա»<sup>246</sup>, «...թէպէտ և յետոյ յալիս ծերութեան իւրոյ յաւուրս Դեկոսի կայսեր տարաւ անտանելի տանջանաց վասն հաւատոց...»<sup>247</sup>), *մերձեցեալ ի գերեզմանն* («Մեք այնպէս թմբբեալ եւ անկանգնելի ի վայր անկեալ էաք, եւ մի ոմն ի նոցանէ աներկիւղ

<sup>245</sup> Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, p. 829:

<sup>246</sup> Վարք նախնի իմաստասիրաց, Համառօտեալ ի Հ. Յակոբոսէ վարդապետէ ճէլալեան, էջ 161:

<sup>247</sup> Պատմութիւն եկեղեցական հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատ. տեառն Իգնատիոսի վ. Փափագեանց, 1848, Վենետիկ, էջ 111:

եւ անկասկած մերձեցեալ ի գերեզմանն հայեր. եւ իբրեւ զմարմինն անդ ոչ տեսանէր...»)<sup>248</sup> բառակապակցությունները. վերջինս էլ՝ «ծերանալ, մոտալուտ մահվան առաջ կանգնած լինել» նշանակությամբ *գերեզմանի դուռը հասնել* ԴՄ-ն (ՀԼԴԲ, էջ 137).

*ինքնակամ մտք, յօժարամիտ սրտի* (*Կամաւ իւրով*). ՆՀԲ-ում *ինքնական կամօք* տարբերակն է Ագաթանգեղոսի երկից (հ. I, էջ 858), *յօժարամիտ կամօք*-ը՝ «Գիրք պիտոյից»-ից (հ. II, էջ 380).

*տեղի սրբութեան* (*Տաճար*). կազմվել է «տաճար» նշանակությամբ *յարկ սրբութեան*-ի նմանությամբ (տե՛ս ՆՀԲ, հ. II, էջ 347: ՄՀԲԲ, հ. IV, էջ 277): Նույնը վերաբերում է նաև *տեղի փառաբանութեան* բառակապակցությանը, իսկ *տունն աստուծոյ*-ը արձանագրում է միայն ՄՀԲԲ-ն՝ նշելով «Աղօթքի տուն կամ աստծու տուն, Եկեղեցի» (հ. IV, էջ 436).

*դրօշակ հանդերձի, վերջաւորք հանդերձի* (*Քղանց*). ՆՀԲ-ն *Ստորոտ* բառահոդվածում արձանագրում է *ստորոտ հանդերձի*-ն՝ «քղանցք հանդերձի» (հ. II, էջ 751), *Տուտ* բառահոդվածում էլ՝ *տտուն հանդերձի*-ն՝ «Որպէս դրօշակ հանդերձի, քղանցք, ծոպք» նշանակությամբ (հ. II, էջ 892):

Այսպիսով՝ կարելի է հավաստել, որ բառարանագիրները, քաջածանոթ հայ ինքնուրույն և թարգմանական գրականությանը, վերոնշյալ կազմությունները ուսուցողական նպատակներով ներառել են ՆԲՇ-ներում մինչև բնագրային օրինակներով համալրված՝ գրաբարի բառարանները կազմելը և հրատարակելը կամ թերևս դրանց զուգահեռ: Ակնհայտ է նաև՝ դրանք առկա են XVIII դարում և XVIII դարից հետո լույս տեսած բառարաններում, քերականական և պատմական տարբեր աշխատություններում: Մի շարք կազմություններ էլ առաջին անգամ վկայվում են քննվող ՁԲ-ներում՝ հետագայում արձանագրվելով հայոց լեզվի բառարաններում:

<sup>248</sup> Եղիշե, Խրատք.

<http://www.digilib.am/book/1395/1694/12476/%D4%BD%D6%80%D5%A1%D5%BF%D6%84>

## SUMMARY

Catalogs of manuscripts by Matenadaran (Research Institute of Ancient Manuscripts) named after Mesrop Mashtots are attested by five XVIII century manuscripts, in which the handwritten dictionaries of synonyms are generalized. They've never been studied.

Compared to handwritten dictionaries of previous centuries, the structural features of these dictionaries are the following: they have alphabetical layout of words, new synonymous rows and capital words, as well as synonymous rows represented by several rows. These handwritten dictionaries are allocated by synonymous series that include the concepts differing by type, phraseological units and descriptive expressions.

1. There are words identical in meaning, but have some sound differences in these handwritten dictionaries. In Armenian linguistics, they are treated as word variants. In order to present the facts holistically, in order to avoid repetition and artificial expansion of the statement the researched variants of words are highlighted to reconcile all these dictionaries. From the research, it becomes clear, that the largest number are spelling variants of words, word-forming ones, however, are limited to several derivatives, and which also show (or it may be assumed) that these dictionaries have been created or copied in Western Armenia.

2. According to researchers, the "antiquity" of handwritten dictionaries of synonyms "dates back to the XII century, however, it actually refers to an earlier period". Therefore, the handwritten dictionaries of synonyms attested from the XVIII century can also be attributed "to an earlier period", namely before the publication of dictionaries of the ancient Armenian language or, possibly, in parallel to them. Considering the synonymous rows of handwritten dictionaries of Medieval Armenia, the researchers noted that sometimes synonymy is expressed not only in one word (synonym), but in a whole phrase, in a descriptive way. This note can be supplemented with analytical constructions, from which, as the linguists state, compound verbs are distinguished in the middle Armenian language. The above-mentioned phenomena are also observed in range of synonyms of handwritten dictionaries attested from the XVIII century, which clearly identify the phraseological units, compound verbs and descriptive expressions taken from the Armenian independent and translated literature. As a



support to the aforesaid, these constructions are represented by the following classifications: recorded in the Bible, only in textual examples, in different dictionaries published in the XVIII century and later.

3. On the issue of changes to the meaning of words in these dictionaries, some words are fixed by new lexical meanings and nuances. There are no textual examples in these dictionaries, therefore an attempt is made to confirm the existence of the meaning of words by dictionaries published in the XVIII century and later, and, to the extent possible, textual examples are taken from Armenian independent and translated literature.

The words արդիւնաւորել (ardyunavorel), բացասել (batsasel), բնախոս (bnakhos), զչարել (zcharel), խարդախամիտ (khardakhamit), իշտի (khshti), խստավզել (khstavzel), խուել (khuel), կամակոր (kamakor), պարապել (parapel), վերատրել (veratrel), քնափ (knaph) are highlighted and considered.

Comparing and exploring the meanings of the words արգահատել (argahatel) "to regret", գրեհիկ (grehik) "peasant", գիւղական (gyuaghakan) "peasant", զլանալ (zlanal) "to deny", խօսնակ (khosnak) "eloquent", ձերնտու (լինել) (dzerntu (linel)) "to help", սեթևեթել (setevetel) "to decorate" by dictionaries in ancient Armenian and modern Armenian, it turns out that their primary meanings, testified in the dictionaries of the modern Armenian language, have not been preserved: these words were already used in the end of the XX century in new meanings: (argahatel "to despise", grehik "rude", gyuaghkan "rural", zlanal "to avoid", khosnak "speaker", dzerntu (linel) "to be profitable", setevetel "attitudinize").

4. Gevorg Jahukyan, reviewing and refining the proposed etymologies of some "recently found" words testified in medieval dictionaries, notes that the study of lexicographic monuments of Medieval Armenia provides important material for the history of the Armenian language and etymology. This can be unconditionally attributed to handwritten dictionaries of synonyms attested from the XVIII century. As already mentioned, there are no textual examples in these dictionaries, therefore an attempt is made to confirm the existence of words by structures of the Armenian language formation, dictionaries published in XVIII century and later, and, to the extent possible, textual examples taken from the Armenian independent and translated literature.

The handwritten dictionaries of synonyms attested from the XVIII century include words, which were not testified in the printed dictionaries of the ancient Armenian and are newly created (and are referred to as "new words"). The following words and verbs are considered:

**derivative words:** այլային (aylayin), անդապան (andapan), անձինշ (antshinsh), ասպատակութիւն (aspatakutyun), ասպատակասփռութիւն (aspatakasphrutyun), գերակարող (gerakarogh), եփեցիկ (yepetsik), իշխուհի (ishkhuhi), մանաւանդագոյն (manavandaguyun), յարգութիւն (hargutyun), ներքևակ (nerkevak), վայրագոյն (vayraguyun), տարաբաղդ (tarabakhd), ուսումնարան (usumnaran),

**compound words:** այլասարաս (aylasaras), ատենաբան (atenaban), փաստաբան (pastaban), գրաստախել (grastakhel), եզամարտութիւն (yezamartutyun), երկամարտութիւն (yerkamartutyun), թաթոտից (tatotits), խայտափիտ (khaytapit), խայտաճրմուկ (khaytatshemuk), իելաժետ (khelazhet), խաւարագոյն (khavaraguyun), խաւարատիպ (khavaratip), մթնալուրթ (mtnalurt), սևատես (sevates), հերաթափ (heratap), յոժարակամ (hozharakam), պարառու (pararu), ստապաշտ (stapasht), սքանչազեղ (skanchagegh), վայրախօս (vayrakhos), ցոփախօս (tsopakhos),

**simple verbs:** խոչել (khochel), նպարել (nparel), պարենել (parenel), անտունել (antunel), վարսել (varsel),

**derivative verbs:** առակցել (araktsel), առբասրել (arbasrel), բաղակցել (baghaktsel), հակազինել (hakazinel), հակամարտել (hakamartel), համակուտել (hamakutel), տարայարգել (tarahargel), տարացրել (taratsrel),

**compound verbs:** հարթահատակել (hartahataknel), նշանագծել (nshanagtsel), սակարկել (sakarkel), վատահամբաւել (vatahambavel), վարսաւիրել (varsavirel), տրտմակցել (trtmaktsel), փառապատուել (parapatvel), քարկապել (karkapel), օդապարել (odaparel).

Considering the aforementioned words and verbs, it turns out that the scribes created or added words and verbs that were used by contemporaries: some of these words are testified only in handwritten dictionaries, some in the dictionaries of J.Villotte, of Mkh. Sebastatsi (XVIII century), members of the Mekhitarist Congregation (XIX century) and according to

dictionary data they are preserved in Eastern and Western Armenian variants of the Armenian language.

Some "new words", discussed by H. Acharyan, in these handwritten dictionaries are fixed by new lexical meanings. The words դերասան (de-rasan), եփարան (yeparan), թարմ (tarm), կատակարան (katakaban), հոշել (hoshel), նրբամիտ (nrbamit) are considered.

5. Some synonymic rows of these handwritten dictionaries end with words, which existed in the Armenian dialects, and with loanwords and compounds with foreign words. These words are examined as interferences of the authors or copyists of the handwritten dictionaries: they replenished the rows with some words of their own dialects. In fact, they supplied and added what they knew.

The following dialectal words are considered: սկնապուշել (aknapushel), խզարել (khzarel), ծիւ-ծիւ առնել (tsiv-tziv arnel), ջաւ (jav), տոռնը (tornə), փողպատ (poghpat).

This research also includes words, which are used in one or two dialects of small area coverage and partly or fully incomprehensible. The restricted dialectal words սսօթել (amotel), անգահ (angah), խձուձ (khdzudz), բղուղ (bghugh), ջառն (jarn), սոպրանալ (sopranal), քշտել (kshtel) are considered.

The following loanwords and compounds with foreign words are reviewed: գահ (gah), թփանք (tpank), մանտիլ (mantil), դրակ (drak), պօզայ (poza), շիրէ (shire), շերպէթ (sherpet), արախ (arakh), գրապան (grapan), ռատ (rat), վարժակ (varzhak), դաստիշորն (dastishorn), աճապանալ (atshapanal), լղարանալ (lgharanal), շիւարեալ (shivaryal), ռոշնութիւն (roshnutyun), տնազել (tnazel), ույուշմիշ ըլլալ (uyushmish əlal). The loanwords are mostly borrowed from Iranian languages.

6. Phraseological units and descriptive expressions clearly distinguished in the synonymous rows are taken, as it turns out, from Armenian independent and translated literature. To support the argument, the phraseological units and descriptive expressions are represented by the following classifications: recorded in the Bible, only in textual examples, in different dictionaries published in the XVIII century and later.

Then, follows more detailed discussion of phraseological units not attested in the dictionaries of ancient Armenian, such as կշռաբեկ/կաշառաբեկ լինել (kshrabek /kasharabek linel), սուգ զգենուլ (sug zgenul), ի սուսերի սաստակել (i suseri satakel), ննջել ի տէր (nnjel i ter), լեզուն ի քիմսն կցել (lezun i kimsn ktse), մարդ ելուզանել (mard yeluzanel).

### Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Ե., 1974:

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Գիրք II (XI-XIX դարի 30-ական թ.թ.), Ե., 1946:

Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953:

Աբրահամյան Ա., Բայակազմական մի քանի երևույթներ ժամանակակից հայերենում, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 7-8, 1960:

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:

Ալիևեան Ն., Հ. Աճառեան. Հայերէն Արմատական Բառարան, Հանդէս Ամսօրեայ, 1930, թիւ 7, 8:

Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հհ. Ա, Բ, Ե., 1972, 1975:

Աղայան Է., Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աճառեան Հ., Թուրքերէնէ փոխառեալ բառերը հայերէնի մէջ, Էմիւնեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն.- Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների. Էմիւնեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեան, 1911:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Մաս II, Ե., 1951:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ե., հ. III, 1957, հ. IV, Ա Գիրք, 1959:

Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941:

Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:

Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Ե., 1966:

Ամալյան Հ., Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

Անապյան Հ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Ե., 1976:

Անթռայան Ս., Կեսարիայի բարբառը, Ե., 1961:

Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրական լեզուն և ոճը, Ե., 1984:

Ասատրյան Ս., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:

Բաղդասարյան-Թափալցյան Ս., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973:

Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958:

Բաղրամյան Ռ., Դերսիմի բարբառը, Ե., 1960:

Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե., 1964:

Բառնասյան Ջ., Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009:

Բեդիրյան Պ., Իմաստի փոփոխությունները հայերենում, թեկնատեն., Ե., 1955:

Բեդիրյան Պ., Հոմանիշների և նրանց առաջացման ուղիների մասին, Գիտական աշխատությունների Հայոց լեզվի բաժին N 1, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄԻ, Ե., 1965:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:

Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե., 2014:

Դանիելյան Թ., Մալաթիայի բարբառը, Ե., 1967:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, Ե., 1959:

Թոսունյան Գ., Աստվածաշնչի գրաբար բնագրում գործածված դարձվածքները, Լրաբեր հասարակական գիտությունների, 2, 2013:

Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006:

Իշխանյան Ռ., Հայ գիրքը (1912-1920), Ե., 1981:

Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Ե., 1969:

Խաչատրյան Ա., Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985:

Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստջեայ հաւելուածովք, Վենետիկ, 1896:

Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002:

Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ-XIX դ.), հ. 1, Ե., 2006:

Համբարձումյան Վ., XVIII-XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը, Հայոց լեզվի պատմության հարցեր. պրակ II, Ե., 1985:

Համբարձումյան Վ., Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010:

Համբարձումյան Վ., Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու, ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990:

Հայագիտության հարցեր, 1 (7), 2016:

Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV-XVIII դդ.), Քննական բնագիրը, առաջաբանը, ծանոթագրությունները՝ Մ. Մկրտչյան, Ե., 1979:

Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Ե., 1975:

Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ 3, Ե., 1991:

Հանեյան Ա., «Օիածան» հասկացության բառագուգաբանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր-մշակութային արժեքը.-Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Ե., 2005:

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Ե., 2008:

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (III մաս), Ե., 2018:

Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990:

Հովհաննիսյան Լ., XVII դարի գրաբարը.- «Լեզվի և ոճի հարցեր», VII, Ե., 1983:

Հովհաննիսյան Լ., Բառային տարբերակներ V դարի գրաբարում. - Հայոց լեզվի պատմության հարցեր, III, Ե., 1991:

Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:

Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Ե., 1993:

Ղազարյան Ռ., Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001:

Ղազարյան Ռ., Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010:

Ղազարյան Ս., Միջին հայերեն, Գիրք Ա, Ե., 1960:

Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, Ե., 1980:

Ղարիբյան Ա., Համառոտություն հայ բարբառագիտության, Ե., 1941:

Մանանդյան Հ., Երկեր, Գ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ե., 1977:

Մարգարյան Ալ., Ստուգաբանություններ, Ե., 2015:

Միրզոյան Հ., Սիմեոն Ջուղայեցի, Ե., 1971:

Մկրտչյան Հ., Կարևո բարբառը, Ե., 1952:

Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958:

Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971:

Մուրադյան Գ., Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Հնչյունաբանություն, հ. I, Ե., 1982:

Մուրադյան Հ., Բառային զուգաբանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ. Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., 1985:

Մուրադյան Մ., Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, 1, Ե., 1982:

Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955:



Յովհաննիսեան Ն., Հումանիշների ձեռագիր բառարանների տեսակներն ու կազմութիւնը, Հանդէս ամսօրեայ, թիւ 1-12, Վիեննա, 2005:

Նալբանդյան Գ., Պարսից լեզվի քերականություն, Ե., 1980:

Չալոյան Վ., Հայկական ռենեսանս, Ե., 1964:

Չուգասցյան Բ., Հայ - իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.), Ե., 1963:

Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:

Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Ե., 2014:

Ջահուկյան Գ., Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Ե., 1997:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Ե., 1954:

Ջահուկյան Գ., Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին.- Լրաբեր հասարակական գիտությունների, 12, 1976:

Միմոնյան Ն., Ստուգաբանական դիտարկումներ, Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, 130.2, 2010:

Մուքիասյան Ա., Հումանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971:

Մուքիասյան Հ., Աճականը հայերենում, Ե., 1986:

Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հհ. Ա, Բ, Ե., 1965, 1970:

Ուլուբաբյան Բ., Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981:

Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVIIդդ.), աշխ.-մբ` Հ. Սահակյանի, Ե., հ. Ա, 1986; հ. Բ, 1987:

Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982.

Джаукян Г., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

Микаелян Г., История Киликийского армянского государства, Е., 1952:

Орбели И. А., Избранные труды, т.1, Москва, 1968.

### Օգտագործված բառարաններ

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Ա- Դ, Ե., 1971, 1973, 1977, 1979:

Անգլերեն-հայերեն բառարան, իմբ.-մբ՝ Հ. Ասմանգուլյանի և Ս. Հովհաննիսյանի, Ե., 1984:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865: Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղեքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց, հհ. I, II, Մոսկով, 1838:

Բառարան Սուրբ գրոց, Կոնստանդնուպոլիս, 1881:

Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի, հ. III (Համառօտ հայերեն ի գաղղիերեն), Վենետիկ, 1893:

Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան, Վենետիկ, 1837:

Բառգիրք լատիներէն եւ օտարազգի դարձուածների. Համառօտ քերականութիւնով, Թիֆլիս, 1911:

Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամալյանի, Ե., 1975:

Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., 1973:

Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:

Բիւզանդացի Նորայր, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնեւ, 2000:

Գաբամաճեան Ս., Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ.Պօլիս, 1910:  
Գաբիկեան Կ., Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952:

Գայայեան Յ., Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938:

Էլոյան Ս., Նորաբանությունների բառարան, Ե., 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., հհ. I-IV, 1969, 1972, 1974, 1980:

Կռանեան Ա., Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրուս, 1998:

Հախվերդյան Լ., Թատերագիտական բառարան, Ե., 1986:

Համառոտ բառարան ի պէտս նորավարժից, Վենետիկ, 1859:

Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան Յօրինեց Պետրոս վարդ. Ճիզմէճեան, հհ. I, II, Հալէպ, 1954, 1957:

Հայերէն գաւառական բառարան, Յօրինեց Հրաչեայ Աճառեան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Հայոց բառ ու բան, Աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի, Վաղարշապատ, 1912:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:

Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ.Կ. Տօնիկեան, Պէյրուս, 1968:

Հայոց լեզուի նոր բառարան, Աշխատասիրեցին՝ Գ. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հհ. I, II, Պէյրուս, 1992:

Հիւրմիւզեան Եղ., Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ հանդերձ ոճովք եւ բացատրութեամբք նախնեաց, Վենետիկ, 1869:

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010:

Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հհ. Ա-Բ, Ե., 2000:

Ղազարեան Ռ., Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե., 2012:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հհ. Ա - Բ, Ե., 1987, 1992:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Ղազարեան Ռ., Աւետիսեան Հ., Նորայայտ բառեր գրաբարում, Ե., 2007:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հհ. I- IV, Ե., 1944-1945:

Մուշեղյան Եղիա Կարնեցի, Թուրքերեն-հայերեն բառարան, աշխ. -մբ Բ. Չուգասզյանի, Ե., 1986:

Նալբանդյան Գ., Պահլավերեն-հայերեն բառարան, Ե., 1994:

Նաւասարդեանց Տ., Բառգիրք Արարատեան բարբառի, Տփխիս, 1903:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքյան, Հ. Խաչատրոյ Միրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Վենետիկ, հ. I, 1836; հ. II, 1837:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով, հհ. 1-5, Ժնև, 1990:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սարգսյան Ա. Ե., Արևմտահայերենի բառարան, Ե., 1991:

Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

Սարգսյան Ա., Մինայան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Ե., 2017:

Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Ե., 2011:

Մուքիսայան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

Մուքիսայան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Баранов Х., Арабско-русский словарь, Москва, 1984.

Ганшина К. , Французско-русский словарь, Москва, 1977.

Малинин, А. Латинско-русский словарь, Москва, 1961.

Персидско-русский словарь, тт. I, II, Москва, 1983.

Турецко-русский словарь, Москва, 1977.

«Գրահավար» կայքի «Որոնում հայերեն բնագրերի առցանց շտեմարաններում» հարթակի միջոցով վկայվող աշխատասիրություններ և բառարաններ

Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, աշխատ. Ստեփաննոսի Ագոնց, Մասն III, Վենետիկ, 1801:

Աշխարհագրութիւն չորիս մասանց աշխարհի, աշխատ. Ստեփաննոսի Ագոնց, Մասն II, հ. Գ, Վենետիկ, 1802:

Աստուածաբանական եւ բարոյական մեկնութիւն կաթողիկէաց գրոց երանելոյ Յակոբու առաքելոյն, արարեալ և շարադրեալ ի հայր Ֆրանչէսկոս Դունելլեան, Վենետիկ, 1749:

Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց, հ. II, Վենետիկ, 1805:

Բազմավէպ, օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց, աշխատասիրութիւն Մխիթարեան միաբանից, հ. Ա, Վենետիկ, 1843:

Գազանճեան Յ., Եւրոկիոյ հայոց գաւառաբարբառը, Վիեննա, 1899:

Գիրք Թօմայի Քեմփացոյ: Յաղագս. Համահետեւմանն Քրիստոսի: Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ յովմերախտ Վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, Ամստէրոդամ, 1696:

Գիրք հրաշից ամենօրինեալ սուրբ Աստուածածնին հաւաքեալ թարգմանաբար ի հայ բարբառ ի զանազան պատմութեանց իտալացի հեղինակաց, ի հայր զաքարեա վարդապետէ ակնեցոյ, 1771, Վենետիկ:

Գիրք մոլութեանց Շարադրեալ ի Պետրոսէ արեղայէ Արագոնացոյ (Թարգմանեալ ի լատինականէն ի հայ բարբառ, ի գաւառն նախչուանու, 1339), Վենետիկ, 1773:

Գիրք որ կոչի ընդհանրական, արարեալ Սրբազնասուրբ հայրապետին մերոյ՝ տեառն Ներսէսի Շնորհալոյ, Սանկտպետրբուրգ, 1788:

Գիրք պատմութեանց Շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրեժացոյ, Ամսթէլոյում, 1669:

Գրաբարի համաձայնութիւնը, կազմեց Ստ. Մալխասեանց, Թիֆլիս, 1892:

Գումար բարձրագոյն հրովարտակաց եւ արձանագրութեանց, վերաբերելոց առ հայկական Լազարեան ճեմարանն արևելեան լեզուաց որ ի Մոսկով, Ս. Պետերբուրգ, 1839:

Դեղ կենաց իբր հոգեւոր բժշկարան, յօրինեալ ի Հ. Սկրտիչ վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, 1842:

Եզնրկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Երանելոյն Կիւրդի Երուսաղեմայ Հայրապետի Կոչումն Ընծայութեան, Վիեննա, 1832:

Ժամանակագրութիւն եկեղեցոյ Հայաստանեայց ըստ կարգաւորութեան սրբոց թարգմանչաց եւ այլոց սրբոց հարց մերոց, Վիեննա, 1839:

Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցոյ Հայաստանեայց, յօրինեալ վաւերական բանիք ճառընտրաց մերոց և այլոց ազգաց հանդերձ ծանօթութեամբք Ի հ. Սկրտիչ վրդ. Աւգերեան, հ. Բ., Վենետիկ, 1811: հ. Գ., Վենետիկ, 1812: հ. Դ., Վենետիկ, 1813: 1813: հ. Ե., Վենետիկ, 1813: հ. Ը., 1813, Վենետիկ:

Խոկումն վարուց: Շարադրեալ ի Միխիթարայ Աբբայէ մեծէ, Վենետիկ, 1753:

Խրախճան պատմութեան Հայոց, յօրինեալ ի Հայր Միքայէլ վրդ. չամչեանց, Վենետիկ, 1811:

Կարճառօտագունեղ Համառօտութիւն Ընդհանրականի Աստուածաբանութեան Խոկականի, ուսումնականի, դրականի, բարոյականի, և այլ: Ստորասականաւ խօսակցութեամբ: Շարադրեցեալ ի

- լատինականի լեզուչ ի Գերապատուելոյ Խաչատրոյ Երզրումեց-  
 ւոյ Աստուածաբան Վարդապետէ, Վենետիկ, 1736:
- Կրթութիւն ապաշխարողի, Վենետիկ, 1751:
- Համառօտութիւն աստուածաբանութեան երանելոյն մեծին Ալ-  
 պերտի, Վենետիկ, 1715:
- Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան շարադրե-  
 ցեալ ի Խաչատրոյ Երզրումեցոյ, Վենետիկ, 1709:
- Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիսատր աստեղաց, Գը-  
 րեաց Հ. Պօղոս վարդապետ Յովնանեանց, Վիեննա, 1841:
- Ձեռքածութիւն յերկինս, Յօրինեցեալ աշխատասիրութեամբ տեա-  
 ւոն Յոհաննու Պօնաի, Եւ թարգմանեցեալ ի հայկական բարբառ,  
 ի Վարդանայ Յունանեան, Հռոմ, 1674:
- Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի  
 հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Շարագրեալ Հ.  
 Մինասայ Բժշկեանց, Վենետիկ, 1830:
- Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Թաղիդեանց ի Հայս, հ. I, Կալ-  
 կաթա, 1847:
- Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցոյ Հայաստան-  
 յայց ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց, Վենետիկ, 1837:
- Մեկնութիւն գրոց Ժողովողին, Արարեցեալ և շարադրեցեալ ի Մը-  
 իսիթարայ վարդապետէ Սեբաստացոյ, Վենետիկ, 1736:
- Մեկնութիւն չորեքսասան թղթոյ երանելոյն Պօղոսի առաքելոյ,  
 աշխատ. Հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցոյ, հ. II,  
 Վենետիկ, 1811: հ. III, Վենետիկ, 1812:
- Մեկնութիւն սաղմոսաց, յօրինեալ ի Հ. Միքայէլ վրդ. Չամչեանց, հ.  
 Գ., Վենետիկ, 1817: հ. Է, Վենետիկ, 1820:
- Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի  
 որ ըստ Մատթէոսի, Արարեցեալ և շարադրեցեալ ի Միս. Սեբաս-  
 տացոյ, Վենետիկ, 1737:
- Մենկվիշեան Գ., Պատկերագարդ բնական պատմութիւն, Ա. Կեն-  
 դանաբանութիւն վարժարաններու եւ գիմնազիոններու համար,  
 Վիեննա, 1897:

Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913:

Յանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի, իմբագրեաց Խորէն Վ. Գալֆայեան, Թեոդոսիա, 1862:

Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոց Պաղոսի, հ. I, Վենետիկ, 1862:

Յովսէփայ գեղեցկի գրոյցք ընդ Ասանեթայ ամուսնոյ իւրոյ, յօրինեալ տեառն Իսահակայ ծ. վրդ. Անկիւրացոյ, Յերուսաղէմ, 1849:

Նարեկ աղօթից հարագատ և զգուշաւոր լուծմամբք նորոգ բացայայտեալ, ի նպաստ բանասէր աղօթաւորաց, աշխ.-մբ Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդինուպօլսեցոյ, Վենետիկ, 1801:

Նարեկ աղօթից, Համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Վենետիկ, 1827:

Շտեմարան պիտանի գիտելեաց, հ. III, Զմիւռնիա, 1841:

Շրօղէր Յ., Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711:

Պատմութիւն եկեղեցական հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատ. տեառն Իգնատիոսի վ. Փափազեանց, Վենետիկ, 1848:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, Յօրինեալ ի Հ. Միքայէլ վրդ. չամչեանց կոստանդինուպօլսեցոյ, հ. Ա., Վենետիկ, 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, հ. Գ, Վենետիկ, 1786:

Պատմութիւն պարսից Յօրագրէ Մեսրոպայ Թաղիաղեանց, հ. Ա, Կալկաթա, 1846:

Պատմութիւն վարուց մեծին Կոստանդիանոսի ինքնակալի: Աշխատասիրեալ ի հ. Գէորգայ Ոսկեանց, Վիեննա, 1926:

Պլուտարքեայ Քերովնացոյ Զուգակշիռք, թարգմ. ի բնագրէն հ. Եղիայ վրդ. Թումաճանի, հ. Ա, Վենետիկ, 1832:

Մովերք հայկականք, ԺԲ, Վենետիկ, 1854, էջ 31:

Մպասաւորութիւն սրբոյ պատարագի, Թրեստ, 1785:



Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861:

Ստորագրութիւն հին Հայաստանեայց տեառն Հ. Ղուկաս վարդապետի Ինձիճեան, Վենետիկ, 1822:

Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հ. I, Վենետիկ, 1836:

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ Երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827:

Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից վանականի մատենագրութիւնք, Վենետիկ, 1840:

Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից վանականի ողբերգութիւն, Չմիւտնիա, 1843:

Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843:

Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսոյ արքեպիսկոպոսի հատընտիր զիրք եւ ճառք եւ ներբողեանք, Թարգմանեալ ի յոյն բնագրէ երկասիրութեամբ տեառն Հ. Եղիայ վարդապետի Թովմաճանեան կոստանդնուպօլսեցոյ, հ. I, Վենետիկ, 1818:

Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խորհրդաձոթիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847:

Վարք նախնի իմաստասիրաց, Համառօտեալ ի Հ. Յակոբոսէ վարդապետէ Ճէլալեան, Վենետիկ, 1826:

Տարերք հայերէն քերականութեան դպրատանց տղոց համար, յօրինեց Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Վենետիկ, 1848:

Տեառն Ներսեսի Շնորհալոյ հայոց կաթողիկոսի Բանք Չափաւ, Վենետիկ, 1830:

Տեղեկագիր Սովելոց խնամատար կեդրոնական յանձնաժողովոյ, 1885:

Տեսութիւն նոր կտակարանաց Աստուածաշունչ սուրբ գրոց, բացաքննեալ ըստ աստուածաբանական գննութեանց՝ երկասիրութեամբ տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց, հ. Ա, Վենետիկ, 1824:

Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ սուրբ գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ Ստեփաննոսի վրդ. Ագոնց, հ. Գ., Վենետիկ, 1819:

Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ սուրբ գրոց, հ. Բ., Վենետիկ, 1819:

Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, աշխատ. Հ. Յովսէփայ վրդ. Գաթրըճեանց, հ. Ա, Հին պատմութիւն, Վիեննա, 1849:

Տօմարագիտութիւն ընդհանուր եկեղեցական եւ քաղաքական, աշխատ. Հ. Խաչատուր վրդ. Սիրմէլեան, Վենետիկ, 1818:

Փորձ ազգային եւ գրական եռամսյա հանդէս, թիվ II, Տիփլիս, 1876: Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեան Միխիթարայ վարդապետի Մեքաստացոյ, Վենետիկ, 1770:

Քերականութիւն լաթինական հայերէն շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, Հռոմ, 1675:

Քերականութիւն հայերէն եւ անգղիական, յօրինեալ ի Հ. Յարութիւն վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1819:

Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ աշխատասիրեալ տեան հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդինուպօլսեցոյ, Վենետիկ, 1815:

Քերականութիւն հայոց լեզուի: Նորոգ քննութեամբ յօրինեալ ամբողջ գրաբար. յաւելեալ ի վերջն և զհամառօտութիւն իմն աշխարհաբար ի դիրութիւն աշակերտելոց: Աշխատասիրութեամբ արգրումցի տէր Յարութիւնեան տէր Մեսրոպբ քահանայի, Կոստանդինուպօլիս, 1826:

Քերականութիւն ռուսերէն-հայերէն Մինաս վարդապետի Բժըշկեան, Վենետիկ, 1828:

Առաջնորդ հայերեն ու յունարեն զրուցատրութեանց ի Թ.Ա. Պարտիզպանեանէ, Կ.Պօլիս, 1869:

Առձեռն բառագիրք հայերեն- գաղղիերեն, Յօրինեաց Կոմիտաս Ա. Ոսկեան, Կ. Պօլիս, 1893:

Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Յօրինեաց Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան, Վենետիկ, 1846:

Բառարան անգղիարեն եւ հայերեն, աշխատ. ի Հ. Յ. վրդ. Աւգերեան, Վենետիկ, հ. Ա, 1821:

Բառարան [գաղղիերեն-հայերեն-տաճկերեն](#), աշխատասիրեաց Հ. Մամուլէ վ. Գանթարեան, Վենետիկ, 1886:

Բառարան ի ռուսաց լեզու ի հայ, աշխատ. ի Գաբրիէլէ Երեցփոխեանց, Տփղիս, 1876:

Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական, աշխատ. Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. II, Վենետիկ, 1817:

Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայս, աշխատ. Հ. Յ. վրդ. Ավքերեան Անկիւրացոյ՝ Մխիթարեան, հ. I, 1812, Վենետիկ:

Բառարան հայերեն եւ անգղիական, աշխատ. ի Յ. Պրէնտեան անգղիացի ասպետէ. Վ.Ա., Ձեռնտուութեամբ Հ. Յ. վրդ. Աւգերեան, հ. Բ., Վենետիկ, 1825:

Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ, ընծայեալ ի լոյս երկասիրութեամբ Մանուէլ վրդ. Ջախջախեան, Վենետիկ, 1804:

Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ Դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատցոյ, Կ.Պօլիս, 1826:

Բառգիրք ի գաղղիական ի հայէ եւ ի տաճիկ բարբառս, աշխատ. Հ. Յարութիւն վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1840:

Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ, Վենետիկ, 1749:

Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աշալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, և բարունապետին սեբաստացոյ, Վենետիկ, 1769:

Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի, հ. II, Կ.Պօլիս, 1846:

Լուսինեան Գուիտոն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. I, Փարիզ, 1900:

Կարապետեան Պետրոս Զեքի, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912:

Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ, աշխատ. Հ. Մանուէլ վրդ. Ջախջախեան, Վենետիկ, 1829:

Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ ի պէտս դպրոցաց, Յօրինեալ ի Հ. Յակովբոս վ. Պօզաճեան, հ. 2, Վիեննա, 1841:

Թրքերէնէ-հայերէն առձեռն բառարան, Աշխատասիրեց՝ Հ. Արիստակէս վրդ. Պօհճալեան, Իսթանպուլ, 1981:

Սօմալեան Սուքիաս, Համառօտ բառարան ի տաճկերէնէ յանգլիական եւ ի հայ բարբառ, Վենետիկ, 1843:

Nuovo Dizionario italiano-francese-armeno-turco, Congregazione Mechitaristica, Vienna, 1846:

Villotte J., Dictionarium Novum Latino-Armenium, Roma, 1714:

### Համաբարբառներ

Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Հայկական համաբարբառ, Ա, Ե., 1975:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Հայկական համաբարբառ, հ. 2, Ե., 1978:

Տաթևացի Գր., Գիրք հարցմանց/ Համաբարբառ, կազմ.՝ Գրիգորյան Ա., Ե., Գիրք Ա- Դ, 2011-2013:

### Էլեկտրոնային կայքեր և հղումներ

[concordance.am/category/գրաբար/ազաթանգեղոս](http://concordance.am/category/գրաբար/ազաթանգեղոս)

[concordance.am/category/գրաբար/փավստոս-բուզանդ](http://concordance.am/category/գրաբար/փավստոս-բուզանդ)

[http://www.asu.am/images/stories/HUMANI\\_6\\_.12.\\_2019\\_.pdf](http://www.asu.am/images/stories/HUMANI_6_.12._2019_.pdf)

<http://concordance.am/article/36>.

<http://concordance.am/category/%D5%A3%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D6%80/%D5%B2%D6%87%D5%B8%D5%B6%D5%A4>

[%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF](#)

<http://digilib.aua.am/book/122/122/1225/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>

[http://echmiadzin.asj-oa.am/2160/1/%23Jambr-P\\_42-54.pdf](http://echmiadzin.asj-oa.am/2160/1/%23Jambr-P_42-54.pdf).

<http://gradaran.ejmiatsin.am/patm-abraham-kretaci.html>

[http://language.sci.am/sites/default/files/movses\\_kaghankatvatsi.pdf](http://language.sci.am/sites/default/files/movses_kaghankatvatsi.pdf)

<http://rnas.asj-oa.am/1263/1/178.pdf>

<http://titus.unifrankfurt.de/texte/etcs/arm/movskal/movsk.htm?movsk031.htm>.

<http://www.digilib.am/book/1395/1694/12476/%D4%BD%D6%80%D5%A1%D5%BF%D6%84>.

<http://www.digilib.am/book/1476/1779/14290/?lang=en>.

<http://www.matenadaran.am/ftp/data/Banber18/15.A.Makhalyan.pdf>.

[http://www.ysu.am/files/14N\\_Dilbaryan.pdf](http://www.ysu.am/files/14N_Dilbaryan.pdf)

<https://hairenikweekly.com>, [www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)

[https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:Nerses\\_Mokatsi,\\_Verses\\_\(%D5%86%D5%A5%D6%80%D5%BD%D5%A5%D5%BD\\_%D5%84%D5%B8%D5%AF%D5%A1%D6%81%D5%AB,\\_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80\).djvu/98](https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:Nerses_Mokatsi,_Verses_(%D5%86%D5%A5%D6%80%D5%BD%D5%A5%D5%BD_%D5%84%D5%B8%D5%AF%D5%A1%D6%81%D5%AB,_%D4%B2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80).djvu/98).

<https://khachik-aper.do.am/Ghevond.pdf>

<https://vanuhiblog.wordpress.com/2017/11/20/>

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր

№ № 566, 775, 873, 3110, 6762

## Հապավումներ

ԱԲ - Ս. Աւգերեան, Գ. Ճելալեան, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի

ԱԲՀԳ - Առձեռն բառագիրք հայերէն-գաղղիերէն Յօրինեաց Կոմիտաս Ա. Ոսկեան

ԱՀԲԲ - Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան

ԱՀԲՈՒԲ - Հայոց բառ ու բան Աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի

ԲՀ - Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի

ԲՀԼ - Բառգիրք հայկազնեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ սեբաստացոյ

ԲՀԼՄՍ - Բառգիրք հայկազնեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառըն Մխիթարայ մեծի աբբայի, և բարունապետին սեբաստացոյ

ԳԲ - Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան

ԳՆԲՀԼ - Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի

ԴՄ - դարձվածային միավոր

ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան

ԽԲՀՌ - Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղեքսանդրի Մակարեան Խոլոպբաշեանց

ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀԲՀԲ - Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական- ուղղախոսական, տերմինաբանական բառարան

ՀԳԲ - Հայերէն գաւառական բառարան Յօրինեց Հրաչեայ Աճառեան

ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան

ՀԼՀԲ - Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան

ՀԼՀԲ, 2009 - Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան

ՀԼՊՆԺ - Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան

ՉԲ - ձեռագիր բառարան

ՄՀԲ - Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան

ՄՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան

ՄՄՁ - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր

ՆԲԲ - Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց

ՆԲՇ- նույնանիշների բառաշարք

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան

ՋԲ - Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան

ՋՀՄԲ - Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան

ՓԲ - Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փեշտըմալճեան պատուելի Գրիգոր մեծիմաստ վարժապետի

ՔՄ - Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն.....	5
Ձեռագիր բառարանների տեսակները և կազմությունը.....	17
Նույնանիշների բառաշարքերը ձեռագիր բառարաններում.....	21
Բառաշարքերի ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները.....	27
Բառային տարբերակներ.....	37
Բառիմաստային փոփոխություններ և նրբերանգներ.....	47
Նորակազմ բառեր.....	75
Բարբառային իրողություններ.....	135
Փոխառյալ բառեր և օտարաբառ կազմություններ.....	149
Փոխառյալ արմատով (բառով) կազմություններ.....	164
Հարադրական կազմություններ.....	170
Summary.....	239
Օգտագործված գրականություն.....	244
Հապավումներ.....	261



**ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ**

**ՆՈՒՑՆԱՆԻՇՆԵՐԻ՝ XVIII ԴԱՐԻՑ ԱՎԱՆԴՎԱԾ  
ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ձևավորումը և էջադրումը՝ Մելանյա Խառատյանի  
Կազմը՝ Գոռ Գրիգորյանի



**ԱՍՈՂԻԿ**

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:  
Երևան, Հայրիկ Մուրադյան 42/2, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)  
Հեռ.՝ (374 11) 52 10 20, (374 55 58 80 23  
Էլ. փոստ՝ [info@asoghik.com](mailto:info@asoghik.com)

